



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

36.92

downer tip

9-pg- en/pag.



Patterson  
1919

2010

2002

491.92-82

5-61

մի.

# ԼՈՒՍԱԲԵՐ

ԶՈՐՅՈՐԴ ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ

ԱՅ. ԼԻՍԻՑԱՅԻՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ~~



500

ՏՎԱՅ

ԽԱՆՐՈՐԴ ՏԻՊ

Մեր ինքնուրոյն եւ փոխադրած յօդածների, ինչպէս եւ մեր նկարների ար-  
տատպութեան իրաւուցք վերապահնած է:

Ք Ի Ֆ Լ Ի Ս

Օպերա «Փայտաբառ»

1919




11759

ՀԱՅՈՍԱԾՈՒ

ՀԱՅՈՍԱԾՈՒ



1002  
8943



## ԼՈՒՍԱԲԵՐ

ՀՈՐԻՌՈՔՑԱՐՈ

### 1. Գիւղի ժամը

Տան-դօ, տան-դօ... Նազլու, վեր կաց,  
արեն արդէն մայր է մանում.

ՏԵս, Խաթու՞ն էլ դրոքը պրրծած  
փողոցում է, ժամ է շտապում...

Դժոջը աւին՝ տան-դօ, տան-դօ...

Տէր, փառքը շատ, տան-դօ, տան-դօ...

Շուտով նախսիբն հանդից կը գայ,  
գընանք որ շուտ էլի ետ գանք,  
կովը կըթենք, թը՞ո-թը՞ո կաթ տայ,  
կովը կըթենք, մեր ցաւն հողանք,

Ախ, Նազլու ջան, չես իմանում  
էզուց էլի աղան կը գայ.


## 2. Մի շաբաթ ծառի վրա

Նըրա սիրալ միշտ անկըշտում,  
Ել ամպի պէս պիտի զռաայ.

«Շատով, Գրիգոր, փողերս բնը.

Էլի չըկայ, կովդ հանի...»  
Ախ, Նազլու ջան, այս ինչ բան էր,  
միտդ է հերու... Տէր, դու փրկի:

Հայրիկդ արդէն գնացել է,  
որ փող ճարի. Երբ պիտի գայ,  
աեւնենք մէկը խղճացել է...  
Ախ, սև օրը Տէրն էլ չըտայ:



Շուտով, Նազլու, գնանք ժամը,  
ազօթք անենք. քո ձախն Ասաւած  
շուտ կը լըսի, այս անգամը  
մեզ չի թողնի անկավ, անհաց...

Բարի մարդիկ միշտ կը լինեն,  
հայրիկդ հետը փող կը բերի,  
փողը կըտանք շար աղային,  
որ մեր հորթիկն էլ չը խրլի:

Տան-դօ... Նազլու, զընանք,  
արեն արդէն մայր է մըտնում,  
էզուց աեմնենք, որ զեր կենանք,  
ինչ նոր արե է մեզ ծագում...

Ժամը տէին՝ տան-դօ, տան-դօ...  
Տէր, փառքը շամու. տան-դօ, տան-դօ:

- 1) Էտ ինչ փող է, որ աղան պահանջում է:
- 2) Ուրիշ ո՞վ է պիտացուց փող պահանջում եւ ինչո՞ւ:
- 3) Բարի մարդիկ փողը նէ՞ր են տալու հայրիկն:

Երևակայեցէք, մի ամբողջ շաբաթ բնակւեցի ես մի թթենու վրա:  
Այդ ժամանակ, որքան յիշում եմ, պէտք է 13—14 տարեկան լինէի:  
Ահազին աղայ և մի ամբողջ շաբաթ ծառի վրա...

Չեմ յիշում՝ ինչ մի ծանր յանցանք էի գործել, և գուշակելով  
որ երբ հայրս գար՝ անշուշտ խիստ պատժելու էր ինձ, մտածեցի  
խուսափեմ: Մեր բակում, ճիշտ փողոցի դռան առաջ, կար մի կիսաչոր  
բարձր թթենի, որ իր բարձրութեան վրա բազկաթոսի նման մի բան  
էր կազմել:

Բարձրացայ այնտեղ, հետո առայ մի ներքնակ, մի բարձ, պարզե-  
ցի ճիւղերի վրա, յամարեցրի, յետոյ ծածուկ իջնելով՝ մի առ մի  
վեր հանեցի մի տման լիքը ջուր, հաց, պանիր և տեղաւորւեցի վե-  
րնում:

Հայրս կէսօրին տուն եկաւ, սրոնում էր ինձ որ պատժի, բայց  
երբ նրան ցոյց տւին ծառն և վրան թառած այլանդակ թռչունը, չը  
կարդացաւ ծիծաղը զսպի:

—Լաւ, —կանչեց նա ինձ, —մեա այդտեղ, տեսնենք մի կը զբդ-  
շայ վերջը:

Ու մ.ացի:

Անշարժ նստած մեխւել էի մի տեղ ժամերով. Ել երևակայեցէք՝  
ինչ տանջանք պիտի լինէր. Էն էլ մի այնպիսի պատանու համար,  
որ սովոր էր շարժուն կետնքի, սիրում էր վազվզի, թռչկոտի, մանի  
ամեն տեղ, ենի փողոց, տանիքների վրայ մազլցի...

Այս, իրաւունք ունէր հայրս. Տէր անցել երկու ժամ, որ արդէն  
զջում էի խենթութեանս վրա: Ստկոյն յամառել էի, չէի կոտրում  
իջնեմ, պատիժու կրեմ, գոնէ ներողութիւն ինզրեմ ու ազատեմ...

Ուրեմն պէտք էր մի բանով զբաղւէի: Մի քիչ ճիւղեր կտրտեցի  
թափեցի ցած. աերեները թըքոտում կպցնում էի բուռիս և թըխկաց-  
նում. յետոյ դիաեցի շջակայքը, ծառի վրա իջնող թռչունները, շուռ  
եկայ այս կողմ, այն կողմ, մտածեցի քնեմ... Բայց անտանելի էր.  
կողերս էլ ցաւում էին, աեզս էլ ոկտում էր անհանգիստ թւալ...

Զանացի իջնեմ ծածուկ, մի քիչ վաղվզեմ, շարժեմ ոտներս,

բայց հայրս բաց լուսամուտում նստած, դէմքը ուղիղ իմ կողմը՝ կարգում էր: Օհ, առնջանք էր, որ երևոկայել չէք կարող:

—Կարգամ...—ծագեց յանկարծ մտքում: —չէ որ ահա հայրիկը կարողանում է այդքան երկար մը տեղ նստի ու անշարժ կարգայ: Գուցէ ես էլ կարողանամ: Ա՛խ, ձեռքս մի հետաքրքրական զիրք լինէր...

Երեկոյեան հենց որ հայրս գործով տնից դուրս դնաց, իսկոյն ցած ստիճի:

Ամենից առաջ քիչ վագեցի, եղբայրներիո ու քոյրերիս նեղացրի, բարկացրի, յետոյ ճաշից լինչ որ մացել էր կերայ, մտայ անկողինս ու քննեցի:

Բ.

Միւս առաւօտ հայրս թէե լուս զարթնել անշուշտ տեսել էր ինձ անկողիս մէջ, սակայն անխօս գուրս էր գնացել:

Զարթնելուս պէս շուապեցի, որ ենեմ ծառիս վրա, քանի զիս չէր վերադարձել:

Սակայն նախ քան բարձրանալո, մտայ հօրս գրադարանը և ընտրեցի մի գիրք, մի մեծ գիրք: Առաջի երեսից մի քանի տող կարգալով տեսոյ, որ աշխարհաբար պատմութիւն էր: Առայ ու դուրս...

Մանր տառերով տպւած այդ գիրքը՝ գուրս եկաւ որ պարզ լեզով գրած մի շատ հետաքրքրական բան էր:

«Սոս ու Վարդիթեր», —կարդացի կողի վրա: Մեր յայտնի հայ գրող Պաօշեանի վէպն էր: Գիւղական կետնքի մանրամատն նկարագիր պարզ, մեր խօսութ լեզուի հետաքրքրական...

Ամենայն յափշտակութեամբ սկսեցի կարգալ ու կարգալ:

Կարգացի երկար, շատ երեսներ: Ճը գիտէի քանի ժամ էր անցեր, երբ հայրս տուն եկաւ, ներս մտաւ: թէ չէ կանգնեց ու աշքերը գլցեց վրաք: Կուացայ, մեր ակնարկները միմեանց հանդիսիցին:

—Ի՞նչ ես անում այլունդ, —հարցրեց Աս զարմացած:

—Կարդում եմ, հայրիկ:

—Կարգմում ես, դառնըդ ես սովորում:

—Ոչ, ուրիշ գիրք է:

—Մըտեղից է:

—Քո գրադարինից:

—Ի՞նչ բան է:

—«Սոս ու Վարդիթեր»:

—Ա, ինքդ ընտրեցիր:

—Մյու:

—Եւ հասկանեւմ ես:

—Բոլորը:

Մի քիչ լրեց, նայեց ինձ, յետոյ ժպտած, քայլեց դէպի ներս, տոելով:

—Այդպէս գիրքը կարդալ ցածումն էլ կարող էիր... Բայց: «Հինչ, կարգամ...

Եւ երբ ուզում էր ներս մտնի, գարձաւ ու աւելացրեց.

—Իսկ երբ կը պրծնես՝ ես քեզ ուրիշը կըտամ, նոյնքան և դուցեակելի հետաքրքրական...

Գ.

Մի շաբաթւայ ծառի վրայ ապրելու այնքան օգուտ տւաւ ինձ, ոքան չէր տեսլ ամառայ ամբողջ արձակուրդը: Երբ ես շարութիւնից չարութիւն, խաղից խաղ՝ սպանում էի ժամանակս, մում էի տգէտ և կարծում էի թէ առանց այն էլ՝ դպրոցը շատ է ծանրաբեռնում գլուխս: Եւ եթէ պիտի ուսում ստանայի, զարգանայի, գպրոցն էլ բաւական էր:

Միաւլած էի:

Այն օրւանից, երբ առաջին անգամ ինքնաբերաբար կարգալ ըսկեցի, երբ եօթ օր ծառի վրա թառած, իրար ետեք-չորս գիրք կարդացի, այն օրւանից ես բոլորովին այլ կերպ սկսեցի նայել կարգուուր վրա:

Մկնեցի մտածել, մտածել սովորեցի և ինձ թւում էր թէ անցկացրած տարիներս շատ յիմար կետնք էի վարել:

Ծառի վրա շատ բան պարզեց ինձ համար, և երբ իջայ, այլիս այն պատանին չէի, որ խաղում վազում էր աննպտակը մտածում էր միմիայն ուտելու, խմելու և զարձութեան մասին և որ իր մէկը միւսից աւելի անհամ չարութիւններով զգւեցնում էր Մշապատողներին և նոյն իսկ իրեն:

Դ.

Մի օր կէսօրին իջել էի, խոհանոց մտել, Քաղցել էի. մինչև հօրս վերադարձ կարծում էի, թէ մի բան կուտեմ և կը հասնեմ տեղու եր-

նելու, երբ յանկարծ փողոցի գուռը բացւեց և ես խօհանոցից, հայրս  
դունից, դէմ ու դէմ եկանք:

Եւարեցի. բնազդաբար փախայ, առաջին հանդիպած դոնից ներս  
ընկայ ու ետեիցս փակեցի:

Հայրս երեխ վճռել էր բռնի ինձ, մօտեցաւ գուտնը և հրեց:

—Բաց—տառ նա:

Զայն չը հանեցի, ամօթից, վախից, շւարմունքից պապանձւել էի:

—Ա, դու բաց չես անում, —կանչեց հայրս—լաւ ուրեմն, այժմ.  
ես դրսից կը կողպեմ քեզ այդտեղ՝ և տեսնենք բնչպէս կապրես  
այսուհետե:

Ու պկսեց գործադրել ասածը, կոնցի փակի ձայնը, յետոյ բա-  
նալիք դառնալլի:

—Հայրիկ, կոնչեցի ներսից:

—Ի՞նչ կայ, —կանգ տառ նա:

—Իզուր ես փակում, ես դուրս կը գամ:

—Դմբս կը գաս:

—Այն:

—Պատժից չես վախենում:

—Ոչ, դու ինձ այլ ես. չես պատժի:

—Չեմ պատժի. ինչու:

—Որովհետե ես զղացել եմ արած յիմարութեանս վրա և ներո-  
դութիւն եմ ինդրում:

—Այդպէս...

Դուռը բաց արաւ. ես էլ բացի և յայնուեցի շէմքէ վրա: Նայեց  
երեսիս առանց շարժւելու, նայեց երկար, յետոյ մի քայլ ետ քաշւեց  
և ասաց.

—Ուրեմն...

—Ների, հայրիկ, այսուհետե էլ ինձ չես տեսնի ոչ յիմար, ոչ  
էլ փոքրոզի...

—Այդպէս, ասաւ նա ժպտուն, իրաւ է:

—Իրաւ է:

—Հաւատում եմ... դիքը պըճել ես:

—Ո՞չ դեռ:

—Քեզ համար մի նոր զիրք եմ բերել. երբ ձեռքինդ վերջաց-  
նես՝ նա կարդա... իսկ առ այժմ՝ դնա լւացւի և ճաշի...

Հայրս քայլեց գէպի պարտէզ:

—Լօի—ձայնեց նա ինձ բակի մէջաեղից,—երբ կարդալ ուզե-

նուս՝ գրադաբան մաիք ե գուռը ետեիցդ փակի, որ քեզ չխանդարեն...

Այսպէս էր ահա, որ ծառ եւայ երեխայ և այնտեղից իջայ պա-  
տանի:

1) Մարդ իր ամբողջ ուսումն ղպջոցումն է ստանում: Ուրիշ ինչ  
միջոց կայ ուսումն լրացնելու:

2) Ազատ ընթերցանութիւնը ինչո՞ւ է տարբերում ղաս սովորելոց:

### 3. Այգում

Ես ճոխ այդումն եմ, զոհ է իմ հոգին:  
Մեղմ խոխոչում են անհոգ առուներ.  
ինձ նկարում է նրանց ապակին  
ծուերի շարքեր՝ պատրիք ծանրաբեռ:

Կարմըրին տալով ծիրանն է փայլում  
կանաչ սաղարթի թարմ հովանու տակ.  
ճաքըլքած նուրը արիւն է կաթում,  
ճօնւելով ճուղըն հովից ներդաշնակ:

Փշատ, զեղձ ու տանձ իմ շուրջը բոլոր.  
այսուեղ սերկեիլ խոնարհած երիքը,  
այնուեղ ամաչկոտ ժպտում է խնձոր,  
մի թուշը սոկի, միւսը կարմիք,

Այս միջոցին այզու որիշ ինչ պտուղներ են հասած լինում, որ  
այստեղ չեն միշած:

### 4. Գարթամ և Գորդին Գարթամ և Պետրիկելան

Հայոց կայություն կայություն  
Խաչպէս, զուք չէք ճանաչում մեր հարեան Գաթուային, նրան,  
որ այնպէս բերանը բաց չի անի, որ տաս սուտ չը շարի: Նրա սու-  
տելի պոչը հասնում է, Է.Է, մինչև Բաղդադ: Նրա ճատը աշխարհին

Հայոց գրքի Դաստիարակություն

Երեսին միայն բներել Պատրիկեան թէ լինի... Սրա մասին էլ ըան  
չէք լսել: Զարգանում եմ: Որ այդպէս է լինեցէք, ձեզ պատմեմ,  
թէ ինչու Նախաւան չի անցնում Սուրբ սարից դէնք, իսկ Պատ-  
րիկեան Սուրբ սարից դէնք:

Մէկ օր Թաթուռն մի մեծ տոպրակ է վերցնում, և էջը մամուռ  
լցնում, ճկուած երեսին էլ մի քիչ բութ աւելացնում, շալակում,  
դնում և մերեթ ծախելու: Առարներ սպըը բարձրանում է թէ չէ, — որ  
որ իմերէթը Բարթլուց բաժանում է, տոպրակը կետի է զցում,  
ինքն էլ նատում է, մի քարի, թէ մի քիչ հանգստանայ և մէկ աշք  
դցի սիրուն իմերէթի վրա: Մէկ էլ տեսնի՝ այն կողմից բարձրանում  
է Պատրիկեան, նոյնպէս մի մեծ տոպրակ շալակեն:



Մերի

— Բարե, ախողէր, ձայն է տալիս Նախաւան պատմություններին:  
— Աստըծու բարին, — պատմախանում է Պատրիկեան:  
— Է, մըտեղիք և մ. Ի՞նչ ո՞ւ դարձո՞ւմ  
— Բարթլուց եմ զալիս, ընկուզ եմ տանում Բարթլու ծախելու:  
Իսկ զու որտեղից ես զալիս բարեկամ: Ա (ԽՂ)

— Ես, ախողէր Ձան, Բարթլուց եմ զալիս, բուրդ եմ տանում  
իմերէթ ծախելու: Արի մի բան ասեմ քեզ, գուցէ հաւանիս: Բարե-  
կամ, զուր տեղ աւելի հեռու զնալուց ինչ պիտի զուրս զայ. յորելո-  
ներս պիտի մաշենք, աւելի հօ ոչինչ: Արի մեր ապրանքը էստեղ  
փոխենք. իմ բուրդը քեզ, քո ընկուզը ինձ, զու իմ բուրդը տար-  
և մերէթ ծախի, ես էլ քո ընկուզը կը տանեմ Բարթլու կը ծախեմ: էլ  
մեր տներէց չենք հեռանայ:

— Շատ լաւ ես ասում, ախողէրութիւնը վկայ: Ի հարկէ, ի նոր-

կէ, աւելի լաւ է էլի մեր տները վերադասնանք, գիւղէ գիւղ թա-  
փառելուց ինչ շահ ունենք: Ահա քեզ իմ ընկուզը, զու էլ բուրդը  
ինձ տուր:

Այդպէս էլ արին. Դամուան շալակեց ընկուզի տոպրակը, շտապով  
ետ է գալիս ու մտածում է. «Այ թէ խարեցի հա: Պա, ինչ ծանը  
տոպրակ էլ է, տօ:»



Դաստիարակություն

Պատրիկեան էլ շալակեց բրդի տոպրակը ու  
նրանից շտապ սարից իջնում է ու մտածում.  
«Թող գնայ ու ընկուզով կշտանայ. այ թէ միտ-  
միտն է, տօ:»

Միմեանց աչքից հեռացան թէ չէ, Գոյ  
թաւան ցած գրեց տոպրակը, բերանը բաց արտո-  
ձեռքը մէկ լաւ և էջը խրեց. տակից մի բուռը  
ընկուզ ուզեց հանի: Փուճ կճեալ:

— Փիէ:

Դու մի ասա, մնանկ վերեանց և եղել շը-  
կոտրած ընկուզը, տակը նզ կճեալ:

Պատրիկեան մէկ ծառի հանը անցաւ,  
տոպրակի բերանի թելը քննդեց, մէկ լաւ բաց  
արեց, մէկ էլ բրդի տակից կանուչ մամ ւոր տեսաւ:

— Կա, փիէ: Այ քեզ բան է Դաստիարակություն

էլ ինչ պիտի անեին: Պատմուած կճեայները դատարկեց. գրպան-  
ները լցրեց չը կոտրած ընկուզով, ուսու-  
ռակը ուսու զցեց ու գնաց տուն: Պատրիկը  
գոյն էլ մամուռը զուրս թափեց, բուրդը  
փաթաթեց տոպրակի մէջ, կուս ուսկ  
գրեց ու գլուխը քորելով տուն զնաց:

Էլի լաւ էր, որ Թաթուռն ճանա  
պարհին գործ ուներ. գրպանից ըւկուզ-  
ները հանում էր՝ բերանն էր զցում,  
շրբեկ հա շրբակ, կոտրածում, բայց որ  
բուրդն էլ ճիճուտ էին ու փուլ:

Չ Ք.

Անցաւ բաւական ժամանակ: Մէկ անգամ  
առբի ախողի նրանը նորից իրար հան-



Դաշտուան բարեկանց Պետրիկելային ու ասաւ.

— Հը, բռւրդս լաւ էր:

— Բաս ընկուզս ինչով էր պակաս, — պատասխանեց Պետրիկելան:

— Ես այսպէս էի կարծում, թէ միայն ես եմ աշխարհաց, բանից դուրս է գալիս, մեր ազայ, գու էլ ինձնից պակաս ջնորհքով չես եղել:

— Այ անաշէն, այդ շնորհքը որ բաժանում էին, կարծում էիր թէ մնակ դժւ էիր այստեղ:

— Դէհ, որ այդպէս է, արի ախողէրանանք:

— Աշըիս վրա:

Դատավարութիւն: X  
— Գիտես ինչ, արի՝ միասին մի տեղ ծառայ կանգնենք:  
Նաև ման եկան, թէ չեն, Աստւած զիտէ, վերջը եկան մէկ պառաւ կնոջ մօտ, իմացել էին, որ այդտեղ երկու ծառայ է հարկա, որ Պառաւն առաւ.

— Ես մի կով ունեմ ու էս տունը, որ տեսնում էք: Զեղանից մէկդ պէտք է կովիս մտիկ տայ, միւսը տունս հաւաքի: Ամեն առաւ կովս պէտք է դաշտ քշէք, արածացնէք և հետն էլ սրինդ, թառ ու դափիրա ածէք, որովհետեւ իմ կովը պար գալ դիտի: Իսկ տունս մաքրողը պէտք է ամեն քունջ ու պուճախ աւլի ու աղբը ուրիշ բախն ածի, եթէ առածիրս համաձայն էք, հօ մացէք, ծառայեցէք:

— Համաձայն ենք, ինչ կայ, որ չը կարողանանք, — պատասխանցին միասին Դաթուան ու Պետրիկելան:

Հիմա տեսէք, թէ բանից ինչ դուրս եկաւ:

Միւս օրը Պետրիկելան տանը մնաց, իսկ Դաթուան հայը վերցրեց, նոյնպէս սրինդը, թառն ու դափիրան ու կովը քշեց հանդը:

Պետրիկելան էլ տունը հաւաքի սկսեց, բակն աւլեց, էլ ոչ մի տեղ մէկ չոփ չը թողեց, աղբը հաւաքեց ու սկսեց հարկանների բակերը թափել: Հարկանները էս որ ահսան՝ վրա ընկան ու էնքան ծեծեցին, էնքան թակեցին, որ ողջ տեղ չը թողին:

Վայ էն հալին, ինչ հարով տուն վերադարձաւ Պետրիկելան ու ընկաւ գտնում տախտի վրա:

Իսկ Դաթուան ամբողջ օրը ճշմարիտ որ սրինդ ու թառով անց կացրեց, Կովը հասարակ կով չէր եղել: Հենց որ հանդը հասան, էս կովը խռոտ էր պոկում, արախնդ առալիս ու վազում, էլ մի բռոշէ դադր չէր առնում: Դաթուան շունչը կարած մինչև երեկոյ ետեկից վազվում էր, ճաշելու ժամանակ էլ չէր գտնում: Յոզնած, ուժառպառ, քազցած, իրիկնադէմին տուն վերադարձաւ: Առը դրաւ գոմի շէմքը

թէ չէ, Պետրիկելային տախտի վրա տեսաւ ու հարցրեց:

— Էտ ինչ է եղել, այ ախողէր, հիւանդ հօ չես:

— Ի՞նչ հիւանդ, ինչ ես ասում:

— Բա ինչու ես անժամանակ պառկել, ձգել: Տուն հաւաքելը հօ զու չարեց:

— Տուն հաւաքելն ես ասում... Ինչ օր եմ անց կացրել, ինչ օր... Գոմի ու բակը աւլեցի: ազը տարայ հարեանների բակեցը թափթփեցի, անստէրերը՝ ինձ տեսան թէ չէ, իրար ձեռքից սկսեցին խլել: սա է ասում մեր տունը համեցէք, նա է ասում չէ, մեր տունը: Էլ պատիւ, էլ ուրախութիւն: Էնքան Կախէթի զինի իմերըին, որ սոի վրա կանգնելու ուժ չի մնացել. Դու ինչպէս ես, ժամանակդ ինչպէս անց կացրիր, ինչ ես դէս ու գէն ընկնում: Մէկ կով արածացնելը ինչ գժւար՝ բան էր, որ էտքան յոզնել ես:

— Կով սրան կասեն, հա... Դահիրան ածեցի, սրինդը ֆշեցի, իմ կովն էլ մէկ զեկութիւ է պարում, մէկ պարում... Անթիւ անհամար մարդ ու կնիկ զլիներիս հաւաքւեցին, և նրանք էլ սկսեցին միասին պար գալ: Մէկ ուրախութիւն էր որ...

— Դէհ, որ էտպէս է, Դաթուան ջան, կովի հետ վաղը ես կերթամ, իսկ զու տանը մնայ, հարեանների պատիւը վայելի, - շատպով ձայն տւառ Պետրիկելան:

— Թո խօսքը լինի, դրա համար արժէ որ քեզ նեղացնեմ, — պատասխանեց Դաթուան, հացը կծելով և ազահութեամբ ծամելով:

Միւս օրը Պետրիկելան զնաց կովի հետ, Դաթուան մնաց տանը: Էլ ինչ տուել կուզի, ուրախութեան համը տեսան: Դաթուային երեկանից աւելի պատիւ տւին հարեանները, էնպէս որ հազիւ հազ ուները թրեւելով գոմը հասաւ ու տախտի վրա զլորւեց: Պետրիկելան էլ էնքան պար ածեց կովին ու ժողովրդին, էնքան ուրախացաւ, որ գոմի շէմքը հասաւ թէ չէ՝ դետնին նստեց, էլ ուժ չունէր տախտին համնելու:

Էտ զիշեր նրանք խորհուրդ արին ու ասին. « Պէտք է մի կերպ էստեղից զլութներս ազատենք, թէ չէ կամ ծեծից կը մնաննեք, կամ վաղվարաց. քաղը հօ կայ ու կայ»:

Վճռեցին վախչեն, կովն էլ հետները. բայց բանն էն է, որ պառաւը ինքն էր իր ձեռքով գրսից գոմի գուազ կողղուած. որի ու Փաթի:

— Դիւես թէ, Դաթուան, տառն Պետրիկելան, ևս կովը մորթենք,

ու միսը տոպրակի մէջ լցնենք, յետոյ մեզանից մէկը թող միւսի ուսին  
կանգնի, երդիկով կառւրը բարձրանայ ու այնտեղից պարանը կախի:  
Նեռ տոպրակը կը կապենք, կառւրը կը հանենք. յետոյ պարանը երկ-  
րորդ անգամ կիջեցնենք ու մնացողը կը բարձրանայ:

— Էտ շատ բար անք. — Հաւանեց նախուան: — Ես աւելի ուժով եմ.  
միսն էլ կը քաշեմ, քեզ էլ հեշտութեամբ կը բարձրացնեմ:

Կովը մորթեցին ու տոպրակը լցրին: Պետրիկելան կացաւ: Դա-  
թաւան կանգնեց նրա ուսերին, և երդիկովը կառւրը բարձրացաւ ու  
այնտեղից պարանը կախ արաւ: Պետրիկելան տոպրակի միջից մի քանի  
մեծ-մեծ կտոր միս հանեց, ինքը մէջը մտաւ ու փսփսաց.

— Միսը վեր քաշի, միսը ու տոպրակը նորից իշեցրու:

Դաթուան տոպրակը վեր քաշեց, շտապով բերսնը կապեց, շա-  
լակեց ու փախաւ:

Բաւական տեղ կառէս զաղ ոււաւ, յոգնեց ու կամեցաւ հանգը-  
տանայ: տոպրակը մէջքից ետ արեց ու զետին զլորեց:



— Կամաց, տօ տնաքպնդ, իոզոս  
ցաւեցրիր, — գոռաց Պետրիկելան  
գլուխը գուրս հանեց տոպրակի միջից:  
— Դու ես, անաքանդ, մէջքո կու-  
րեցրիր. մարդ էտքան էլ ծանր կը  
լինի:

Պետրիկելան տոպրակից դուրս ե-  
կաւ արիւնոտած երեսով ու չու-  
խայով: Լուսանում էր: Դաթուան  
նայեց նրան ու սկսեց ծիծաղու-  
թուլանալ Պետրիկելան էլ չը համբե-  
րեց, սկսեց նոյնպէս ծիծաղել:

Զը զիտեմ՝ քանի ժամ էին նրանք կապես ծիծաղում: Գիտեմ:  
միայն, որ էն է ու էն նախուան ու Պետրիկելան իրարից բաժանեւենին:


Հիմա հասկացաք, թէ ինչու Գալթունն չի անցնում Սուրբ սա-  
րից դէնը, թէ կ Պետրիկելան նուրամի սարնց դէսը:

Բայց տահմ բաժանւելուց առաջ նրանք ինչ արին:

Կորեցին կաղնու մի մեծ ճիւղ, հաստ շտմփուր վնեցին ու կովի  
միսը խորովեցին:

Բայց Գալթունն երկինք-երկիր հաւատացնում է, իբր թէ շամ-

փուրի վրա էլ միսը տրախնդ էր տալիս. ոչ բնըն է կերել, ոչ էլ Պետ-  
րիկելան: Դա չէ: Դա չէ:  
— Դա ացէք, հարցը էք Պետրիկելանից, թէ ինձ չէք հաւատում:  
Սրի ու մի հաւատայ, նախուանը, երբ քա վկան Պետրիկելան է:



## 5. Գիտի

Սատւած ինաւեց խեղճ ու նաշարին,  
լաւ հաց ու գինով առատ է տարին:  
Հասել էն որդէն մըրգեր մեղրածոր.  
կանանչ թըփերը բըսնած դոշտ ու ձոր  
հասել է ամրան միջօրեայ ատպին  
բիւր շարաններով խողողը ձիթ-ձիթ.  
քաղում են նրան առւակի ափուն,  
հընձանից անո՞շ մաճառը շիթ-շիթ  
կարանչ է լրցւում ուրախ քըրքիջով,  
և վըրկըրալով գեռահաս գինին  
հանգտանում է միայն թակիչով:  
Նորից խաղալով համնում է ըերնին,  
և յուզւած, գրիւած խոր գետնի զըրում  
եր ըստորերկրնայ խուլ երգն է երգում:  
Վերջացաւ թէ չէ անկըրակ եփը,  
ըսկըսեց իսկոյն գիւղացու քէփը:  
զըլում է ձայնը զուռնա-դրհոլիի,  
բացւում ծոյրը հարսանիքների:

Խաղողից որիշ ընչ են պատրաստում եւ բնշպէս:

## 6. Փոքրիկ նուաստին

ա.

Սիմօնը, մի կարճահասակ, նիհար տղայ, նաւաստի էր մտել Ամերիկա մեկնող նուր:

Մենակ էր եկել, ոչ ոք նրան ճամփայ չէր դցում. որբ էր:

Հազցրին նաւաստու կապոյտ շապիկը, կաշւէ անդրավարտիկը և գլխարկը կարմիր ժապաւէնով և բրդէ գուլպաները:

Շատ սիրուն էր նու այդ զգեստով, իր մեծ մեծ, մի փոքր արտում, կապոյտ աշքերսվ և զունաս դէմքով:

Նաւը հեռացաւ ափից, զամաքը էլ չէր երեւում. առաջից, ետից, աջից ու ձախից միայն ջուր էր ու ջուր:

Տաներկու տարեկան տղան առաջին անգամն էր այդպիսի ծով տեսնում. շվիթւած էր ու անհանգիստ:

Մի զիշեր, երբ փոքրիկ նաւաստին անուշ քնած էր, մի սասարկ ձայն զարթեցրեց բոլոր ծառայողներին:

— Էհէյ, էհէյ. Տախտակամած! Դէպի տուագաստները, առուագաստները!

Նաւաստիները իսկոյն տեղներից վեր ցատկեցին, կարծես ուզում էին կուի մանեն փոթորկի հետ, որը աւելի ու աւելի սասարկանում էր. Մինչև անգամ ամենից մատաղահատները պէտք է պատրաստ լինէին. Ամենքին սպասում էր ծանր, յարւած աշխատանք. Բեժերը պէտք էր լարեր:

— Օդի աւելք, — հրամայեց սպան, Եւ բոլոր ծառայողները հերթով մօտենում էին. Նախ հասակաւորները ապա աւելի ջանեներու իսկ վերջը նոյն իսկ փոքրիկները, դատարկում էին մի-մի զաւաբ. որը իսկոյն լցում էր ետեկից եկազի համար:

Միայն Միմօնն էր, որ չէր մօտենում. Նրան էլ կանչեցին ու բաժանողը գաւաթը առաջարկեց:

— Ներեցէք, պարոն... ես չեմ իմի, — արտաստնեց նա զրեթ մանկական ձայնով:

— Էս էլ ինչ է, անխելք, — կանչեց աւագ նուաստին ու ի՞նք դատարկեց նրա բաժինը.

Տախտակամածից իշնելիս որոն բանեց Միմօնի օձիքից

ետեկից բրդելով՝ բերաւ նաւապետի առջև:

— Պարոն նաւապետ, ահա այն յիմար տղան, որը չէր ուզում օղի խմի,

— Անունդ ինչ է, — հարցրեց նաւապետը:

— Սիմօն:

— Դէտք է սովորես օղի խմելը, եթէ ուզում ես խսկան նաւաստի դասնաս:

— Ներողութիւն, պարօն նաւապետ, թոյլ տւէր որ չը խմեմ.

Նաւապետը բարկացաւ, էտ մի պատառ տղան ինչպէս էր համարձակում իր հրամանին հոկառակել,

— Պատժել սրան, — կանչեց նա:

Պահակի պաշտօնը կատարող նաւաստին չարախնդրութեամբ ոլորեց պարանը, ուժեղ ձեռքով մի երկու անգամ պտտացրեց օղի մէջ և կասցրեց Միմօնի մէջքին:

Ամեն մի զարկին արտասուքները թափւում էին Միմօնի մեծածեծ, կապոյտ ոչքերից:

— Հիմա կը խմես, — հեգնում էր նաւապետը:

— Շնորհ արէք, պարօն, թոյլ տւէր չը խմեմ.

— Այս, իշխ զուտի, ես քեզ յամտութիւն ցոյց կը տամ, բարձրացիք մեծ հայմի վրա. զիշերը այն տեղ կը մնառ:

Խեղճ աղան աշքերը դարձրեց դէպի բարձր կայմի ծայրը, բայց հնազանդուեց և մազլցեց վեր պարանէ ելարանով.

բ.

Սարսափելի գիշեր էր, նաւը օրօրւելիս, կայմի ծայրը ամենից սաստիկ էր ճաճուում ու թեքւում մինչև ջուրը. ալիքներն ու քամբն միացրել էին իբենց վայրագ ճիշերը, որ պոկեն սիւնին կպած այդ փոքրիկ էտկը:

Առաւատեան վաղ, նաւապետը տախտակամածի վրա զրունելիս իշեց փոքրիկ ըմբռստին:

— Էէյ, զաւ, փոքրիկ, — կանչեց նա:

Լուսիքն:

— Ի՞նչը, չես լուսեմ:

Ոչ մի պատասխան:

Մի նաւաստի արտգ վեր մազլցեց ելարանով և զտաւ նրան կիսամեռ. Տղան վախենալով, որ նաւը թեքւելիս ինքը ծովը շրնկնի,

## 7. Նաւազար

ամբողջ ուժով ու երկու թևով գրկել էր կայմը այնպէս ամուր, որ հազիւ հաղ փայտից պոկեցին նրա սառած ձեռները։ Նաւաստին նրան իշեցրեց տախտակամածը և ծառայողներից մի քանիսը տրու բում էին նրա մարմինը, մինչև որ ուշքի եկաւ։

Երբ կարողացաւ նստել, նաւապետը մի մեծ բաժակ օդի ածեց.

— Դէհ, կիմա խմի, տեսնեմ։

— Ներեցէք, պարսն, թոյլ տւէք չը խմեմ։

— Ես ևակառակութիւն չեմ սիրում։ Մինչև չը խնես, ուստեղու բան չես ստուայ։

— Մի նեզանաք, պարսն նաւապետ, բայց ես չեմ կարող... Ուզում տսեմ ինչու չեմ կարող։

— Ասա, տեսնեմ ինչ ես ասելու, հեղինեց նաւապետը։

— Փամանակով մենք շատ բախտաւոր էինք, լաւ էինք ապրում, բայց հայրս սկսեց հարբեկ և այլևս այնքան չէր վաստակում, որ կարողանաք տունը պահել։ Պարտքի տակ ընկանք։ Ծախեցին մեր տունը, մեր բոլոր ունեցած չափանիքները ծախեցին։ Այդ տմենը այնպէս ազդեց խեղճ մայրիկիս վրա, որ հիւանդացաւ։ Մենաներուց առաջ էր, որ կանչեց ինձ ու ասաւ. «Սիմօն, դու գիտես թէ հարբեցողութիւնը կանչեց ինձ ու ասաւ. Օմիմօն, դու գիտես թէ հարբեցողութիւնը կանչեց ինձ ու ասաւ. Երդւի ինձ, որդի, որ երբէք, երբէք օդի ինչ դարձրեց քո բարի հօրը. Երդւի ինձ, որդի, որ երբէք, երբէք օդի չես գնի բերանդա, Ո՞հ, պարսն նաւապետ, միթէ կուղենայիք, որ մեռնող մօրս տւած երդումս զրժէի։ Զեմ կարող, պարսն նաւապետ, չեմ ուզում։

Նաւապետի աշքերին արցունք երկաց. Զգացւած գրկեց փոքրիկին և ասաւ.

— Ոչ, ոչ, հըաշալի աղայ. պահի երդումդ և եթէ մէկը քեզ ստիպի խմելու, եկ ի՞նձ մօտ. Իսկ քո զուր կրած պատժի փոխարէն անապատ այս հարիւր քրանկանոցը և ինչ ուզում ես՝ արտ։

Եետոյ գիմելով շուրջը կանգնած հին նաւաստիներին, առաջ ների արանքով աշտասանեց։

— Աչքի լոյսի պէս պահպանեցէք այս տղին, էյ գուգ, ծովի հրէշ ներ, որտեղ մարդ զուրս կը դայ:

1) Ի՞նչ վիճակի մէջ է լինում հարբած մարդը։

2) Հարբեցողութիւնը ինչ վնաս է տալիս եւ հմմ։

— Էյ, նաւազար, ինչ ես անում, ուր ես նստում գու նաւակ. ու ամպեր են, տես, բարձրանում գէպի երկինք կապուտակ։

Հորիզոնն է մութով պտուած<sup>1)</sup> հեռաւում ամպն է որոտում. նայի, ծովն էլ կամաց-կամաց պարզ երեսն է կլնճռուտում։

«Էհ, աղա ջան, դարդ մի արա, ծովափին եմ ես ծընւել.»

մեծացել եմ ծովի վըրա, ծովի բերքովի ես սընւել։

Մանուկ օրից շատ եմ տեսել և փոթորիկ, և աղէտ։

Ծովն է ինձ միշտ օրօր ասել, նոր չեմ ծանօթ ծովի հետ։

Հայր ունէի, ծովում կրաւ որսի ելած մաթ զիշեք. եղբայրներիս ծովը տարաւ, ծըկնորս էին անվեներ։

Կեանքը լաւ է... բայց ինչ արտ... համ էլ մահից ինչ վախչեմ, ծովն է տալիս մեղ կեանք ու հաց, ծովի տակն էլ կը հանգչեմ...»

1) Միայն ծովի վրա աշխատո՞ղն է վտանգների ենթակայ։ Որից ինչ արհեստարներ գիտես, որոնց կեանքը միշտ վտանգի մէջ է։

2) Այդ արհեստարները ինչ պիտի պատաժանէին քեզ, եթէ նոյն եղանակով ուզնայիր նրանց զգուշացնել։

## 8. Գիծ Մարէ

ա.

Հազում են երեխաները գիծ պառաւի հտեից, ծովի ափով, քարեր են շպրտում նրա վրա և կանչում հտեիցը. «Հու. հու, գիծ Մարէ»: Իսկ նա հայիոյում է, բռունցքնեցով սպառնում:

ԽԵՂԾ ցնորդած պառաւ.

Երկու երիտասարդ ձկնորսներ ուղարկան են փոել ծովի աւազին. Նայում է նրանց խեղծ պառաւը երկշոտ, աղերսող հայեացքով, կարծես պաշտպանութիւն է խնդրում նրանցից այդ անսիրտ երեխաների դէմ:

Նրանցից փոքրը ծաղրանքով նայեց պառաւին ու պոռաց.

—Ի՞չ է, գիծ Մարէ, բանդ բուրդ է երեռում, ել ինչ ես նայում դէս ու դէն: Վեր առ խնօցիդ, հեծի և թոփ, անցի ծովի էն կողմը... Հու, հու, գիծ Մարէ...

Եւ պառաւը քրտինքի մէջ լողալով հեին նորից վազեց առաջ:

Թշման մենակ պառաւ: Մի ժամանակ նա բախտաւոր էր, առաջն հարսնացուն ամբողջ զիւղում: Եւ մարդու էր գնացել շատ աջակ: Ունեցել էր մի որդի, մի մինումար որդի: Գուրգուրում, օրօրում էր որդուն, օրօրոցի երգեր էր երգում, կերակրում էր նրան, սիրում էր, երես էր տալիս իր աչքի լոյսին, իր Պողոսին: Տղան հազիւ էր մեծացել, ծովի ալքները կլանեցին տարան հօրը, երաշտը երաշտի ետեւից, սովը սովի ետեւից, ունեցած չունեցածը բոլորը զնաց, հալւեց ձիւնի պէս, Բախտի աչքը զրանով էլ չը կշտացաւ: Ծովի անգունդը խլեց պառաւից մինումար որդուն էլ:

Խենթացաւ. գժւեց պառաւը վշտից: Գալիս է ամեն օր ծովի ափը, նայում է հեռուն և կանչում. «Պողոս, Պողոս...

բ.

Ահա դարձեալ հալածում են նրան երեխաները տւազուտ ափով: Քայց այնտեղ, ծովի մօտ թոռ է հիւսում յաղթանդամ Անտօնը:

—Կորէք այստեղից, —բարկացաւ նա յանկարծ. — ամօթ ասած բանը դուք չը գիտէք: Կորէք, ասում եմ, թէ չէ, բոլորիդ էլ կը բըռնեմ, մէկ-մէկ ծովը կը նետեմ:

Երեխաները վախեցած դէս ու դէմ ցրւեցին:

Զարմացած նայում է պառաւը իր խելազար աչքով: Անտօնը վեր կացաւ նստարանի վրայից և քաղցրութեամբ մեկնեց նրան մի կտոր ու հաց.

—Նստի, մայրիկ, գիտեմ քաղցած ես: Առ, կեր:

Պառաւը նստեց, մէկ անդամից հանգստացաւ և երջանիկ աչքերով նայում էր երիտասարդին. կարծես՝ խելքն ու գիտակցութիւնը ետ էին դարձել:

Նա լսել էր դարձեալ «մայրիկ» խօսքը: Նրա առջև պատկերացու իր սիրելի զտւակը, իր գեղեցիկ, իր աչքի լոյս Պողոսը Պողոսը գրկում է նրան, իր մայրիկին, մասս բարով է ասում, պիտի գնայ լայնատարած ծովը, և այնպէս փաղաքշանքով ասում է. «Մնաս բարօվ, մայրիկ...»

Եւ տարւած իր յուշերով, ժամուն ու երջանիկ, վեր կացաւ պառաւը, մօտ եկաւ Անտօնին, իր չորացած շրթումքներով համբուրեց նրա ճակատը ու շփոթւած թոթովեց. «Երթան բարով, Պողոս. Աստւած քեզ օրհնի, զաւակս...»

## 9. Սատոնցի Դաւիթն ու Կողբադինը

ա.

Համբաւը հասաւ Մըսրայ Մելիքին.

—Հապան չես ասի՝ Դաւիթը կը ըկին  
հօր վաերը շինել, իշխան է դառել,  
զու եօթը տարւան խարջը չես առել,  
Մելիք զայրացաւ.

—Գնացէք, ասաւ,  
Բաղին, Կողբադին,  
Սիւղին, Զարխաղին,

Ստսմայ քար ու հող տակն ու վրա արէք,  
իմ եօթը տարւան խարջը բերէք:

Թառասուն կոյս աղջիկ բերէք արմաղան,  
քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,  
քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
իմ տանն ու դըռան աղախին զառնան:

Ու Կողբաղին առաւ զօրքեր.  
 — Գըլիս վերա, տաւ, իմ տէր.  
 գնամ հիմա քանդեմ Սասուն,  
 կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
 քառսուն բեռնով դեղին ոսկի,  
 տեղը ջնջեմ Հայոց ազգի։  
 Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին  
 պար բռնեցին ու երգեցին.  
 «Մեր Կողբաղին գընաց Սասուն,  
 կանայք բերի քառսուն-քառսուն,  
 քառսուն բեռնով ոսկի բերի,  
 մեր ճականին շարան շարի,  
 կարմիր կովեր բերի կթան՝  
 զարնան շինենք եղ ու չորթան։  
 Զան Կողբաղին, քաջ Կողբաղին,  
 Սասմայ Դաւթին զարկեց գետին։  
 Ու Կողբաղին փըթած, ուռած՝  
 — Շնորհակալ եմ, քոյրեր, գոռաց,  
 մինչև գալըս դեռ համբերէք,  
 էն ժամանակ պիտի պարէք...»

Ի.

Էսպէս երգով,  
 զոռով-զօրքով  
 դռա Կողբաղին մըտաւ Սասուն.  
 Օհան լոեց՝ կապւեց լեզուն։  
 Աղ ու հացով,  
 լաց ու թացով  
 տուաջն ելաւ,  
 խընդիք արաւ.  
 — Ի՞նչ ոք կուզես՝ առ տար, ամմն.  
 վարդ աղջիկներ, կանայք Սասման,  
 դառը դադած դեղին ոսկին,  
 միայն գըթա մեր խեղճ ազգին,  
 մի կոտորի, մի տար մահու...»

Վերեւ՝ Աստւած, ներքեւ՝ դու...  
 Ասաւ, բերաւ շարան շարան  
 վարդ աղջիկներ, կանայք Սասման։  
 Ու Կողբաղին կանգնեց, ջակեց,  
 մարագն արաւ, դուռը փակեց,  
 քառսուն կոյս աղջիկ, սիրուն արմաղան,  
 քառսուն կարձ կրնիկ, որ երկանք աղան,  
 քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,  
 Մըսրայ Մելիքին աղախին զառնան։  
 Դէղ-դէղ կիտեց դեղին ոսկին.  
 Աև սուգ կալաւ Հայոց ազգին։

գ.

ՀԵՅ, Թւր ես, Դաւթիթ, Հայոց պահապան,  
 քարը պատոի, դնւրս արի մէլդան։  
 Քանդած հօր վանքը, որ շինեց նորից,  
 ցած իջաւ Դաւթիթ Մարութայ սարից,  
 տեսան՝ Կողբաղին իրենց տան միջին  
 չափում է ոսկին թեղած առաջին։  
 Սիւղին, Զարխաղին պարկերն են բանել,  
 Զէնով Օհանն էլ շըլինքը ծըռել,  
 կանգնել է հեռու, ձեռները ծոցին։  
 Տեսաւ, աչքերը արնով լրցւեցին։  
 — Վեր կաց, Կողբաղին, հեռու կանգնի դու,  
 իմ հօր ոսկին է, ես եմ չափելու։  
 Կողբաղին ասաւ. — Է, Զէնով Օհան,  
 կը տաս, տնւր խարջը էս օխուր տարւան,  
 թէ չէ՝ կը գնամ, արկըս վկայ,  
 Մըսրայ Մելիքին կը պատմեմ, կը գայ,  
 ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,  
 տեղը կը վարի, բոստան կը ցանի,  
 — Կորէք, անզգամ դուք Մըսրայ շըներ,  
 բա չէք իմացել դուք Սասմայ ծըռեր...  
 Մեռած էք կարծում զուք մեղ թէ շըւաք,  
 կուզէք մեր երկիր դընէք խարջի տակ... —



Բարկացաւ Դաւիթ, չափը շըպըրտեց,  
տըւաւ Կողբադնի գլուխը ջարդեց,  
չափի Փըշըրանքը պատն ամսցաւ, գընաց,  
մինչի օրս էլ դեռ զընում է թըռած:  
Ու եւան թափած ոսկին թողեցին,  
Հայոց աշխարհից փախան գընացին:

Դ.

Էպէս ջարգրւած, արիւնլըւայ  
փախան, ընկան հողը Մըսրայ  
Բաղին, Կողբադին,  
Մի գին, Չարխադին:  
Մըսրայ կանայք հեռւից տեսան,  
հեռւից տեսան, ուրախացան  
ու ծափ տըւին կըտերներին.  
Շեկան, եկան, բերին, բերին...

Մեր Կողբադին գնաց Սասուն,  
կանայք բերաւ քառսուն-քառսուն,  
կարմիր կովեր բերաւ կըթան՝  
գարնան շինենք եղ ու չորթան...»  
Հէնց մօտեցան, նըկատեցին,  
ծափ ու խընգում ընդհատեցին,  
Քըրքը ջացին  
ու կանչեցին.

«Եյ, Կողբադին մեծաբերտն,  
Էտ որտեղից լերան-լերան,  
լերան-լերան կը գաս փախած,  
հաստ գըլուխըդ կիսից ճըղած:  
Էն դմւ չասիր՝ գնամ Սասուն,  
կանայք բերեմ քառսուն-քառսուն,  
քառսուն բեռնով ոսկի հոնեմ,  
Հայոց երկիր աւեր անեմ:  
Գնացիր Սասուն քանց գէլ գազան,  
ետ եւ գալի քանց զուն վազան...  
Ու Կողբադին խիստ բարկացաւ.

— Սնւս կացէք դուք, լրբեր, տաւ...  
Ճեր մարդիկն էք տեսել դուք զեռ,  
դուք չէք տեսել Սասմայ ծըռեր:  
Սասմայ ծըռեր լերան-լերան,  
նետեր ունին մի-մի գերան.  
Սասմայ երկիր քար ու կապան,  
զըժար սարեր, ձոր ու ծապան.  
Նըրանց խոտեր, ինչպէս կեռ թուր,  
զօրք ջարդեցին երեք հարիւր...

Ասաւ ու էլ չառաւ դադար,  
վըռազ-վըռազ, գըլիտպատառ  
վազեց իրեն թագաւորին:

Խընդաց թագմաւրն իր աթոռին:  
— Ապբես, ապբես, քաջ Կողբադին.  
արժէ՝ կախեմ ես քո ճըտին  
մեր արծըւի մեծ նըշանը,  
պարզե քո մեծ յաղթութեանը:

Ուր ես հապա, առաջս բեր  
 Սասմայ սոկին ու աղջիկներ:—  
 Առաւ Մելքը, ու Կողբադին  
 գըլուխ արւաւ նինչե գետին.  
 — Ապրած կենաս, մեծ թափաւոր,  
 զոռով փախայ ես ձիտոր,  
 մոց բերէի Սասմայ սոկին:  
 Մի խենթ ծընւեց Հայոց աղջին,  
 ոչ ահ զիտէ, ոչ տէր ու մեծ.  
 գըլուխ էսպէս արւաւ, ջարգեց.  
 «Չեմ տայ, ասաւ, իմ հօր սոկին,  
 չեմ տայ կանայքն իմ հայ աղջին,  
 Սասմայ երկիր ձեզ տեղ չկայ...  
 Թո թափաւորը, ասաւ, թող գայ,  
 թող գայ՝ ինչ հետ կըոփէ անի,  
 թէ զօշաղ է զոռով տանի»,  
 Կատաղեց փըրփեց Մարայ թափաւոր.  
 — Կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բարոք.  
 հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
 հազար հազար մարդ անքեխ, անմօրուք,  
 հազար հազար մարդ բէխը նոր ծըլած,  
 հազար հազար մարդ նոր թախտից ելոծ,  
 հազար հազար մարդ թուխ միբուքաւոր,  
 հազար հազար մարդ սիպտոկ ալեռ,  
 հազար հազար մարդ, որ փողեր հընչնն,  
 հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն...  
 Կանչեցէք, թող գան, հազնեն զէնք, զըրան,  
 կըոփէ մի զընամ ես Դաւթի վըրա,  
 Սասունն աւերեմ,  
 հեղեղեմ բերեմ:

## 10. Ճնճղուկ

Որսից վերադառնալիս՝ անց էի կենում մի պարտէղի միջով:  
 Եռնս վազում էր իմ առջնից:  
 Նա յանկարծ իր քայլերը փոքրացրեց և սկսեց կամաց ու զգոյշ  
 առաջ գնալ. կարծես որսի հոտ էր առել:

Ես նայեցի ու փոքր ինչ հեռուն ճամփի վրա տեսայ մի փոքրիկ  
 ճնճղուկ, որի կտուցի շուրջը գեղին էր դեռ, իսկ զլուխը աղւամա-  
 զով ծածկւած: Նա ընկել էր ընից ու անշարժ պառկել էր, միայնակ  
 ու անօգնական, հազիւ դուրս եկած փոքրիկ թերը փռած:

Երբ շունս ծանրաքայլ ժօտենում էր նրան, յանկարծ ժօտոկայ  
 ժառի վրայից մի մեծ, ու կրծքով ճնճղուկ, քարի պէս ցած նետւց,  
 ընկաւ ուղղակի շանը առաջը և յուսահատ ու ծըլքտոցով մի-երկու  
 անգամ թռաւ դէպի շան զւնչը:

Նա յարձակում էր, որ փրկի, պահպանի ձագին... Բայց նրա  
 փոքրիկ մարմինը դողում էր սարսափից: Նրա ծղբրացը կառաղի էր:  
 Նո ուժից ընկնում էր. նա իրեն զոհում էր:

Ինչ ահագին հրէշ պիտի երեար նրա աչքին շունք... Բայց և այն-  
 պէս նա նստած մալ չը կարողացաւ բարձր ու անվտանգ ճիւղին...

(Նրա կամքից աւելի զօրեղ մի ուժ մղեց նրան վայր...)

Եռնս կանգ առաւ. ետ քաշւեց... (Երկինա էլ ճանաչեց այդ ուժը)  
 Ես շատացի շւարած շանս ետ կոնչելու և հեռացայ՝ զգալով  
 մէջս մի պատկառանք դէպի այդ փոքրիկ թոշունը:

(Այս, մի ծիծաղէք. Ես պատկառում էի այդ փոքրիկ հերոս թըռչ-  
 նակի առջի, նրա սիրոյ ուժի առջի)

Եէրը, մտածում էի ես, մահից ու մահւան երկիւղից աւելի զօ-  
 րեղ է: Միայն սէրն է պահում ու շարժում կեանքը)

## 11. Սարերի արքան

Հսկայ թերը լայն-լայն տարածած,  
 Հըգօր արծիւը ուղղեց իր թոփչը  
 դէպի բարձրաբերձ լեռներ սեպացած,  
 դէպի անսահման, ամպամած երկինք:  
 Երկար սաւառնեց նա խիտ ամպերում,  
 քանի ուժ ունեց զօրեղ թերում,  
 և վերջիվերջոյ յոդնած, վաստակած  
 նա նստեց հըսկայ մի լեռն զիխին,  
 որը սուր ու սեպ մինչ երկինք հասած  
 սարսափ էր աղդում վերև նայողին,  
 Նոյեց արծիւը անվախ, անվրդով

և շուրջը զոռոզ հայեացք զցելով,  
նա արքայական իր ձայնովն ահեղ.  
որոտաց ուժգին. «Մենակ եմ այստեղ,  
մենակ ու ազատ այս լեռան վրա,  
որդէս բացայագթ լիազօր արքայ.  
իմ գանե է անհուն այս երկնակամար,  
որոտ ու ամպեր՝ ոտքիս պատւանդան.  
ով կայ աշխարհում փառքիս հաւասար,  
ով կարայ համնի գանիս բարձրութեան»:

Ինչո՞ւ ենք արծին թագաւոր ասում. որից ի՞նչ կենդանի նոյն  
պատին ո՞նի

## 12. Գերի արծիւր

ա.

Մեր բանան էին բերել մի վիրա-  
ւոր արծիւ. Բոլոր բանտարկեալներս  
շըջապատեցինք նրան. Չէր կարողա-  
նում թռչել. աջ թեր կախ էր ընկած  
գետնին, մէկ ոտն էլ վնասել էր:  
Թռչունը կատաղի հայեացք էր ածում  
շուրջը, զիառում էր հետաքրքիր ամ-  
բոխը և բաց էր անում իր կեռ քիթը,  
միշտ պատրաստ թանկ ծախելու իր  
կեանքը:

Երբ բոլորն էլ նայելուց կշացան  
ու սկսեցին ցըւել, նա կաղալով, մի  
ոտի վրա ոստոստելով և տռող թեր  
թափ տալով, քաշւեց բանտի բակի  
ամենահեռաւոր ծայրը և այնտեղ կուչ  
եկաւ անկիւնում:

Այստեղ նա ապրեց մօտ երեք տմիս և այդ տմբողջ ժամանակ  
դուրս չեկաւ իր անկիւնից.

Սկզբում յաճախ էին զալիս նրան նայելու և գրգռութ էին շանը



նրա դէմ: Եունը գազազած վրա էր ընկնում, բայց վախենում էր  
շատ մօտենալ: Արծիւը հպարտ ու վայրագ, վիրաւորւած արքայի պէս,  
կծկծւած իր անկիւնում, դիտում էր հետաքրքիր այցելուներին:

Սկզբում նա ուտել չէր ուզում, մի քանի օր բան չառաւ բերա-  
նը. վերջը ուտում էր, բայց ոչ մեր ձեռքից, ոչ էլ մեր ներկայու-  
թեամբ: Երբ տեսնում էր մօտը մարդ չը կայ և համօզւում էր, ոք  
մենակ է, մի քանի քայլ հեռանում էր իր անկիւնից և կաղալով անց-  
նում էր պարսպի տակով: մի քսան քայլի չափ, յետոյ դառնում էր  
ետ, նորից էր գնում, նորէն ետ զալիս, կարծես զրունելիս իինէր:  
Բայց հէնց որ հեռուց նկատում էր մէկին, իսկոյն կաղալով ու ոստ-  
ոստելով շտապում էր իր տեղը և զլուխը ետ զցած, կտացը լոյն  
բաց արած, պատրաստում էր կաւի: Ոչ մեր քաղցը խոսրերը, ոչ  
մեր փաղաքշանքները չէին մեղմացնում նրա սիլաը:

Մենակ ու չարացած սպասում էր նա մահւան, ոչ ոքի չը հա-  
ւատալով և ոչ ոքի հետ չը հաշտուելով:

բ.

Զը գիտեմ ինչպէս, մի օր էլ յանկարծ բանտարկեալների մէջ  
միտք ծագեց, թէ հարկաւոր է նրան բաց թողնել:

— Թէ սատկելու է, թող բանտում չը սատկի, առում էին մի  
օսնիսր:

Ի հարկէ, ազատ սովոր, անկախ թռչուն է, բանտին չի ընտե-  
րահայ, — պնդում էին միւմները:

Մեզ նման չի, — աւելացրեց մէկը:

— Բան ասիր, ոս ևօ թռչուն է, իսկ մէնք մարդ:

— Արծիւը, ախողէր, անստառների թագաւորն է:

Ճաշից յետոյ, երբ աշխատանքի գնալու զանգը տեին, բանտար-  
կեալներս արծիւն առանք միասին: Նրան զրկողը պինդ սկզմել էր  
կտուցը, ոլովիետե սաստիկ գիմազքում էր և ուզում էր զլուխը ա-  
զատի: Հասանք մի բարձր տեղ, ամենքս էլ հետաքրքրութեամբ կտ-  
մենում էինք տեսնել թէ ուր պիտի զնայ արծիւը: Զարմանալի բան-  
բոլորս էլ մի բանով բաւական էինք. կոլ ծես մէնք էինք աղատու-  
թիւն ստանում:

— Արան տես, է, անպիտունին բարտթիւն ենք անում, զես կծում

Էլ է, —ասում էր նրան տանող բանտարկեալը, զրեթէ սիրավ սեղմե-  
լով թռչունին:

—Դէ, բաց թող, —կանչեց մէկը,

—Ազատութիւն տուր, իսկական ազատութիւն, —աւելացրեց մի  
ուրիշը:

Արծւին բռնողը նրան գցեց մեր բարձրութիւնից ցած, դէպի մեր  
տաքերի տակ տարածող դաշտավայրը:

Աշնան վերջերն էր, օրը ցուտ և մառախլապատ: Քամին սու-  
լում էր մերկ դաշտերի վրա և խշխշում էր դեղնած ու չորացած,  
փշոտ ու վայրի խոտերի մէջ: Արծիւը ոլացաւ ուղիղ, թափ տալով  
հիւանդ թեր և կարծես շտապելով որ մեզանից հեռանայ՝ ուր որ էլ  
լինի: Բանտարկեալները հետաքրքրութեամբ հետեւմ էին, թէ ինչ  
պէս սեխն էր տալիս նրա գլուխը չորաչած խոտերի Փօնի վրա:

—Մտիկ, է, —մտածկոտ արտասանեց մէկը:

—Ո՞նց է փախչում, —աւելացրեց միւսը:  
Իսկի ետ էլ չի նայում:

—Չը լինի դու կարծում էիր, նորից ետ պիտի գայ ու շնորհա-  
կալութիւն յայտնի, —ծաղրեց մի ուրիշը:

—Հապա, սրճն տսում են ազատութիւն...

—Ազատութիւնը լաւ բան է:

—Էլ չի երկում...

—Ի՞նչ էր կանգնել Մարշ, —կանչեցին մեզ ուղեկցող պահապան  
զինւարները, և բոլորս լուռ քարշ եկանք դէպի մեր տաժանակիր աշ-  
խատանքը:

1) Արծիւը ինչո՞վ էր բանտարկեալներին այսպէս հետաքրքրել ու  
յարգանք ազդել:

2) Ի՞նչ օան է տաժանակիր աշխատանքը:

### 13. Արծիւ

Իմ ծնւած օրից ասաւ ինձ Աստւած.

«Աշխարհի մարդկանցը չը լինես ծառայ»:  
Եւ ահա աշխարհ ողջ թողի մարդկանց,  
ազատութիւնը ես միտյն առայ:

### 14. Ապարանի գումէլը

ա.

Զանգը տւին: Աշակերտները անասելի աղմուկով վազեցին դէպի  
շաստարանները, ճչալով, խփելով, ճրելով, քաշշելով իրար: Մի մեծ խումբ  
էլ խառնւեց ջրի տակառի շուրջը, ձեռքէ ձեռք խլելով բաժանները:

Յանկարծ նկատեցի, մեր դաստիարանցի Օհանեանի կլոր տափակ դէմ-  
քը, լցրի մի ամբողջ բաժակ սառը ջուր ու, շըրը փ, նրա երեսին: Մին-  
չև նրա ուշը գալը, փախայ դաստիարան:

Նրա վրէժինդրութիւնիցը չէր, որ փախչում էի, բնչ պիտի ա-  
նէր ողորմելին, շնորհը ունէր որ .. Գլուխը կորած, մոլորւածի մէկն էր.  
միշտ վախվիսելով, ամենքից քաշւելով՝ ման էր գալիս շարունակ բա-  
կի պատերի տակ, աշխատելով ոչ ոքի տչեի շընկնի...

Ես շտապում էի, որովհետեւ այդ գասին մեզ հետ առաջին ան-  
դամը պիտի պարտապէր պատմութեան նոր ուսուցիչը:

Երբ Օհանեանը կամացուկ դաստիարան մտաւ՝ մազերն ու բլուզը  
ամբողջովին թրջւած և ուզում էր աննկատելի կերպով անցնի իր  
աեզզը, ամեն կողմից սկսեցինք կանչել.

—Ու, ու, նուրի նուրին եկել է, աջրա հուրին եկել է:

Աշակերտներից մէկը ետեից հասաւ ու մի ամուր ապտակ վ-  
րբիկացրեց նրա բարձր ու լայն վզակոթին, միւսը կաւճու թաթը  
կըոշմեց նրա կոճակին, երկրորդը թանաքուած ջնջոցը ձեռքին՝ վա-  
զեց նրա թաց երեսը որբերու... Շշկւած, անխօս, գէս ու դէն ընկ-  
նելով՝ նա շտապեց դէպի իր տեղը ետեի նատարաններից մէկի վրա.  
բայց շարքերի միջից անցնելիս այս ու այն կողմից նրան սկսեցին  
բրթել, իսկ մէկը ստքը դէմ տւաւ, ու նա իր հաստ մարմնով ծանր  
փաւեց կեղսուա յատակին...

Հէնց այդ ընդհանուր հոհոցի բոպէին ներս մտաւ նոր ուսուցիչը:  
Օհանեանը վեր կացաւ, կաղէկազ, շորերը թափ տալով՝ հասաւ  
իր տեղը, իմ կողքին, և դողդողալով մեաց կանգնած: Երբ ուսուցիչը  
ամբիոն բարձրանալով՝ գլխով տրաւ որ նստենք, Օհանեանը վերջինն  
էր, որ նստեց:

բ.

Ցուցակը բաց անելով, ուսուցիչը սկսեց մէկ մէկ կարգալ բոլո-  
րիս անունները և մեզ հետ ծանօթթնալ:

զրութիւնս շատ լաւ էր, ես չէի կարողանում ծիծաղս զսպեմ։ Նրա սուր, սեպածե մօրուքը, տըմութբացող երկար-երկար բեխերը, բարակ ու կեռ քթին շարունակ ցնցւող ոսկէ պենսնէն, ապակիների տակից ճաճապացող արագաշարժ աչքերը, ամենը ինձ շատ ծիծաղցնում էին։

Մըկեկը, — շնչացի ես ընկերոջս ականջին, — մըկեկը։

Ընկերու փոթկաց. մի հինգ ըուպէից արդէն ամբողջ դասարանը քթի տակ կրկնում էր՝ մըկեկը։ Հակառակի պէս նրա զլիի մազերի մի խուրձն էլ այնպէս էր վեր ցցւել, որ բոլորովին այծի պոզի էր նման…

Նա իմ անունս տւառ և սկսեց հարցնել, թէ առաջ որտեղ եմ սովորել։

— Մեր քաղաքի ծխական դպրոցում, — յանդուզն պատասխանեցի ես՝ աշխատելով գլուխս ու կզակս այծի պէս թափահարել։

Բոլորը հազիւ հազ էին ծիծաղները պահում։

Ապա ուսուցիչը հասաւ ցուցակով վերջին աշակերտի անւան։

— Օհանեան Վազէ, — կարդաց նա յանկարծ։ Ցուցակում սխալ մամբ «Վաչէի» տեղ տպւած էր «Վազէ»։

— Վազէ, վազէ, — շտապով ետեկց թելազրեցի ես Օհանեանին։ Նա էլ գժի պէս տեղից վեր թռաւ ու մի քանի քայլ առաջ վազեց։ Նրան կանգնեցրեց ամբողջ դասարանի միտհամուռ փոթկոցը։

Տեղն ու տեղը սառած մնաց ու խղճալի կերպով դէս ու դէն էր նայում։

— Ո՞րտեղացի ես՝ հարցրեց աւսուցիչը։

— Ապարանի գոմէշ է, — պատասխանեց այն ծայրից մէկը։

— Դմբո ծառայ Ցիսուսի Քրիստոսի. — կանչեց մէկ ուրիշ։

— Լորի, — ուզում էի աւելացնեմ ես՝ միշելով Օհանեանի երրորդ մականունը, բայց իսկոյն գլուխս խոնարհեցի և աշխատեցի թաք կենամ իմ առջե նստած ընկերոջն ետեք, որովհետեւ նկատեցի՝ ինչպէս ուսուցիչը յանկարծ տեղից բարձրացու, դէմքը խոժոռեց, մի այնպիսի խիսա հայեցը նստեց դասարանի վրա, որ իսկոյն ամենքո մնջւեցինք։

— Դու երկրորդ ապրեցի ես, տղաս, — հարցրեց նա այնպիսի քաղցրութեամբ, որ դեռ երբէք ոչ մէկ ուսուցչի բերանից չէր լսել Օհանեանը։

Օհանեանը առաջւայ պէս քար կտրած՝ մէջտեղ կանգնած էր. նա աչքերը չուել էլ ուսուցչի դէմքին՝ կարծես աղերսելիս լինէր որ խը-

նայի, թողնի իրեն՝ զնա նստի տեղը։

— Երկրորդ տարեցին ես, տղաս, — կրկնեց ուսուցիչը աւելի քըն-քշութեամբ։

— Հրամել ես, — վերջապէս դուրս թռաւ Օհանեանի կրծքից գիւղական գուեհիկ արտասանութեամբ։

— Ոչինչ, — շարօնակեց նոյն մեղմութեամբ ուսուցիչը. — Երեխ մի բան քեզ խանգարել է անցեալ տարի։ Այս տարի լաւ կը սովորենք ու յաջորդ դասարանը կանցնենք, այնպէս չէ, Վազէ։

— Վազէ չէ, պարոն, Վաչէ է, ցուցակում սխալ է տպւած. Ոչ մի ուսուցչի դասը չի պատրաստում, բան չը գիտէ, — նկատեցի ես իմ տեղից և ուզում էի աւելին էլ ասեմ, որ մինչեւ անդամ գրքեր էլ չի առնում, բայց ուսուցչի խիստ հայեցքը ինձ կանգնեցրեց…

գ.

Յունւարի սկզբին էր. նախկին ուսուցիչը ծանր հիւանդացել էր և նրա տեղը հրաւիրել էին նորը։

Մեր անցած ու սովորածից մի քանի բան հարցնելուց յետոյ, ուսուցիչը սկսեց նոր դասը պատմել։

Նո պատմում էր սկզբում անվստահ ձայնով՝ կարծես մեղմանից քաշւելով, բայց յետոյ պենսնէն հանեց, աչքերը արորեց, ճակատը շինց ու յանկարծ սկսեց խօսել մի ուրիշ, բոլորովին փոխւած ձայնով. հետզհետէ աւելի ու աւելի ոգեստելով։

Մի տարութիւն անցաւ ամբողջ դասարանով։

Մենք իրար երես նայեցինք ու ակտմայ ամբողջ հոգով կղանք ձայնին։

Բառերը այնպէս պարզ էին և հասկանալի, պատկերները այնպէս վառ, գեղեցիկ ու գրաւիչ։

Կարծես մեր աչքի առջև ամեն ինչ կատարւելու լինէր. Եւ Արտաշէսի ծծմօթ ծեռքով ազատւելը, և հովիւների վրաններում թաք կենալը, և Մարաց պալատում ընդունւելը, արքայազուն մանուկների հետ մեծանալը. Ահա դայեակ Մարատ Բագրատունին կանգնած է Մարաց թագաւորի առջե, էլ ոչ մի ուրիշ պարզ չի ուզում իր յող-թութիւնների համար, միայն թէ թագաւորն զօրք տայ, որ իր սիրելի սան Արտաշէսին կարողանայ հայրական դաեկի վրա նստեցնի։

Սհա խնամիօններ է ուզարկում Արտաշէսը Աղանտց թագաւորի մօտ գեղեցիկ Սաթենիկին ուզելու։

«Ո՞րտեղից պիտի տայ Արտաշէսը հազար հազարներ և բիւր բիւրեր Ալանաց աղջկայ համար»:

Աշոկերտներից մէկը կամացուկ անցաւ եռեխ նօտարանից առաջնը և կծկւց ընկերոջ կողքին: Մի երկու ըստէից նոյնը արաւ մէկ ուրիշը, երկրորդը և կարճ ժամանակամիջոցում գրեթէ ամբողջ զառարանը անազմուկ տեղափոխւել էր տառվին նստարանները, ուսուցչին աւելի մօտիկ:

Օհանեանն էլ փորձեց վեր կենայ, առաջ անցնի, բայց անհամարձակ դէս ու դէն նայեց և շսփթւած կրկին տեղն իջաւ: Ահադին գլուխը կրթնած կոշտ ձեռքին, նա աչքը չէր հեռացնում ուսուցչի դէմքից:

Զանգը տւին:

—Վա, էսպէս զնւտ,—լուեց եռեկից մէկի բարձր բացականչութիւնը:

Ես ետ նայեցի՝ Օհանեանն էր. նա կանգնած էր ամբողջովին կարմրած. մինչև անգամ նրա լօշ-լօշ ականջները կաս կարմիր էին կարել:

Ճանապարհ գցեցինք մեր նոր ուսուցչին, մեր մէջ վճռելով, որ նա լինելու է մեր սիրելին:

Դ.

Յաջորդ գասից առաջ մենք խումբ խումբ բաժանւած՝ պատըշ-դամբաւմ եռանգով պատմում էինք իրար նոր ուսուցչի աւած դասը. Ամեն մէկս անպատճառ ուզում էր ամեւից լու պատասխանի: Օհանեանն էր միայն, որ, ինչպէս միշտ, մանակ մտն էր գալիս, ախուր և զլուխը քաշ գտած: Ոչ ոք նրան չը հարցրեց՝ դասը գիտէ, թէ ոչ... Ի՞նչ նրա դդում գլխի բանն էր դաս սազրել:

Երկրորդ տարբէն էր, ինչ եկել մտել էր մեր դպրոցը, և նէնց առաջին օրւանից բոլորի առարկան էր դարձել: Նըս դիւշական արեիները, նրա կարճ չուփան, փորից վեր կապւած քարոկ կաշ-է գոտին, կարմիր արխալուխը ամենք և անվերջ կատակների ոռիթ էր տալիս: Բայց և յետոյ, երբ վերջապէս շորերը փոխեց ու բլուզ հագաւ, այն ժամանակ էր, նէնց ոք բերանը բաց էր անում և իր գոենիկ լեզուվ սկսում էր խօսել կամ զաս պատմել, ամեն կողմից սրբառութիւնների տարափ էր զվարին թափւում, և նա խսկայն լրում

էր և վախեցած դէս ու դէն նայում: Նրա խոշոր, անշնորհը մարմինն էլ պակաս չէր ծիծաղեցնում մեզ և շուտով ՇԱՊԱՐԱՆԻ գոմէշը պատ-հաւոր անունը հաստատ կպաւ նրա ճակատին: Ոչ մի դաս չէր պա-տասխանում, և բոլոր ուսուցիչները նրան ծոյլ, բթամիտ, նոյն իոկ ապաշ էին համարում և ոյլ ևս ամիսներով չէին հարցնում...

Ե.

Հայոց պատմութեան դասը սկսեց: Այս անդամ գտարանում այնպիսի լուսթիւն էր, կարծես որբազան արարողութիւն էր կատարուած:

Նրանի ումը պիտի հարցնի. ամեն մէկս ուզում էր որ ինքը վնի այդ երջանիկը:

—Օհանեան, —յանկարծ լուեց ուսուցչի ծայնը:

Թիչ մաս բարկութիւնից վեր թոչէի: Հիմա էտ անշնորհը պի-տի վեր կենայ, մի կէս ժամ լուս կանգնի, ուղից ոտք փոխելով կմկմայ, դասը անհամացնի:

Օհանեանը կանգնեց. բոլոր աշտկերտները նրա կողմը դաշտան, կարծես առելով. «Սամ, չը գիտեմ ու տեղդ նստի»:

Երբէք նրան այդպէս գունատ չէի տեսել, կարծես կաթաղան պիտի հանէին:

—Դէս, Օհանեան, ինձ մօտ արի, տպաս, ու պատմի:

Հարբածի նման մօտեցաւ Օհանեանը ամբիոնին: Ամբողջ մարմ-նով գողում էր, ձեռներով ջղաձգօրէն արորում էր բլուզի փէցերը, շրթունքները անձայն շարժւում էին:

—Նա չը գիտէ, —բացականչեցի վերջապէս ես:

—Վաչէն այսօր դասը գիտէ—առաւ ուսուցիչը այնպիսի հաս-տատ համողմունքով, որ մենք զարմացած նայեցինք իրաւ:

Օհանեանը կլուփը թափ աւաւ թէ այն, գիտեմ:

—Դէս, Սանատրուկի բոլոր զաւակներին երւանդը կոտորեց, ո-գաւաւեց միայն Արտաշէսը..., —ծայր աւաւ ինքը ուսուցիչը:

—Ա...զատւեց մի...այն Արտաշէսը, —կրկնեց Օհանեանը:

—Այն, միայն Արտաշէսը, —սիրտ էր տալիս ուսուցիչը: Ես անհամբեր սպասում էի, թէ յետոյ ինչ կը մինի:

—Նը...րան փափցրեց ծծմէրը:

—Ծծմայրը. ճիշտ է:

—Փախցրեց ու մտաւ շոբանների չաղըքները:

—Ճիշտ է, ճիշտ է:

—Թաք կացաւ չոբանների, հե...հովիւմերի մօտ,—ուզգեց ինքն իրեն Օհանեանը:—Եւ մը...տածում էր. «Էս... ինչպէս... պիտի... երեխին... մեծացնեմ... Արի, ղրկեմ մարդ.. Սմբատ Բ... Բագրատունու մօտ, թող... գայ... երեխին... աէրու...թիւն ա...նի».

Ամենքս ժալտացինք: Գըիգոր Մէջլումեանը, որին «Կոտրած գլուշ» էինք ասում, առաջին նստարանից շուր եկաւ իմ կողմը՝ չը լինի թէ ես եմ դասամիջոցին նրան պատմել: Բայց ես էլ գարմացած էի:

—Այս, այս, այդպէս էր մտածում ծծմայրը, —խրախուսում էր ուսուցիչը:

Օհանեանը անհուն շնորհակալութեամբ լի հայեացը ուզգեց նըրան, խոր հոգոց հանեց, կարծես մի ծանր բեռ ընկաւ ուսերից, ու աւելի ազատ շունչ քաշելով, արդէն համարձակ շարունակեց իր պատմութիւնը:

Լսում էի ու ինքս իմ ականջներիս չէի հաւատում... Մբթէ «Դմբօ ծառայ Ցիսուի Քրիստոսին» է պատմողը, «Ապարանի գոմէշը»...

Նա պատմում էր՝ մեղ գրայ ոչ մի ուշադրութիւն չը գարձնելով, դիմելով միայն ուսուցչին, զանազան մանրամասնութիւններ աւելացնելով իրենից, զարդարելով, ծաղկեցնելով ուսուցչի պատմածը: Նոյն իսկ նրա զիւղական դարձւածքները համով էին գուրս գալիս, և ոչ ոքի մտքով չէր անցնում ծիծաղել նրա գործածած թուրքերէն բառերի վրա: Եւ այնպէս հետաքրքրական ձևով էր խոսում, որ բոլոր սիրով ականջ էինք զնում, կարծես նոր բան պատմելիս լինէր: Ուսուցիչն էլ պամենայն ուշադրութեամբ լսում էր, գլխով բաւականութիւն յայտնելով երբեմ օգնելով և յիշեցնելով:

—Ապրես, շատ լու է, —բացականչեց վերջապէս նա, ձեռքը տղի ուսին դնելով, և ուղղեց նրա քրտնած ճակատին թափւած մազերը: —Հիմա գու գնա նստի, թող ուրիշը շարունակի:

Ամենքս պարզ նկատեցինք, որ ուսուցիչը նշանակեց հինգ:

Նախանձեցի Վաչէին և բոլորովին մոռացայ նրա նստելու ժամանակ բռունցքս տակը դնեմ, որ յանկարծ վեր թռչի, ինչպէս զրեթէ միշտ անում էի: Նախանձեցի, բայց և ակամայ սկսեցի յարգել: Կողեից աշքին ծայրով նայեցի նրան, զէմթը երջանկութիւնից փայլում էր...

Դասը վերջացաւ: Վաչէն զիմեց գէպի գուռը, զգուշութեամբ և շաապով, մեղ չնայելով, կարծես ներողութիւն ինդրելով, որ այսօր այսպէս պատահեց: Յանկարծ փոքրիկ Սահակեանը, որ յայտնի է իր

հարպիկութեամբ, վեր թռաւ, ցատկեց նրա ուսին ու բարձր կանչեց: —Կեցցէ Օհանեան, հինգ:

Սահակեանին սաքերից բանած, ժպատով, դուրս վազեց Օհանեանը դասարանից:

Մեծ դասամիջոցն էր. Վաչէն առաջին անգամ զերի խաղաց մեղ հետ...

զ.

Յաջորդ դասին ուսուցիչը պատմելիս կարծես միայն նրա հետ եր խօսում: Ես այդ շատ լաւ զգում էի: Վաչէն լսում էր քաղցր հրճանակով և ՚իացմունքով: Եւ յետոյ միշտ, երբ միւս աշակերտները չէին կարողանում պատասխանեն, նա էր մատը բարձրացնում, նոյն իսկ երբեմ առաջին աշակերտի գոխարէն...

Մի օր էլ ես ստիպւած նրանից մի բան հարցրի և խնդրեցի որ պատմի...

Եւ ահա մէկ ամիս էլ չանցած՝ մի խումբ աշակերտներ հայոց պատմութեան դասից տռաջ միշտ շրջապատում էինք նրան. միևնոյն բանը ատան անգամ մեղ կըկնում էր:

Մէկ անգամ էլ մտնում եմ դասարան, տեսնեմ առել է թւաբանութեան գիրքս ու դասն է սովորում: Զը խլեցի ձեռքից:

Բարեկամացանք: Խոստովանեց, որ հայրը փող չի ուղարկում դասագրքեր առնելու և որ ապրում է ծանօթ մի հացթուխի խանութում:

Այդ օրից միշտ իմ գրքերս էի տալիս: Հէնց օր մի սրեկ առարկայի սկսուցիչ ներս էր մտնում, վեր էի կենում ու աեղից կանչում.

Պարոն, Օհանեանին հարցրէք, այժօր նա դասը զիտէ: Եւ ճշմարիտ որ դասը զիտէր: Հրաշք էր...

Գարունը եկել էր, անձրեները գալիս էին հա գալիս: Հաւաքւել էինք դասարանում, դուռը փակել և պար ըսնել: Մէկը ամբիոնի տախտակին խփելով՝ թմրուկ էր ածում, միւսներս պարում էինք: Միայն Վաչէն էր, որ մի անկիւնում առանձնացած՝ աշխարհագրութեան դասն էր սովորում:

—Վաչէին, Վաչէին, մէջ բերէք Վաչէին, —կանչեց պարովներից մէկը:

Բոլորս վրա թափւեցինք, սկսեցինք քաշընել. գերօն նրա ձեռքից վայր ընկաւ, զառաւեց:

—Թաք կացու չսրանների, հե...հովիւմերի մօտ,—ուզգեց ինքն իրեն Օհանեանը:—Եւ մը...տածում էր. «Էս... ինչպէս... պիտի... երեխին... մեծացնեմ... Արի, զրկեմ մարդ... Սմբատ Բ... թագրատու- նու մօտ, թող... զայ... երեխին... տէրու...թիւն ա...նի»:

Ամենքս ժպտացինք: Գրիգոր Մէջլումեանը, որին «Կոտրած գլուշ» էինք ասում, առաջին նոտարանից շւար եկաւ իմ կողմը՝ չը մինի թէ ես եմ դասամիջոցին նրան պատմել, Բայց ես էլ գործացած էի:

—Այս, այս, այդպէս էր մտածում ծծմայքը, —խրախուսում էր ուսուցիչը:

Օհանեանը անհուն շնորհակալութեամբ լի հայեցքը ուզգեց նը- րան, խօր հոգոց հանեց, կարծես մի ծանր բեռ ընկաւ ուսերից, ու աւելի ազատ շանչ քաշելով, արդէն համարձակ շարունակեց իր պատմութիւնը:

Լսում էի ու ինքս իմ ականջներիո չէի հաւատում... Մըթէ «Դմբօ ծառայ Յիսուսի Քրիստոսին» է պատմողը, «Ապարանի գոմէշը»...

Նա պատմում էր՝ մեղ գրայ ոչ մի ուշադրութիւն չը դարձնելով, զիմելով միայն ուսուցչին, զանազան մանրամասնութիւններ աւելաց- նելով իրենից, զարդարելով, ծաղկեցնելով ուսուցչի պատմածը: Նոյն իսկ նրա գիւղական դարձւածքները համով էին դուրս գալիս, և ոչ ոքի մտքով չէր անցնում ծիծաղել նրա գործածած թուրքերէն բա- ռերի վրա: Եւ այնպէս հետաքրքրական ձևով էր խօսում, որ բոլոր սիրով ականջ էինք զնում, կարծես նոր բան պատմելիս լինէր: Ու- սուցիչն էլ ամենոյն ուշադրութեամբ լսում էր, զիսով բաւականու- թիւն յայտնելով երբեմ օդնելով և յիշեցնելով:

—Ապրե՞ս, շատ լու է, —բացականչեց վերջապէս նա, ձեռքը տղի ուսուին զնելով, և ուզգեց նրա քրտանած ճակատին թափւած մա- զերը:—Հիմա գու զնա նստի, թող ուրիշը շարունակի:

Ամենքս պարզ նկատեցինք, որ ուսուցիչը նշանակեց հինգ:

Նախանձեցի Վաչէին և բոլորովին մոռացայ նրա նստելու ժա- մանակ բռունցքս տակը զնեմ, որ յանկարծ վեր թուշի, ինչպէս զրեթէ միշտ անում էի: Նախանձեցի, բայց և ակամայ սկսեցի յարգել: Կող- եց աշքիս ծայրով նայեցի նրան, զէմքը երջանկութիւնից փայ- լում էր...

Դասը վերջացաւ: Վաչէն զիմեց գէպի գուսը, զգուշութեամբ և շապով, մեղ չնայելով, կարծես ներողութիւն ինդրելով, որ այսօք այսպէս պատահեց: Յանկարծ փոքրիկ Սահակեանը, որ յայտնի է իր

ճարպիկութեամբ, վեր թառւ, ցատկեց նրա ուսին ու բարձր կանչեց: —Կեցցէ Օհանեան, հինգ:

Սահակեանին սաքերից բանած, ժպտալով, դուրս վազեց Օհա- նեանը դասարանից:

Մեծ դասամիջոցն էր. Վաչէն առաջին անգամ գերի խաղաց մեզ հետ...

Պ.

Յաջորդ դասին ուսուցիչը պատմելիս կարծես միայն նրա հետ եր խօսում: Ես այդ շատ լաւ զգում էի: Վաչէն լսում էր քաղցը հրձւանքով և հիացմունքով: Եւ յետոյ միշտ, երբ միւս աշակերտները չէին կարողանում պատասխանեն, նա էր մատը բարձրացնում, նոյն իսկ երբեմ առաջին աշակերտի փոխարէն...

Մի օր էլ ես ստիպւած նրանից մի բան հարցը և խնդրեցի որ զատմի...

Եւ ահա մէկ ամիս էլ չանցած՝ մի խումբ աշակերտներ կացոց պատմութեան դասից առաջ միշտ ըրջապատռում էինք նրան. միենոյն բանը ասան անգամ մեզ կըկնում էր:

Մէկ անգամ էլ մտնում եմ դասարան, տեսնեմ՝ առել է թւաբա- նութեան գիրքս ու դասի է սովորում: Զը խլեցի ձեռքից:

Բարեկամացնք: Խոսապվանեց, որ հայրը փող չի ուղարկում դասագրքեր առնելու և որ ապրում է ծանօթ մի հացթուխի խա- նութում:

Այդ օրից միշտ իմ գրքերս էի տալիս: Հէնց որ մի որևէ առար- կայի ուսուցիչ ներս էր մտնում, վեր էի կենում ու աեղից կանչում:

—Պարոն, Օհանեանին հարցրէք, այժօր նա դասը գիտէ:

Եւ ճշմարիտ որ դասը գիտէր: Հրաշք էր...

Գարունը եկել էր, անձրեները գալիս էին հա գալիս: Հաւաքւել էինք զաստրանում, գուսոր փակել և պար բռնել: Մէկը ամբիոնի տափ- տակին խփելով՝ թմբուկ էր ածում, միւսներս պարում էինք: Միայն Վաչէն էր, որ մի անկիւնում տանձնացած՝ աշխարհագրութեան դասն էր սովորում:

—Վաչէին, Վաչէին, մէջ բերէք Վաչէին, —կանչեց պարովներից մէկը:

Բոլորս վրա թափւեցինք, ոկսեցինք քաշշել: Գիրքունրա ձեռքիցը վայր ընկաւ, պատաւեց:

—Ապարանի գոմէշ, Էյ գոմէշ, պոր արի. զամշախաղդ ցոյց  
տուր,—կանչեց յանկարծ Շկուրած գուլը Գրիգորը:

Օհանեանը կատաղեց և մէկ այսպիսի քացի տառ Գրիգորին,  
որ Գրիգորը ետ-ետ գնաց, դիպաւ գուանը, դուռը բացւեց, ապակին  
փշւեց, Գրիգորն էլ ձգւեց պատշաճի վրա:

Ուղիղ է, այդ օրը Օհանեանը պատժւեց, բայց այնուհետև էլ ոչ  
ոք չը համարձակւեց նրան «Ապարանի գոմէշ» կանչի:

1) Ի՞նչ էր պատճառը, որ Օհանեանը սկզբում այդպէս ինեղծ էր  
ու անընդունակ: Եւ իսկապէս անընդունակ էր ու պաշտպանելու ուժ  
չոնե՞ր:

2) Ուսուցիչը ինչ արաւ, որ նրան փոխեց: Ուսուցչի վարժունքը  
պատահմէնք էր:

## 15. Սշտմքը սարերում

Աշունն էլ նկաւ: Ու մեր աշխարհում  
սարին ու դաշտին այլ կետնք է եռում:

Խուզելով գառան, ոչխարի բուրդը՝  
բոչել է բինեն թողնելով իւրդը:

Լեռներից զւարթ, գէրացած հոտեր  
ձըմեռւան համար իջել են դաշտեր:

Խւրդերը գտարի, ռեին են տալիս,  
աղբիւր ու ծաղիկ ողբում են լալիս:

Մենակ խաղում է, թըռչատում պախրան,  
սարեր ու ձորեր մասին նըրան:

Արծիւն էլ արխուր նըստած ժայռերին՝  
որս է փշնալում իր սովոծ փորին:



## 16. Բորը

Բորը այն շների ազնիւ ցեղիցն էր, որոնց հայրենիքը Նիւ-  
ֆառնովենդ կղզին է: Այդ շների գլուխը լայն է, պոչը թաւ, մա-  
զերը երկար. մատների արանքները պատած են թաղանթով, այդ  
պատճառով էլ հրաշալի լոզ են տալիս:

Բորը ծնւել էր մի անգլիական նաւի վրա, որ Հիւսիսային Ամե-  
րիկայի որեելեան ափի մօտ խարիսխ էր գցել:

Բորը երբեմն օրերով լող էր տալիս. և տանձին հաճութեամբ  
սուզւում ու համում էր ջրի տակից զանազան իրեր, որ գցում էին  
ջրի մէջ էր աէրը կամ ուրիշները: Մանուտնդ շատ էր ուրախանում,  
երբ իր աէրը, մի երխասարդ նաւաստի, առաջարկում էր նրան  
զնան միասին լող տալու: Այն ժամանակ նա թաւալում էր ջրի մէջ,  
ափից հեռանում էր, կըկին վերադառնում, սուզվում էր, անցնում  
ափրոշ տակով և հազար ու մի կտակիներ էր անում: Բորը շատ էր  
սիրում իր ափրոշը, որ մի շիատի ու բարի մարդ էր:

Քանի քանի նաւահանգիստներ այցելած էին նրանք միասին ով-  
կանոսի այս և այն կողմերում, քանի անգամ Բորը պահապան էր  
նստել իր ափրոշ կողքին, երբ նա նաւահանգիստի պանդոկներից մէկում  
հարբելուց յետոյ ընկնում էր փողոցի մի անկիւնը ու քնում. ոչ ոք  
չէր համարձակւում զնոծ նաւաստան մօտենայ ու կողպատի, քանի նրա  
կողքին, գուգիք թաթերի վրա զբած, հսկում էր հաւատարիմ շունը:

Մի գիշեր, երբ նաւը մօտենում էր Անզլիայի ափերին, սարսա-  
փելի փոթորիկ բարձրացաւ և նաւը փշրեց։ Բոլոր ճամբարդները և  
ծառայողները խեղդուցին։ Բորը իսկոյն և եթ ջուրն ընկաւ, հրաւի-  
րելով տիրոջն էլ հետեւելու իր օրինակին։ Նրանք լողում էին դէպի  
ափը, որ հազիւ էր նշմարւում։ Այսպէս մօտ երեք վերսա լող տալով  
մարդն ու շունը հասան մի քանի ժայռերի, որոնք դուրս էին ցցւած  
ջրի միջից և ուժասպառ ընկան։ Բայց քարերը չէին կարող իրեւ  
հաստատ ապաստան ծառայեն, որովհետև մօտ էր մակընթացու-  
թեան ժամանակը, ժայռերը ծածկւելու էին և ալիքները խեղճերին  
կըկին պիտի քաշէին դէպի ծովը։

Նաւասահին էլ փորձում էր գոռայ, կանչի, բայց բացի ալեկսծ  
ծովից ոչ ոք ձայն չէր աալիս նրա կանչին։ Բորը պառկել էր և փա-  
ղաքանքով նայում էր տիրոջը, կարծես տսել էր ուզում։ «Ինչո՞ւ ես  
յուստհատւում. դու զիտես, որ ես լաւ եմ լող տալիս, միթէ ես քո  
ազատութեան համար ոչինչ չեմ կարող անել»։

Տերը կարդաց իր շան մեծ աչքերի մէջ նրա միտքը և սիրո  
առու։ Գրպանից հանեց մի բանալի, դրեց շան բերտնը և ցոյց տա-  
լով ափը՝ ասաւ. «Հող տնըր»։ Բորը նետւեց ջուրը, հասու ափը և  
հաչելով սկսեց օգնութեան կանչել։ Բայց ալիքները նրա ձայնը  
խլացնում էին։ Այն ժամանակ Բորը աւելի տուած վազեց և իր ոռնո-  
ցով զարթեցրեց մօտիկ ագարակում ապրող մարդկանց։ Նրանցից մի  
քանիսը դուրս թռան։ Բորը արտասւալից աչքերով մօտեցաւ և լիզեց  
նրանց ձեռքերը։ Յետոյ պառկեց նրանց ոտքերի տակ և կըկին ողբախ  
ձայնով ոռնաց։

Տեսնելով բանալին՝ կալւածատէրը հասկացաւ, որ իր առնից ոչ  
հեռու մէկը օգնութիւն է կանչում։ Բորը իսկոյն վեր կացաւ զետնից  
և արագ վազեց դէպի ծովափը։

Մարդիկ հետեւցին նրան, վերցնելով հեաները մի երկար պա-  
րան։ Ծովափին Բորը կանցնեց ու բարձր ոռնաց, կարծես ուզում էր  
յայտնի իր խեղդող տիրոջ, թէ զալիս են օգնելու։ Տիրոջ յուսա-  
հատ աղաղակը պատասխանեց հաւատարիմ ընկերոջ անհոնդիսու  
ունցին։

Մինչդեռ մարդիկ դատում էին, ինչպէս օգնեն խեղդողին, Բորը  
բանեց պարանի ծայրեց և նետւեց ծովը։ Մարդիկ ապշեցին շոն-

նարագիտութեան վրա. սկսեցին բաց թողնել պարանը, պահելով  
միւս ծայրը իրենց ձեռքում։ Բորը մէկ սուզուում, մէկ նորից երե-  
ւում էր ջրի երեսին, բայց տիրոջ աղիողորմ ձայնը նրան նոր ուժ  
էր տալիս և ստիպում էր դիմագրել ամեն արգելքների։ Եւ վերջա-  
պէս հասաւ ճիշտ ժամանակին. եթէ մի քիչ էլ ետանար, արդէն ուշ  
կը լինէր։ Խեղդողի ուժը սպառւում էր, իսկ մտկընթացութիւնը  
որդէն սկսել էր ծածկել ժայռի գագտթը։

Նաւասահին բռնեց պարանը, կապեց իր մէջքին և իմաց ուաւ  
գիւղացիներին որ քաշեն։ Նաւասահին հազիւ հաղ էր կարողանում  
լող աալ թուլացած ձեռքերով։ Բորը նրա կողքից չէր հեռանում և  
իր հաշոցով սիրտ էր տալիս թուլացած ընկերոջը։ Այսպէս քառորդ  
ժամ ալիքների դէմ կուելուց յետոյ տէրն ու շունը վերջապէս հա-  
սան ափը։ Շունը ուժասպառ ու անզգայ ընկաւ գետին։ Նրանց  
երկուուին էլ աեղափոխեցին ագարակը, այնտեղից էլ Լոնդոնի հիւան-  
դանոցը։ Բայց տէրը երկար չապընց ու մեռաւ։

Երբ Բորը հասկացաւ, որ որբացել է ու իր տէրը էլ չը կայ,  
աղիողորմ ոռնաց և գուրս եկաւ հիւանդանոցի բակից. ինքն էլ չըգիտէր  
ուր գնայ... Տիսուր սրտով շըջում էր ամբողջ օրը մեծ քաղաքի փո-  
ղոցներում, աշխատելով խոյս ուայ բազմութիւնից։ Վշտից քաղց էլ  
չէր զգում։ Այդ գիշերը նա անցկացրեց փողոցի սալայատակի վրա։  
Երկու օր և երկու գիշեր Բորը ապրում էր այդպէս փողոցում  
և ոչինչ չէր կերել. սոված պառկում էր, սոված վեր կենում։

Միայն երրորդ օրը էլ չը դիմացրաւ, այնքան թուլացել էր, որ  
հազիւ էր կարողանում աեղից վեր կենայ։

Հետեւեալ օրը նրան գտան փողոցում անզգայ և ուղարկեցին  
«Ճնկրի ապաստարան»։ Ուր էր առաջւայ Բորը. հիմա նրան չէր էլ  
կարելի ճանաչել։ Կուրծքն ու փորը ծածկւել էին ցելիք հաստ շերտով,  
ուր մարմի շարժումներից տեղ-տեղ ճարճքել և թեփի նման էր գա-  
ռներ իսկ թաթերին կործես ցեխից կօշիկներ էին։

Նրան ազտասղը կենդանիներին հովանաւորող ընկերութեան ան-  
դամերից մէկն էր։

Այդ ընկերութեան բարեգործական բազմաթիւ հաստատութիւն-  
ներից մէկն է՝ «Ապաստարան սոված և հիւանդ շների համար»։ Հիմ-

նարկութեան օրից ապաստարանում տեղ են գտել տասնեակ հազարաւոր շներ, որոնք ազատւել են թափոռական կեանքից և հաստատ մահից: Ամեն տարի ապաստարանում երեք հազարից աւելի շուն է ընդունւում բժշկւելու և կերակրւելու: Նրանց կէարից աւելին ետ են վերցնում նախկին տէրերը, որոնք նրանց կարցրել են, իսկ մացածներին մի որոշ ժամանակ պահում են, մինչև որ գտնւեն նոր տէրեր: Ամեն մարդ կարող է մտնի ապաստարանը, ջոկի իր համար մի որեւէ շուն ու տանի, եթէ շունը երկու շաբաթ արգէն մացել է այնտեղ և նախկին տիրոջը դանելու յայսն էլ բոլորովին կարած է:

Երբ Բորը մի լաւ կերակրւեց ու կազդուրւեց, ոկուց ձանձրանալ անզործութիւնից, ոռնալ ու հաշել: Այդ ժամանակն էր, որ եկաւ մի բարձրախառակ մարդ և պահանջեց իր համար մի մեծ խելօք, ու ժեղ և առողջ շուն:

—Այդպիսի մի շուն ունենք, պատասխանեց ապաստարանի վերակացուն, որը այդ գործին հմուտ և շուն սիրող մի մարդ էր: Կանչեցին Բորին, որը պարոնին շատ դուր եկաւ:

—Ի՞նչպէս է սրա անունը:

—Անունը Բոր է, պատասխանեց վերակացուն:

—Դուք էք սրան այդ անունը տւեր:

—Այս, ես եմ այդ անունը տւել և համոզւած եմ, որ իսկական անունն էլ էնց այդ է: Նա միշտ փաղաքշանքով է նայում և պօչք շարծում է, երբ Բոր ենք կանչում:

Եւ այսպէս Բորին վերցրին ապաստարանից:

#### 4.

Բորը այս անգամ ընկաւ մի քաղաքապահի ձեռք, որը իր կերպին դիշերները նոկում էր փողոցում: Նոր ոէրը, դիշերւայ մենակութեան մէջ ընկեր ունենալու համար, շան էլ իր եետն էր առնում: Մէկ անգամ խաւարի միջիս լուեց մի ճիչ, օգնութեան մի կանչ: Բորը մի ակնթարթում աեղից վեր յառակեց ու առաջ ոլացաւ: Քաղաքապահը հազիւ էր նրան նշմարում մթութեան մէջ: Բայց ան լուեց մի այլ ճիչ: այս անգամ մէկ ուրիշն էր կանչում: Քաղաքապահը մօտ վագելով տեսաւ, որ Բորը իր ոուր ստամերով բռնել է մի մարդու ոտից, իսկ միւսը՝ սարսափահար դեռ շարունակում օգնութեան կանչել:

Բանից երեաց, մի չարագործ յարձակւել էր անցորդի վրա և

կամեցել էր նրան կողոպտի, որ շունը վրա էր հասել:

Քաղաքապահը ազատեց չարագործին Բորի ատամներից ու քաշաւութիւնը: Այդտեղ իսկոյն արձանագրութիւն կամեցեցին, իսկ յաջորդ օրը լրագիրների մէջ ապագրւեց խելացի շան քաջ վարմունքը:

Ոստիկանագեանի կարգադրութեամբ Բորին ընդունեցին սստիկանական շների շարքը, հասարակական գործիչ պատրաստելու համար: Բորը սրտով կպաւ իր նոր ծառայութեանը:

Մի քանի օրից յետոյ Բորը շրից հանեց մի երեխայ, որ ընկել էր թէյմզ գեաը: Յետոյ ազատեց մի կին, որ վշտից ուզում էր գետում խեղդւի: Բորը ոկսեց երկալ հրդեներին և այնտեղ էլ ցոյց էր տալիս իր քաջութիւնն ու անձնագործութիւնը, փրկելով բոցերից փոքրիկ երեխաներին, գուրս քաշելով ախսոներից ձիերին...

Եթէ ցանկանայինք թւել Բորի անձնագրութեան բոլոր գործերը, զեռ շատ բան պիտի պատմէինք: Նրա անունը հաշակւեց: Մի յայտնի նկարիչ նկարեց նրա պատկերը, որը և տպւց թերթերում: Բորին ներկայացրին թագուհուն: Առաջնակարգ ընտանիքներ պատիւ էին համարում Բորին իրենց տանն ընդունելու: Նրան ընտրեցին «Մարդասիրական ընկերութեան» անդամ: Բորը պարզ ստացաւ մի արծաթէ մեղալ մարդկանց փրկելու համար, յետոյ էլ պատւառոր սոկէ մեղալ:

Շունը ստկայն չէր պարծենում այդ պատւանշաններով, այլ ամեն օր անում էր նոր և նոր անձնագործութիւններ: Բորը առաջինն էր երեսում այնտեղ, որտեղ վտանգ էր լինում: Ոստիկանական բոլոր ծառայողները ճանաչում, սիրում և յարգում էին այդ վեհանձն կենդանուն: Ամեն տեղ ծախում էին հովհարներ Բորի պատկերով: Կայս իսկ քաղցրաւենիների տուփերի վրա ապսւմ էին այդ ազնիւ շան գլուխը:

1) Ինչու մեզ մօտ կենդանիներին հովանատրող ընկերութիւններ ըլ կան:

2) Ունենք հիմնարկութիւններ հիւանդ մարդկանց համար, սոված մարդկանց համար:

3) Ոստիկանութեան պաշտօնն լնչ է: Շները էլ ինչ ծառայութիւն կարող են անել ոստիկանութեանը:

## 17. Փորորիկ

Շուտ պահւում են ծովածոցում  
նաւ ու նաւակ, նաւաստիք.  
շըփոթ, աղմուկ, իրարանցում,  
մօտենում է փոթորիկ:

Որոտեւմ են ամպերն ահա,  
շանթեր սփռում վերեից.  
կուտակւում են ծովի վրա  
լեռներ՝ պղտոր ջրերից:

Ծովս ալեկոծ, երկինք խաւար,  
հողմն է սուլում չորս բոլոր.  
աղմըկում են գրկած իրար  
երկու տարերք ահաւոր:

## 18. Եղբ մեզանում

ա.

Մեզանում իշուկը, քոնի որ մէջքին փալան չի դրւել ու կողքերին ճիպոտ չի դիպել, մի շատ ուրախ և կայտառ կենդանի է: Նա մարդկանցից չի քաշւում. ում ասես մօտենում է, հոտոտում, ականջները խլցում, լոք-լոք անում, աջ ու ձախ թոչկոտում, կապկութիւններ տնում. մի խօսքով նա շատ գրաւիչ է...

Բայց մեր իշուկի տարին դեռ չը լրացած, տեսնում են՝ խեղճի մէջքին մի ծանը փալան դրին, փորքաշով պինդ կապկուցին ու մի քանի փութ ծանըութիւն բեռնեցին գիւղ կամ քաղաք առանելու: Խեղճ իշուկի ուժը չի պատում այդ բեռանը, նա ճըկը ճըկը է անում, մէջքից երկակւում է, ոսքերը գողկովում են, ուզում է ճիլկի բեռն տակ, մէկ էլ յանկարծ տիրոջ ճիպոտը այնպէս է շըլմփում գաւակին, որ զարմանքից թէ սարսափից երկու դազ առաջ է թաշում: Էլ կը համարձակէի մեր իշուկը տեղը կանգնի կամ ճըկի: ճիպոտը մէջտ ճըմճըմում է ետեից. ինչքան ուզում է թող մէջքը կոտրւի, ով է նրան հարցնողը...

բ.

Գնում է անքալով մեր իշուկը, քրափնքը լրէ պէս զազում է վրայից, բերանը փրփուր է կտպում. տեսնում է քթի տակին գլխները բարձրացրած փափուկ ու զիլ-զիլ խոտեր, բանջարներ, ախորժակի բացւում է, գլուխը ծռում է գէպի բոյսը, բերանը լայն բոց անում ու հէնց որ ուզում է հափ, կծի, տիրոջ զարանակի թըրը-իկ, զիլ-չում է չոր զիլին, աշքերը կրակ են անում ու դատարկ ծնոտները երար շըխկչըխկում...

Գալիս է մի տառ, գրւգըլում, քըչքըշում է ջուրը, մեր իշուկը տաքից խաշում է, պապակում է լեզուն, ուզում է վրտ ընկնի, մի լաւ խմի, բայց զեռ մաքից չի անցել տիրոջ դագանակի զօրութիւնը, զեռ ևս մըմնջում է խփած տեղը. այս անգամ թողնում է, անցնում: Գալիս է երկրորդ առուն, երրորդը, մէկը միւսից աւելի զարդ, աւելի վճիտ. ծարաւը աւելի ևս անշում է. ճար չըկայ, որ մեռնի, պիտի խմի այս անգամ, և ահա վիզը երկարացնում է, գլուխը կտխում կամաց, ու զեռ խեղճ հաստ շրթունքները ջրի երեսին չը գիտցրած, արքի, էլի դագանակը հասնում է գնչին...

Վերջապէս հասնում է մեր իշուկը տուն՝ բոլորովին թուլացած, բոլորովին յուսահատ. բեռը վեր են տանում մէջքից, մի քէջ դարձոն կամ չօք խոտ թափում առաջը, որ ուտի: Ազահութեամբ մի-երկու բերան հախուում է կերից ու ետ կանգնում, խոռված երեխի պէս. դարմանը խոնաւ կամ փշոտ է լինում, խոար ժանգալներով, կտծուկներով լիքը, այնպէս որ ուտելիս առշում է բերանը: Մի երկու ժամից նրան ջուր են ալիս, նոյն ագահութեամբ խմում, լինում է գատարկ փորը, այժմ ախորժակը աւելի է բացւում, բայց էլի նոյն կերն է տաշջին, ուզի-չուզի պիտի ուտի...

Փոքի հոգուը վերջանում է թէ չէ, այժմ նրան անհանդիսա են անում մի կողմից իշաճանճերը, միւռ կողմից ականջներում հուաքւած լրսերը, փորին ու ոտներին կտած տիզերն ու ցելոի փշուրտանեը, փալանի հարած տեղերը, մի խօսքով նրա ամրողջ մարմինը քոր է գալիս. Բնչ անի, լեզու չունի, որ էր դրութիւնը մարդկանց հոռկացնի, ձեռներ չունի, որ ինքն իրեն քորի. շատ շատ ատաներով կարողանում է միայն առջեկ ոտներն ու գաւակը դրվի և գուգուկ պոչը տատանելով ճանճերին փոխցնի. բայց փորը, մէջքը Զքզում է մի քոնի անգամ, բայց չէ, ոէրը դաշել չի բերում. ճարտկատեղ չսցում է, թըրքի, ընկնում է կողքի վրա, ոտները ողի մէջ բործացնողն...

բացնում, պարան-պարան գալիս ու թաւալ տալիս: Վայ նրան, եթէ տէրը այդպիսի զրութեան մէջ տեսաւ, դարձեալ անիծած դագանակը փշրում է դիմին... Բայց շատ անգամ էլ պատահում է, որ մեր մոխրաթաւալը աեղից բարձրանալիս, այ քեզ բան, փալանը շուռ է գտվու, ընկնում է փորի տակը, ամբողջ ժամերով նա անշարժ մնում է այդպէս և անիծում իր թաւալ տալու ժամը:

#### 4.

Բոլորում է իշուկի չարչարանքի երեք տարին. այժմ նրա հետ հանաք անել չի լինի: Նա թողել է իր առաջւայ խնդիկ-խնդիկ անելը, թռչկոտելը, ուրախ-ուրախ զրզալը, լաւ քէֆի ժամտնակ շան, կատւին ու չար երեխաներին մի-մի աքացի խփելը. այժմ ճիպոտից էլ չի վախենում, ինչքան ուզում ես հասցրու, նրա համար ողջ մէկ է. կեր ու խումի մէջ էլ նազ ու սազ չը կայ. ինչ որ ատլիս են, ինչքան բեռնում են, ուր տանում են, նա անտրառնջ հպատակւած է. մի խօսքով նա դարձնել է կատարեալ էշ...

Եւ ահա մենք այդ էլին տեսնում ենք, ինչպէս զլուխը քաշ, տընքալով, չորս հինգ փութ մէջքին, ոսները գետնին քսօնելով, զիւղը կամ քաղաքն է մանում: Նրան է, որ մենք տեսնում ենք մեր հրապակներում անձրեի, ցեխի կամ ձիւնի մէջ, փայտի, փշի, քարի, հողի, ածուխի կամ մըզեղէնի բեռան տակ, սոված, ծարտ, ուր վեցեօթը ժամ շարունակ մնում է ականջները կախ կանգնած. մեծ ու փոքր արհամարհանքով նայում են նրան, թօշ-թօշ ասում ու անցնում:

Մի բան, որ էջի կեանքում տարիների ընթացքում փոխում է դա միմիայն ծեծի եղանակն է: Նրա կաշին դագանակի հարւածների տակ այնպէս թմրում, անզգայ է դառնում, որ էլ թակը նրան չի ներգործում. հնարագէտ տէրը այժմ բզած փայտ է բանեցնում, որ զըզըղալով ծակում է խեղճի կաշին և աշքերից ջուր թափել տալիս: Վայ նրան, որ մի քիչ դանդաղ դնաց, ու հազար վայ, եթէ պառաւ էշ ցեխի մէջ մայ կամ սառուցի վրա դնալիս սահի ընկնի ու չը կարենայ տեղից շարժաել. էլ սա, քիթ, բերան, զլուխ, ողջ տեղ չի մնայ, շարդուկշուր կը լինի: Նա ամենայն ուրախութեամբ իր շունչը կը փէքը ընկած տեղը, եթէ մարդիկ պոչեց, ոտից, զլիսից բռնած՝ ծեծելով չը բարձրացնէն ու բզրզելով էլի առաջ չը քշէն...

Մեզանում այսպիսի դասն օրերի մէջ է անցկացնում էշը իր կեանքը և տասը, տառնընդ տարին գեռ չը հասած, մի օր էլ բե-

ռան տակ ընկնում, ոտները մի քանի տնդամ գետնին թփում ու յաւիտեան տչքերը փակում:

Խեղծ անասունին ստակելուց յետոյ էլ հանգիստ չի տալիս տէրը. արցանով հանում է սմբակներից մեխերն ու պայտը, կաշին մաշկում է տրեխների համար, իսկ դիմկը՝ մի թոկ կազելով, քաշ է տալիս դէղի ձորը... Այսաեղ է միայն, որ մեր էշը ազատում է իր փալանիցն ու տիրոջ գագանուկիցը...

Որեմն ինչն է էշին անտարքեր, թմրած ու տիմար դարձնող:

## 19. Աղնան տերեւները

Աշնան ոկղըին մի բարակ քամի սարիցը եկաւ, դաշտերը իջու, վըսսաց, փըսփոաց մի բան ամենքին ու ոնցու գնոց անտառը մըտու.

Խոաը չորացու, հողը ցամաքեց, այստեղ ու այստեղ բացւեցին ճեղքեր. անտառը դողաց, ու վախից իսկոյն զեղին գոյն տոան կանաչ տերեներ:

Աշոնը ինչ է փափում ամենքին:

## 20. Չմեռայ դէմ

ա.

Աշունը մօտենում էր իր վախճանին:

Այդ առաջին աշունն էր, որին հանդիպում էինք մենք հօրս մանից յետոյ, երբ պարտատէրերը ծախել-ծոխծիել էին մեր բոլոր պունք ու տեղը, և մենք տեղափախել էինք քեռուս տունը:

Դաշտերն ստանում էին տիսւր ու գունաթափ կերպարնք. կածոչ մարզագետինները օր օրի դեզնում էին. Սնիբիղ փշում էր պառ քամին և թափում էր մերկ ծուերից մացած տերենները:

Երկնքի խոժոռ ու ծոխրազոյն դէմքի վրա զլորում էին մթին ամզերի ահազին բեկորներ և արգելում արեկ թոյլ ճառտգայթները. նիստ տիսւր եղանակով լուսում էր կունկների խուզ կախնչը, որոնք

բարձր եթերի միջով, եռանկիւնի շարքերով, զիմում էին դէպի օտար աշխարհ։ Ծիծեռնակներ ամենեին չէին երևում. գաղուց զաղթել էին։

Միայն մըջիւնները խստ եռանդով կրում էին դէպի իրենց ամբարները ընդեղէնների զանազան տեսակներ։ Ամեն արարած պատրաստում էր ընդունելու ձմեռը՝ այդ անտխորժ կրը։

Այդ օրերը սակաւ հոգտեր չը պատճառեցին մօրու Զմեռը, աղքանների թշնամին, մեղ պատժելու համար էր դաշխութ։

Բ.

Մայրս իր հօր տրւնը փոխգրւելուց մի քանի օր յեայ երաժարւեց կերակուր ընդունել նրանց սեզանից և ապրում էր անկախ աշխատանքով։ Նա շուտով հաշտւեց իր նոր վիճակի հետ՝ չը կամենալով ծանրութիւն պատճառել իր եղբայրներին, որոնց համար շատ էլ նաճելի չէր իրենց գերդաստանի վրա ընդունած նոր բեռը։ Մայրս աղքատութիւն շատ էր կրած, բայց երբէք իր տան ջաւարութիւնը ստարին յայտնած չէր, թէ ինչպէս է աղքում կամ ինչ միջոցներով է պահում իր երեխաներին։ Նա շատ հպարա կին էր ու բոլոր յայրը դրել էր իր աշխատող ձեռքերի և Աստծու վրա։

Մեր գիւղում գովաստած էր մօրու կարելու ու ձեելու վարպետութիւնը, բայց շատ քիչ էին գարձատրում նրա աշխատանքը։ Նա զիշեր ցերեկ հանգստութիւն չունէր. ասեղը, ճախարակն ու թէշին անզազար զործում էին. բայց ի՞նչ…

Մօրս համբերութիւնը երկաթի ամբութիւն ունէր. բայց երկաթի էլ է փշրում…

Ես երբէք չեմ կարող մտանալ մօրու արտաստալի աչքերը, երբ տուաշին անզամ ինձ և երկու քոյրերիս իր հետ տանելով, տարաւ մեղ դաշտը հնձած արտերից թափած հասկերը հուտաքելու։ Սա մուրաց կանութեան առաջին քայլն է, որին ենթարկւում է պատւաւր աղքատը։

Մենք մի ժամանակ արտեր ունէինք, հունձ ունէինք. և մեր հունձը հուտաքելուց յետոյ խուրձերից ընկած հասկերը թողնում էինք Աստծու աղքատներին և երկնքի թոշուններին. Բոլորը կորցրինք, և այժմ սահպւած էինք ուրիշ արտերից հոսկաքաղ անելու…

Գ.

Երտերը կարճ խուզած առփարակի վրա, ժախաթների նման վեր ցցւած ձողերի սուր ծայրերը ծակծկում էին իմ ու քոյրերիս բոլորովին մերկ ոտները. բայց մենք յաւ չէինք զգում. Մենք շատ ուստի էինք և մեծ եռանդով կպանք գործին։ Փոքրիկ քոյրերու իրենց

մահրիկ ձեռքերով հաւաքում էին ընկած հասկերը և ինձ վրա ծիծա զում, որովհեակ ես ծոյլ էի. Նրանք փունջեր էին կապում հասկերից և մըցում էին թէ որը շատ կը հաւաքի, Խեղճ երեխաներ. կարծես զգում էին, թէ ձմեռը քաղցած կը մնան, եթէ այժմ պաշար չը պատրաստեն։ Մայրս նայում էր նրանց վրա և լոց լինում…

Իրիկունը մեզանից ամեն մէկը իր հաւաքածը կապեց շալակին գարձանք տուն, Քոյրերս իրենց բեռներով մի առանձին հպարտութեամբ հանդիպեցին քեռուս երեխաներին, իբրև անխոնջ մշակներ, որ դառնում էին դաշտից։

Եյսպէս ամեն օր վաղ առաւօտեան գնում էինք դաշտը հասկաքաղ անելու և երեկոյեան վերադառնում էինք. Մեր խրճիթի դան տոջն կազմեց մի փոքրիկ գէղ՝ հաւաքած հասկերից. Այսուհետև ըսկացինք մեր կալը կասել: Բայց նա այնքան մեծ չէր, որ հարկաւոր մինէր կամով կասելու, Մայրս սկսեց ինքը մասրեր հասկերը մի հաստ փայտով որը այնքան ծանր էր, որ ես դժւարութեամբ էի կարողանում բարձրացնել։

Երբ յարդը քամուն տիինք ու մաքսւր ցորենը հաւաքեցինք թաղանների մէջ, մեր ձմեռուայ հացի պաշարն արդէն պատրաստ էր։

Դ.

Դեռ մնում էր գտոելիքը. Մեր խարխուլ ընտարանի համար պէտք եր բաւական տարութիւն, մանաւանդ որ ձմեռը այս կողմերում սաստիկ է լիսում. Մայրս այնքան զբաղւած էր, որ ամենեին ժամանոկ չունէր հոգ տանելու գառելիքի մասին. այդ պատճառով այդ հոգու մաց իմ և քոյրերիս վրա։

Մայրս իր ձեռքով երեք փոքրիկ կթոց հիւտեց՝ մէկը ինձ համար, երկուսը քոյրերիս. Տեսնելու բան էր, թէ ի՞նչ ուրախութեամբ այդ կթոցները առնում էինք մեր ուսը և ամեն օր գնում էինք դաշտը. Հաւաքում էինք քակորներ, ծառերից թափւած տերեններ, փուշ ու մացառ, և բերում էինք՝ ձմեռը մեր խրճիթը տաքացնելու համար։

Ես այսուհետեւ միշտ յարգանքով էի նայում այն քակորների կոյտին, որ ինքս էի հաւաքել, և բարկանում էի, թէ ինչու խնայողութեամբ չէին դործ ածում, թէև մօրս խնայողութիւնը հասնում էր ժլատութեան։

1) Ինչո՞ւ համար է աշխատութիւնը լաւ բան։

2) Դու էլ օգնո՞ւմ ես ծնողներիդ. ինչո՞ւ։

## 21. Երազ

Ես լսեցի մի անուշ ձայն,  
իմ ծերացած մօր մօտ էր.  
Փայլեց նշոյլ ուրախութեան...  
Բայց ափսոս որ երազ էր:  
Կարկաչանոս աղբիւրն այստեղ  
թաւալում էր մարզարիտ,  
նա յըստակ էր, որպէս բիւրեղ...  
Այս երազ էր ցնորամիտ:  
Եւ մեղեղին արխուր, մայրենի,  
յիշեց մանկութեանս օրեք.  
մօրըս համրոյըն ես ըզդացի...  
Ա՛խ, ափսոս որ երազ էր:  
Կրծքին սեղմեց կարօտագին,  
աշքըս ողբրեց՝ շատ թաց էր.  
արցունքներըս գնում էին...  
Ա՛խ, այդ ինչն երազ էր:

## 22. Պիտի մտածեմ

«Պիտի մտածեմ զբա մտին»: Հեշտ է ասել այդ: Բայց պիտի  
թէ ինչ մեծամեծ բաներ են դուրս գալիս մտածելուց:  
Մտքերը չի կարելի ոչ տեսնել, ոչ լսել, ոչ շօշափել, ոչ էլ հոտո-  
ւել, և այնուամենայնիւ ի՞նչ հսկայական զօրութիւն ունին նրանք:  
Իստեակ Նիւտօնը մի ամառ երեկոյ նստած էր իր պարտէզում  
ու յանկացն առաջ այլ ընկաւ ժամփից: Նա սկսեց մտա-  
ծել, և մտածելով թէ ինչիցն է որ վայր ընկաւ ինձորը, գտաւ թէ  
ինչիցն է որ երկիրը, արել, լուսինն ու աստղերը կենում են իրենց  
աեղերում:

Մի տղայ, Զեմս Ուատ, նստած էր հանդարա օջախի առջե ու  
հետեւում էր թէյսոցի խուփին, որ վեր ու վար էր շարժւում: Նա  
սկսեց մտածել, ուզում էր իմանուլ՝ ի՞նչիցն է որ ամանի գոլորշին  
շարժում է ծանր խուփը:

Այդ ժամանակից նա շարունակ մտածում էր, և երբ մեծացաւ,

հսարեց շոգեշարժ մեքենայ, այնպիսի ուժեղ, որ կարող էր ամենայն  
հեղտութեամբ մի քանի ձիու գործ կատարել:

Երբ այժմ տեսնում էր մի տեղաշարժ, մի շոգենաւ, մի շոգեա-  
զաց, կամ մի զոգեմեքենայ, —յիշեցէր որ գա չէր կառուցւի, եթէ  
Ուատը այնպէս յտմաւ մտածած չը լինէր:

Մի իտալացի, որի անունն է Գալիէօ, մի օր կանգնած էր Պի-  
զա քաղաքի մի եկեղեցում ու նկատեց մի կանթեղ գնում դալիս էր  
զէս ու զէն: Նա սկսեց մտածել, և մտածելով հնարեց ճօճանակը:

Զեմս Ֆերգիւսոն —մի շոալանգացի խեղճ հովիւ, մի անդամ տե-  
սաւ ժամացոյցի ներքին կազմը և առշած մաս: «Արդեօք չեմ կա-  
րող ես էլ այսպիսի ժամացոյց շինել», —սկսեց մտածել նա:

Բայց ի՞նչից շինէր անիւներն ու զսպանակը... Եւ մտածելով նա  
եկաւ այնտեղ, որ զսպանակը շինեց կէտ ձկան ոսկորից, իսկ մնացած  
ժամերը փայտից: Եւ այդ փայտէ ժամացոյցը լաւ բանում էր:

Նա սկսեց նկարել պատկերներ փետուրով և գէմքեր հասարակ  
եւ զաներկերով: Մի քանի տարուց նա, դեռ ևս փոքրիկ տղայ, այն-  
օն էր փող զաստակում, որ պահում էր իր հօրը:

Երբ նա չափահաս աղամարդ զարձաւ, անցաւ Լոնդոն: Անդիտյի  
նոյնպէս ամենաիմաստաւն մարդիկ, հէնց ինքը թագաւորն էր, յաճախ  
դալիս էին նրա դասախոսութիւնները լուելու: Նրա սիրած խօսքն էր  
«Պիտի մտածեմ զբա մտին», և այդ մտքերն էին, որ նա դարձնում  
էր զտաւէտ թէ իր և թէ աշխարհի համար:

## 23. Ամպն ու սարը

Ոչ մի կաթիլ թօն չը տալով  
երաշտից ոով մէծ զաւասին,  
ամպը, վերից զիլ սոհելով  
զարկեց հասաւ ովկեան ծովին:

Ու վերն էնսկէս

միւեց,

կախւեց,

ուղածին պէս

թափւեց,

շտփւեց,

ու կանգնելով ծեր սարի գէմ,

կոչեց: —«Ճեսամը ի՞նչ առատ եմ»:

Վայ քո ճարբ,

պատ սարը.

մի մեծ գաւառ յանձնեց սովին,  
թանը բերեց տւեց ծովին.

մեծ բան արտւ...  
ծովն էր ծարտւ:

## 24. Կոյրերի վարժարանը

ա.

Կոյր. հասկանում ես այս բառի ամբողջ իմաստը. Հապա մատծի մի քիչ. Ոչ երկինք տեսնես, ոչ արև, ոչ հայր, ոչ մայր, և ոչ մի բան աշխարհին երեսին. յաւիտեմն խաւար, ինչպէս գերեզմանում. Փորձի, փակի աչքերդ և երեակայի որ այդպէս պիտի մնաս ընդմիշտ. ոսկալի, զարհուրելի բան. քեզ պիտի թւայ թէ այդ դժբախտութեանը դիմանալ չետ կարող, կամ խելքդ կը թըոցնես, կամ կը մեռնես...

Եւ սակայն երբ մտնում ես տուածին անգում կոյրերի վարժարանը դասամիջոցին, լսում ես նրանց ջութակ ածելը, սրինգ նւազելը, բարձր բարձր խօսելն ու ծիծաղը սանդուղքների վրա, միջանցքներում ու ննջարանում ազատ համարձակ ման գալը, մտքովդ եւ չի անցնի, թէ զըանք թշւառ էակներ են:

Ո՞հ, լու մտածի. կան, ո՞զ զըկւել են աչքի լոյսից մի քանի օրում. ուրիշները տանջւել են ամբողջ տարիներ. շատերը կուրացել են սարսափելի վիրահատութեան պատճառով. վիրջապէս կան և այնպէսները, որ կոյր են ծնւել... ծնւել են անյօյս գիշերւայ մէջ, մտել են աշխարհ իբրև մի գերեզման և չը գիտեն՝ ինչ ասել է մտքու պատկեր:

Երբ մարդ յիշում է այդ յաւիտեան փակւած աչքերը, այդ անհայեացք, անշարժ բիրերը և յետոյ նայում է իր շըջապատողներին, ուղղակի անհնարին է թւում, որ մենք բոլորս, որ աչք ունենք, բախտաւոր ու երջանիկ չը լինենք. Եւ չը մոռանաս, որ այդ բախտից դըրկւածների թիւը շտա մեծ է. օրինակ, միայն իտալիայում քսանըվեց հազար կոյր կայ. քսանըվեց հազար մարդ արևի լոյս չի տեսնում... միայն մի իտալիայում.

Բայց բարի բնութիւնը գալիս է օգնութեան. Կոյրերի միւս ըզգայարանները անհամեմատ աւելի են զարդանում, բան մերն է. և

զարդանում են այն պատճառով, որ փոխարինում են տեսողութեան ու աւելի սահման գործածում. Այսպէս՝ առաւօտեան, երբ կոյրն ուզում է իմանայ՝ արև կայ, թէ չէ, ձեռքը պարզում է պատուհանից գուրս արեգակի ջերմութիւնը փորձելու. Կոյրը մարդու ձայնին ականջ գնելով գաղափար է կազմում նրա հասակի բարձրութեան մասն. Մենք մէկի հոգու մտսին կարծիք կազմելու համար, նայում ենք նրա աշխերին. Կոյրերը նայում են նրա ձայնին և երկար յիշում են այդ ձայնը:

Կոյրերը շօշափելով կարողանում են զանազաննեն ներկւած կերպասը չը ներկւածից. Փողոցով անց կենալիս հոտառութեամբ ճանաշում են խանութները, մինչեւ անգամ այնպիսի խանութներ, ուր մենք ոչ մի առանձին հոտ չենք տանում. Հոլ զցելիս նրա բզզոցին ակա: Չ դնելով իմանում են թէ որաեղ ընկաւ, և վերցնում են տառնց սխալելու: Կոն են խաղում (կէզլի), պարան են ցատկում, քարերից տներ են շինում, մանուշակ են քաղում. կարծես տեսնելիս լինեն, գոյն-գոյն յարդերից կողով ու խսիր են հիւսում, այն աստիճան զարգացած է նրանց շօշափելիքը:

Շօշափելիքը նրանց տեսածելիքն է. Նրանց ամենամեծ գւարճութիւնն է շօշափելով իմանալ իրերի ձեր: Տեսնելու բան է, թէ ինչ ուրախութեամբ յարձակում են երկրաչափական ձեռերի վրա, զանաշուն գործիքների վրա և ինչ մեծ հաճոյքով պտոյտ են բերում ձեռներին ու շօշափում այդ բոլորը՝ տեսնելու համար, թէ ինչպէս են շինուած. նրանք ասում են՝ տեսնելու...

Դ.

Կոյրերը սովորում են և գրել-կարդալ: Ցատուկ նրանց համար տպւած գրքեր կան ուռուցիկ տառերով. նրանք այդ տառերի վրա մատները ման ածելով որոշում և արտասանում են բառերը. Սահուն կարգում են և շատ են կարմրում մի բան սխալ կարդալիս:

Գրում են առանց թանաքի, հաստ ու կոպիա թզթի վրա, մի բառակ երկաթէ ձողիկով, որ հետքեր է թզնում թզթի մէջ. և հակառակ կողմը դուրս են գալիս ուսուցիկ տառեր, որտեղ վրա մատները ման ածելով կարողանում են կարդալ:

Այսպէս գրում են շարադրութիւններ, նամակներ, թւաբանական ինդիքներ են վճռում. Հաշվաները մտքով կատարում են վերին աստիճանի արագ ու թեթև, որովհետեւ նրանց միտքը չի ցրում:

փազանց սիրում են լոել ուրիշների ընթերցումը։ Եւ արժէ ականջ գնել նրանց դատապութիւններին մի կարդացած կտորի վբա, մանաւանդ եթէ նիւթը դատմական է։

Դասամիջոցներին միշտ միտախն են հաւաքւում։ Իրար սաստիկ կապւած են։ Օրինակ չկայ, որ կոյրը սիրէ մէկին ու յետոյ ատի. բարեկամութիւնը նրանց սփսփանքն է։ Նրանք վերին աստիճանի

արդարամիտ են, պարզ ու ճիշտ որոշում են չարն ու բարին։ Եւ մի որի է վսեմ գործի պատմութիւնը ոչ ոքի այնպէս չի ոգեսրում, որ չափ նրանց։

Դ.

Չերմ սիրահար են երաժշտութիւնն նրաժըշտութիւնը նրանց ըերկանքն է, կեանքն է։

Մինչև անգամ փոքրիկ երեխաները պատրաստ են մի քանի ժամ անշարժ կանգնել նւազածութիւն լսելու։ Նւազել հեշտ են սովորում. և նւազում են եռանգով։

Եթէ վարժապետը մէկին ասի՞ թէ նւազելու շնորհք չունի, սաստիկ կը տխրի, չայց և այնպէս կը շարունակի ուսանել մեծ ջանքով։

Մարդ պէտք տեսնի կոյրի նւազելը, կոյրի դաշնամուք ածելը. Գլուխը բանած, ժամիտը շրթումքին, երեսը վառ, խեղճը յուզումունքից դողդողում է, հիացած է ու ականջ է դնում ակկորդներին, որոնք փութում են շրջապատող իստարի մէջ։ Մարդ պէտք է տեսնի հասկանալու համար թէ երաժշտութիւնը ինչ աստւածային սփսփանք է։

Երաժշտութեան մէջ առաջինը, տաշին ջութակահարը, առաջին դաշնակահարը նրանց մէջ թագուոր է. Նրանից պատկառում են, պաշտում են նրան։

Կոյրերի խօսակցութեան սիրելի նիւթը երաժշտութիւնն է։ Դիշերները անկողնում պառկած, դասերից և օրւայ աշխատանքից իսպառ-յօդնած, նրանք դարձեալ մեղմ զրոյց են անում իրար հետ երաժշտագէտների, օպերաների. նւագարանների ու նւագախմբերի՝ օրկեստրների մասին։ Նրանց համար ամենամեծ պատիժը երաժշտու-



թեան դասից զրւելուն է։ Այդ զըկութը նրանց համար այն աստիճան ծանր է, որ այդ սեսակ պատրժ խիլի չեն էլ տալիս։

Կոյրի համար երաժշտութիւնը նոյն է. ինչ որ լոյսը մեզ համար։

Դ.

Լոյս...

Ի ծնէ կոյրերը այնքան էլ թշւառ չեն. նրանք չեն ճանաչել լոյսը, տիեզերքը, ընութիւնը. այդ բոլորի մասին գաղափար չունեն, երեսկայութեան մէջ պատկերներ չեն. նրանք չունեն ողբալու բան Բայց նրանք, որ նոր են կուրացել, նրանք դեռ լիշում են ամեն բան և հասկանում են իրենց կորուսաց. Ով զիտի՞ ինչ են զգում, երբ հետզհետէ թանկագին պատկերները նսեմանում են նրանց հոգու մէջ և երբ սիրելի դէմքերը ասես մեռնում են նրանց համար։

Տղաներից մէկը մի օր բացականչեց.

—Այս, եթէ մի ըովէ աչքս բացւէր, դոնէ մի ըովէ մօրս երեաը  
տեսնէի... էլ չեմ յիշում նրա դէմքը:

Երբ ծնողները այցելութեան են գալիս, կոյք մանուկները ձեռքով  
շօշափում են նրանց դէմքը, որ դիմագծերը լաւ պահենց մտքում:

## 25. Ամպերի քարտանը

Տես, հեռւիցն ահա շարան ու շաբան,  
արնկ հա տընկ, եկաւ քարւանն ամպերի,

ու սար ու քարւան իրարով դիպան.

—Բարով ձեզ, սարեր, տէրեր աշխարհի:

«Այ, բարով, բարով.

Էս որ ծովերով».

—Պոնտիցն ենք գալիս մենք շարւէ շաբան,  
գնում ենք անց ենք հարթերը կասպեան,  
գէպի Հիմալայ...

\*  
Այսպէս մի կորճ իջևան  
գալիս է հիւր ամեն օր  
ամպերի ձիգ քարտւան  
և ճամփայ է ընկնում նոր,  
Ու գնում են լողալով  
հորիզոններն հեռաւոր,  
արևելեան աստղերին  
որպէս կարօտ ուժաւաւոր:

Գատահմոնը է, որ ամպերը գալիս են Պոնտից (Սեւ ծովից) ու  
գնում են Հիմալայ: Ամպերը ինչո՞ւ են քոչում:

## 26. Երկարուղին

—Ու, ու, ու, ու... Զորերում սուլում էր երկաթուղին:

Նոր էր մտել նա մեր ձորերը:

—Այ, ձէնդ կարւի, —կանչեց էն կողմից որսկան Օսէփը:

—Այ տղայ, ինչի՞ ես էտպէս ասում, ինչ վաս բան է երկա-  
թուղին, մէջ մտան մի քանի գիւղացի:

—Վեսա չի, բա ինչ է, եկաւ ձորերումը ծըղբատաց, էլ պախրա  
չը մնաց, կիստար չը մնաց, ձէնից խրանեցին, փախան կորան:

—Պախրէն ու կիստարը չէ որ, հաւատա, ես էլ կորչեմ, խօսք  
առաւ մի հսկիւ, որ դադանակին յենւած կանգնել էր.—Գնում եմ,  
քարի գլխին կանգնում եմ, ձորերին մտիկ եմ անում, որ էն քա-  
րտիները քանդելիս տեսնում եմ, որտիս ծէրը մղկում է, ոնց որ  
թէ մարգի երեխէն թշնամու ձեռքին ըրքելիս լինեն ու մարդ կա-  
րենայ ոչ թէ օգնի...

—Զէ, շատ բան կը փշանայ,—նրա հետ էլ հաստչեցին մի  
քանիսը:

Ու սկսեց վէճը երկաթուղու վրա. թէ երկաթուղին օգուտ էր  
բերելու, թէ վաս.

Էտ վէճի ժամանակ երկաթուղու գծի վրա աշխատաղ օտարա-  
կաններից մինը ձորիցը գտւրս եկաւ ու մօտեցաւ մեզ:

—Բարի իրիկուն ձեզ:

—Աստծու բարին, վարպետ.

—Ինձ մի չափ ալիւր է հարկաւոր, ձեղանից մզ ալիւր կը ծա-  
խի. —գիմեց օտարականը ամենքիս:

—Որտեղից ես, վարպետ,—հարցրեց Ուհանէս բիձէն:

—Օսմանլուի հողիցն եմ:

—Ուհանէս բիձա, մի հարցրու՝ տես որ քաղաքիցն է, —ինդրեց  
մի գիւղացի:

—Քո քաղաքի անունն ինչ է, բարեկամ, —կըկին հարցրեց Ու-  
հանէս բիձէն:

—Աըւազ:

—Աըւազ, —երկարացնելով ու խօրհրդաւոր կըկնեց Ուհանէս բիձէն:

—Ինչ ասաւ, Ուհանէս բիձա:

—Աըւազ:

—Պահ քո ասւն չը քանդւի... ծափ տւին ու. ծիծաղեցին մի  
քանի գիւղացի:

—Էնանդից էստեղ քանի ամսւայ ճանապարհ է, շարունակում  
էր հարց ու փորձը Ուհանէս բիձէն:

—Երեք ամսւայ:

— Պա հօ... — միտքերան զարմացան ամենքը:

— Համեցէք, զարիբ ախպէք, նստի, հաց բերեն. հաց անուշ արաւ:

— Զէ, շնորհակալ եմ, վառ եմ. ձեղանից մոլ ալիւր կը ծախի, մի չափ ալիւր տայ՝ գնամ:

— Աղջի, մի չափ ալիւր դուրս բերէք, — դանից ձէն տուաւ Ունանէս բիձէն, — գլուխ-գլուխ լցրէք:

Հարսներից մինը մի չափ ալիւր դուրս բերաւ, ուղից դատարկի մարդու տոպրակի մէջը, բայց նա թող չարաւ:

— Ի՞նչ արժէ...

— Ածաւ գեռ ածաւ տոպրակիդ մէջը:

— Զէ, առաջ մի զինն իմանանք:

— Դեռ ածաւ, յետոյ կիմանաս. թէ որ թոնդ լինի, դատարկելը հեշտ է:

Վարպետը իր տոպրակը բաց արաւ, հարսն ալիւրը մէջը դատարկեց ու գնաց:

— Թէ հիմի ինչ տամ, — հարցրեց ծոցից քսակը հաճելով.

— Ոչինչ, վարպետ, ոչինչ չի հարկաւոր, քեզ փէշքէշ. մեր աշխարհումը զարիբից հացի փող չեն առնի, էտ տեսակ աղաբ չը կայ... — ասաւ Ունանէս բիձէն ու շարունակեց իր շիբուխը ծխելը:

Վարպետը մի քիչ շփոթւեց, չեմ ու չուժ արաւ ու գնաց.

Դ.

Նրա գնալուց յետոյ մի կպրճառեկ լուսթիւն տիրեց. ապա խօսեց մի զիւղացի:

— Են օրը մինն էլ եկել էր թէ մածուն եմ ուզում. Հարսները մածուն դրին առաջն. կերաւ պրծաւ, հիմի վեր է կացել թէ՝ Բնչ արժէ:

Ասում եմ ինչը...

Թէ՝ մածունը...

Ասի՞ այ մարդ, զիսիցս քաշւի, էապէս բաներ մի խօսի, թէ չէ ոչխարի եղած կաթն էլ կը ցամաքի...

— Այ տպայ, բա ինչպէս անենք... են լաւ է, որ դայ, ձրի ուսափ ու տանիք... էս վրա քանին են վալի, գիտես թէ չէ... են օրը մէկին էլ ես եմ մի խան ալիւր չափել տւել... էտ ուր կերթայ... — մէջ ընկաւ Ունանէս բիձու փոքր տիտերը:

— Որ դայ, մին էլ տուր... — գլուխը վեր քաշելով հանդարտ խօսեց Ունանէս բիձէն:

— Օջախոդ շէն կենայ, — վըռչացին մի քանի ծերեր:

— Աչքս լուս էլի՛. Սըւազից սկսած ով դայ՝ չափի տուր. կտսես ետ նրանց համար եմ աշխատել... Ով զալիս է՝ բարով, հազար բարի, բան է ուզում փողը բերի տանի...

Ու սկսեցին վիճել. Ունանէս բիձէն էլ տաքացաւ, աղմուկը մեծացաւ:

Ու, ու, ու... Չորերում սուլում էր երկաթուղին,

Նոր էր մտել նա մեր ձոքերը:

1) Մեծ ախպէջը ինչո՞ւ չի ուզում փող ստանայ. փոքր ախպէջը ինչո՞ւ չի ուզում ձրի տայ:

2) Վերջիվերջոյ ո՞ւմ ասածն է լինելու, ինչո՞ւ:

3) Էս վէծի մէջ երկաթուղին ինչ գործ ունի:

## 27. Կիուն ու արլորդ

— Զընաշխառչիկի

իմ աքլտրիկ,

ձայնըդ զիլզիլ,

ոսիի ծիլ-ծիլ,

երգերիդ մէջ

բիւր երեկի.

— Երկու քուրիկ,

հուրիկ, բուրիկ,

քո ձայնն էլ է

լաւ զեղզեկում,

ծոր է տալիս

ու մըղմըղում.

Երդ եմ լըսել

ես շատ ու քիչ,

բայց չեմ տեսել

քեզ պէս երգիչ:

— Ոսկեփետուր,

Ասուածատուր,

կուզեմ

լըսեմ

ձայնդ անսպառ

միշտ անդադար,

թէկուզ մի դոր:

Գուճապուճուրիկ,

մի պուտ ջըրիկ,

երկու քուրիկ,

երգում եմ ես,

որ լըսում ես

Էս չափ, պուճուր,

ըսպասելով

իմ աշքերը

դառնում են ջուրն

Արտեղից է

քիզ էտպէս ձայն

մաքուր, քնրուշ

ու զընզիզան

Դուք էդպէս եք

ամրող ցեղով.

մի բուռ բան էք

թէկ տեղով,

բայց ձեր երգը

խիստ աշողակ,

Հունի, Հունի  
ոչ մի սոխակ:  
— Դոհ եմ քեզնից,  
Ջրան աքլար.  
Խըղճով ասենք,  
դու միալար  
լու ես երգում  
դրախտահաւից,  
Թռչունների  
լաւի լաւից:  
Ողջ աշխարհը  
խօսքիս վըկայ,  
քեզ պէս երգիչ

Հը կայ, Հը կայ:  
Էստեղ ծիտը,  
ծիտիկ-միտիկ  
ասաւ՝ «Հա  
ոըբանց մըտիկ.  
Բնչ լաւ գիտեն  
իրար եղել.  
ասա թողին  
պակաս տեղ էլ  
է, լաւ, հերիք,  
իրար գովէք.  
աշխարհ գիտի՝  
թէ դուք ով էք»:

## 28. Խորթ եղբայրն

ա.

Փոքր էի, հազիւ տասներեք տարեկան, բայց լաւ լիշում եմ, որ  
այս երեկոյ հայրս զայրացած տուն վերադարձաւ այդուց։ Փոքրիկ  
հորթին պարանից քաշ տալով ետեից և կանաչ, թարմ, խոտի մի  
կոյտ թևի տակ՝ նա բակը մտաւ խորհրդաւոր լոռութեամբ։

Հայրս խոտը ցած դրաւ, մօտեցաւ սրահի թմբին ու նստեց,  
փայտն ու գլխարկը զնելով կողեին։ Մայրս կովկիթն էր լւանում,  
ոպասելով կովերին, կթելու համար ես աչք չէի հեռացնում հօրից։  
Նա անհանգիստ էր և մի քանի անգամ ճակատը շփեց ու դարձաւ  
մեծ քրոջ։

— Աղջի, Թորոսը այս առուտօտ կովերը որ կողմով դաշտ տա-  
րաւ, այգու կողմով, թէ նախրի ճամբով։

— Չը գիտեմ, հայրիկ, առաւտը երբ քաղիանի էինք զնում, նա  
մեզանից առաջ ըշեց, գիւղից դրւրս եկաւ, նրան չը հասանք։

— Այգու կողմից ի հարկէ. նա միշտ այս կողմից է տանում,—  
բացականչեցի ես, հենց այնպէս առանց մտածելու, թէ իմ ասածը  
որեէ բանի կարող էր ծառայել։

— Նա է, ուրիշ ով կարող է լինել, նզովից արմատ, միշտ նա, —  
մըմուց հայրս ու լոեց։

Թորոսը իմ խորթ եղբայրն էր, հօրս առաջին ամսւնութիւնից

մացած միակ տղան։ Ես և քոյրերս մեր ամենափաքը հոսուկից տե-  
սել էինք նրան միշտ լրակեաց, մռայլ, մտածկոտ ու յամառ։ Նո չէր  
սիրել մեզ և մենք չէինք սիրել նրան։ Նա արդէն տաօնեօթ-ասա-  
նըութ տարեկան էր այժմ։ Հայրս չէր սիրում նրան, որովհետեւ նո  
յամառ էր ու միշտ մռայլ և երբէք մարդու երեսին ուղիղ չէր նայի։  
«Կախ զլուխ տղայ է, մանկութիւնից այդպէս էր», — առում էր նո  
առանձին ցաւով, աւելացնելով որ «կախ-գլուխ» մտրդիկ միշտ կա-  
կածելի են։

Եւ մենք բոլորս՝ առանց այդ նկատելու՝ կամաց-կամաց նրա դա-  
հիճներն էինք դարձել։ Բոլոր մեր ծածուկ յանցանքների ու սխալնե-  
րի համար պատասխանատուն ու մեղաւորը միշտ նա էր, եթէ տան  
էր կոտրւած, անպատճառ Թորոսն էր կոտրել. մածունի կամ կաթի  
սերը, թարմ կարաղը՝ անպատճառ նա էր գողացել. ինչպէս և այ-  
գում կամ բոստանում հասած առաջին պտուղը։

Բարեբախտաբար մեզ բոլորիս և Թորոսի համար, հայրս թէն  
ինստ էր, բայց վերին աստիճանի զմուտ. նրա բոլոր դժգոհութիւնն  
ու զայրոյթը վերջանում էր սովորական անէծքով կամ մօրս առաջ  
անվերջ գանգատներով։

Թորոսն ամբողջ օրը դաշտում էր լինում, մեր տաւարի ետևից։  
Երբ երեկոյեան տուն էր զալիս և հայրս սկսում էր նրան յանդիմու-  
սել որի է յանցանքի համար, նա առանց նայելու մօտենում էր հա-  
ցի տաշտին, մի հաց վերցնում, փաթաթում, դնում թևի տակ և  
լոռութեամբ դուրս գալիս, թողնելով որ հայրս շարունակի իր անէծքը։  
Գանգատն ու արտունչները։

Կովերը դաշտից վերադարձան. Թորոսն էլ նրա ետևից ներս  
մտաւ դրնից, ինչպէս միշտ, զլուխը քաշ, դէմքը արեառ, յոգնած ու  
մռայլ։ Կովերը ներս քշեց գոմը, թողնելով բակում նրանց, որոնք  
պիտի կթւէին։ Ապա ձեռնափայտը զրաւ մի անկիւն, նստեց իր սո-  
վորական տեղը, սրահի մի հատիկ աստիճանի վրա, և սկսեց տրեխ-  
ների միջից թոփի տալ աւազի հատիկները և դուլպաների վրայից հա-  
նել մանր ու մեծ փշերը։

Մայրս կովերն էր կթում, քոյրերս օգնում էին նրան։

— Թորոս, — յանկարծ լրւեց հօրս ձայնը,

— Հը, — եղաւ պատասխանը։

— Զո՞ր ու ցաւ, հրամմէ էլ չի կարողանում ասի: Այս առաւտա  
տաւարը ո՞ր կողմով տաքար դաշտ:

Հօրս ձայնը դողդողում էր, նա վրդովմունքից ասես խեղդում  
էր. ես նրան երբէք այդ աստիճան բարկացած չէի տեսել, վախեցայ  
ու կծկւեցի:

Թորոսին փոյթ չէր. նա լուռ էր:

— Լեզուդ պապանձի, խօսի է: Այզին մտել ես:

Թորոսը շարունակում էր լուռթեամբ թափ տալ տրեխները:

— Մարգիս, — դարձաւ ինձ հայրս, — գնա, այն իմ բերած խոռը  
քանդի, մէջը բան կայ, բեր այստեղ:

Ես մօտեցայ, խոռը բաց արի և միջից դուրս հանեցի խաղողի  
որթի մի մեծ ճիւղ, վրան մի քանի կիսահաս ողկոյզներ. Ձեռքս առայ  
և քարացայ տեղումս... ես էի կոտրել. կոտրել էի ու լոել. ողկոյզը  
քաշշել էի, ճիւղը կոտրել էր և ես թողել փաթուլ էի:

Յանցանքը կրկնակի էր. նախ կոտրած էր այդ հազւագիւտ որթը,  
որ հօրս առանձին խնամքի առարկան էր. որովհետև նրանից պատ-  
րաստած զինին հասնում էր Աստվածածնի տօնի պատուրագին, երբ  
խաղող են օրհնում. և երկրորդ՝ որ աւելի էականն էր և աններելին,  
որթը կոարողը կերել էր և խաղողը, մինչդեռ Աստվածածնի տօնը  
դեռ հեռու էր, խաղողը օրհնուած չէր, հետևապէս պաս էր. Պատակե-  
րութիւնը հօրս աշքում մեծագոյն յանցանքն էր, որ մի մարդ կարող  
էր դորձել:

Թորոսը աշբի տակով նայեց իմ ձեռքի ճիւղին, նայեց ինձ ու  
զիւլը քաշ գցեց, լոեց: Ես էլ քարացել էի իմ տեղում և զլուխս  
վեր բարձրացնել չէի համարձակում. իմ դատաստանն էր կատար-  
ւում և ոչ Թորոսի:

— Ասա, — շարունակեց հայրս աւելի՛ և աւելի տաքացած, — Աստ-  
րած նղովի՛ քեզ. ոչի է տեսնել, որ հոյ քրիստոնեան Աստվածածնից  
երկու շաբաթ առաջ խաղող ուտի. հարամ է չէ, նայի, ինչ ես  
արել, թող ձեռքդ կոտրէր գրա փոխարէն:

Ես զողում էի ամբողջ մարմով և խաղողի ոստը ձեռքիս մէջ  
ցնցւում էր: Հօրս իւրաքանչիւր խօսքը, նրա ամեն մի անէծքը նետի  
պէս սիրու էր մխուում ու արիւնուում: Քաջութիւս չունէի ասելու  
թէ ես եմ կոտրել և ոչ Թորոսը. բայց զայրանում էի նաև այդ անօ-  
րինակ Թորոսի գէմ, որ բերանը բաց չէր անում ասելու, թէ ինքը  
չի արել, թէ այզին չէր մտել:

— Լուռ էր անիրաւը, և ես զողում էի զարհութելի տանջանքի մէջ:  
Մայրս մէջ մտաւ:

— Ի՞նչ ես այդքան տաքացել, տնաշէնի մարդ, դէ բան է, պա-  
տահել է: Գուցէ Թորոսը չի, գող է մտել. խօ զիտես, քաղցած գէ-  
լերի պէս չոլերն ընկած աւերմունք են անում:

— Խելքիդ ինչ առեմ, ախր կնիկ ես է. գողը մի ճութ խաղողի  
համար այգի չի մտնի, բայց թմբերը պէտք է ոտի տակ տար, մա-  
րիկ-մարիկ վնասէր զանելու համար. տանու գող է, քեզ առում եմ,  
ոյ, այս նղովածն է, որ սսկւել է: Զէ, թնդ ասի որ ինքը չի, տես-  
նամ ես, կարկամել է, Առաւտծ վերցնի սրան:

— Այ որդի! — Թորոսին դարձաւ մայրս կամացուկ, — ինչի՞ ես  
կողդդ գէմ տւել. աեւնում ես, հերդ թնդել է, դէ մի ձայն առուր,  
ոռա որ գու չես, առա, զողերն են արել, խօմ բերանդ չի ցաւի, մի  
խօսք առա, էլի:

Թորոսը տրեխներից պրծաւ և մէկ էլ ինձ նայեց աշքի տակով...  
Ու վեր կացաւ և, առանց նոյն խոկ իր սովորական հացը վերց-  
նելու աշատից, շարժւեց գէպի դուռը. նա պիտի անցնէր հօրս առա-  
մից, որ լուռ հետեւում էր նրա շարժումներին:

Բ.

Հօրս հայեացքի մէջ կայծակ էր փայլատակում. նա զունատ էր,  
շանչը քթածակերից դուրս էր գալիս վնչացնելով, խոկ ձեռնափայտը  
դողում էր ձեռքի մէջ: Նա երբէք այդպէս սարսափելի, այդպէս ան-  
ողորմ տեսու չէր ունեցել:

«Միթէ խփելու է Թորոսին», մտածում էի ես. այդ անկարելի  
էր, նա այնպէս բարի է», և ինձ թւում էր, եթէ նրան խփի՝ ես կը  
մեռնեմ, չը գիտեմ ինչից, բայց անզատանու կը ճշամ ու կը մեռնեմ  
երեխ կը խեղդւեմ:

Էլ ոչինչ չէի տեսնում, ոչինչ չը կար զիսումս, բայց այն փայ-  
ափից, այն զեղնաւուն հոնի փայտից... ծւ ես տեսայ... որ նա բարձ-  
րացաւ, այն զարհութելի փայտը, բարձրացաւ հօրս զիսից վեր, ճօն-  
եց օդի մէջ...

— Հայրիկ, հայրիկ... մի, մի...

Թառերը խեղդւեցին իմ կոկորդում, նետեցի հօրս ու Թորոսի  
մէջ, բայց անօգուտ, ես շատ էի փոքր և անզօր. Զեռնափայտն  
տագին թափով իջաւ եղրօրս թիկունքին, բարձրացաւ, մէկ էլ իջաւ  
այնպէս թափով, նոյնպէս անողորմ:

Թորոսը չը շարժւեց, կանգնած մնաց իր տեղում, դորձնոլ լռու.  
առանց բողոքի. նայեց հօրս. ապա աջ ձեռքով շօշափեց թիկունքի  
ցաւած տեղը ու երկու կաթիլ արցունք կախւեցին նրա մոայի, մթա-  
զնած աչքերից, իջան, իջան և այտերի վրա քարացան, մնացին:

Օ՛, այդ երկու կաթիլ արցունքը. նրանք իջան իմ սրտի վրա,  
քանդեցին, աւերեցին կուրծքս և խորտակեցին ինձ. Եւ բեռը, ահա-  
զին բեռը ճնշում էր իմ կուրծքը, խեղդում էր ինձ. կուրծքս ուսել  
էր և ճշացի.

—Ես եմ, հայրիկ, ես եմ կոտրել, ես եմ գողացել, Թորոսը մեղք  
չունի. միշտ ես եմ: Ների, ների, Թորոս ախալէր, իմ խեղճ ախալէր:

Բոլորը քարացան. կարծես երկինքը յանկարծ փուլ եկաւ: Մայրս  
շւարած՝ կովկիթը ձեռքից բաց թողեց, որ ընկաւ կուրւեց և կաթը  
ճոռեց բակում. քոյրս հորթը թողեց, որ կրկին վազեց դեպի մայրը.  
հայրս գլուխը բարձրացրեց, ինձ նայեց չոած ու ապշած աչքերսվ ու  
ետ-ետ գնաց, կարծես ես թունաւոր օձ լինէի. ապա ճակատը բռնեց,  
մնաց կանգնած: Քիչ յետոյ լուս մօտեցաւ Թորոսին ու ձեռքը վրաւ  
նրա թիկունքին.

—Ձեռքս կոտրւէր, սրգի—տսաւ հեկեկալով: —Մարդիս, Մար-  
դիս... Թնդ Աստւած քեզ... զու իմ հոգիս կորցիր... Թնդ Աստւած  
քեզ... բնչ ասեմ... Ու շարունակել չը կարողացաւ, չուզեց տնիծի.  
արցունքը թափւեց աչքերից հեղեղի պէս:

—Ել չեմ անի, հայրիկ... Ել չեմ անի երրէք:

Թորոսը թեով սրբեց աչքերը, նստեց թմբի վրա, գլուխը ձեռ-  
ների մէջ առաւ և մնաց լուս:

Սին զիշեր հայրս երկար ժամանակ չէր քնում, անքուն էի և եռ-  
այրւում էր և էլի երկար-երկար լաց եղայ:

Ինչո՞ւ խործ եղբայրը դարձել էր լուակեաց և առանձնացած:

## 29. Անտարի միջում

Անտառի միջում  
աշունն է շրջում  
և նըւում իրա  
ջութակի վրա

Նըւում լալով  
տիմուր, անհանգիստ,  
նըրան լոելով  
տրտմում է հոգիս,

## 30. Աստվածի Դաւի կոիւր Մըսրայ Մելիքի նետ

ա.

Անթիւ, անհամար զօրքեր հաւաքեց,  
եկաւ Սասմայ դաշտ՝ բանակը զարկեց  
ու ծանր նստեց Մըսրայ Թագաւոր:  
Էնքան ահազին բազմութիւն էն օր  
Բաթմանայ ջըբին եկաւ ու չոքեց.  
ով եկաւ, խըմեց, գետը ցամաքեց,  
Սասմայ քաղաքսում մնացին ծարաւ:  
Զէնով Օհանին զարմանքը տարաւ:  
Քուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ,  
սարը բարձրացաւ, տեսաւ, ինչ տեսաւ.  
Ճերմակ վըբանից դաշտը ճերմակել,  
տսես էն գիշեր ձըմեռը եկել,  
ըսպիտակ ձիւնով պատել էր Ստուն:  
Լեղին ջուր կարեց, կապ ընկաւ լեզուն.  
հարայ կանչելով փախաւ, տուն ընկաւ.  
—Վայ, փախէք, եկաւ..., հայ-հարայ եկաւ...  
—Ի՞նչը, հօրեղբայր, ի՞նչը, ինչն եկաւ...  
—Յաւն ու կըակը Դաւիթի պինչն եկաւ.  
Մըսրայ թագաւոր եկել է, եկել,  
եկել մեր դաշտին բանակ է զարկել,  
թիւ կայ աստղերին, թիւ չը կայ զօրքին...  
Վայ մեր արեին, վայ մեր աշխարհքին...  
Եկ ոսկի տանենք, աղջիկներ տանենք,  
չոքենք առաջին, պաղատանք անենք,  
գուցէ թէ զըթայ  
մեզ սըրի չը տայ...

—Դու կաց, հօրեղբայր, դու դարդ մի անի,  
գնա քո օղում դու հանգիստ քընի.  
հիմի ես կելնիմ, Սասմայ դաշտ կերթամ,  
Մըսրայ Մելիքին պատասխան կը տամ:

Հազաւ Դաւիթ զէնքն ու զրահ,  
կապեց զօտին, Թուր-Կայծակին,  
(խաչն էլ իք յազթ բաղկի վըրա)  
ելաւ, հեծաւ Ասիւծ հօր ձին:

Հօր ձին հեծաւ ու մըտրակեց,  
սարի գլխին էսպէս կանչեց.

—Ով քնած էք արթուն կացէք,  
ով արթուն էք՝ ելէք, կացէք,  
ով կեցել էք՝ զէնք կապեցէք,  
զէնք էք կապել ձի թամբեցէք,  
ձի էք թամբել ելէք, հեծէք.


յետոյ չասէք՝ թէ մենք քընած,  
Դաւիթ գող գող ելաւ, զընաց...  
էսպէս կանչեց, առպանդանկեց,  
ու, ինչ պամիր կայծակ զարկի,  
Մըրայ զօրքի մէջ տեղ զարկեց,  
շողացնելով Թուր-Կայծակին.  
Զարդեց, փըշրեց մինչև կէսօր.

կէսօր արիւնն ելաւ հեղեղ,  
քըշեց, առպաւ հազարաւոր  
մարդ ու դիակ ողջ միաաեղ:

Կար զօրքի մէջ մի ալեոր,  
աշխարհք տեսած ու բանագէտ:  
«Տըղէք, ասաւ, ճամփայ տւէք,  
զընած խօսեմ ես Դութի հետ»:  
Գընաց՝ կանգնեց Դութի տուած,  
էսպէս խօսեց էն ծերունին.

«Դալար կենայ, կուռզ, հվ քաշ,  
ոռւըզ կըտրուկ միշա բո ձեռին:  
Մի ծերունուս խօսքին մըտիկ,  
տես, քո խելքը ինչ է կըտրում:  
Ինչ են արել քեզ էն ժարդիկ,  
հէր ես օքրանց դու կոտարում:

Ամեն մինը մի հօր որդի,  
ամեն մինը մի տան ճըրագ,  
որը կինն է թողել էստեղ՝  
աշըը ճամփին խեղճ ու կըրակ,  
որը մի տուն լիք մանուկներ,  
որը ծընող աղքատ ու ծիր,



ո՛ը լացով, քողն երեսին  
նորապլսակ ջաճել հարսին:  
Թագաւորը զոռով-թըրով  
հաւաքել է էստեղ ըերել.  
խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,  
մենք քեզ վընաս ինչ ենք արել:

Թագաւորն է քո թշնամին,  
 կըոիւ ունես՝ իր հետ արա,  
 հէր ես քաջում թաւը՝ կայծակին  
 էս անճարակ խալիքի վըրած:  
 — Լաւ ես ասում գու, ծերունի,  
 առաւ Դաւիթն ալևրին,  
 բայց թագաւորն ուր է հիմի,  
 որ սև կապեմ նրա օրին:  
 «Մեծ վըրանում քընած է նա,  
 Էն, որ միջից ծուխը կելնի.  
 Էն ծուխն էլ հօ ծուխ չէ որ կայ,  
 գոլորշին է իր բերանի»:  
 Ասին, դէպի մեծ վըրանը  
 ասպանդակեց Դաւիթն իր ձին,  
 քըշեց, գընաց ու դուանը  
 գոռաց կանգնած արաբներին.  
 — Մւր է, առաւ, ինչ է կօրել,  
 գուրս կանչեցէք, զայ ասպարէզ,  
 թէ մահ չունի՝ մահ եմ բերել,  
 զըրող չունի՝ զըրոն եմ ես...  
 «Մելիքն, ասին, քուն է մտել,  
 եօթը օրով պէտք է քընի,  
 երեք օրն է զեռ անցկացել,  
 չորս օր էլ կայ, քունը առնի»:  
 — Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ  
 խալիխն լցրել ծովս արիւնի,  
 ինչը մտել վրանի մէջ  
 եօթը օրով հանդիսու քընի...  
 Քընել-մընել չեմ հասկանում,  
 վեր կացրէք շուտ, գուրս զայ մէյդան,  
 էնպէս նըրան ես քընացնեմ,  
 որ չը զարթնի էլ յա իտեան:

### Յ Փ.

Զարթնեց Մելիք, գըլուխն ահեղ  
 վեր բարձրացրեց մըունչալով,

ուզեց փըչի, որ թըսցընի  
 հըսկայ Դաւիթին մի փըչելով:  
 Տեսաւ, աեղից ժաժ չի գալի,  
 զարմանքն ու ահ պատեց հոգին:  
 Արնոտ աչքերն ըսպառնալի  
 յառեց խոժոռ Դաւիթի աչքին:  
 Նայեց թէ չէ, զգաց՝ իր մէջ  
 տասը գոմշի ուժ պակասեց:  
 Պառկած տեղից վըրա նսաեց  
 ու ժպտալով հետը խօսեց.  
 — Բարով, Դաւիթ, յոգնած ես զեռ,  
 սեղան նըստենք, խօսենք կարգին,  
 յետոյ դարձեալ կըոիւ կանենք,  
 եթէ կըոիւ կուզես կըկին...  
 — Չէ, չեմ նստի ես քո հացին,  
 ուռ աղմարգի, վախկոտ ու նենգ.  
 շնուր զէնքըդ առ, հեծի քո ձին,  
 դնուրս եկ մէյդան, կըոիւ անենք:  
 — Կըոիւ անենք, առաւ Մելիք,  
 իմն է միայն զարկն առաջին:  
 — Քոնն է, զարկի, կանչեց Դաւիթ:  
 Գընաց կեցաւ դաշտի միջին:  
  
 Եկաւ, կանգնեց Մըսրայ Մելիք,  
 իր գուրզն առաւ, հեծաւ իր ձին,  
 քըշեց, գընաց Դիարբէքիք  
 ու էնտեղից եկաւ կըրկին:  
 Երեք հազար լիդր եր քաշում  
 հըսկայական իր մըկունդը.  
 Եկաւ, զարկեց. կորաւ փոշում  
 ու երերաց երկրի գունզը:  
 Երկիր քանդաեց կամ ժաժք եղաւ  
 ասին մարդիկ շատ աշխարհքում:  
 — Չէ, չէ, ասին, աբնի ծարաւ  
 հըսկաներն են իրար զարկում:  
 — Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,

ասաւ Մելիք իրեն զօրքին:  
 —Կենդանի եմ, ամպի տակից  
 գոռաց Դաւիթ Մըսրայ Մելիքին:  
 —Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,  
 տես՝ նրտեղից հիմի կը դամ,  
 Ու վեր կացաւ, կանփնեց հըսկան,  
 իր ձին հեծաւ երկրորդ անգամ:  
 Երկրորդ անգամ քըշեց Հալաբը  
 ու բաց թողեց ձին Հալաբից.  
 բուք վեր կացաւ, տեղ ու տարափ,  
 արար աշխարհ գողաց թափից,  
 Եկաւ, զարկեց զարկի ձէնից  
 մօտիկ մարդիկ ողջ խըլացան:  
 —Գնաց Դաւիթ Սասմայ տանիդ,  
 գուժեց գոռոզ Մըսրայ արքան:  
 —Կենդանի եմ, կանչեց Դաւիթ,  
 մին էլ արի՝ հերթն ինձ հասաւ:  
 —Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,  
 կանչեց Մելիք ու վեր կացաւ:

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,  
 գընաց մլոչե նողը Մըսրայ,  
 ու էնտեղից գուրզը ձեռին  
 քըշեց, եկաւ Դաւիթի վորա,  
 Եկաւ, զարկեց բոլոր ուժով,  
 ծանըք զարկով հըսկայական.  
 Փոշին ելաւ Սասմայ դաշտից  
 բընեց երեմն արեգական:  
 Երեք գիշեր ու երեք օր  
 փոշին կանփնեց ամպի նըման,  
 երեք գիշեր ու երեք օր  
 բօթը ացւին Դաւիթի մահւան:  
 Երբ որ անցաւ երեք օրը,  
 Էն ամպի պէս կանգնած փոշում  
 կանփնեց Դաւիթ, ինչպէս սարը,  
 Քըրդուռ սարը մէզ մըշուշում:

—Մելիք, ասաւ, ունին է ներթը:  
 Սարսափ կալաւ գոռ Մելիքին,  
 մահւան զողը ընկաւ սիրար  
 ու տապ արաւ գոռոզ հոգին:  
 Գընաց, խորունկ մի հոր գորեց,  
 իջաւ, մըտաւ վիճն էն խուար,  
 Վըրէն քաշեց քառսուն կաշի  
 ու քառսուն ջաղացի քար:  
 Մըռնչալով ելաւ տեղից  
 էն Առիւծի առիւծ որդին,  
 իր ձին հեծաւ ու փոթորկեց,  
 խաղաց, շողաց Թուր-Կոյծակին:  
 Առաջ զազեց մազերն արձակ  
 Մելիքի պառաւ մայրը ջադու.  
 —Դաւիթ, մազըս առ ոտիդ տակ,  
 Էտ մի զարկը ինձ բաշխի գոռ:



Երկրորդ անգամ թուրը քաշեց.  
 Էս անգամ էլ եկաւ քուրը.  
 — Դաւիթ, եթէ կուզես, կանչեց,  
 իմ սըրտին զարկ երկրորդ թուրը...  
 Վերջին զարկի ժամը հասաւ,  
 ելաւ Դաւիթ երրորդ անգամ.  
 — Էս մի զարկն ու Աստւած, ասաւ,  
 էլ մարդ չը դայ, պէտք է որ տամ:  
 Ասաւ, ելաւ ու փոթորկեց,  
 Թըսաւ, ցոլաց Դաւիթի հուր ձին.  
 ձին փոթորկեց, փայլատակեց  
 ու ցած իջաւ Թուր-Կայծակին:  
 Անցաւ քառսուն գոմշի կաշին,  
 անցաւ քառսուն քարերը ցած,  
 միջից կըտրեց ժանտ հրէշին,  
 եօթ գազ էլ գէնը գնաց:  
 — Կենդանի եմ, մին էլ արի,  
 դոռաց Մելիք հորի տակից:  
 Դաւիթ լըսեց, շատ զարմացաւ  
 իրեն զարկից, Թուր-Կայծակից...  
 — Մելիք, ասաւ, թափ տուր մի քեզ:  
 Ու թափ տւաւ Մելիքն իրեն,  
 միջից եղաւ ճիշտ երկու կէս,  
 մէկն ընկաւ դէօն ու միւսը դէն:

Էս որ տեսաւ Մըսրայ բանակ,  
 Հուր կըտըրւեց ահ ու վախից:  
 Դաւիթ կանչեց. — Մի վախենաք,  
 ականչ արէք հալա դեռ ինձ:  
 Դուք, ըսանչպար մարդիկ, ասաւ,  
 զուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,  
 հազար ու մի կըրակ ու ցաւ,  
 հազար ու մի հոգսեր ունէք:  
 Ի՞նչ էք առել նետ ու ազեղ,  
 եկել թափել օտար դաշտեր.  
 Հէ որ մինք էլ սնենք տուն-տեղ,

մենք էլ սնենք մանուկ ու ծեր...  
 Զանձրացել էք խաղաղ ու հաշտ  
 հողագործի օր ու կեանքից,  
 թէ զզւել էք ձեր հանդ ու դաշտ,  
 ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...  
 Դարձէք եկած ճանապարհով  
 ձեր հայրենի ճողը Մըսրայ:  
 Բայց թէ մին էլ զէնք ու զոռավ  
 վեր էք կացել զուք մեզ վրայ,  
 հորում լինեն քառսուն գտղ խօր  
 թէ ջաղացի քարի առակին,  
 կելին ձեր դէմ, ինչպէս այսօր,  
 Սասմայ Դաւիթ, Թուր-Կայծակին:

### 31. Հայերէի առաջին ուսուցիչը

ա.

Խաղաղ լուսնեակ գիշեր էր: Ա-  
 րաբանեան լայնատարած դաշտը խոր  
 նիրէի մէջ պապանձւել էր. նոյն իսկ  
 արքայանիստ վազարշապատի պահա-  
 պան զինւորները գտարել էին իրար  
 ձայն տալուց և լուս արձանացել էին  
 առաջնաւոր պարիսպներին ու բարձ-  
 րագագաթ բուրգերին:

Քնած էր պալատը, քնած էր և  
 կաթողիկոսարանը:

Միայն կաթողիկոսարանի խցե-  
 րից մէկում, արմունկները քարէ սե-  
 ղանին յենած, զլուխը երկու ձեռքով  
 ամուր պահած, արթան էր կաթողի-  
 կոսի մտերիմ Մեսրոպ վարդապետը:

Ճակաաը այրւում էր. հայեացքը անթարթ քենուած էր պատի մի կէ-  
 ռին, շըթանքները պինդ սեղմած. երկար մօրուքը թափւել էր առջեր  
 դրած մագաղաթին, որի վրայ դրել էին գծած: Նա կարծես չէր շըն-



շում, երբեմն միայն կուրծքը ծանր-ծանր վեր էր բարձրանում, և զոգուած հառաջի պէս մի բան դուրս էր թուում նոտ լրւոծ հօգու խորքից:

Երկու տարի. երկու աարի աշակերտներին դաս տալուց յետոյ, անընդհատ տքնելուց յետոյ, վերջապէս համոզւել էր, որ զուր էին իր բոլոր ջանքերը. Դանիէլ Ասորու զրելով իր մայրենի բառերը չեն գըւի, ասորելէն և յունարէն գրքերը հայերէն չեն թարգմանւի:

Իսկ որչափ ոզերուած էր ձեռնամուխ եղել նա այդ մեծ գործին. Այդ ժամանակ երազում է, թէ Սուրբ Գրքերը կը թարգմանւեն մայրենի լեզով և Մեծ Վարդապետի քարոզած սէրն ու դութը ազտո ու խոր կը թափանցի ժողովրդի օհբար. Զաւր երազներ.

Ահա այստեղ, կաթողիկոսարանի լայն որաճներում հիմա ննջում են յուսախաբ պատանիները, որ վաղը զալու են՝ կանգնեն իր դռանը ու ասեն.

— Վարդապետ, ինչու զարթեցը մեր հոգին. ինչու յոյս տւիր հայերէն զիր ու հայերէն Սուրբ Գերքը ունենարու.

Ի՞նչ պիտի պատասխանէր:

Կոկծից Մեսրոպի սիրտը հեծնծում էր:

Լումեակի պայծառ նեղ լուսամուտի որանիրով ընկել է և սրտ գլխին. արծաթազօծելով անժամանակ սպիտակուծ մազերը. Ակամայ զէմքը դարձրեց դէպի լուսամուտը, յետոյ բարձրացաւ ցածրամաս զէմքը դանդաղ քայլերով, ստւերի նման, մօտեցաւ լուսամուտին. Ու նայեց դուրս:

Երա առջն կանգնած էր Մատին իր վեհ գեղեցկութեամբ, երոխտ վայլով, ակառ գագաթը համարձակ վեր ուղղած. Նո կարծես իր հետ քաշում էր խցի վիատած մենաւորին, գէպի վեր, գէպի անսահման երկինքը:

Երկար նայում էր Մեսրոպը այդ հպարտ լեռան, տպա ծունկ իջու լուսամուտի առջն ու լուս ազօթում էր:

Երբ սոքի ելաւ, արդին նո վճռել էր. վաղը նո գնալու է Միջագետը, այստեղից էլ, թէ պէտք եղաւ, յունաց քաղաքները, բայց հայերէն տառերը պիտի գտնի անպատճառ:

Բ.

Անցաւ մի քանի տարի. Սահակ կաթողիկոսը շատպում էր վասմ շապուհի պալարը. Մեսրոպից սուրհանդակ էր եկել և լուր բերել, որ զրերը գտել է և շտառ գալիս է Վաղարշապատ.

Եկեղեցիների կոչնակները ստէպ-ստէպ խփւում էին, հրապարակներում և փողոցներում բերնէ բերան էր անցնում ուրախալի լուրը: Թագուարը, կաթողիկոս, իշխաններ ու հոգեորականներ բոլորը երար էին անցել, գնում էին Մեսրոպին ընդառաջ:

Ժողովուրդն էլ վազում էր բաղաքից դուրս, դէպի մահ գեալ ամսող ճամփան, այստեղով էր զալու անվիատ մարդը:

Այդ բազմութեան մէջ սակայն ամենից աւելի յուզւում էին Մեսրոպի նախկին աշակերտները. Նրանք վազում էին յուսով ու վախով, հազիւ իրար հետ հատ-հատ խօսքեր փոխանակելով, մտախոն, անհանգիստ, երկիւզը սրաներում: Երանի թէ այս էլ մի ինքնախարէութիւն չը լինի, կարդացւում էր նրանց բոլորի յուզւած դէմքերին:

Զայները հետզհետէ մատենում էին, ուսուցիչն արդէն քազաքի գլխաւոր գարապան էր մտել և դիմում էր դէպի կաթողիկոսարան:

Որքան փոխւել էր ու ծերացել: Մօրուքը բոլորովին ձերմակել էր, ճակտոնի խորշումները խորացել, բայց աշքերը փայլում էին անսպազով, ամբաղջ կերպարանքը աւելի բարձրահասակ էր դարձել, իսկ շարժումները վատահ ու եռանգուն: Ի՞նչ գեղեցիկ էր:

Իր հետ տարած աշակերտները հետեւում էին նրան:

Եւ ամբողջ բազմութիւնը զիմեց կաթողիկոսարանի դահլիճը, ուր Մեսրոպը թաղաւորի ու կաթողիկոսի առաջ մանրամասն պատմում էր ու նկարագրում իր երկար թափառութիւնը, իր կրած տառապանքները, իր զործ զբաժ ջանքերը և թէ ինչպէս հայերէն և օտոր եղնչիւնների երկար համեմատութեամբ, յամառ ու լորրած աշխատանքով վերջապէս շոկել էր ու գասաւորել հայերէնի նոչիւնները և ամեն մէկին համապատասխան տառ զակել կամ չունեցողների համար տառապե հնարել:

գ.

Մի շարաթ անցաւ: Մեսրոպը տառաւոտ երեխայ հաւաքում էր նախկին աշակերտներին ու նոր զիրը ովորհցնումն նատերը պարսկեր ու ասորերէն, մի քանիսն էլ յունարէն տառերը արդէն գիտէին և հեշտ էին հայերէն նոր զիրը սովորում:

Եւ ահա մի օր վերջապէս նրանք թարգմանեցին ու իրենց մագաթների վրա գրեցին աւետարանի մի ամբողջ երես հայերէն ւեզւով ու հայերէն տառերով:

Հրաշքը կատարւել էր: Պատանիները զարմացած և հիացած էին: Անսահման երջանիկ էր և ինքը Մեսրոպը:



Յ ՅՅուղմունքից այդ զիշեր նա խօկի  
քնել չէր կարողանում: Եւ արդէն ոգե-  
տորւած ծրագրում էր, թէ ինչպէս ձեռ-  
նարկեն Սուրբ Գրքի կանոնաւոր թարգ-  
մանութեանը:

Լուսաբացին մօտ էր, երբ յանկարծ  
լսեց իր խցի դռան առջևմի շշուկ: Գնաց  
դռուք բաց արաւ. նրա առջև, քարէ  
աստիճանների վրա կանգնած էր իր  
աշակերտներից մէկը:

—Կորիւն, դժւ ես: Ի՞նչ ես ուզում  
այս ժամին:

Պատամին պատասխանելու  
փոխարէն ծունկ խոնարհեց  
ու սառը քարերի վրա տա-  
րածւած աշխատում էր համ-  
բուրել ուսուցչի քղանցքը և  
շնչում էր.

—Ոհ, սուրբ մարդ, անման,  
յաւիտեան է քո գործը...

Եւ ուսուցիչը զգաց-  
ւած, աչքերը արտասու-  
քով լեցուն, անհուն հըր-

ճւանքով, հպարտ պարզեց իր ձեռքերը աշակերտի խոնարհած գլուխ  
վրա ջերմ օրէնութեամբ:

Ծուաւօտեան առաջին շողերը խաղում էին նրա ոգեսրւած գու-  
նատ դէմքին.

Լուսանում էր...

Ինչո՞ւ է Մեսրոպի գործը անմահ: Ի՞նչ աւելացաւ հայերին զբերի  
գիտով:

### 32. Անգրագէտ

ԵՐԵՒ մէկին չեմ նոխանձում  
ևս աշխարհի երեսին,

միայն, գրագէտ, դուք պարոններ,  
Նախանձւում եմ ձեր բախտին:  
Ա՛յս, զթացէք խեղճ գեղջուկիս

Աւ ինձ զրել սովորցրէք.

Թըւէք մի թերթ սպիտակ թռւղթ,

մի փետուրէ գրիչ տըւէք,

որ ձեզ յայտնեմ ինչ ցնորդներ,

ինչ մտքեր կան իմ գըլխում,

մի ողջ աշխարհ ես ձեզ ցոյց տամ

այդ աննման պատկերում:

Այժմ անհետ չըքանում են

այդ մըտքերն ու երազներ.

ես անդրագէտ, ես անուս եմ...

սովորցրէք, պարոններ:

Աղնիւ զործ է, թէ մարդ գըրել

իր խօսքերը կարենայ,

բոլորն՝ ինչ որ մտածում է,

բոլորն՝ ինչ որ հոգուց գայ.

զըլչով պատմի այն ամենը,

ինչ դիզել է իր սըրտում,

ճշմարտութիւն միշտ քարոզի,

քարի գործի մեծութիւն:

Այ, դու սագ, իմ ձերմակթիկ,

քեզ տւել եմ կերակուր,

քեզ սիրել եմ, փոխարէնը

թեցգ ինձ մի գրիչ անւը:

Սիրնւն դու սագ, տնւր խնդրում եմ

ինձ թոչելու զոյգ թեեր...

ես անգրագէտ, ես անուս եմ.

սովորցրէք, պարոններ,

1) Մարդիկ սիշտ են թղթի վրա գրել եւ միշտ մեր հիմիկայ  
գրիշներով: Հապան:

2) Ցղան սագի տած թետվը ո՞ւր է ոգում թոշի:

### 33. Ղարա-խանում

ա.

Անշան սկիզբն էր. արդէն բոլոր քոչւորները իջել էին ապերից գիւղը, որ ամառը գրեթէ գատարկ էր մնացել:

Կէսօրից շատ անց էր Յանկարծ գիւղի ծայրին շները կատաղաբար հաշեցին ու մի քանի բոլոր տների կտուրներից հարթաւոր շներ ձայնակցեցին նրանց. Ի՞նչ պիտի պատահած լինէր:

Գիւղը մի նոր մարդ էր եկել, այս էլ կին, ու շորերը՝ հագին, զլուխը բաց կին: Ոչ ոք առնասարակ չէր մտնում այդ հեռաւոր, խուլ անկիւնը, հազարից մէկ թէ որևէ պաշտօնեայ երեար: Ողջ գիւղը դուրս թափւեց. Թուրք տղաներն իսկոյն պաշարեցին սայլը, որի մէջ երերի վրա նստած էր տարօրինակ կինը, ու աղաղակում էին.

— Ղարա-խանում, Ղարա-խանում:

Առաջին անգամ էին տեսնում մի քաղաքացի կին. իրենց մայրերը ման էին գալիս պայծառ շթէ շորերով կամ ցնցուիներով ու զլուխը ծածկում:

Եկած կինը հարցրեց՝ «Ուր է տանուաէրը առւնը», — զարմացաւ կինը: Օտար գիւղացի սայրապանը բացարեց թէ՝ «Էստեղի թուրքերը բոլորն էլ էսպիսի տներում են ապրում, խանում... Ոչ մարդավարի առւն-տեղ ունեն, ոչ էլ ուտել-խմել գիտեն»:

Աւելի զարմացաւ Ղարա-խանումը, երբ իմացաւ, որ ամբողջ գիւղում ոչ հաց կայ, ոչ ձու, կաթն էլ հաղիւ թէ ճարվի: Ամեն ինչ պէտք է մօլլայից փոխ առնէր... Բայց թուրքերն էլ պակաս չը դարձան, երբ յայտնւեց որ Ղարա-խանումը եկել է դպրոց բանալու:

Ի՞նչներին է պէտք դպրոցը: Եւ էլ ինչ պիտի սովորեցնի կինարմատը: Մազը երկար, խելքը կարճ: Թուրքական դպրոցներում սովորեցնում էին մօլլաները:

Գիւղացիք խումբ-խումբ հաւաքւում էին, աղմկում, վերջապէս եկան մօլլայի մօտ ու խորհուրդ հարցրին:

— Զեսին թուրթ ունի, — յայտնեց ցաւակցելով մօլլան, — բաց է անում բաց անի: Միայն թէ ոչ ոք պարտական չէ որդուն նրա մօտ տալու: Ով ուղում է՝ կը տայ, ով չէ՝ հօ չէ... էն էլ է զրւած, որ պիտի սովորեցնի մենակ աղջիկներին:

բ.

Ղարա-խանումը մէկ-մէկ ման եկաւ բոլոր տները: Քանի աւելի էր ծանօթանում նա գիւղացիների կեանքին, այնքան աւելի էր ապշւմ: Միթէ կարող են բանական արարածները այդ տեսակ ապքի: Տներ չէին, այլ խոնաւ գետնափորեր, պատերը մեծ մասամբ անծեփ: Ամեն ծակ ու ծուկից բամին վշում էր, թուրի պէս մի բան փորած էր յատակի մէջ, ծուխը լցնում էր ամբողջ ներսը: Բակում ոչ մի առանձին շինութիւն: անասուններն էլ բնակւում էին միմայն գետնափորում, մարդկանց հետ միասին: Աղբը, թրիքը հենց դռան առջև կիտած: Ոչ մի ծառ, ոչ մի բոյս. շուրջը կատարեալ պայտը թիւն: Տան մէջ մի երկու զզզզւած, ցեխուաւած կապերտ, կեղասուներն ընդունակներ, աւելի կեղտու, բուրդը դուրս ցցւած վերմանեն: Միայն հասակաւոր տղամարդիկ էլև բան-ման հազին ունէին: իսկ կանայք ու երեխաները շրջում էին բորիկ և գրեթէ մերկ: Այդ տարի մասաւանդ երաշտից հացի պակասութիւն էր, և ուր էլ մտնում էր Ղարա-խանումը, սոված մանուկների լացն ու աղաղանքը սիրու կտոր-կտոր էին անում: Ինչ ուտելեզէն որ բերել էր իր հետ, բոլորը նայն օրն և եթ բաժանեց: Ամեն տան մէջ զանում էր մէկ երկու հիւննդ:

Սագ գիշեր Ղարա-խանումը չը կարողացաւ բոլորովն աչքը բացել, թւում էր թէ դեռ ևս լուս էր լացի ձայներ, աղաղակներ, հառաչներ...

գ.

Ղարա-խանումին տւին մի ետ ընկած, պարապ տնտիկ: Տամնեակ վերստ հեռակից մշակներ ապսպրեց և կարողացաւ մի կերպ պատերի ծակուտիկները ծեփել տալ, կտուրը ամբացնել, երդիկը կալնել, մի պատի մէջ երկու պատուհան բաց անել, յատակը հաւասարացնել ու ևսիրով ծածկել: Սենեակի մի կողմը, որ վարագոյրով էր բաժանւած, միտի խանումի ննջարանը լինէր, միւս մասը՝ դասարան:

Սկզբում երկու աշակերտ գրւեցին, միայն երկու աղջիկ, սրոնց բեռնել էին մայրերը բոլորովին մերկ: Ղարա-խանումը հագցրեց նրանց և կուշտ կերպեց, ամբողջ գիւղն իրար անցաւ: Մէկ անգամից ընչունեցին երեսունի չտփ աղջիկներ, աւելի տեղ չը կաթ... Մայրերը բերում էին ծծի երեխաներին ու պահանջում էին, որ նրանց էլ ընթարում էին ծծի երեխաներին ու պահանջում էին, որ նրանց էլ ըն-

դունի... բան հասկացնել անկարելի էր լինում,

Թուրք տղաներն էլ զայրանում էին. Նրանցից միմիայն Ահ. մէջը կարողացաւ տեղաւորւել դպրոցում, այն էլ նրա համար, որ յանձն առաւ տենեակը մարերել, ջուր բերել ու ծառայի պաշտօն կատարել: Բայց հէնց տուաշին օրը Ահմէջը գողացաւ Ղարա-խանումից մի մկրատ: Վարժուակին ձեացրեց թէ գլխի չի ընկնում, ու առաւ.

—Ահմէջ, իմ մկրատը չըկայ. անզուշա մի վատ մարդ է եկել ու ապրել: Եթէ մի ժամանակ իմանաս, թէ ով է այդ վատ մարդը, խնդրեմ ինձ ոչինչ չասեա, ես այդ տեսակ մարդոց՝ երեսը տեսնել չեմ ուզում:

—Ես չէի, Ղարա-խանում—պատասխանեց Ահմէջը. —Ես կը երա-կեմ, որ բանեմ այդ վատ մարդուն,

—Հսկի: Ահմէջ, հսկի:

Ահմէջը շարունակում էր իր գողութիւնը: Մէկ անգամ էլ աեղն ու տեղը բռնւեց, գողացած իրերը ձեռքին, բայց այս անգամ Ղարա-խանումը էլ ոչ մի խօսք չասաւ, ուղղակի աչքերին նայեց ու մօսից անցաւ:

Ահմէջը քարտցած մնաց, յետոյ գողացած իրերը ձեռքից վայր դցեց ու դուրս գնաց:

Մի քանի օր չէր կարողանում Ղարա-խանումի տչքերին նայի, այնուհետև առնից էլ ոչինչ չէր կորչում:

Դ.

Պառաւները յաճախ գալիս էին դպրոց տաքանալու և նայելու, թէ ինչ են անում իրենց աղջիկները: Երեխաները գրում-կարդում էին, կարում ու գործում:

—Մըտեղից ես եկել. —Ղարա-խանում, —հարցրեց մի օր նրանցից մինը:

—Հեռւից, տատի:

—Ի՞նչն է քեզ մեղ մօտ բերել, էս անտէր-անտիբական աշխարհը: Աղքատ ու սոված մարդիկ ձեր երկրում էլ անսլակաս կը լինեն...

—Եկել եմ ձեղ մօտ նրա համար, որ ուրիշ աղքատներին օգնողներ կան, իսկ ձեղ ոչ ոք չի օգնում. —պատասխանեց Ղարա-խանումը:

Բայց տակաւին բան չըկասկացաւ:

—Չես հասկանում, տատի:

—Ոչ, Ալլահը վկայ, չեմ հասկանում:

—Հաւ, բացարեմ քեզ... Ես մի ծով գարդ ունեի: Երկու աչքի յոյս երեխաներ ունեի, երկուսն էլ Աստած առաւ...

—Ո՞հ, —մղկաց պառաւը. —իմ երեխաներից էլ շատերին Աստած առել է...

—Այս... Աչքիս էլ բան չէր երկում: Մտածում էի՝ էլ ինչու ապրեմ էս աշխարհի երեխին, էլ ինչացու եմ. աւելի լաւ է՝ ինքս էլ մեանեմ: Բայց յետոյ, երբ եկայ էստեղ, տեսայ՝ որ գեռ մարդկանցը հարկաւոր եմ:

Բայց տատին այնու ամենայնիւ բան չը հասկացաւ.

Ե.

Դպրոցի շինութիւնը շատ վատ էր, ու Ղարա-խանումը յաջորդ ամառը վարպետներ բերել տւառ ու սկսեց նոր տուն շինել, աւելի բարձր, ընդարձակ, լայն-լայն պատուհաններով և աղիւսէ ծխնելոյնք. —տանիքը կղմինարից էր, տան մօտ էին բոլոր հարկաւոր շինութիւնները. բակը շրջապատած էր բարձր պարիսպով, իսկ բակից դուրս մի ընդարձակ տեղ չափարով կազած՝ ապազայ բոստանի համար:

—Շատ փող ունի Ղարա-խանումը, —ասում էին գիւղացիք, նայելով այդ շինութեանը:

Մի քիչ յետոյ Ղարա-խանումը գնեց երկու կով, այծեր, ոչխարեր, հաւ, նոդկահաւ, սագ, բագ և մի բարակ առու անցկացրեց գեղից մինչև բոստանը:

Յաջորդ գարնանը աշակերտուհիները նրա հետ բանում էին բոստանում, գետինն էին փորում, մարդեր ձեռում, ցանում, տնկում, ջրում, աղիան անում... Այդ գիւղում ոչ մի բոստան չկար, ու թուրք կտայք չը գիտէին՝ ինչ բան է կարտոֆիլը, կաղամբը, բաղրիջանը, բաղուկը. շատ-շատ երբեմ ձեռներն ընկնում էր մի-մի սոլի կամ վարունկը

—Փոքրերը կը սովորեն, յետոյ իրենց համար բոստաններ կը շինեն, —մտածում էր Ղարա-խանումը:

Գ.

Ամբողջ գիւղը հետաքրքրութեամբ հետեւում էր Ղարա-խանումի աշխատութիւններին: Երբ պատրաստում էին սարերը քոչելու,

վարժուհին հազիւ հազ համոզեց մի երկու տղասա ընտանիքներ, որ իր մօտ թողնեն իրենց աղջիկներին. և ամբողջ ամառը շոգին նրանց հետ աշխատում էր բակում և բոստանում:

Գիւղում մացել էին մի քանի տղամարդ, որոնք ցողինը մի կերպ հնձեցին, կասեցին. յետոյ նրանք էլ հեռացան սարերը. Միայն կատուները մացին աներում:

Աշնանամուտին, երբ գիւղը նորից կենդանացաւ, բոլորն էլ զարմանքով տեսան, որ վարժուհին ամեն ինչ ունի. մի քանի տասնեակ հաւ, հնդկահաւ, սագ, բադ, դաճներ, հորթուկ, տան տաջն ծաղկաց. բաղեղը բարձրացել էր դպրոցի պատով; գրեթէ պատահաններից վեր, իսկ բոստանը լի էր ամեն բարիքով:

Հարա-խանումը գւարթ և ուրախ էր, կարծես տւելի ջտհելացել էր. Օգնական աղջիկների ընտանիքները բաժին ստացան նրա բակի ու բոստանի լիութիւնից:

Դպրոց մանել ցանկացաղների թիւը շատացաւ. Մի ոսուցչունի ևս եկաւ քաղաքից. Այս անզամ տղաներն էլ ընդունւեցին: Իսկ երբ եկաւ ամառը, արդէն գիւղացիներից աւելի շատերը չուզեցին իրենց երեխաններին տանեն սարը ու թողին Հարա-խանումի մօտ. Դպրոցը կաղալզ առել էր մի քանի օրավար հող, վարել ու ցանել ցորեն, գարի և կորեկ:

է.

Անցան տարիները. Դպրոցի շուրջը անկած պաղատաւ ծառերը մեծացան. տունը այժմ այգու մէջ էր: Բնուածնը կրկնակի ընդարձակւել էր: Գիւղի այս և այն ծայրում երեացել էին աւելի լաւ շինւած տնակներ, պատուհաններով և ծխնելոյզներով, կղմինսներով ծածկրած. ծառերը հովանաւորում էին նրանց բակերը և աների կտղին կանաչն էին տալիս բոստանները: Առուն մեծացրած էր և ուրախ վազում էր փողոցներով...

Ամառայ ամիսներում գիւղը այլիս չէր ամայանում և բոստաններում և արտերում իրար կողքին երեւում էին աշխատաղ կանալը ու տղամարդիկ, առաջադէմ և աւելի լաւ հագնւած:

Դրանք մեծ մասսմը Հարա-խանումի օգնականներն էին:

1) Միայն մեր թուրք գիւղերն են այսպէս խեղճ: Ի՞նչ է այս խեղճութեան պատճառը:

2) Հարա-խանումը ի՞նչ միջոցով է ուզում կոր այդ խեղճութեան դէմ: Նա ինչով էր ազդում գիւղացիների վրայ:

## 34. Պարզրկայ գիշեր

Պարզրկայ գիշեր...

Աստղերն երկնքում լուս պըսպըղում են,  
լուսնի շողերը գիղել են սարի  
ձիւնոտ կողերին, կողերը ցոլում,  
պէծին են տալի:

Թամբին ցըտշունչ  
Թեերը գըտած փնչում է, թաշում,  
երկիրը ուսուծ ճաքում-ճաքճըգում,  
ձեան հատիկներով գրափի կուրծքը  
ծեծում ու ծեծկում...

Անձայր ճանապարհ.  
ասաջ են զնում. ուր. ես չը գիտեմ.  
սառյց ու ձեռու.  
առաջ են զնում անյայս, անընկեր,  
քամի ու գիշեր:

## 35. Գիքորը

ա.

Գիւղացի համրօի տունը կոիւ էր ընկել:  
Համբօն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի պայ, որ մարդ դառնայ, աշխատանք անի: Կինը շեր համաձայնում:

Չեմ ուզում, իմ  
մատաղ երեխին էն  
կրակ աշխարհը մի  
դցի. չեմ ուզում.—  
լախ էր կինը.

Բայց համբօն չ  
լսեց:

Մի խաղաղ գեղեցիկ տուաւոտ էր. մի տիուր առաւօտ. Տանեցիք

ու հարևանները եկան մինչև գիւղի ծայրը, Գիքորի թշնը պաշեցին ու ճամփայ դրին:

Քոյրը, Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալօն մօր գրկից ձայն էր տալիս՝ «Գիքոր», էտ ուր եռ գնում, և՛ Գիքոր»:

Գիքորը զուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր՝ դեռ գիւղի ծայրին կանգնած են նըանք ու մայրը գոգնոցով որբում է աչքերը: Դարձեալ հօր կողքով վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ ետ նայեց. գիւղը ծածկւել էր ըլուրի եռեւ:

Այնուհետև Գիքորը ետ էր ընկնում:

—Արի հա, Գիքոր ջան, արի հա, հասանք հա, —որդուն կանչելով գնում էր Համբօն, շալակին մի խուրջին, մէջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու գաստա ծխախոտ:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գիւղը հեռու մշուշում:

—Այ, ապի, մեր առուն էն է, հա, —ցոյց տւառ Գիքորը՝ մտաք մեկնելով դէպի գիւղը, թէև առունը իսկի չէր երեսում, ու անցան:

Բ.

Առաջին իրիկունը կիւր ընկան մի գիւղում: Տանտէրը Համբօի կին ծանօթին էր:

Դեզին սամովարը թշնում էր առաջարի ծէրին: Մի ջահել աղջիկ շըրսկացնելով բաժակները լւանում ու թէյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ունէր հագին: Գիքորն էնտեղ մտքումը դրաւ, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զանին համար մի էն տեսակ շոր ուղարկի:

Միւս օրը քաղաք մտան, իջան բազար:

—Բիծա, էտ երեխին ծառայ հս առլու, —խանութի ներսից հարցըց մի վաճառակոն:

—Հրամանք ես, —առաւ Համբօն ու Գիքորին էն կողմը երեց:

—Բեր ինձ տուր, ես կը բռնսմ, —առաջարկեց վաճառականը: Նրան ասում էին բազագ Արտեմ:

—Հինգ տարի դեռ փող չեմ տայ, —առաւ բազագը պայմանը կապելիս. —Թէ գրաւստը կուցես, դեռ դու պէտք է տաս, որ քո որ դին բան է սովորելու: Ախը իսկի բան չը գիտի...

—Ո՞րտեղից գիտենայ, խազէին ջան, —պատասխանեց Համբօն, —որ գիտենար, էլ ուր կը բերէի: Ես էլ բերել եմ, որ բան սովորի...

—Կը սովորի, ամեն բան կը սովորի:

—Իմ զարդն էն է, աղա ջան, որ մարդ դառնայ, լեզու սովորի, գրել-կարդալ սովորի, նստել-վեր կենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարհքումն ինձ նման խեղճ ու զուրկ չը մնայ...

Բազագը Համբօին միամտացրեց ու դուրս գնաց բարձր-բարձր հրամայելով: —Չայ բերէք, հաց բերէք սրանց համար...

Դ.

Ու նայր ու որդի նստած էին բազագ Արտեմի խոհանոցում:

—Դէ, հիմի զու գիտես, Գիքոր ջան, տեսնեմ՝ ինչ տեսակ ուղղայ ես դուրս գտվի... Հէնց պէտք է անես, որ... ես ինչ գիտեմ... ով Տէր Աստւած... մանչաց Համբօն ու շիբուխը լցրեց:

—Վախտ ու անվախտ դէս-դէն չընկնես, ձեռքդ ընկած փողը քոռ ու փուչ չանես. հազար ու մի պակասութիւն ունենք: Քեզ էլ լուսպահի, գիշերները բաց չը լինես, մրսես ոչ...

—Հացի կտորտանքն ու քարթուն կը առան, կերտկուրի թերմացքը կը տան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չըկայ, կարգը էտ է... Օրեր են, կը մթնեն, անց կը կենան...

Շարունակում էր նայրն իր խրապը, բայց Գիքորը հօրը թինկը առած քնել էր արդին:

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ յոզնել էր բոլորովին:

Մըզով մերը խանութիւները, գէղերի նման գարբած գոյն-գոյն շիքերը, աեսուկ տեսակ խաղալիկները, ուսումնարան գնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետենց ոլացող կառքերը, ուղարքի շարքերը, կանաչի բարձած աւանակները, թարախները գլխներին կինուները... էս ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղաղակը իրար խտոնւած դժւժում էր նրա պիխում: Եւ նա յոզնել էր ու հօրը թինկը տւած քնել:

Դ.

Խանութում Գիքորին ապրանք կը տային մուշարիների հետ առնելու, չիթ կը ծալէր, խանութը կը որբէր, իսկ պարապ ժամանակը յաճախորդ կը կանչէր:

Եւ ահա Գիքորը նաց է առնում խանութը, կերակրամանը ձեռքին, մաշւած ու դժգոյն մեծ-մեծ սոնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքեւ: Քարւանսարաների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուրը, ոլորտում, պատռում, ու ճըշշւելով խեղդում, խուլ թշնում կամուրջի առկին:

Ապից մօտիկ պըտըտւում էր մի կանաչ նաւակ. Երկու հոգի կային նրա մէջ. մինը ուռկան էր ձգում, միւսը նաւն էր կառավարում:  
«Այ կիմի կը նանի», — ասաւ Գիքորն ու կանգնած նայում էր ձկներին: Ուռկանը դատարկ դուրս եկաւ:

— Էս մինն իմ բախտից, — ասաւ Գիքորը ուռկանը ձգելիս: Գիքորը դախուը դատարկ դուրս եկաւ:

— Էս մինն էլ մեր Զաննի բախտիցը:

Էս էլ դատարկ դուրս եկաւ,

— Էս մինն էլ Գալօի բախտիցը:

Գալօն էլ էր անբախտ:

— Էս մինն էլ բառ...

Բայց էտ ժամանակ մօտիկ քարւանսարայի դռանը աղմուկ բարձրացաւ. Մի պարսիկ կազիկ էր պար ածում երգելով:

Ժողովուրդը հուտքւել էր զլիին ու վազում էին չորս կողմից: Գիքորն էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնել, առաջ անցնել, չը կարողացաւ: Վիզը ձգեց, պետքերի վրա կանգնեց ու ճգնում էր անպատճռ տեսնի, թէ ինչ է՝ կատարւում մէջտեղը:

— Ի՞նչ ես ներս խծկում, տո լածիրակ, գնա քու բանին, — ասաւ մի կինած ու զարկեց Գիքորի զլիին:

Գիքորը յանկարծ սթափւեց ու վազեց դէպի խանութ:

Ե.

Իրիկունը Գիքորը կուչ էր եկել խոհանոցում: Դեռ արասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրում էին խաղէյինի ապահների տեղերը, երբ շւշլացնելով ներս մտաւ վասօն, բազագի աշկերտը: Գիքորին նկատելով նա իսկոյն կանգ առաւ ու մասխարա դէմքին լըջութիւն տալով սպանալի հարցրեց:

— Կլուրծմն ուշացար, տո արջի քոթոթ, թէ գուբերնատօրի մօտ վառ գործ ունէիր...

Գիքորը լուռ էր:

— Զես իմանում, տօ, նրանեղ էր է, որ էսօր ինձ քաղցած ըստանեցիր: Որ մեանէի յետոյ...

Էսպէս խոնելով կամաց-կամաց մօտեցաւ, մի քիչ կանգնեց ու յանկարծ զարկեց Գիքորի զլիին: Գիքորը երկու ձեռքով վլուխը պաշտպանեց ու սեղմւեց պատին: Վասօն պատրաստւում էր մի ու-

րիշ ձեփի հարւած էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացաւ խաղէյինի ձայնը: Գալիս էր:

— Աբա տես հիմի՝ քեզ ինչ է անում, — սպառնաց Վասօն:

«Հիմի ինձ կը սպանեն», անցաւ Գիքորի մաքովը, ու խեղճի հոգին տապ արաւ:

Խաղէյինը արդին բաւական ծեծել էր խանութում, այժմ միայն հրամայեց հաց չը տան, որ իմանայ թէ ինչ բան է քաղցածութիւնը:

Գիքորը կծկւեց վերմակի մէջ, գլուխը կոխեց տակը, տապ արաւ:

Վասօն հաց էր ուտում: Գիքորը վերմակի տակից երբեմն զգոյշ ծըկրակում, թաքուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն օրը հաց չէր գրել բերանը, ծեծւել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր աանում:

— Հը, ոնց է, սոված քունդ չի տանում, հա, էտպէս... — նկատեց շարաձճի Վասօն ու մի կտոր հաց ու պանիր տւաւ Գիքորին: — Դէ, առ, տեղի տակին թաքուն կեր, խաղյէինը չիմանայ:

Գիքորը յափշտակեց հաց ու պանիրը, գլուխը կոխեց տեղի տակը, թաքուն ուտում էր ու մտածում: Մատածում էր իրենց տան վրա, էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրա հաց ուտում: Մտածում էր էն երեկոների վրայ, երբ հէրն ու մէրը կրում էին իրեն քաղաք բերելու համար... և մայրը լաց էր լինում, չէր ուզում...

— Ախ, նանի ջան, ինչ լաւ էր սիրադ իմացել, — հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուտում՝ ականջը սրած, թէ խաղէյինը հօ չի գալի...

Իսկ առուօք կանգնած էր խանութի դռանն ու կանչում:

— Էսորի համեցեք, Էսորի համեցէք...

գ.

Զմեուը եկաւ: Սառն աղմուկով, ձիւնախառ բուքը թաշում է՝ քաղաքի վրայով: Փողոցներում սուրում, սուլում, հոռան է անում: Վզզարով մանում է անկիւնները, ազքատի ու տկլորի է ման գալիս, պանդուխտ և անտէր երեխայ է որոնում:

Ահա գառ Գիքորին:

Մի բարակ բլուզ հագին, խանութի դռանը կանգնած՝ ձայն էր սալիս նա.

— Էսորի համեցէք, Էսորի համեցէք...

—Հրէսս — շարախինդ սուլելով ցուրտը, աներեսյթ թրի նման զարկեց անցաւ ոսկարներ, ու Գիքորը գողաց:

Առանց էն էլ նա շատ էր մաշւած, էտքանն էլ հերիք էր նրան. Ու անկողին ընկաւ.

Հիւանդ պառկած էր Գիքորը խոհանոցում: Բազաղ Արտեմի մայրը, պառաւ գէղին օրը մի քանի անգամներս էր մտնում իրեն-իրեն խօսելով.  
—Ի՞նչ կուզես, որդի Գիքոր:

—Զնուր...

Իէղին ջուր է տալի, հիւանդը դողդոշուն ձեռներով բռնում, ազահ խմում էր ու կրկին ուզում:

—Էս սիրտս հովացնում չի, գէղի... ևս մեր աղբիւրի ուսուը Ձըրիցն եմ ուզում... գէղի... ևս մեր տունն եմ գնում... ևս իմ նանին եմ ուզում...:

Բազաղ Արտեմը ցաւի մէջ էր ընկել: Նա դէս գէն-ընկաւ, նըրանց կողմերից մարդ գտաւ, ապսարեց, որ Համբօն դայ, իսկ Գիքորին տարաւ քաղաքային հիւանդանոց:

Էսանդ շատ հիւանդներ կային շարքերով պառկած: Տիրուր արնում էին ու իրար նայում անզօր հայեացներով:



Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում:

Էսանդ գտաւ նրան հայրը:

—Էտ ի՞նչ ես եղել, Գիքոր Զան, — մղկառլով վերայ ընկաւ Համբօն:

Գիքորը տաքութեան մէջ չիմացաւ հօր դալ:

— Գիքոր Զան, բա եկել եմ է, Գիքոր Զան... ես քո ապին եմ է...

Հիւանդը ոչինչ չը հասկացաւ: Նա զառան-

ցում էր ու զառանցանքների մէջ կանչօւմ էր. — «Միկիչ, Զանի, ապի, նանք...

— Էսանդ եմ, Գիքոր Զան. նանը զարկել է, որ քեզ տանեմ մեր առնը... դալիս չեմ... Միկիչն ու Զանին հրէն կաերը կանգնած քեզ

Համբօյ են պահում: Ի՞նչ ես ասում. դէ խօսա է, Գիքոր Զան:

— Էսանդ համեցէք, Էսանդ համեցէք—բացականչեց հիւանդը, զանազան անկապ, կցկտուր խօսքեր տաւ ու ծիծաղում էր տաքութեան մէջ:

է.

Մի երկու օրից յետոյ Համբօն գնում էր իրենց գիւղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կոան տակին տանում էր նրա շորերը, որ մայրը լաց լինի վրէն: Շորերի զբաղաններում մի բուռը փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չթի կտորներ ու մի քանի քորոց գտաւ: Էն էլ, երեխ քրոջ՝ Զանի համար էր հաւաքել ու պահել:

Գնում էր Համբօն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, որ էտ միենոյն ճամբով քաղաք եկաւ իր Գիքորի հետ: Ահա էսանդ էր, որ նա ասաւ.—Ապի, ուներս ցաւում են...

Եւ ահա էն ծառը, որի տակ նոտեցին հանգստանալու...

Ահա էսանդ էր, որ ասաւ.—Ապի, ծարաւ եմ...

Ահա էն աղբիւրն էր, որ ջուր խմեցին...

Միւս օրը, երբ Համբօն անցնում էր լեռները՝ հեռուում երևաց իրանց գիւղը: Գիւղից գուրս կանգնած սպասում էին նանը, Զանին, Դիկչը, Սոսին, իսկ գորդիկ Գալօն մօր գրկից կանչում էր.

— Արի, արի, հէ Գիքոր...

### 36. Ջրահեղձը

Ներս վագեցին մանսւկները  
ու կանչում են հօրն ըշտապ.

— Ապի, ապի, եկ, մեր թոռը  
մեռել հանեց գետի ափ:

— Սուստ էք ասում,

շան լակոտներ,  
զոռաց հայրը տհաբեկ.

Սողառեցէք դուք հալա դեռ,  
մեռելն յետոյ կը տեսնէք:

Դիւան կը գայ,

պատասխան տուր.  
ցաւի միջում կը մընամ.

հընար չը կայ, ընը, մյ կնիկ,  
շորերս տուր մի զնամ:

— Ուր է մեռելն: Այ, ապի, այ,  
ծիշտ որ գետի եղերքին,

թաց թոռի մօտ, գեանի վըրա  
տարածւած էր մի մարմին:

Զարհուրելի դիակն ուռել,

կապըտել է այլանդակ:

Արդեօք տանջւած մի թշւամա էր՝  
հանգիստ գտած զրի տակ,  
մի գետակուր ձկնորս էր այս,  
թէ զինեմոլ մի ջահել,  
թէ անզգոյշ վաճառական  
հարամու էր պատահել...

Ընչեն է պէտք. աչք ածելով  
ըշտապում է զիւղացին,  
սոխց բռնած, ետ քարշ տալով,  
ջուրն է տանում խեղդւածին.  
Ու թիակով զետի եզրից  
ջաւը հըրեց նա նըրան,  
ու զիակը գընաց՝ նորից  
փընոռի խաչ ու զերեղման.

Մեռեն երկար ջրի միջին  
ցած էր իշում ճօճւելով.  
աչքով ճամփեց մեր զիւղացին  
ու տուն դարձաւ կանչելով.  
— Դէսը կորէք, այ լակոտներ,  
եկէք, բան տամ ձեզ, տանեմ,  
ամա թէ որ ձէն էք հանել,  
հոգիներդ կը հանեմ.

Գիշերն ուժգին բուք վերկացաւ,  
գետն եխում է, որոտում...  
Մարիզ արդէն այրւեց, հանգաւ  
լուռ ու ծըլստ խըրճիթում.  
Ողջ քընած են, Անքուն պառկած  
միտք է անում զիւղացին...  
Բուքն ոռնում է...մին էլ յանկարծ  
լուսամուտը բախսեցին...

— Ո՞վ ես: — Ներս թող,  
այ տանտէր, ներս...

— Ա՛յ, ներս ու քեզ չոռ ու ցաւ.  
Բնչ ես շրջում կայէնի պէս,  
որ սատանէն քեզ բերաւ:  
Ի՞նչ անեմ քեզ, ասա, կիմի,  
տեղը նեզ է, տունը մութ:

Ու ծոյլ ձեռքով, տրաշնջալով՝  
բաց է անում լուսամուտ:

Ցոլում էր լոյսն ամպի տակից.  
ահա կանգնած... մի մերկ մարդ.  
Ջուր է հոսում նըրտ միրթից,  
բաց են աչքերն ու անթարթ:  
Կախ են ընկած բազուկները,  
ողջ կարկամած սոսկալի,  
ուռած մարմնին քառչտնքները  
կըպած՝ սիփն են տալի...

Անից մարեց՝ ճանաչելով  
իր մերկ հիւրին նո յանկարծ.  
Փեղկը խփեց ու դողալով  
— Ա՛յ, դու ճաքես, քըրթմընջաց:  
Ամբոխւցին մտքերը մութ  
մինչև լոյսը նա դողում,  
մինչև լոյսը լուսամուտ  
բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զըրյց ունի.  
թէ այս դէպքից զիւղացին  
ըսպտում է ամեն աարի  
միշտ նոյն օրը խեղդւածին:  
Խառնում է օրն առակորից,  
զիշեր գալի բուք ու մութ,  
ու խեղդւածը ամբողջ զիշեր  
բախում դուռն ու լուսամուտ:

## 37. Զմէն

Զմէնը եկել դիզւել էր, սար ու ձոր բռնել:

Պարզէկայ զիշերը էնպէս էր գետինը սառեցրել, որ ամեն մէկ  
ուաշ կտիելիո հազար տեղից տրաք-տրաքում, ճրճում, ճըքճըքում եր  
ու մարդու մարմինը սարսուացնում, ձէն տալիս:

Ամեն մէկ ծառի ճիւղից, ամեն մէկ տան գլխից, հազար  
տեսակի սառցի լուլայ, հազար տեսակ ճիւնի քուլայ կախ էր եղել  
ու բիզ-բիզ իրար վրա սառելո Հէնց գիտես՝ սար ու ձոր կամ նոր  
էր ծաղկել, կամ նոր ծերացել, մահան դուռն ընկել. շունչն էր  
մացել՝ որ տայ ու աշխարհին բարով մնայ ասի:

Թռչուն, գտղան, անասուն, սողուն, որը փէտացել, էստեղ, էն-  
տեղ վեր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով տաշջ բռնը մտել, ձէնը  
կարել, պաշարը վայելում, գարնան գալուն սպասում:

Գետերի, առուների երեսները սառոյցը մէկ գազ եկել, հաստա-  
ցել, իրար վրա զիզւել, էնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ  
տեղ, որ մօտներին կանգնողը միմիայն նրանց խուլ ձէնն էր լում,  
որ սառցի տակին տիրուր-տրատում քըրթում էր ու էլ ետ էստեղ, էն-  
տեղ կամաց ձէնը կտրում, պապանձում, սառչում:

Մըկակը էս առաւօտ, որ գլուխը քնի տեղիցը ու աղօթաբանիցը  
և բարձրացը ու աչքը աշխարհի վրա զցեց, շողը սարերի գա-  
գաթին, դաշտերի զիխին էնպէս էր պէծին տալիս, պսպում, փայ-  
ում ու սառցի, ճիւնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին  
տալիս, որ հէնց իմանաս՝ աղամանդ, յակինթ, զմբուխու ու հազար  
տեսակ անգին քարեր լինէին դաշտերի, սարերի գլխին, երեսին ու  
գօշին փուած:

Մարերի սառը բուքը, ձորերի դառաշունչ քամին էնպէս էր հրա-  
պարակ բաց արել, գոռում վշում, հոսան անում, ճիւնի թեփը իրար  
զիխով տալիս, որ ճամփորդի քիթն ու պոռնզը կպցնում, ճաքեցնում,  
երեսը պատում, զիխին, դէմքին հազար անգամ խփում, աչք ու բե-  
րեսը լցնում, շատին կամ ձորերն էր զցում, խեղդում կամ ճիւնի մէջ  
թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացրած ճամփից  
խռկում, սար ու չոր զցում, խեղդում կամ քարեքար տալիս:

## 38. Կոխ

ա.

Չմուն մի գիշեր կար մի հարսանիք,  
հըրծւում էր սնգուսազ ամբոխը գիւղի.  
գիւղն էին իջել հովիւ պլատանիք  
աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:  
Ու պարից յետոյ լայն հըրապարակ  
բաց արին մէջտեղն արձակ զլխտան,  
զուռնաչին փչեց կոխի եղանակ,



ահել ու ջահել իրարով սնցան:  
Հարայ են տալի՝ «Քաշի՞ հա, քաշի...»  
Ու դուքս քաշեցին զոռով երկուսին.  
մինը մեր Սարօխն, (իսկ) միւսը Մոսին:  
Ողջ գիւղը կանգնեց պարբուղի նման,  
ջոկւեց, բաժանեց երկու բանակի,  
ամեն մի բանակն ընտրեց փահլան,  
կանգնեց թիկունքին տըղերանց մէկի:  
Գոռում են, գոշում երկու բանակից.

— Արտապինդ կացէք, մի վախէք, տըղէք:  
Իսկ նորեկ հարսի փարզի քամակից  
նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:  
Ու տաքանում են տղէրքը սաստիկ,  
փէշերը հաւաք խըրում են գոտին,  
գետին են զարկում ձեռքերը հաստլիկ,  
իրար են համնում թափով մոլեգին...  
Ու իրար բռնած Սարօն ու Մոսին  
քաշում են, ընկնում խոզապարկուկի,  
ընկնում են գետին, ելնում միասին,  
դըժւար է իբրև յաղթել մէկ մէկի:  
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,  
կատակի տալով թօղած էր իրեն,  
ուժ արաւ Սարօն, ծըւկեց կատաղի,  
գետնեց ընկերին ու չոքեց վըրէն:  
Ամբոխը թափւեց հարա-հըրոցով,  
վեր թոցրեց ջահել փահլաններին,  
և ուրախութեան աղմուկ-գոռոցով  
յաղթողին փեսի թախտի մօտ բերին:  
Յընծութեան ձայնից, ծափերի զարկից  
շարժւում են, դողում զատեր ու օճոք,  
և նորեկ հարսի փարզի քամակից  
նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

## 39. Գիլլ

ա.

Ծիրան անունով մի եղն ունէինք: Մի ձմեռ էս եղը կորաւ: Ախ-  
պէրս ինձ զրկեց մանգալու: Ես էլ էսպէս 16—17 տարեկան ջահել  
տղայ եմ: Գնացի գեղի չորս կողմը ման եկայ, ման—չը գտայ: Գո-  
մահանդ ունենք, էնքան էլ գեղից հեռու չի: Ասի՛ եղը սովոր է, կա-  
րելի է էտ կողմն ըլի դնացած: Գնացի էտ զոմահանգը: Գնացի, էտ  
զոմը նայեցի, էն զոմը նայեցի, վերջը տեսնեմ զրուստ որ եղը մի  
զրում է: Եղը դուքս արի. դուքս եկայ, տեսնեմ արդէն մուլթն ընկ-  
նելու վրա է: Ծիրան մի ահ ընկաւ: Տեսնում եմ, որ լուսնով չեմ կա-  
րող գեղ հասնեմ: Մտածում եմ, գնամ, չը գնամ:  
— ի՞նչ անեմ...

Չորս կողմու ամայի ձիւնապատ դաշտ, չէն չը կայ, ձէն չը կայ.  
Ճեռիս էլ մի ճիպու ու մի դանակի.

Ի՞նչ պէտք է անեմ: Աստծու անումը տւի, եզն տուաջո արի քշեցի: Մի քիչ տեղ անց էի կացել, յանկարծ իրիկւան էն դառը քամու հետ մի տխուր ձէն ընկաւ տկանջովս: Կանգնեցի, ականջ դրի...

Տեսնեմ գիլի ոռնոց է ուռն...

Ու... էս ոռնոցին միացաւ ամբողջ խումբը ու սարստփով լցւեց գաշաբ: Մաիկ տամ՝ որ աջ կողմու նեռաւամ մթան մէջ ջուխտ ջուխտ վառւած ճրագների մի քազմութիւն է շարժւում... Էլ ինչ. Ճեռաց հաօկացայ, որ գէլերի աշքեր են—սոված վոհմակ է... Եղը ետ տւի դէպի դոմերն ու քշում եմ, ոնց եմ քշում, վազում եմ, ոնց եմ վազում... Ետ նայեմ, որ արդէն դալիս են: Եղը թող արի, վախոյ ընկայ գոմը: Ընկայ գոմը, բարձրացայ սցների գլխներին գերանների վրի կոնդերից մէկին:

Կոնդերից մէկին վեր ելայ: Դեռ չէի տեղաւորւել—մին էլ տեսնեմ եզանս գոռոցը բարձրացաւ:

Եզանս գոռոցը բարձրացաւ ու իսկոյն էլ կտրեց, խրխոցն ընկաւ: Խրխոցն էլ կտրեց, միայն գէլերի ժընդժընդոցն եմ լսում, ու լսում եմ՝ ոնց են լափում...

— Վայ, Միրան ջան... դուքս թռաւ սբոնքս:

Բայց ինչ Միրանի ժամանակն է: Ես իմ գլուխս եմ լաց ըլում: Մտածում եմ թէ՝ էս լաւ էր, եզանովը կը լինչե կը լուսանայ, կամ կը կշտանան ու կը գնան, կամ, ասում եմ, ինձ չեն գտնիլ... Դու մի տոիլ՝ սոված գիլի վոհմակ, ես յիսուն ասեմ, դու հարիւր իմացի, ձեռաց հախուել են, ու մին էլ աեսնեմ, մութը գոմը լցւեցին էն ջուխտ վառած ճրագները ոեխները բաց արած...

Գտան...

Եկել են լցւել, ներքեից ագահ-ագահ ինձ են մտիկ անում: Ես էլ չորացել եմ, մացել վերեր գերանին կպած: Մաիկ արին, մտիկ ու թող արին, դուքս գնացին:

Տունչս ետ եկաւ: Ասի՝ «Փառքդ շատ ըլի Աստւած, էս էր ազաւեցի»...

Ի.

Դեռ Աստծու փառքը բերնումս, մին էլ ինչ եմ լսում: Իմ վերեր կտուրը քանդում են, չանգերովը հողը ետ են տալի: Արդէն լսում եմ չանգերը կոճերին են դիպչում...

Սառ քրափնթը վրա տեեց... Շտապեցի տեղս փոխեցի, անցկասայ միւս կոնդի վրա կռւչ եկայ:

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չըկամ:

Էլի եկան ներքև Մաիկ արին, որ միւս կոնդի վրա եմ. ետ դուքս գնացին: Հիմի էս կոնդի վերեկց սկսեցին քանդել կտուրը:

Դարձեալ տեղս փոխեցի: Էսպէսով՝ նրանք քանդելով, ես տեղս փսխելով՝ հասանք վերջին կոնդին:

Էլ մւր գնամ:



Եկան մտիկ արին կտուպած ու ետ գնացին: Քանդում են, ոնց ին քանդում...

Մի սուր գանակ ունէի գրպանումս, հանեցի, բաց արի ու ձեռի բռնտձ՝ մտքումս աղօթք եմ անում. — Տէր Աստւած, Դու ինձ պատ անես էս նեղ տեղիցը...

Իսկ էլս ականջիս վերեր քանդում են: Քանդելով հասան կոճերին: Հասան կոճերին. մինը կոճերի արանքովը թաթը մեկնեց, որ կան ետ քաշի: Թաթը բռնեցի ու էն սուր դանակով, զըսթ կարեցի... Կան ետ քաշի: Թաթը բռնեցի ու էն սուր դանակով, զըսթ կարեցի... Թաթը փախցրեց, ոռնալով, կոնծկոնծալով ետ գնաց ու կաերի իրա-

բով անցան: Իմացել էի, որ գէլերի մինը եթէ վիրաւորւեց՝ միւսները վրա են թափւում, նրան ուստում: Ասի՞ ուրեմն սրան ուստում են: Հիմի սպասում եմ, որ սրան կուտեն՝ կը պրծնեն, ետ կը դան: Ելի դանակս ձեռքիս սպասում եմ:

Ականջա ձէնի է: Գիշերւայ մի ժամին՝ ոնց որ երազում՝ մի բարակ ձէն եմ լսում:

—Աւօ, հէյ...

Ինձ կանչում են...

—Տէր Աստւած, միթէ ինձ են կանչում... Միթէ ախզէրո է... Միթէ մերոնք են... Գոմից ձէն եմ տալիս, գոռում եմ:

—Աղանիկ, հէյ... կստեղ եմ... Գոմումն եմ: Գէլերն ինձ ուստում են... Օգնեցէք, հէյ...

Ելի նրանք ձէն են տալի, իմ ձէնը չեն լսում, թէն ես շարունակ կանչում եմ:

Մին էլ աւսնեմ հրացանները արաքեցին, ետեից լաւեցին հեռացող գէլերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը: Պարզ ճանաչեցի եղբօրս ու մեր գեղացի տղերանց ամեն մէկի ձէնը:

—Աւօ, հէյ...

—Կստեղ եմ... էսաեղ եմ... կենդանի եմ...

Ներս թափւեցին գոմը:

—Փառք քեզ Աստւած... Փառք քեզ աստւած,—ուրախացած ու զարմացած կանչում են ամենքը: Յած եկայ վերջին կոնդի վրեց Ախպօրս գիրկն ընկայ ու սկսեցի հեկեկալ:

—Ել լաց մի ըլի, զնա Աստծուն փառք տուր, որ էսօր նոր մօրից ծնւեցիր,—կանչեցին էս ու էն կողմից ու ինձ գուցս բերին դուրսը, ուր թափւած էին մեր Ծիրան եզան ոսկորները:

Դեռ լուսը չէր բացւել:

Հեռակց լսում էր գէլերի ունոցը:

## 40. Զմեռայ իրիկունը

Հողմը մէգով երկինք առնում, գալարում է բուքը ձեան, մէկ մանկան պէս լաց է լինում, մէկ ոռնում է զերթ գաղան. մէկ վայրենի սուլում պէս պէս, աղմբկում է առնիքում, մէկ ուշացած ճամփորդ ասես, լուսամումն է նա թակում:

Մեր խրճիթը խորխուկ ու հին, և մըթին է և տըխուր. ինչ ես նոտել պատի տակին, իմ պառաւս, էտպէս լուս: Յնդնել ես դու փոթորկի ոռնոցներից խելացար, թէ նիրհում ես քո իլիի բզզոցի տակ միալար:

Սըի խմենք, բարի ընկեր իմ ու ջանել օրերի, խմենք դարդից, բաժակդ բեր, սիրաներս բաց կը լինի: Երգի, ոնց էր ապրում խոզաղ հաւքը ծովի էն ափին, երգի, ոնց էր աղջկը զող ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մէգով երկինքն առնում, գալարում է բուքը ձեան, մէկ մանկան պէս լաց է լինում, մէկ ոռնում է զերթ գաղան: —Սըի խմենք, բարի ընկեր իմ ու ջանել օրերի, խմենք դարդից, բաժակդ բեր, սիրաներս բաց կը լինի:

## 41. Բարեկենդան

—

Սընից քառասուն-յիսուն առքի առաջ բարեկենդանի շաբաթը Աշատրակի փողոցներովը ոնց կենալ չէր լինի: Ամեն տեղ ուրախութիւն, ամեն տեղ ուշը ու խնճոյք. ամեն բարձր կտեր սեղան փառի բաց անելը սովորական բան էր. էլ երիտասարդ ու միրուքաւոր չէիր ջոկի, բոլորը միասին ջանելացն էին՝ կայտառացնել. պապիս պէս պատւելի կշխանները կալերումը լախտի էին խաղում ու հասա կտաւէ զոտկիս ոլորած լախտը էնպէս էին ֆռուացնում ու իրար մէջքի կըպ-զոտկիս: Տէրտէրն էլ վերարկուն ծալած մի կողմը զբած՝ կապայի ցընում: Տէրտէրն էլ վերարկուն ծալած մի կողմը զբած՝ էնպէս էր ծուլ ծուլ լինում փէշերը կոկիկ հաւաքած՝ գոտիկը խրած՝ էնպէս էր ծուլ ծուլ լինում շամարտ է եղել. միայն լախտը որ մէջքախան ուսագլխին համնում էր, զբում էր որ էսպէս բան իր օրումը չի անուել.

—Դէ, օրհնած, մի քէշ կարգիս խնայեցէք, կամաց աւէք է.— ասում էր մեր աէր հայրը ու եա թոշկուում զծի չորս կողմը՝ աշխտաելով լախտը իւթ խողի ձեռքիցը:

—Դէ, հերիք, շաբաթեցինք ձեծերով, լաւ ալիւր-աղցան եզանք. մի քէշ էլ վէդ խաղանք. ով տարւի՝ մինի տեղակ երկու զաւ զինի բերի:

Եւ ոկտում էին այնուհետև մեր մազով, մօրուքով կշխանները վեզը ձեռներին մէջ պատացնել ու գծի մէջ շարած ընկոյզներին աչքել: —Այ զիտի, էրնէկ էր էն օրը, որ մենք ջանել էինք. միտու գալիս, ես էի ոմենից լաւ խաղացողը, —պարծենում էր ամեն մէկը,

Մին էլ աեսար, երկար պոզաւոր թաղիքէ գդակը զյուխը անցկացրած, ոչխարի գզզուած մորթին բուրգը դէպի դուրս մէջքին կապած, երեսն ալիւրստ մի տղայ, մի ահագին անթարոց ձեռքին սիւն տալօվ եկաւ խորը գլուխ աւաւ մեր իշխաններին:

—Հ, ինչ մարդ ես, ով աշխարհի քամին է քեզ մեր գեղը գցել, —հարցնում է մի ծերունի, իբրև թէ ոչինչ չը գիտէ:

—Իմ աէրը, քաջերի քաջը, Փարբի գիւղի խանը իր մեծամեծներով, իր ծառաններով, կիսդ հարիւր մարդով դալիս է ձեր սեղանը շեն անելու: Նա հրամանն է, որ ողջ գեղով, իշխաններով գուրս դաք իր առաջը:

—Մեր գլխի, մեր աչքի զբա աեղ սւնի ձեր խանը, մենք վազուց նրա համար տեղ ենք պատրաստել տանուաէրի կաերը: Ա՛, ժողովուրդ, էլ ինչ ենք ուշանում, զծանք էլի, կիմի կը գայ մեր խանը:

Բազմութիւնը գնում է խանին զիմաւորելու. տէրտէրն ու իշխաններն էլ գնում են տանուաէրի կտուրը. դափ ու զուռնէն էլ իրենց պոչիցը կպած՝ ուր գնում են՝ հեաններն են տանօւմ. գնում են կտուրը, նոտում են քէփի, որ խանը գայ նրանց սեղանի վրա գտնի:

Ուսած-ուսած բազմել է փարբեցի, Եգիդարը էշի վրա՝ պոչը ձեռքին բռնած՝ երեսը դէպի ետ, մի երկար ճիպոտ էլ միւս ձեռքին իբրև միքուխ դնին դէմ արտծ: Գլխին դրած է մի գզզուած պարսիկ խանի երկար գդակ, վրան հին փալառներ փաթաթած, երեսին քած է օճորքի մուր, զիզի է զցտծ զանազան սոկորներից կտորներից մի շարան, հադած ունի պատաւոտուն, ծլանքները հազար տեղից քարշնկած մի պարսիկի արխալուխ. կուրծքը բաց է, նսխալէս մրով սեւացած, կողքիցն էլ կտիտծ մի երկար փայտէ ոուր:

Երկու երիտասարդ նմանապէս տլանդակ հագուստներով քաշում են էշի ստնձը. ուրիշ երկուսն էլ քամակիցը մի-մի մեծ գտւազանի ծայրերը որտծ բզում են էշին: Դափ ու զուռնէն տռչնից ածելով քաշում է այդ հանդէսը դէպի ատանուաէրի կտուրը, իսկ խուսն ամբոխը միշտ ևելլա՝ է կանչում:

Եւ ահա խանը էշի վրա նստած՝ մտաւ տանուաէրի բակը: —Չու, չու, չու, չու, գնա, այ ստոկած էշ, ինչ ետ նազ անում,

էս պատիւը խանինն է, Փոնը հօ չի, —ասում են բզադները, փէտով էշին վեր հատում ու ստիպում, որ տանուաէրի սանդուղքներիցը բարձրանայ:

Բայց ճմր կաց, կարնդ է խեղճ էշը:

—Դէ, վէզիք, նազիր, առաջ եկէք, —հրամայում է ընդհանուր կտուրփարիչը. —ինչ էք սպասում, բարձրացրէք խանի մոխրաթաւլին:

Ծիծաղ որ էստեղ տես. ամեն կողմից վեր են կախում անլեզու անասունին, վրան բազմած խանի հետ միասին, իրենց ուսերքին և նկում սանդուղքներովզ: Եելլա, —զոռում է բաղմաւթիւնը, իսկ վերեկց ալիւրը շաղ են տալիս խանի ու էշի գլխին: Փայխն ողջ բակը բռնում է, բոլորը ալիւրուում են. ում երեսին կամ գլխին էլ որ քէչ է թափւում, ինքն իր ընկերի մէջքից վերցնում, քսում է իր երեսը: Իսկ մեր խանի համար էլ սի հարցնի. երեակայի մը ու ալիւրի մէջ կոլորած մի գունդ միւս:

—Գլնւխ, զլուխ աւէք, իշխաններ, մեր ողորմած խանին, —կարգադրում է ընդհանուր կառավարիչը:

Վեր են կենում բոլորը սեղանի վրայից և իրենց տէղը կանգնած՝ խանարի զլուխ են իջեցնում: Վայ նրան, ով մի փոքր ուշ զլուխը կուցնի, աչքով է անում խանը իր կառավարչին և բարակ ձիպոտը կպչում է այդ յանդուզնի մէջքին:

—Թալախա, —հրամայում է խանը, —քաշեցէք անուաէրին մէջ-տեղ:

Տասը-քսան այլանդակ հադնւագ երիտասարդներ մատենում են անուաէրին, պառկեցնում ու ստները ֆալախի մէջ ուրբում:

—Հարցըու դրան. —հրամայում է խանը իր նազիրին, —դա քանի գլխանի էր, որ մեր հրամանը չը կտարեց, մեզ շան տեղ չը գցեց, մեր առաջը չեկաւ:

—Թողութիւն կանես, խոնն ապրած կենայ, —խնդրում է անուաէրը պատկած տեղից. —Ես քո մեծութեան համար պատրաստութիւն էի տեսնում էստեղ իմ իշխանների հետ. տեսնում ես՝ հրամանոցդ համար սեղանը բաց է արած, վարդի օշարակը գաւաթումը լիքը, սրսը ձողի ծէրին կախ արած, որ հրամայես թէ չէ խորովենք, անուշ անես. քո ընծաղ էլ լաւ մտիկ ոուր՝ ստները կապած գտուը պատրաստ, երբ որ սւզես՝ փլաւի գլխին առաջ բերենք:

—Ապրես, տանուաէր, կեցցես. բաց թողէք դրան: Առնում է խսկոյն մեր անուաէրը գաւաթօվ լիքը քայտացնում խանին:

Շատ լաւ էլ գիտի բարձրապատիւ խանը, որ օշարակ կոչւածը  
ոչ այլ ինչ է, եթէ ոչ թունդ քացախ, բայց ոչինչ դէմք ցայց չը տա-  
լով, առնում է ձեռքը և մօտեցնում բերանին:

—Օիայ, ինչ լաւ էր շինած, սիրաս հովացաւ, շատ ծարաւ էի:

—Այ տղերք, որու մօտ բերէք, —հրամայում է տանուտէրը:

Վերցնում են երիտասարդները ձոզի ծայրին կապած սպանւած  
ազուր և առաջ բերում:

—Թիկնապահ, —հրամայում է խանը, վեր կալ էս կաքաւը, երբ  
որ մեր երկիրը կերթանք, ֆլաւի գլխին տապակած առաջս կը բերես:

Մօտ են բերում ոտները կտպած, մի փայտէ ափսէի մէջ դրած  
ու կտառն և համեցէք անում խանին:

—Այ, անպիտաններ, ձեր գառը կաամր գառաւ. շնւա, կտպ-  
անցէք բոլոր իշխաններին, ծեծի տակ փթացնեմ, մինչև խելքները  
գլուխները դայ, էլ ետ կտառն ոչխար շինեն, —հրամայում է խանը:

Բայց նրա այս հրամանն էլ չի կատարւում, որովհետեւ խկոյն  
միւս կողմից առաջ են բերում մի մեծ ու պարարտ որձ ոչխար և  
գիւղի կողմից ընծայում խանին:

Դ.

—Շատ շնորհակալ եմ Աշտարակ գիւղի մեծ ու պատիկից. իրենց  
պատիւը իմ աշքի, իմ գլխի վրա. Բայց էստեղ կայ մի Խէշանենց  
Խէշան, նրա համար ինձ լուր է հասել, որ շատ վատ մարդ է, որ  
օրական նրա տանը հինգ աղքատ կշանալու տեղակ՝ տան է կըշ-  
տանում, զրան ես պիտի պատժեմ: Ուր է էտ մարդը, տանուտէր:

Մօտ է գալիս այնուհետեւ Խէշանի ընծան՝ մի լիար թունդ արադ:

—Էս արազը զըկել է, խանն ապրած կենայ, քո մեծութեան հա-  
մար Խէշանը, որ անուշ անես. ինքն էլ հրէս:

—Գլուխ տուր, երեք հետ գլուխ տուր խանին, Խէշան աղա, —  
ձայն է տալիս թիկնապահը. և խեղճ Խէշանը կատարում է իր պարտքը:

—Չոքի, —հրամայում է խանը արհամարհական հայեացքով, գլուխը  
բարձր բռնած, աչքերը դէպի երկինք դարձրած, երկար փայտէ չի-  
բռւիր դնին:

Նազիրը քաշում է Խէշանի կոնիցը, չոքացնում էշի առաջին. Բա-  
ռեկանին միջոց լուռթիւնից յետոյ՝ խանը խօսել է բարեհաճում:

—Ես միտք ունէի, Խէշան աղա, քեզ շատ խիստ պատժեմ, բայց  
ու ընծան աչքերս կապեց. վեր կաց, արի ձեռս պաշչի ու ազատ ես:  
Ծերումի Խէշանը այդ էլ կատարեց:

Սյնուհետեւ մի քանի իշխանների, որոնցից մի-մի պարգև պոկե-  
լու յօյս ունէր, խանը ֆալախտ է զնել տալիս, մինչև անգամ մի  
քանի ճիպոտ էլ խփել է տալիս, ի հարկէ, շատ կամաց և ստանում  
որէտ դիսի, որից ըրբնձ, միւսից իւղ, երկրորդից ձու, հաւ և այլն և  
զրանով ներում նրանց, բայց միշտ ձեռքը համբուրել տալուց յետոյ:

—Մնացէք բարով, —վերջապէս ասում է խանը և ուզում է ետ  
դամանայ իր հանդիսականներով, բայց ինչպէս կարելի է:

Մինչև հիմա արածները կառակ էր, հիմի սկսում է ուղիղ հիւ-  
րասիրութիւնը: Խանի հետ բոլոր եկող փարքեցիք պիտի վայելին  
աշտարացկու սեղանիցը, պիտի խմեն՝ երկու գիւղին միաբանութիւն  
և յարատեռթիւն ցանկանուով, ապա թէ նոր նոյն կերպով, Շետլան  
կանչելով, էշին բարձրացրած՝ ճանապարհ ընկնեն դէպի մի ուրէտ  
մերձակայ գիւղ:

Իսկ օեր կողմերը ինչ խաղեր ու սովորութիւններ կան բարեկեն-  
դանին:

## 42. Զիրիդ

«Զիրիդ է, Զիրիդ», —ամբոխը ճշաց:  
Յանկարծ Աւազի Զիրիդը ճօճաց,  
դհուր գըմբաց, հեծւարներն անցան,  
կազմեցին միմեանց հակառակ Արշան:  
Զինւած ձողերի սուր նիզակներով  
հէնց բաժանւեցին երկու բանակի,  
բարձրացրեց գոշի ձին սմբակներով,  
գըլուխները պատեց զարկը նիզակի:  
Եռում է հանդէսն ահեղ Զիրիդի,  
հանում են արադ, զարկում մէկ-մէկի:  
Զնոներին ըռնած թուիշ-թաշկինակ,  
գիտում են հեռաց հարս ու ազջիկ՝  
իսկայն տալիս են նըրան մըրցանակ,  
ով որ նըշանին նետում է ճարպիկ:  
Շատերը յաղթւած մէկ-մէկ հեռացան.  
մէնակ Աւազը Զիրիդը ձեռքին՝  
ինչպէս յազիրութեան վիթխարի արձան,  
հառնում էր, զարկում գախչող մէշին:

## 43. Նարեկի նժոյգը

ա,

Արար Նարեկը մի այնպիսի հազրագիւտ և գեղեցիկ նժոյգ ունէր, որ ամենքը նախանձում էին: Աւրիշ ցեղից մի արար, անունը Դադեր, կամենում էր ինչ էլ որ լինի՝ ձեռք բերի այդ նժոյգը: Ի զուր էր նա առաջարկում Նարեկին նժոյգի փոխարեն անհամար ուզաեր և ուրիշ շատ բաներ: Նարեկը ոչ մի կերպ չէր համաձայնում.

Այն ժամանակ Դադերը մտածեց խորամանկութիւն բանեցնի: Մի օր իր երեսը խոտի հիւթով ներկեց, ցնցոտիներ հազաւ, վիզն ու ոսները փաթաթեց, իբրև մի ցաւագար մուրացկան, ու զնաց նստեց մեծ ճամփի վրա, որտեղով պիտի անցնէր Նարեկը: Երբ Նարեկը մոտեցաւ, Դադերը ոկսեց աղաչանք թոյլ ու նւազած ձայնով:

—Ես մի աղքատ ու խեղճ օտարական եմ: Երեք օր է այստեղ վէր եմ ընկած ու չեմ կարողանում աեղից շարժեմ, զնամ մի կտոր հաց ճարեմ: Ճաւից մեռնում եմ, օգնի ինձ: Աստւած քո վարձը չի մոռանայ:

Նարեկը նայեց, մեղքացաւ և առաջարկեց ծպտեալ աղքատին, որ վերկենայ, նստի ձիռ գտաւկին և միասին զնան տուն: Այստեղ նրան կը խնամէին:

Բայց խարերան պատասխանեց.

—Ես չեմ կարող ուռքի կանդնեմ, ուժ չունեմ:

Գթասիրտ Նարեկը ձիւց վայր թռաւ՝ մօտեցրեց ձին Դադերին և մեծ դժւարութեամբ նստեցրեց նրան: Երբ Դադերը իրեն թամրի վրա զզաց, յանկարծ խիեց նժոյգին տապանդակներով և առաջ սլացաւ: —Իմացի, ես Դադերն եմ, տանում եմ նժոյգդ:

Բ.

Նարեկը ետեից կանչեց, ինդրեց կանզնի մի վայրկեան ու իր առելիք երկու խօսքը լսի:

Դադերը համոզւած՝ որ ոչ ոք իրեն չի համնի, շուռ աւեց ձիու պլուքը ու կոնդ առաւ, բաւական հեռու:

Եւ Նարեկը առաւ.

—Դու խլեցր իմ նժոյգս. Եթէ այդպէսէր Ալլահի կամքը, բարի վայելես: Միայն մի բան եմ ես ինդրում. խոստացի ոչ ոքի շասել, թէ ինչ հարով տիրացար ձիուս:

—Ի՞նչու, հարցը Դադերը:

—Նրա համար, որ մի ուրիշը կարեքի ժամանակ, երբ օգնութիւն ինդրի, մարդիկ կը կառկածեն՝ էլ չեն հաւատայ, իսկ ես չեմ ուզում պատճառ լինեմ, որ մարդիկ այլ ես միմեւանց ոչ մի բարեփ չանեն, որ ամենքն էլ վախենան խարսելուց, ինչպէս որ ես խարւեցի:

Այս խօսքերից ապշած՝ Դադերը մտածմունքի մէջ ընկաւ. յետոյ իջու ձիուց և առաւ:

—Ես մոլորւեցի, նախոնձը կուրացը էլ ինձ: Ներիք:

Գրկեց Նարեկին ու վերապարձրեց նժոյգը:  
Նրանից յետոյ Դադերը ճանապարհ գցեց Նարեկին մինչև նրա  
գրանը և մաց նրա մօտ երեք օր, ու դարձան մտերիմ ընկերներ:

## 44. Կաղնին և Եղեգը

«Այ եղեգ,  
ինչ ցեղ էք», —

առաւ աճազին

կաղնին եղեգին:

«Քա ուժդ ինչ է,  
որ քոմին գլէ՝

կամ պէտք է սոզաս,

կամ փաւես-դոզաս:

Խլէզ ու ճլէզ,

Մասիս սոքն եմ, աես.

արել, պիտես,

չի համնում զօտիս,

մըրիկը՝ սոիս:

Գոյիր էլլ,

ողորմելի:

իմ սուերի սոկ քուսնէիր,

վատ եղանակ չը աւոնէիր,

իմ էկեանքը էս աշխարհում:

Խօսքը բերանում,

մին էլ օդում,

մըթնոլորտում

որոտ, ճայթոց,  
ամպի պաթոց,  
կայծակ անեզ,  
կարկուտ հեղեղ.  
խենթ ու խւատ  
քոմին դիւռա  
գիշուն,

վար առած,

մի սոռկալի

մըրիկ գտասձ՝

զից,

իլեց

կաղնին տակից

ու երկենքի

եօթը յարկից,

որ չը շփեց

ցածի ժայռին,

փշրեց, թափեց

հսկայ ծառին:

## 45. Ահմադը

ա.

Ես իմ մանկութեան գարունները անց եմ կացրել մեր սարերում։ Շատ էի սիրում իմ առանց տունը ու միշտ այնտեղ էի լինում։ Իմ քեսիներից ամենից փոքրը, Ահմադը հովիւ էր։

Նա ինձ տանում էր, ման էր ածում գառների մէջ։ Հետը հանդից հաղարձի կարմիր ճիւղեր էր բերում ինձ համար, խսկ իրիկուները հանում էր սրինգը ու ածում։

Ու ասողալի, լուսնեակ զիշերները, ահապին խարոյիք շուրջը բոլորած, ծոփ էին առլի, խնդում էին իմ պատի ու առաջ, իմ քեսիները, խսկ ևս թիթեռի նման թթուում, պար էր գալի երանց շրջանի մէջ։

Ահմադը թուրքի անուն է, զբա համար էլ երբ մենք խոզի միս էինք օւտում, միշտ տանեցիք հանագ էին անում, ծազրում, ծիծառում էին Ահմադի վրա, թէ՝ Ահմադը հայացաւ, Ահմադը հայացու...։

Ի հարկէ, անունը բազը կատէր թուրք է. բայց հէնց ներս մըտնէր, տեսնէր թէ Ահմադը ինչպէս եր ժաժ գալի տանը, հերիք եր, խսկոյն կիմանար, որ աան սիրելի ողան է։

Ում. կամենում էր, տուն էր բեցաւմ, պատում, ճամփու դնում։ Աղբատը սղորմութիւն ուզէր թէ հարեանք հացփոխ, իր ձեւքով առշաց վերցնում էր, տալիս. Տան ազջիկներին ու փոքրերին հրամայում էր, ծեծում էր, սիրում էր, ինչպէս և միւս քեսիներս։ Անտառների համար հոգին տալիս էր։ Մինը հիւանդանալիս զրեթէ ինքն էլ հետն էր հիւանդանում։ Էնքան էր սիրում։ Ինքն էլ էնդէս սիրելի էր ամենքին։ Ահմադը հիւանդանում էր թէ չէ, մեր ուրախութիւնն էլ հետը կարում էր։ Ու ամբողջ օրը տառ ու պապս չորս կողմը պատում էին, ինչ որ լաւ բան էին գտնում, շուրջն էին հաւաքում, ինդրում էին, թէ ուրիշ ինչ կուզի սիրու։

Բ.

Մի առաւօտ էլ վեր կացայ, տեսնեմ՝ բալոր տանեցիք ախուր են։ Իմ առաջ արտառելով օթքիւմ էր, ման եր գալի անկիւններում ու ինքը չէր իմանում, թէ ինչ էր անում։ Հորոներն ու աղջկերը լուս, սիսւր ներս ու զուրու էին անում։ Վրանի գուան կողքին նըսլու,

առ խօսում էր իմ պապը, խսկ մի քիչ հեռու գիտակոր նստած էին քեռիներու։

— Ասուած լինի քո օգնականը, բալա ջան, խօսում էր պապու։ Զար քարին գնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար։ Պակաս օրդ թիզութիւնով անց կենայ... Դէ, վեր կաց օրն անց է կենում, ճամփից նույնութիւնով անց կենայ... Դէ, վեր կաց բալա ջան, Ասուած բարի ճամփայ տայ, փէդ երկար է, վեր կաց բալա ջան, Ասուած բարի ճամփայ տայ, առդ ոչ զիպչի քարի...։

Ահմադը չաւխի փէշով աշքերը սրբեց, վեր կացու, եկաւ մօտեցաւ իմ պապին։ Պապս գրկեց, համբուրեց Ահմադին, ու աշքերը լուեցին արտասուզով։

— Քո աշխատանքը մեզ հալալ արա, Ահմադ ջան, մեր տղ ու հացն էլ քեզ հալալ յինի, քո մօր կաթնի պէս։ Մեզ մահցդ գցես ոչ։ Թէ աջաղութիւն ունենաս՝ իմացրու, որ մենք էլ ուրախանանք, թէ պակասութիւն ունենաս՝ իմացրու, որ հարեհաս լինենք։ Դէ, զան, քեզ մտապա, Ասուած բարի ճամփայ տայ։

Ապա թէ տառ գրկեց, համբուրեց Ահմադին, յետոյ մացածու, ները լաց լինելով ձեռն տան։ Ապուշ կտրած փոքրերիս էլ Ահմադը ներք լաց լինելով ձեռն տան։ Ապուշ կտրած փոքրերիս էլ անմիտ կազ, հորթ, գոմէշ, ձադ, մի կարքկան ոչհամբուրեց և մի երկու կազ, հորթ, գոմէշ, ձադ, մի կարքկան ոչհամբուրեց, մի բարձած էլ տառջն արած, մի երկու շուն էլ եաը զցած, ճանապարհ ընկաւ։

Միւս քեռիներու ուղեկցում էին Ահմադին։

— Ասուած բարի ճամփայ տայ, Ահմադ ջան, գնաս բարով, բալա ջան, — ձեռքը ճակատին գրած եռեկց ձայն էր տալի պապս։


Ահմադը աւր գնաց, նաևնի, — հարցը իմ տատին։  
— Իրենց տուն գնաց, — պատասխանեց տատու։  
— Իրենց տունը ո՞նչ է...  
— Ուրիշ անդ է։

— Ահմադը միզ էր որ...  
— Ահմադը թուրք էր, մեր ծառան էր. է, քանի տարի մեր տանն էր... Հիմքի իր իրաւունքն ասաւ ու գնաց...։

— Բա էլ չի դալու։  
— Զէ, բալա ջան, գնաց...։

## 46. Արտաւազդ

Զարկեցէք, դարբիններ, կըուանը սալին,  
զարկեցէք կըուանը, շղթայքն ամրանան,  
անիծեալ արքայի կապանքն ամրանան,  
զարկեցէք դարբիններ, կըուանը սալին:  
Ահարկու ամպերը եկան ժողւեցան,  
ծեր Մասեաց ճակատն սև քող փոթթեցին,



գոռում է փոթորիկ գազանի նման.  
Հառաջում, սուլում է կատաղած քամին:

Զարկեցէք կըուանը. խորունկ քաքայրից  
անա չար հողմի հետ հառանում են ձայներ...  
ցոլում է փայլտկը՝ արքայի աչքից,  
դէպի վեր թըոչում են բարկութեան կայծեր:

Ուզում է նա դուրս գայ վրէժինդիր հոգով,  
իր անվերջ տանջանքի թոյնը մահ սբեր  
աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով,  
բայց ամուր են նըրա ծանր շղթաներ:

Մըտերիմ գամփուներ կըծում են կապանք,  
կըթծում են անդաղար կապանքն արքայի.  
Արտաւազդ, վերջ չունի հոգուդ տառապանք,  
և դեռ շատ հեռու է վախճանն աշխարհի...

Զարկեցէք դարբիններ, կըուանը սալին,  
զարկեցէք կըուանը, շղթայքն ամրանան,  
անիծեալ արքայի կապանքն ամրանան.  
զարկեցէք, դարբիններ, կըուանը սալին:

## 47. Հսկայ փերակը

ա.

Լոյսը բացւաւմ է; փողոցներն ու հրապարակները մութի մէջ են  
զեռ, ամեն կողմ լուռ ու գատարկ: Բոլոր դաները փակ, պատուհան-  
ների վարագոյրներն իջեցրած կամ փեղկերը գրած, բայց նրանց ա-  
պակիների վրա արդէն խաղում է արշալոյսի զւարթ կարմիրը:

Ահա և արեւ հեռու սարերի ծայրին: Տների կտուրները ոսկի են  
հագնում, սուերները քիչ-քիչ ստեռմ են ցած պատերի վրայօվ և  
հետզհետէ փախչում, ապաստանում նեղ ու փոքրիկ փողոցները. արեւ  
ողողում է հրապարակներն ու շէնքերը:

Եւ մէկը միւսի ետևից քնկոտ աշքերի նման բացւաւմ են լու-  
սամուաները, որտեղից առաւօտեան թարմ ու զով օդը խռովում է  
ներս սենեակները: Էնը, մի դուռ ճռում է էստեղ, ճռում է մի  
ուրիշ էնտեղ, ճռում է մի երրորդը, և փողոցի դռներից և գարպա-  
ուրիշ էնտեղ, ճռում է մի երրորդը, և փողոցի դռներից և գարպա-  
ուրիշ դուրս են նետում ծառաներն ու սպասահուները՝ հաց  
ով անցքից դուրս են նետում ծառաներն ու սպասահուները՝ հաց  
ու օրւայ պաշար բերելու: Կաթնավաճառ կանայք կաթի ամանները  
թերին անցնում են գանէ դուռ, մինչ բանւորները գործարան են  
շտապում, աշակերտները խանութ և որհեստաւորները դէպի իրենց  
կիսատ շէնքերն ու գործը: Խոկ մօտեկայ գիւղացիք շարան-շարան

ձիերի և ճաճռան սայլերի վրա բարձոծ իրենց բարիքը, դէպի շուկայ ու տոռւծախի երազարակն են տանում ամեն տեսակի կանաչի, հաւեղէն, պտուզ, կաթնեղին, փայտ, ածուխ:

Մէկը միւսի ետեկց վառարանները սկսում են ծխել իրենց առաւտեան չիբուխը. մուխը բարակ թելերով բարձրանում է ծխնելոյզներից, խառնում միւսներին ու բարակ քողի նման տարածւում քաղաքի վրա. Կը նշանակի կեանքը սկսել է տներուա.

Բ.

Եւ ամեն կազմ սկսում է ժրաշան աշխատանքը, էստեղ լոխի, էնտեղ տղմուկով: Աշխատանցներում կում են, թակում, սղոցում, կարում, գործում ու հիւտում. և ձեւ ու պաշտօն է ստանում երկաթի ու պղինձը, ցինկն ու արծիճը, քարն ու փայտը: Իջնում են, բարձրանում, բանում են, շարժում անհամար ձեռներ, գառնում են հաշանում, ջնջում ու փնչում հաղար գործիք ու մեքենայ:

Լցուում են գպրոցները, լցուում են գրտսենեակները, դատարանները, քաղաքային տունը, պոստն ու պետտեկան պաշտօնատեղիները: Սկսում է գործն ու ելաւմուտը նոռաբների մօտ, վաճառատներում, մթերացներում, ամեն խանութի մէջ, ամեն կրպակի առաջ:

Անթիւ գրիչներ շարժում են առնում, գրում են հա գրում անհամար նամակներ, յօդւած և լրագիր, դատական գործեր, վարչական կարգադրութիւններ ու հաշիւներ, անվերջ հաշիւներ, թէ մասնաւոր, թէ հանրային:

Ամենքը արտ գնում են, գալիս խուռն փողոցներսվ, արհեստաւոր և վաճառական, նամակաբեր ու յըսիչ, պաշտօնեայ ու ոստիկան, բանուոր ու աշակերտ, ծառայ, ու աղախին, ամենքն մի գործ ունեն, ամենքը մի հոգու, մի զրագում:

Ու ամբողջ քաղաքը կարծես մի հոկայական փեթակ լինի, ու ամենքը վազվում են իրենց պէտքերի համար, ու ամենքը աշխատում են իրար պէտքերի համար:

«Մէկն ոմենքի համար ու ամենքը մէկի»:

- 1) Ինչ աշխատանք են անում ծեր տանեցիք ուրիշների համար:
- 2) Ինչ աշխատանք են անում ուրիշները ծեր տան համար:
- 3) Որ մեծանաս, ինչ ես ուզում դառնաս: Քո անելիքը ուրիշներին պէտք է, թէ ոչ:

## 48. Քրտինք

Աշխատի գու, չարքաշ մշակ, քըրտինք թափի գու անվերջ,  
թող քըրտինքով մայր երկիրը կըշտանայ.  
զուր չի անցնի քո տանջանքը. այնտեղ երկիր կրծքի մէջ  
քո քըրտինքը նոր ուժ, նոր կեանք կը ստանայ:

Աշխատի գու, ուրախ որասի, տանջանքը քըրտնալից  
սուրբ է, եղբայր, երկընքից օրհնըւած.  
քրտինք թափի, և փոխորէն մայր-երկիրը իր կրծքից  
քեզ լիառատ կը պարզեի արդար հաց:  
հնչու է քրտինքն ու աշխատանքը օրհնւած:

## 49. Քրիստափոր Կողումբու

Սրանից մօտ հինգ հարիւր տարի առաջ Հնդկաստանը աշխարհիս ամենահարուստ երկիրներից մէկն էր. այնտեղից արտահանում էին թանկագին ապրանքներ, մարգարիտ, սաղափ, մետաքսեղին, ոսկեթել մանւածքներ, թէյ, սուրճ, դարչին, բրինձ: Վաճառականները հակեր էին կապում, ուղարեքին բարձում, կարաւաններ կազմում ու ճամփայ ընկնում: Կարաւանները անցնում էին լեռների կիրճերով, անապատներով, ովազիսից ովազիս, քաղաքից քաղաք. ուղտերը կոռուում իին արևակէղ աւազից ու ծարուից, մարգիկ հիւանդանում էին. աւազակները կողոպասում էին կարաւաններն ու գերի էին վերցնում կամ սպանում մարդկանց: Ամեն տեսակ վտանգների են-թարկւելով, մէկ-երկու տարուց, վերջապէս վաճառականները հասնում էին Միջերկրական ծովի ափերին, որտեղից ապրանքները նաերով փոխադրում էին եւրոպա:

Շատերն արդէն որոնում էին մի ոյլ ճամփայ դէպի Հնդկաստան, աւելի կարճ և աւելի ապահով: Զենսօփացի Քրիստափոր կոլումբոսն էլ ամբողջովին տարւած էր այդ ժողով:

Բախտը նքան գցել էր Պորտուգալիայի մայրաքաղաքը՝ Լիսաբոն: Նո գիտէր որ երկիրը կլար է, և համազւած էր, որ Պորտուգալիայից շարունակ դէպի արևմուտք գնալով անպատճառ պիտի հասնի Հնդկաս-

տան։ Նա դիմեց Պորտուգալիայի թագաւորին, բայց ի զուր։ Ապա ուզեց անցնի իր հայրենի Զենովա։ Գնում էր Սպանիայով։ Սյստեղ մի վանահայր, ոգևորւած նրա ծրագրով, խորհուրդ տւառ դիմել Սպանիայի թագաւորին։ Գիտնականները նքան առաջարկը անմիտ էին անւանում, պալատականները ծաղրում էին։ Երկար տարիներ թագաւորը խօսք չէր տալիս. վերջապէս ամեն խոչընդոտի դէմ կուելով կոլումբոսն ու վանահայրը հասան իրենց նպատակին։ Թագաւորը խոստացաւ օդնի, եթէ Կոլումբոսը բոլոր գտած երկիրները կը հըպատակեցնի Սպանիային։

Պալոս նաւահանգստում պատրաստւած էին հին, “քայլայւած երեք նաւեր. նաւաստիները ընտրւած էին ամեն տեսակ ոճրագործներից ու յանցտւորներից։ Կոլումբոսը տեսնելով այդ՝ սաստիկ մտատանջութեան մէջ էր. ճամփայ ընկնի, թէ հրաժարվի։ Տասնութիւնարինի ջանքերից ու չարքաշութիւնից յետոյ հրաժարւէր այս ասիթից։ Ուրիշ անգամ կաջողւէր արդեօք։

Կոլումբոսը որոշեց ապաւինել ճակատագրին։

Հէնց որ փշեց բարենպաստ քամին, Կոլումբոսը նաւը ելաւ, հըրամայեց խարիսխներ քաշեն ու առագաստները բանան։

«Բարի ճանապարհ, բարի ճանապարհ, Աստւած յաջողի», — կանչում էր ժողովուրդը ափից, մինչև որ նաւերը աշքից չքացան։

Այդ օրը 1492 թւի օգոստոսի 20-ն էր։

բ.

Նաւեցին դէպի կանարեան կղղիները։ Ղեկավարներից մէկը դիմամբ կոտրեց զեկը, որ նաւերը սախլւած լինին կտ գառնալ։ Բոլորն էլ շփոթւեցին և վատ նշան համարելով պահանջում էին վերադառնար։ Կոլումբոսը մի կերպ ուղղել տւառ զեկը և հրամայեց առաջ զընան։ Ամենքը արանջում էին։ «Իր յիմտը քմահաճոյքին ուղում է մեզ զոհի. բոլորիս կորցնելու է»։

Վերջապէս հասան Կանարեան կղղիները։ Ակներկ էր, որ այդ նաւերով անկարելի էր ճամփորդութիւնը շարունակել անծանօթ ովկանուով։ Նորոգելու համար մի ամբաղջ ամիս պէտք եկաւ։

Ղեկերը նորոգեցին, բոլոր փթած մասը փոխեցին, թարմ ջուր, միս, փայտ վերցրին, ու մի կէսպիշերից յետոյ Կոլումբոսը ճամփայ ընկաւ դէպի արևմուտք։ Երբ լոյսը բացւեց, էլ շամաքը չէր երևում,

շուրջը միայն ծով էր ու երկինք, անսահման տարածութիւն։ Նաւաստիներին երկիւղը տիրեց։

«Ա՞ւր է տանում մեղ. չորս բալորը միայն ծով է ու ծով, և օրէցօր աւելի հեռանում ենք ցամաքից։ Զենք ուզում, չէ, նոր երկիներ. թոգ ետ աանի մեզ մեր հայրենիքը»։

Մի քանիսը զգուշանում էին, թէ ծովային օրէնքները խիստ են և մահի ու կետնքի իրաւունք են տալիս նուապետին։

«Մեղ ինչ. — կանչում էին նաւաստիները. — նա մենակ է, մենք լտա. ինչից ենք վախենում, էլ ինչ ենք մտիկ անում»։

Կոլումբոսը լսում էր այս արտաւնջները, յորգորում, համոզում, իսկ հարկ եղած տեղը և ստատում, ոպառնում։ Վեցերորդ օրը աեւան ջրի երեսին լողացող մի մեծ գերան. ուրախացան, կարծելով, որ սամաքը մօտիկ է. հեռաւոր ամպերն ընդունել էին ցամաքի տեղ։

Շարունակում էին նաւեր. Հոսան մի տեղ. ուր ջուրը ծածկւած էր խիտ խոսագի, որ խանգարում էր նուարկութիւնը։ Բոլորն էլ վախենում էին՝ թէ ծովի վերջն է ու խոտի սակ խռոթեր են ծածկւած։ Շնաւերը էս է ժայռերին կը դիզէն ու կը վշրւեն. ամենքս կը խեղդւենք, — մտածում էին նրանք։ Բայց Կոլումբոսը սիրո էր ատախ. «Զենք խեղդուի, ջրխոտ. է, տակը ջարեր չը կան»։ Լոկում էին խոտի միջում՝ կարծես մի կանաչ գաշտով։ Վերջապէս զուր եկան այդ խոտերից էլ. կըկին միենայն կապոյտ ծովը, միշտ միենայն երկինքը։

Էլի մի քանի օր անցաւ, երեացին, բաղմաթիւ թաշուններ. գիշերները նստում էին կայմերի վրա, բայց արևի ծագելուն պէս թաշում հեռանում էին։ «Եթէ թաշումներ են թաշում, անշուշտ ցամաքը մօտիկ է», — ուրախանում էին նաւաստիները. Ցաջորդ օրը աեւան թաշող ձկներ, մի քանի հատ էլ նաւերի վրա ընկան. Երբէք այդ վիսի ձկներ չէին տեսել։

Բայց զնւր յոյսեղ. օրեր էին անցնում, ցամաքը չէր նշմարւում։ Նաւաստիները բաց ի բաց հրաժարւում էին աւելի հեռու նաւելուց։ Կոլումբոսը կանգնեց տապտամբների մէջտեղ ու կտրուկ յայտարարեց. «Այսքան ժամանակ եկել ենք, էլի մի երեք օր սպասենք. Եթէ ոյս երեք օրն էլ ցամաքը չը տեսնենք, կը վերադառնանք տուն»։

Ապատամբները հնագանդւեցին. Կոլումբոսը յոյս ունէր, որ երեք օրում տնպատճառ կը հոսնեն ցամաքին։ Նատ նշաններ կային. յառակը չափելով նկատել էր, որ հետզիւտէ խորութիւնը զակասում էր,

Թաշտանները պատւում էին արդէն երամներով. կային և փոքրիկ թշուններ, որոնք ծովափից հեռու թաշել չէին կարողանայ. երեկոները փշում էր մի այսպիսի տաք քումի, որ երբէք ծովից չի փշում:

Էլի մի օր անցաւ, և դեռ չէին չէր երեսում. Կոլումբոսն էլ յօւզում էր, բայց ցոյց չէր տալիս և նաւաստիներին խրախուսելու համար յայտարարեց, թէ երկու հազար հինգ հարիւր ոռութիւն է նշանակւած նրան, ով ամենից առաջ կը տեսնի ցամաքը: Ամրադշ գիշեր մարդիկ քնած չէին, շատերը կայմերի վրա լուսացրին. Իսկ Կոլումբոսը մտատանջութեան մէջ ինքն իրեն առում էր. «Եթէ այսօր է բայց մտատանջութեան մէջ ինքն իրեն առում էր.



ցամաքը չերեաց, ինչ պէտք է անեմ: Նաւաստիները կապստամբւեն ու ամեն ինչ կարոծ էր:

Լուսաբացից առաջ Կոլումբոսը ելաւ տախտակամած և հեռաւ մի կրակ նկատեց. իր աշքերին չը հաւատալով՝ կռնչեց մի նաւաստ ու ցոյց տւաւ հեռուն: Երկուսն էլ սրտատրի նայում էին. կրակ շաբժւում էր. Անկուսկած մի նաւակ էր, իսկ նաւակով առից շատ հեռանալ ոչ ոք չէր վստահանայ: Կոլումբոսի ուրախութեանը չափ չը կար:

Լոյսը նոր էր բացւում, որ առաջաւոր նաւից ձայն տւին. «Ճամաքը, ցամաքը», Կոլումբոսի նուը տմենից ետքն էր. շուտով այնակ զից էլ նկատեցին Բոլոր երեք նաւերի վրա Էլ մի ինելառ ցնծութիւն բարձրացաւ: Նաւաստիները համբուրում էին Կոլումբոսի ձեռները, զգեստի ծայրերը. «Ների, ների, Կոլումբոս, որ չէինք հաւասները, զգեստի ծայրերը. «Ների, ների, Կոլումբոս, որ չէինք հաւա-

տում քո խոստումներին ու ըմբուտանում էինք քո դէմ. ովկիանոսը ու շենած՝ սարսափել էինք»: Իսկ Կոլումբոսը երջանիկ կրկնում էր. «Կան ինչ մոռացւած է, ես չեմ բարկանում ձեզ վրա»:

Երեք ամիս անձայր Ջրերով նաւելուց յետոյ վերջապէս համում էին ցանկալի ցամաքին:

Կոլումբոսը հրամայեց՝ մակոյկներն իջեցնեն ու իր օգնական նաւատականների ու նաւաստիների հետ դիմեց դէպի ափը: Քանի աւելի մօտենում էին, այնքան աւելի էին զարմանում. ափին բարձրանում էր մի վիթարի անտառ, որի ամեն մի հօկայական ծառը հազիւ չորս մարդ կարողանար գրկել. ամեն մի տերե երեք մարդ կը ծածկէր Խոտերը, ծաղիկները, թուզունները՝ բոլորն էլ այսպէս չէին, ինչպէս Եւրոպայում: Անտառից գուքո վազեցին վայրենի մարդիկ, մոռթին կարմիր, սիի մազերը սև, երկար ու կոշտ, անմօրուք. ամբողջովին մերկ էին, միայն զլիսին փետուրներ ու զարդեր. մարմինն ու երեսը նախած էին բազմերանգ ներկերով, ականջներին ու ոնցներին օղակներ ու ոսկու կտորներ: Նրանք ապշած նայում էին նորեկներին:

Ելեկով ծովափը, Կոլումբոսը դրօշակը տնկեց ու յայտարարեց.

— Այս երկիրն ու բոլոր այստեղ եղածը առնում եմ Սպանիայի թագուարի իշխանութեան տակ:

Նաւերից որոտացին թնդանօթները. քահանան խաչ ու խաչվառ առաջ անցաւ, բոլորն էլ ծունկ չոքեցին ու զոհութիւն տին նուծուն աջողութեան համար:

Այդ կղզին Կոլումբոսը անւանեց. Սան-Սալվատոր, այսինքն՝ Գրեիչ, ի յիշատակ իր փրկութեան:

Վայրենիները, տեսնելով սպիտակամորթներին ու լսելով թնդանօթների որսար, կարծեցին թէ սպանիացիք աստածներ են ու երի որդիք, որ եկել են փայտէ տներով և կարող են փայլակ ու կայժակ անել և երկրպագում էին նրանց:

Եւ

Կոլումբոսը այնուհետև մի քանի ուրիշ կղզիներ էլ զտաւ ու հաւատացած լինելով թէ զտել է Հնդկաստանի մերձաւոր կղզիները՝ երկիրն անւանեց Վեստ-Ինդիա, այսինքն Արևմտեան Հնդկաստան, իսկ վայրենիներից հնդիկներից կղզիներից լիմնելով կղզիներից մէկի վըս մի ամրոց ու մարդկանց կէսն այնտեղ թողնելով. նա վերագրձաւ Սպանիա:

Երբ Կոլումբոսի նաւերը մտան Պալոսի նաւահանգիստը, քաղաքի բույր եկեղեցիների զանգերը բարձրածայն զօղանջում էին, թնդա-

նօթները որոտում էին և ժողովուրդը ցնծութեամբ զիմաւորում էին երբ նա ներկայացաւ թագաւորին. ու թագուհուն, առջևից զնում էին նեաը բերած հսդիկները, տանելով նոր երկրի բերքերը՝ սոկի, կարսովիլ, սիմինդը, պտուղներ, թոշուններ և այլն. Կարսովիլն, ու սիմինդը մինչեւ այն ժամանակ անծանօթ էին եւրոպացիներին:

Այժմ ամենքը խոնարհում էին կոլումբոսի առջե, և աւելի նրանք ովքեր առաջ խելառ էին անւանում նրան: Թագաւորը կոլումբոսի պարզեց դրամ, պատիւներ, ազնւուկանութիւն. փողոցներում թագաւոր կողքին էր զնում ձիով. դեռ ոչ ոք այդպիսի պատուի չէր արժանացի:



Կառավարիչը հանեց կոլումբուին պաշտօնից և շղթայական ուղարկութիւնից ներին և ծոյլերին: Բայց զի բանկով բազմաթիւ թշնամինի վաստակեց, որոնք դրվեցին թագաւորին, ոք նրա տեղ մէկ ու իր կառավարիչ նշանակի: Այս էր անշագործ ներին և ծոյլերին: Բայց զի բանկով բազմաթիւ թշնամինի վաստակեց, որոնք դրվեցին թագաւորին, ոք նրա տեղ մէկ ու իր կառավարիչ նշանակի:

Եթեր մեռնեմ, այս շղթաներն էլ ինձ հետ դրէք դադալիս մէջ՝ Այսուհետեւ նորից մէկ անգամ կոլումբոսը փորձ արաւ արևմտական ճամբով հսդկանատն համելու ու երկար շրջեց մի անժանօթ մաս ցամաքի ափերի մօտ: Նախանձու ու չարամիտ մարդկանցով շրջապատուած, յոզնած նա վերադարձաւ Սպանիա: Այս անգամ թագաւորն էլ երես դ սրձեց նրանից և չուզեց նոյն իսկ ընդունել իւ մէջ:

Վշտից, անաջողութիւնից սրտաբեկւած՝ կոլումբոսը հիւանդացաւ և մեռաւ: Նրա հետ թաղեցին և նրա շղթաները, միակ պարզեց, որ մացել էր իրեն այնքան երախտիքների փոխարէն:

Նա մեռաւ հաւատացած, որ գտել է Հսդկասաւանի Արեմտեան կողմերը: Բայց շուտով իմացւեց, որ նրա գտածը նոր Աշխարհ է: Այդ աշխարհին յետնորդները նոյն իսկ շը տւին կոլումբոսի անունը: Նա կոչւեց Ամերիկա, մի երկրորդական ճամփորդի անունով, որ իւ գրի մէջ առաջին անգամ նկարագրեց այդ նորագիւտ երկները:

## 50. Զի՞նը հայտ...

Զիւնը հալաւ,	Թոչուն,
գաշտը ծրաւ,	մըջիւն,
ալ ու ալւան,	շունչ-կենդանի
ալ արբեշում	էն սեղանից
շորեր հագաւ.	հաց կը տանի:
գշխուն,	Փառք մայր հողին,
նիշուն	մեր ծնողին,
գարուն եկաւ:	հաց է առիս
	աշխատողին:

## 51. Գարուն

Կառւնկները շարան-շարան մեր պիտով  
կըրկուալով եկան անցան երկրնքով.  
գա-րաւն, գա-րաւն աւետեցին սիասին.  
լուց, բացւեց նուշ, ծիրան ու կեռասին:

Արտուրները ծըրացլալով թուան վեր,  
ձորից ելան կացաւեհը դէպ մարգեր՝  
Գարնան գալը ողջունեցին միաձայն,  
կըչկըչալով օրներդ ասին բնութեան:

Կանաչ դաշտում գոյն-գոյն սիրուն թիթեռներ  
սատոստում են ուրախ անհօգ վար ու վեր:  
Հոգիւն ուրախ սըրնգելով դէպ արօտ  
դուրս է քաւմ արածելու գառն ու հօտ:

## 52. Շեկոն ու Մարալը

ա,

Գեղեցիկ էին Շեկոն ու Մարալը իրենց հաստ պարանոցով, իրենց լայն ու լեռկ գաւակներով, իրենց հարթ թիկունքով և հպարա, խրով շարժումներով։ Գեղեցիկ էին մանաւանդ նրանց գլուխները։ Զարածայր եղջերները բարձրանում էին հարթ ու լայն գանգերի վե գեղանկար ու սպառնական ձեռվ աղեղում էին դէպի ճակառ ուստուցիկ ու խոշոր աչքերը իրենց շարժուն գնդերով փայլում է ճակատի վրա, ինչպէս շիկացած ածուխներ, և լայն ուղիներից նրա ուժեղ շունչը դուրս էր գտվու մեր փնչոցով։

Գեղեցիկ էին Շեկոն ու Մարալը, գիւղի պարծոնքն էին, բոլորոյ և հիացմունքի առարկան։ Եւ նրանք իրար թշնամի էին, և տաղի հակառակորդներ։

Ոչ ոք նրանց չէր տեսել միասին դաշտում կամ ամոլին լծւած գթանի տակ. նրանք արածում ու աշխատում էին ջոկ-ջոկ, իրարից հեռ

Անողորմ, անհաշտ հակառակորդներ էին։ Երբէք չէին հանդիպ իրար Շեկոն ու Մարալը. բայց ամեն մէկը կործես իմանում էր, գիւղում ինքը մենակ չի, որ իրենից հեռու, հակառակ կողմի Դ տերում, արածում է մի ուրիշը, իր հակառակորդը նրանք ի չէին տեսնում, բայց զգում էին իրար ներկայութիւնը հեռաւ թիւնից և երբեմն երբեմն դունչները վեր ցցած փնչացնում էին տոտում, փնտուսմ իրար։

Ամեն գարնան երկու հակառակորդի հանդիպումը դառնու տեղի փառնգաւոր, ոքովինեան ձմրան ոլարապութիւնից նրանց առվ ու եռանդ ստացած աւելի կատաղի էին դառնում. Երբ արի աաջին շողերի տակ, ծաղիկ ու կանաչ զարդարում էին լեռ ու դեր առւակները պատելով սառցէ պատեմնը, կարկաչում էին նաչապատ թմրերի տակ, ծառերը իրենց ծաղկիների բուրմու լցնում էին օդը և թռչունները գայլալում էին հովիաներում ու գիներում, այն ժամանակ Շեկոն ու Մարալը դուրս էին դալիս մերից, ինչպէս երկու կատաղած վիշապներ։

Սորթիները ձիթած ու փայլվումն, եղջերները ինսամքով և պոչերն ու ճակատը կարմիր գոյնով ներկած, նրանք՝ արևի լոյսին կարօտ, խայտալով վազում էին դէպի դաշտերը, շը նու իրենց գէր ու ահագին մարմիններին։ Զմերային մշտական

ւարից մթագնած նրանց աչքերը բոցավառւով ու փայլատակում էին դարման արևի շողերի տակ, և նրանք լայն կրծքավ շնչում էին կենդանաբար ու ջերմ օդը։ Առանձին զգուշութեամբ էին հոկում կատաղի կենդանիներին, մինչև որ աշխատանքների հաստ լուծը, խօր ակօսում թաղող ծանր գութանը կամաց-կամաց թուլացնեն նրանց կոսի եռանդը, նրանց կատաղաւթիւնը։

Բ.

Եւ մի անգամ գարնան կոխու պատահեց յանկարծ։

Մորախ այդ օրը տուանձնապէս անհոնդիս էր, չէր արածում. կծղակներով քանդում էր հոռչ, հոտու և էր օդի մէջ, անքում էր, փնչացնում, ապա գունչը բարձր ցցած մոնչում էր ահագին ձայնով։ Յանկարծ նա թափ տու և խելագար կերպով վազեց հակառակ կողմը, ոտքի տակ տալով դաշտեր, արտեր, բանջարանու գուրքու ու զուր անցան հօտաղների ջանքերը նրան ետ կանգնեցնելու, ի զուր անցան խարազանների և մահակների հարւածները։ Մարալը վազում էր ու վազում. Վերջապէս նա հաստ մի կանաչազարդ թմրի դիմաց, եղջերները գէմ արեց ու սկսեց քսնդել ու հողը ցրիւ տար ապա, դունչը վեր ցցեց և ահագին ձայնով մոնչաց։

Եւ յանկարծ-ժըտեղից որտեղ՝ նրան իրեն պատասխան լուեց Շեկոն մոնչոցը հակառակ կողմից։ Մարալը աչքերը չուեց, ականչները ցցեց աւելի լաւ լսելու համար, քթածակերն ուոցը և այնպէս մոնչաց, որ լեռ ու ձոր թնդաց։ Դարձեալ մի անգամ լուեց հակառակորդի պատասխանը և շուտով հեռու բլրակի թիկունքից բարձրացաւ Շեկոն զլուխը։ Ախոյեանները իրար տեսան։


Առաջին անգամ երկար տարիներից յետոյ Շեկոն ու Մարալը տեսան իրար. Այսուհետեւ կատարւեց մի զարմանալի բան։ Կենդանիները նախ կանգ առան գէմ առ գէմ, մի առժամանակ զլուխները գէպի երկինք ցցած, վերջին անգամ ֆնքացին ահագին ձայնով, փնչացը բթածակերից և աչքերից կը արակ ցայտելով իրար վրա վազեցին կատաղի արագութեամբ։

Եկան, եկան, և ահագին թափով՝ զարկւեցին իրար։

Նրանց զանգերի թըրիսկոցը և եղջերների ճարճատիւնը բանեց շշակայքը։ Մարսափած հօտաղները վազեցին դէպի գիւղ օդնութիւն կանչելու։ Գիւղը ոտքի թուաւ։ Հասան...։

Կախւեցին գոմէշների պոչերից ետ-ետ քաշելու համար. Փայտերով, խարազաններով հարւածեցին զլուխներին, զունչերին, ստներին.

ոչինչ չէր օգնում: Շէկօն ու Մարալը, հարւածներից աւելի կատաղած, աշխատում էին ոչնչացնել իրար: Նրանց արանկարած աշքերը կրակի պէս վառում էին և քիչ էր մում դուրս ընկնեն խոռոչներից: քթածակերը փնչացնում էին փուքսերի պէս: ուժների ջելերը կծկում էին և բացւում, ահազին փորերը ուռչում էին ու կծկում, ոսկորները ճարճատում, նրանք սեփական պոչերով, ինչպէս խարազանով, կատաղաբար հարւածում էին իրենց մարմինը, ասես աւելի կատաղելու համար, տնքում էին զուից, եղջիւրներով իրար պարանոցն ու օձիքը քրքրում, իրար ետ-ետ սղում, աշխատերով մահացու հարւած տալ հակառակորդի փորին: Մերթ նրանք զալարեսում էին և աջ ու ձախ



եղիւրները իրար պցած սեղմ.ում էին կողք-կողքի, մերթ զալիս էին  
դէմ առ դէմ, իրար մզում ետ ու առաջ:

Արդէն Մարալը աշքն էր պատռած, Շէկօի կուրծքն ու պարա, նոցը մի քանի տեղից վերաւոր, արինը ծորում էր երկսից էլ և եղած կարմիր էին ներկւած, գետինը նրանց ուների տակ ակունել էր վարած արտի պէս, բայց չէին բաժանւում, չէին թողնում և ոչ մէկը չէր մտածում տեղի տայ միւսին Զարհուրելի ահսարան էր, Շէկօն ու Մարալը փշրում, խորտակում էին իրար. կարծես նըրանց երկսին միւսին տեղ չը կար երկրի լըա, Բազմութիւնը սույն էր, շւարել էր:

«Զւան բերէք», — ճշացին այս ու այն կողմից:  
«Ծուտով չւան», — կանչեցին հօտաղները:  
Եւ բերին հաստ չւաններ, միաժամանակ գցեցին երկու կըրծ-  
որից և երկու կողմից սկսեցին ետ-ետ քաշել ահազին բազմութեամբ՝  
անց իրարից աղատելու համար. «Թաշեցէք, քաշեցէք»:  
Բազմութիւնը տնբում էր ու քաշում. արդէն կուողների գը-  
ւիները զատւեցին իրարից, եղջիւնների հազիւ ծայրերն էին հաս-  
ում իրար. «Թաշեցէք, քաշեցէք»:

Բազմութիւնը տնքում էր ու ձգում չւանիները. կուռղները բոլոր ուժով ճգնում էին վերստին մօտինան, առաջ էին նետում, գը-լուխները ցնցում կատաղաբար, խոփոռ աշքերով իրար էին լափում. ի զուր: Չւանիները ձգւում էին ու ձգւում և կենութանիների ահաղին մամբիները հեռանում էին իրարից: Շուտով երկսի արանքում ներս ընկան մահակառոր ու խարապանաւոր հօտաղներ. վերստին հարւած-ներ նրանց գլխին ու ոտներին, վերստին ճիշ, աղմուկ, ուրախածայն բացականչութիւններ, և Եէկօն ու Մարալը իսպառ բաժանւեցին իրա-րից՝ առանց լաղթւելու:

Եւ ամեն մէկին զջապատաճ՝ խարազմնաւորների ու մահակա-  
սորների ահագին բազմութեամբ քշեցին հակառակ կողմեր, յանդի-  
ման առաջնական անորոշական թեան համար.

Կոփուը վերջացաւ.  
Ու հակոս չը վերջացաւ.

Աչ, կոփը չը վերջացաւ.  
Այսուհետև ինչ կատարեց, ոչ ոք չէր կարող ասել. միայն վե-  
րսակին հնչեց նոխ մէկի, ապա միւսի կատաղի մռնչոցը, նրանց  
համարեա միաժամանակ ետ գարձան. թափ առան բոց կարած, հե-  
շալով, տնքալով, փնչացնելով, ոտների տակ տալով ամեն ինչ և ա-  
մենուն տրորելով, իրար վրա վազեցին:

«Փախէք, փախէք»...

«Փախէք, պարէք» բաղմութիւնը հազիւ կարողացաւ նրանց ոտների տակից իոյն եւով, հորհրելով, ճշալով.

սայ՝ իրար արորելով, զբարբարով, աշ-  
կատաղած ախայեանները մի վերջին անգամ իրար վրա դնացին  
բոլոր աւժով, վերջին անգամ նրանց զլուխները դէմ առ դէմ եկան  
ահագին թափով, վերջին անգամ նրանց զանգերը զարկւեցին իրար,  
ինչպէս կարծը ժայռի երկու կտորներ. զարկւեցին, լուեց մի լու-

ցուցիչ, մի սարսափելի որոտ, և նոյն վայրկեանին երկու թանձնարժններ ետք ետ գնացին և միաժամանակ խօսրտակւած գետի ընկան տնքալով և փնչացնելով։

Բազմութիւնը միաբերան ախ քաշեց, հեռու կանգնած կանաչ ճշացին ու ծնկներին տւին, ծերերը գլխները օրօքեցին վշտով։

Հարւածը զարնուրելի էր, վերջին հարւածը։

Շէկօն ու Մարալը ընկան փշրւած գանգերով, ոնդներից ժամանակ, ու արիւնը, աշքերը շաղւեցին և երկուամ էլ անշնչ ցան ու ձգւեցին լայնարձակ զաշտում։ Այսպէս ընկան Շէկօն ու Մարալը լայնարձակ, կանաչ դաշտերում։ Գիշերը վրա հասաւ։

Հեռուն, մութ խրճիթների ու յարկերի ատկ սգում էր զիւզը։

### 53. Վեր կաց, գեղջուկ

Արել ահա փայլում է վերեից  
զըթառատ սիրով.  
անուշ գոլորշին շըղարշի նըման  
ճօճւում դաշտերով։  
Բացւած բըներից գրծի է դիմում  
անհամար մըջիւն,  
մայր հողը ծընում, գետը տարածում  
թովիչ կարկաչիւն։  
Հէյ, վեր կաց, գեղջուկ, վեր կացէք, եզսեր.  
միթէ չէք ըզդում  
արտերը վաղուց սերմի կարօտից  
լալիս են, սգում։

### 54. Ամենարանկագին բանը

— Տուր ինձ այն, ինչ որ ամենից թանկագինն է քեզ համար ես կը բժշկեմ քեզ, ասու պառաւ վհուկը վիրաւոր թոշնիկին, որ մենակ ընկած էր ջրի ափին և մեռնում էր։

Կարմիր արիւնը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա կըծքից սպիտս աւազի վրա, և կեանքը արագ թողնում էր նրա փոքրիկ մարմինը՝ որ արդէն սկսում էր սառչել։

— Ամենից թանկագինը, ի հարկէ կեանքն է— մտածեց թոշնակը։ — Բայց միթէ կը խլի բարի վհուկը ինձնից այն կեանքը, որ ինը վհուտանում է ինձ տայ։ Բարի վհուկը երևի հանաք է անում։

Եւ նրա վրա ուզգելով իր հանգչող աշքերը՝ թոշնակը շնչաց։

— Լաւ, բժշկի, կը տամ քեզ այն, ինչ որ ամենից թանկագինն է ինձ համար։

Վհուկը զիպաւ նրա վերթին իր գաւազանով վերը ողջացաւ, և թոշնակը ուրախ վեր թուաւ, կենդանացած ու առողջ։

— Եսկ հիմու տուր ինձ թիերդ, — տաւ վհուկը։

— Ո՞չ, բացականչեց թոշնակը, ցնցւելով, — ոչ երբէր։

— Միթէ թիերը ամենից թանկագին բանը չեն քեզ համար։

— Հէնց զրա համար է, որ չեմ կարող տալ, — կամացուկ շնչաց թոշնակը։ — Առ իմ կեանքը։ — Աւելի լու է բոլորովին չապրեմ, քան

թէ ապրեմ և չը կարողանամ թաշել։

— Թոին, — տաւ վհուկը, — ես չեմ կամենում քո մահը։ Բայց մի վի, որ ամենից թանկագին բանը կեանքից էլ թանկ է։

### 55. Գործանի հրաւեր

Թացւում են դարնան  
օրերը պայծառ...  
կըդմա, իմ ընկեր,  
զնանք դէպ այնուեղ, երկնահաս վերև,  
կեանքը լայնարձակ, երկինք ու արև։



Փըթթում են զարնան  
Ծաղկունքը վառ-վառ...  
վեր կաց, վեր, ընկեր,  
ելնենք գետի սար,  
հազար գոյներով, հազար, հազար ցեղ  
ժպառում են նրանք ու բուրում այնաեզ։

Կանչում են գարնան  
հաւքերն անհամար,  
զնանք, իմ ընկեր,  
թոշենք դէպի սար,  
երգենք նրանց հետ, երկնահաս վերև:

## 56. Նախրապան Մանուկը

Նախրապան Մանուկը վեր էր կենում տեղիցը նախորդ օրւայ աշխատանքից դադրած անդամներով, զնում էր առւի վրա երեսին մի քանի չուփ էր տալիս, փէշով սրբում ու դէպի աղօթարանը դարձած մի քանի անդամ խաչ էր հանում: Ապա իր նախաճաշիկը, ինչ որ իր կին Շուշանը պատրաստել էր, փաթաթում էր մի կակուղ հացի մէջ ու կծերպ զուրս էր գալիս, փայտը ձեռին հանգուում Սզիզենց կարւածը: Յետոյ, երբ նախրի տուար զիւղիցը կորւում էր, նախրապանը մտնում էր տուն, հացը շալակը կոսկում, մի ժեծ գաւաթ զինի կանուս ու զնում իր բանին: Ուտիս օրերը մի ետոր պանիր կը լինէր Մանուկի լաւաշի մէջ կամ կէս կողակ ձուկը, իսկ պասերին՝ աղը դրած բոխ կամ ողորմակոթ, իսկ եթէ դարունքն էր՝ իր կնոջ քաղած խաշած աղցաններից զարնան ականչ, տուի կարաս, սիրելս, թերուկ կամ որիէ այդպիսի աղցան:

Նախրապան Մանուկի տան ուտելիքից, ոչ մի բանը փողով չէր ստացւում: Ինչպէս նախրորդ նա ամեն շարոթ հացը տաւարատիրոջ տներիցն էր հաւաքում, ամեն տանից մի-մի լաւաշ, իւղ ու պանիրը նրա համար ինքն իրեն էր ընծայ գալիս հարևանների տանից: տարեկան կողակն ու գինին, ինչպէս նախրապան, իրաւունք ունէր իր ժամանակին հաւաքելու, պաս օրերի համար աղը դրած ուտելիքին՝ ները Մանուկի կին էր զնում քաղում, և կամ ինքը նախիրը արածացնելիս ժողովում էր զաշտիցը և երեկոյեան հացի սփոռոցի մէջ կաղած՝ շալակին տուն բերում:

Ամեն բարութիւն Մանուկի տանը անպակաս էր: Ոչ մի այգե-տէր էնքան շատ բերք չէր կախան անի ձմեռայ համար, ինչքան

Շուշան քուրիկը: Ամեն Ասածու տւած օրը նրանց բաժին կը գար: ոչ մի բանից չտես չէին մնում:

Նրանց հագնելիքն էլ տանիցն էր գուրս գալիս: Շուշանը իրենց համար բաժին ընկած մրգեղէնը միշտ փոխում էր գիւղի կողքով ի-րենց տան առջևից ոչխար անցկացնող քրդի կամ չօրանքեարի հետ ըրդի վրա, լւանում, գզում, մանում, կարում, հաղցնում, բամբակե-ղէնն էլ նա ինքն էր մանում, իսկ բամբակը որեէ հարեանի տղի ձեռ-բով դաշտեցիների հետ մրգով փոխել էր տալիս:

Բ.


Խնքը Մանուկը մի բարձրահասակ մարդ էր, երկար սրած բեխե-րով, խոշոր ու սուր ու աչքերով, ահարկու ձախով և յաղթանդամ մարմնով:

Երջակայքի զիւղերից շատերը Մանուկի բռունցքի ուժը փարձել էին, երբար կամեցել էին մի կով կամ մի արջառ նախրից փախցնեն: Ոչինչ սուր չէր բանացնում մեր Մանուկը, նրա զէնքը իր կոմքա-լոյտուխ մխոտած հոնի գաղանակն էր: Քանի սրերի բերաններ էտ զաւազանի վրա փշրւել էին: Փողերը մին-մին անիծելիս՝ տուծ էին վնել, տառում էին: «Նախրապան Մանուկի դագանակին հանդիպես դու:

Ահա հէնց այս էր պատճառը, որ Մանուկը տամնեինք տարի էր կիւղի նախրապանութիւնը իրեն էր սեփականել: Նրա միւս ընկեր-ները տարէնը մինը համարեա փոխում էին, իսկ ինքը կաք ու կար և հնչպէս միշտ պարծենալով կրկնում էր, քանի կենդանի էր՝ պէտք և լինէր:

Երեկոները, երբ նախրապանը ետ էր գառնում, ողջ գիւղի տա-ւարը տեղաւորում էր, տէրէց տէր անում և գալիս էր իր տունը, համբուրում էր երեխին, փառք էր տակիս իր Արարծին ու կնոջ հետ նստում էին սեղանի մի կտոր հավաք հաց ուտելու:

## 57. Οηγησία ἀτη



Ողջըն ձեզ, գարնան նորեկ  
թռչուններ,  
որ ծըլւըլում էք կանաչ թբփերում,  
որքան ցընծութիւն, որքան կեանք  
ու սէր  
եռում է ձեր պարզ, ամհով երգերում  
Խուաըն երամով, ազատ, համարձակ  
ձերթ սըլանում էք դոք նետի նըման  
ուն եթեր կապուտակ,  
թբփերի վրան:  
նորեկ թբռչուններ,  
նաշչ թբփերում,  
հոգեմաշ, տըխուր  
ոընծութեան գըրկում:

## 58. Σημεῖα

Մի գարնան օր պատանի Սողմոնը նստած էր արմաւենիների տակը իր հօր, Դաւիթ թագաւորի այգում, խորը մտածմունքի մէջ՝ Նրան մօտեցաւ իր դաստիարակ Նաթանն ու հարցրեց.

—Ի՞նչի մասին ես մտածում, զաւակս:

Պատահնին գլուխը բարձրացրեց և պատասխանեց.

—ԿուզԵի աչքովս հրայք տեսնեմ, Նաթան:

Նախանուժարձ:

—իմ հրախ է աստղնի ժամանակ նոյնն էր փափագում:

—Եւ Աստւած արժանացը Բց քեզ հրաշք տեսնելու, —շտապով  
հառարեց Սողոմոնը:

—Աստծու ծառան մօտեցաւ ինձ,—շարունակեց Նաթանը, —նոհե  
նու սերմը ձեռքին...«Տես, —ասաւ նա, —թէ ինչ է լինելու այս սեր-  
մին»: Ու հողի մէջ մտառի մի փոս արաւ, նըա մէջ ձգեց սերմը ո-  
թազեց: Եւ ահա սերմի կճեպը ճաքւեց ու նրա միջից դուրս սովաց  
ծիլը և գետնի տակից դուրս նայեցին երկու տերեներու իոկ յետոյ:

երեաց կլոր ցնդունը՝ կաշւով պատաժ, ու սկսեց ցողունը բուն գառնալ, կաշին էլ հաստ կեղն։

—Մի կողմ քաշւիր, —ասաւ ինձ սուբբը՝  
Ես մի կողմ քաշւեցի... և ծառը եօթը ճիւղ արձակեց։

Ապշած ու զարմացած կանգնած էր:  
—Եւ աւելի մեծ ստեղծագործական ուժ կը տեսնես դու, —ասաւ  
մերձաւոր ազբիւրից մի բուռք ջուր վերցրեց ու երեք ան-  
սրսկեց ծառին... Եւ ծառը ծածկեց խիտ սաղարթով, և ստւեր  
ու և անուշահոտ բուրմունքով լցրեց օդը:

— Այս անուշահոտութիւնը, — բացակասչոցը

—Միթէ չես տեսնում ծիրանագոյն ծաղիկները, ոք զառար-  
ների պէս կախւած են խիտ սաղարթի մէջ, խրատում եր ինձ Աս-  
տրծու մարդը:

Անիսուն նայում էի եռ... Եւ ահա քամի բարձրացած էր... Իսկ թիսերի նման թափւեցին ծառից ծաղիկների թերթիկները... Իսկ կեռու ճիւղերից կախ ընկան կարմիր պտուղները:

Եւ սուրբ մարգը հետացաւ, թողնելով իւժ լուռ զայշապէ

Էլեմ է նա, ի՞նչպէս է Աստծու ընտրեալի առօսը. և ու է այժմ նա, — շտապով հարցըց Սողոմոնը:

— Զաւակս, — պատասխանեց Եաթանը, — ոս կ

անեսածս երազը՝ Տէղութիւն Պատման և վարակի ասաւ.

Գլուխը կախ ձգեց Սոզոսոսը և զշտաց -  
- ինչ է առաջ կահեծի ինձ խարէութեամբ...

— Ենչու յափշտակեցը բա լաբէալու ։

— Խարէութեամբ, — շարունակած է առաջարկ կը տեսնես ամենը, ինչ որ

Նայիր, հօրդ այգու մէջ արթուր շք է և  
պատմեցի քեզ: Միթէ նոյնը չի լինում ամեն նոնենու և առհաս-  
ողի ամեն ծառի հետ:

Այս, բայց լինում է աննկատելի կերպավ, երկար ժամանակա-  
միջացի ընթացքում:

Միթէ զբանից ստեղծագործութեան հրաշքը սստածուն է.  
Բնչ հրաշք ես պահանջում դու, որ շրջապատւած ես բնութեան հը-  
լաշներով։ Կամ գուցէ նրա հրաշքները պական աստւածային են  
նրանից, որ կատարւում են անաղմուկ, աննկատելի կերպով։

## 59. Գետակն ու աղբիրը

Գետակը.

Խոր ձորեր ոլոր-մոլոր  
տալիս եմ հազար մանէման,  
ճամփէս քարտփներ խոլոր՝  
պանդուխտ եմ աման, աման:

Ակն-աղբիրը.

Ի՞նչ սոսկալի քարափ է սա,  
մէջէմէջ ու մութումութ.  
Հազիւ մի լոյս աշխարհ ընկայ,  
գնամ գետին հասնեմ շուտ:  
Կաց, սպասի, կաց մի հօտնեմ:  
Դէ, սպասի տես, գալիս եմ.

Գետակը.

Դէ, շտապի, եկ շուտ արա,  
վայ, կողքերս, վայ ես մեռայ...  
Մի նայէք ինձ այդպէս, ժայռեր,  
չեմ դիմանայ ձեր աչքի սեխն.  
Իմ կապտաչեայ հասնեմ ծովին.

Զարափներն ինչ են ասում, ծովն ինչ է ասում:

## 60. „Սատանի մեքենան“

ա.

1807 թւի օգոստոսի 11-ին Ամերիկայի Նիւ-Նօրկ քաղաքի գրեթէ բոլոր բնակիչները խանւել էին Հուդոոն գետի նաւահանգստում: Ամեն մէկը ուզում էր տեսնի, թէ ինչպէս պիտի բանի մեքենագէտ Ռոբերտ Ֆուլտոնի հարած նուր, որը իրը թէ պիտի առանց քամու գնար և նոսանքով, և նոսանքի հակառակ:

Ափի մօտ երեւմ էր մի տարինակ նաւ, առանց կայմի, առանց առագաստի, մի հատ ծխնելուզ էր միտյն տնկւած մէջտեղից, մի-մի ահագին անիւ էլ կողքերին:

—Տեսէք, տեսէք,—ծիծաղում էր մի ծերունի նուռառափ ամբո-խի միջից,—մի ամբողջ գործարան է զրել նաւի վրա: Գլուխս կտրել կը աամ, թէ որ ծանրութիւնից յատակը չը գնայ: Ոյսպէս էլ ան-խելքութիւն:

—Տղերք, սայլ է շինել. Ջրի երեսին անիւ-ներով է ուզում ման գայ: Է՞յ, սայլապան ֆուլ-առն,—ծաղրում էր մի ուրիշը:

—Նայեցէք, նայեցէք,—յանկարծ կանչեց ամբոխը, —մեքենան վասում են:

Ծինելոյզից քուլա-քուլա ծուխ բարձրա-ցաւ, մեքենան սկսեց վշշալ: Տախտակամածի վրա յուղւած ման էր գալիս մի քառասուն տարեկան տղամարդ ու հրամաներ արձա-կում:

—Ֆուլտոն, Ֆուլտոն, —աղազակեց մէկը ափից: —Էն աշխարհում պասիս բարե արա ինձանից:

Միահամուռ հրնոցը խացրեց այս ծաղրանքը, ամեն կողմից ըս-կըսեցին շւացնել ու կանչել.

—Բարի, ճանապարհ, «Քենառ Ֆուլտոն»:

Այս անունն էին զրել տարօրինուկ նաւին, որի ճակատին մեծ տառերով գրւած էր՝ «Կերմանու»:

Յանկարծ շոգենաւից լսեց ականջ ծակող մի սուլոց: Ամբոխը պատասխանեց աւելի անսանձ շացներով ու չարախնդաց ճիշերով:

Անիւները պտտաւեցին, շոգենաւը ցնցւեց ու սկսեց ափից հեռա-նալ, սկզբում շատ դանդաղ ու ծանր, իսկ յետոյ աւելի ու աւելի արագ ու թեթև: Եւոյն ու ծիծաղը մէկ անգամից կտրեցին. ապշած, աչ-քերը չած նայում էր ամբոխը, ու յանկարծ հազարաւոր կուրծքե-քերը չած մի բացականչութիւն՝ «կեցցէ»: Փողօվուրդը վա-րից գուրս թառ մի բացականչութիւն՝ «կեցցէ»: Փողօվուրդը վա-զում էր ափով շոգենաւի ետևից, մինչեւ որ նաւը աչքից անենա-ցաւ, ուզնորւելով գէպի Ալբանի, գետն ի վեր:

Բայց Ֆուլտոնը ուշը չէր դարձնում ոչ ամբոխի շոգեներին ու ծաղրանքին, ոչ էլ հիացմանքին. Նու լարւած հետեւում էր իր նաւի ընթացքին. մէկ արագացնում, մէկ դանդաղեցնում էր, մէկ աջ էր

ուղղում, մէկ ձախ, ու շարունակ դիտում էր՝ չը կայ տրդեօք որևէ պակասութիւն։ Հետզիետէ երջանկութեան և հպարտութեան զգացմունքը լցնում էր նրա հոգին, որ այնքան տաճւել էր այդ մեծ նըպատակին համնելու համար։

բ.

Մի շարաթից յետոյ տեղական լրագրներում լրյու տեսաւ մի յայտարարութիւն, որի մէջ Ֆուլտոնը յայտնում էր, որ շոգենաւը ամեն չորս օրը մի անգամ երթեւելու. էր Նիւ. Եօրկի և Ալբանիի մէջ գուրս գալով առաւօտեան և յաջորդ օրւայ իրիկունը տեղ համնելով։

Նշանակւած օրը նորից Նիւ. Եօրկի ամբողջ գետափը ծածեւած էր ժողովրդով, որ եկել էր տեսնելու, թէ ով լինելու է այն յանդուզնը, որ սիրո կանի ու կը մտնի այդ Շատանի մեքենան։

Ֆուլտոնը ի զուր բարձրաձայն դիմում էր մի քանի անգամ ամբոխին, երաւիրելով ցանկացաներին իրեն հետ ուղեւորել Ալբանի. բոլորն էլ ետ-ետ էին քաշւում շոգենաւի մօտից, թէև տեսնում էին, որ բացի Ֆուլտոնից նաևի վրա կային և ուրիշ ծառայողներ։ «Սամանի հետ

է ընկերացել», —խօսում էին ամբոխի մէջ։

Շողենաւը ճամփայ ընկաւ։ Գետնավնեայ՝ գիւղացիք, մանաւանդ կանայք և երեխաները, ճշում ու լալիս էին, էկնց որ հեռաց նշմարում էին այդ «հրէշը», որ ծուխ ու բոց էր ժայթքում և տհսելլ վշտում էր։ Ճամփին պատահող նաւերի նաւատիները սարսափահար կանչում էին՝ «վիշտալ վիշտապ» ու թաքնում տախտակամածի տակ։ Ֆուլտոնը մենակ կանգնած էր շոգենաւի վրա և տխուք մտածում էր...

գ.

Նրա մաքով անցնում էր իր ամբողջ անցեալը, զրկանքներով, կիառափումներով, շաբքաշութիւնով լի անցեալը։ Հօրը չէր միշում.

նա մեռել էր, երբ ինքը դեռ երեք տարեկան էր։ Մայրը օրավարձով լացը էր անում, զաշառում աշխատում կամ դնէ դուռը կար անում։ Իսկ առանը լիքը եզրայրներ ու գոյրեր։ Ռոբերտը այնուամենայի իւ դպրոց էր գուռմ, զրել-կարդալ սովորում։

Յիշեց Ֆուլտոնը թէ ինչպէս աշակերտութիւն էր անում ոսկերչ մօտ, ապա նրանից հեռացաւ և պարապում էր պատկերածանութեամբ։ Երանի այն օրերին, ինքը այնպէս հաւտառում էր, թէ առաջնակը նկարիչ է դամանալու։ Ու յանկարծ Ռոբերտի աշքի առջե կանգնեց մօք անմոռանալի կերպարանքը։ որչափ երջանիկ էր նա, երբ որդին իր խնայողութիւններով զնեց մի կտոր հող, մի տնակ և տնտեսութեան բոլոր պարագաները ու այդ ագարակի մէջ բնակեցրեց պառաւին։

Յետոյ սկսում են թափառութերը Անգլիա, Ֆրանսիա, ուրիշ երկիրներ, և հիասթափութիւն. համոզւում է, որ նկարչութեան տաղանդ չունի ու տրւում է մեքենագործութեան... Ի՞նչքան անքուն զիշերներ, սոված օրեր է անցկացրել իր ամենագլխաւոր նպատակին համար և այդ նպատակը եղել է մարդկութեանը մի այնպիսի նաև տալ, որը շոգու միշոցով ազատ ման գտը թէ հոսանքով և թէ հակառակ ժողովրդեամբ։ Եւ ահա այժմ, երբ իր երազանքը իշրականացել է, էկնց իր հայրենակիցներն են, որ երես են դարձում իրենից...

դ.

Միւս առաւօտ Ֆուլտոնը կրկին մէկ-երկու ժամ ի զուր սպասեց ճամփորդին. ոչ ոք չէր երեւում. տմբոխը լուռ կանգնած էր ափին։

Յանկարծ—չէր ուզում հաւտառի իր՝ աչքերին—ամբոխը ճեղքետվ շողենաւի սանդուղքով սկսեց բարձրանալ մի լրջմիտ հանկի՝ ճամփի պայուսակը ձեռքին։

—Ի՞նչ էք կամենում, —հարցրեց Ֆուլտոնը։

—Զի՞ որ զուք յայտարակ էիք, թէ ճամբորդներ էք փոխադրում Ալբանիից Նիւ. Եօրկ։ Ստացէք փողը։

Ու մեկնեց փողը։ Ֆուլտոնը յուզմունքից չէր կարողանում խօսի։

—Այստեղ վեց դոլար է (12 ոսւբլի). գուցէ քիչ է, —հարցրեց աղեւորը ատքակուսած։

—Աչ, ոչ, —բացականչեց Ֆուլտոնը՝ արտասուքն աչքերին, սեղմելով պարոնի ձեռքը։ Էկնց այգքան է նշանակւած։ Բայց հասկանում էք, սա առաջին գարձարութիւնն է, որ ստանում եմ իմ բազմա-

մեայ տառապանքներիս համար, և դուք տռաջին մարդն էք, որ ձեր կեանքը վստահում էք ինձ: Ես կուզենայի ձեզ, հետ մի շիշ գինի խմեմ այն վստահութեան համար, որով վերաբերւեցիք իմ նաւին. բայց այժմ ես այնքան աղքատ եմ, որ չեմ կարող գնել այդ մի շիշ գինին: Գուցէ երբ և իցէ առելի լու հանգամանքների մէջ իրար հանդիպենք, այն ժամանակ մենք միարին մի քանի շիշ կը դասարկենք ի յիշատակ այս օրւայ:

—Մէք վհատի, —ընդհատեց նրան ուղեկիցը. —ապագան ձերն է:

Բ.

Ճիշտ որ վերջը նրանք նորից պատահեցին և Ֆուլտոնը միշտ առանձին խանդաղատանքով էր խօսում իր «առաջին ուղերի» մասին. «Այդ մարդը ինձ վստահցաւ, —ասում էր նա, —երբ գեռ ոչ ոք չէր վստահանում»:

Անձանօթի գուշակութիւնը կատարւեց: Հենց իր կենդանութեան օրով Ֆուլտոնը տեսաւ, ինչպէս շոգենաւերը երևացին Ամերիկայի ուրիշ գետերի վրա էլ, նոյնպէս և Եւրոպայում: Նրա մահից մի տարի առաջ շոգենաւը առաջին անգամ կարեց անցաւ Ասլանտեան ովկիանոսը՝ նոր Աշխարհից Հին Աշխարհը:

Երբ 1815 թւին Ֆուլտոնը մեռաւ, ամբողջ Նիւ-Յորկը սեեր հագաւաւ: Թաղման օքը բոլոր պաշտօնատեղիներն ու արհեստանոցները փակւեցին, բոլոր բնակիչները գնում էին մեծ մարդու զագաղի ետեից՝ դրօշակները պարզած: Իսկ նաւահանգստից անընդհատ որոտում էին երեսուն ահագին թնգանօթներ նրա նոր շինած՝ պատերազմական վիթխարի շոգենաւի վրայից:

Այդ շոգենաւը, ուր վեց հարիւր նուտաստի պիտի ծառայէր, կոչւում էր «Ֆուլտոն»:

1) Ամրոխը սկզբում ինչու էր ծաղքում Փուլտոնին: Ինչու էին վախենում նրա «հրէշից»:

2) Ինչ նշանակութիւն ունի մարդկութեան համար շոգենաւի գիտը:

## 61. Առաւոտ

Առաւոտ է: Ամենքը շարժողութեան մէջ նն: Գիւղացիներն արզէն զարթնել են այն փոքրիկ թոշնիկի ձայնից, որ գալիս նատում է

երդիկների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»: Նրանք արդէն լծել են իշրենց եզներն ու գոմէշները և բաւական վարել են գետինը: Տների մէջ մատակներն ու կովերը կթել են: Ոչխարների հօտն էլ դաշտումը մատղաշ արօաներից արդէն մի քաղցր նախաճաշ է արել: Տանտիկինն էլ կովերն ու հորթուկներն է գուրս հանում:

Գիւղի տղկերքը խումբ-խումբ գնում են դէպի կանաչ մարգագետինը, ծաղիկները կոխելով, ծաղիկներ քաղելով և իրար վրա ածելով, ծիծաղելով, խայտալով: Նրանք հանդիպում են կաքաւների երամին, լորին, արտուտիկին, որոնք խոտերի տակից թռչկառում են թփից թուփի:

Կոռւնկը երամով կարուան է կազմել ոլաքաձեւ. օդի բարձր տեղերով անցնելով՝ «Կռու-կռու» է կանչում: Ծառայ եմ ձայնին:

Երկարասրունք արագիլը, կտուցը սրած, բոյնից գուրս է եկել, ահօդ հօդ ձայնելով դէպի դաշտն է վաղում ջրի ու ցամաքի օձերը բռնելու և սպանելու:

Կոյր բուն այդ ժամանակ իր համար մի բայն է որոնում, որ ծածկվի այստեղ, վերջացնելով իր «վմյուշայն», որով սպում էր փշերը մի չորացած ծառի կամ գերեզմանաքարի վրա նսռած:

Զինկուլը գետերի ափերն է վաղում ու «ձըկ», ձըկ կանչելով՝ ձուկ-մուկ է որոնում, կուլ տալիս:

Բաղն ու սազը, Ձերի վրա նսռած, կայտառ նաւագարների պէս թրգում են ու երգում:

Սանրակատար յոպոպը տնհանգիստ ոստոստում է և արգադար պղաղակում «յոպ-յոպ»:

Դեղնապորտիկը, փափուկ ու մաքուր, ճերմակ ու գեղին շորեր հագած, փոքրիկ մացառների ու թանձը խոտերի միջից գլխիկը ցոյց տալով ու թագցնելով, իրա ձայնն է լսեցնում:

Սոխտիկի ձայնն էլ լսւում է բոլոր երգողների ձայների հետ և ամեն լողի ուշը ու միտքը վերացնում:

Բարբարոս բազէն որոտացող ձայնով վեր ու վայր է ոլանում մի անմեղ ու անզգոյշ ազաւնի կամ տատրակ պատառտելու:

Անզզները, մի սպանւածի հօտ առել, գնում են նրա գիակի մը-սերը կողպատելու: Ահա արծիւն էլ երեւում է. նրա հզօր թերի բանումից օդը շառաչելով պատառում է. բոլոր թռչունները միանգամբից լուսում են, մինչև անցնի հեռանայ այդ ահեղ թագաւորը:



## 62. Կարահի երգը

Սրե բացւեց թուփ ամպերէն,  
կաքաւ թռաւ կանաչ սարէն,  
կանաչ սարէն՝ սարի ծէրէն,  
բարե բերաւ ծաղիկներէն.

սիրունիկ, սիրունիկ,  
նուշխուն կաքաւիկ.

Քո բուն հիւսած ծաղիկներով  
շուշան, նարզիկ, նունու-  
ֆարով,

քո տեղ լրցւած ցող ու շա-  
ղով.

քընես-կելսես երգ ու տաղօվ  
սիրունիկ, սիրունիկ,  
նախշուն կաքաւիկ.

Քո թև փափուկ ու խատուտիկ,  
պըզտիկ կըտուց, կարմիր տոտիկ,  
կարմիր-կարմիր տոտիկներով,  
կը շօրօրաս ճուտիկներով.

սիրունիկ, սիրունիկ,  
նախշունիկ կաքաւիկ.

Երբ կը կանգնես մամոստ քարին,  
Սաղմոջ կասես ծաղիկներին.  
սարեր ձորեր զըւարթ կանես.  
զարդի ծովէն սիրտ կը հանես.  
սիրունիկ, սիրունիկ,  
նախշուն կաքաւիկ.



## 63. Երասիսի վրայով

ա.

— Դէնա, քշում եմ, նստեցէք...

Ամենքս նստել, տեղ էինք բանել այդ մեծ ֆուրգոնի մէջ, տախ-  
տակէ կամարի տակ կծկւած: Գնում էինք, ամբողջ ընտանիքով և  
ընդմիշտ: Կաղթում էինք զիւղից:

Շարժւեց ֆուրգոնը, հեռացրեց մեղ զիւղի տեսքից:

Առաջ փուած էին ընդարձակ, ժպտուն զաշտեր՝ լի բազմատեսակ  
զոյնզգոյն ծաղիկներով. Կարկաչում էին առւակները, ճլւում էին թըռ-  
չունները և մեր ֆուրգոնը վազում, վօրում էր այդ ամենի միջով:

Մի բանի անգամ ցած թռայ ֆուրգոնից, ծաղիկների փնջեր զը-  
ցեցի ներս, ծառերի ճիւղեր կտրեցի, յետոյ նօրից հեծայ ֆուրգոնի  
ետեռում իմ տոպրակի վրա ու կանչեցի եղբայրներիս.

— Դէն, տղերք, մի բան երգենք...

Զայնակցեցին, ես մի երգ սկսեցի. Բայց շուտով սոխուցինք  
լուս կենալու, որովհետեւ ֆուրգոնի ցնցումները խայտառակ կերպով  
փշտում ու ջարգում էին թէ մեր կողերը և թէ մեր երգը...  
Ցնցեց, անխիղճ կերպով ցնցեց մեղ մեր ֆուրգոնը մինչև երեկոյ:

Սութին հասանք մի գիւղ. իսկ միւս առաւօտ շուտով դարձեալ լուսեցինք մեր արկղի մէջ և սկսեցինք իշնել դէպի մի աւազու ու ընդարձակ դաշտ՝ անցնելով կոյտ-կոյտ բժուրներից:

Օհ, գամշտ եմ առում, բայց աւելի ճիշտ կը լինէր ասէի՛ անապատ:

Ոչ մի ծառ, նոյն իսկ խոռոշ այնտեղ ըիչ էր, դեղնած ու չորսցած: Շուրջդ ամբողջ աւազ է, բայց աւելի հող ու անտանելի փոշի: Եւ ինչպիսի փոշի: Ամպ, կամարեալ ամպ էր, որ շըշապատում էր մեր Փուրգօնը:

Էլ ու ոչինչ չը մնաց: Փոշին շերտ կապեց մեր շորերի ու մազերի վրա. քամին սուրաց ու սուրաց, մի տաք, խեղդող քամի, մինչև որ վերջապէս հասանք աւազների և կարողացանք բանալ աչքներս ու բան տեսնել:

Եւ առաջին բանը որ տեսանք, զարմանքից կանչեցինք ամենքս: Ուղիղ մեր գիմացը, ծանր ու մեծ, սահում գնում էր վերևից ներքեւ մի լայն, շատ լայն գետ, պղտոր ու կարմիր ջրերով:

—Երասխ, կանչեց հայրս, —Երասխ գետն է:

Բ.

Քիչ յետոյ, մեր Փուրգօնը կանդ առաւ ուղիղ գետափին: Ցած իշանք: Բոլոր բեռները իշեցրին, մի մեծ կարպետ փուեցինք գետնին. մայրս սփոռոցը բացաւ և ննանք ճաշի:

Գետեզը այդաեղ ամայի էր: Մի հողաշեն խրճիթ միայն կար, մէջը վինւորները, որոնք ներս ու գուրս էին անում, հօրիցս անցաղիր ուղեցին, ներս ապրան ու ետ բերին տւին. յետոյ, երբ մեզ զննել էին՝ թողին հեռացան: Դեռի միւս ափը պարսկական հող էր:

Ճաշը կերջացնելուց յետոյ, մնաք երեխաներս գետափ իշանք և զննել սկսեցինք եղերքին կպած մի մեծ նաւ:

Այդպիսի նաւ իսկի չէի աեսել պատկերի վրա: Սա մի խոշոր արկդ էր, ուղղակի սնդուկ, չորս կողմը փայտէ փանդակ շինած: Մի երկար ծող էլ, որ թիակը պէտք է լինէր, արկդի միջից պարզում գնում էր և խրում ջուրը:

—Լաստ է, — հասկացրեց մեզ հայրս, որ մօտ էր եկել:

Դրանով էինք միթէ անցնելու: Այդ ջրոտ, ցեխոտ ու լարձուն յատակի վրա էինք հաւաքւելու: Իսկ մեր Փուրգօնը, ապրանքը, ձի՞րը: —Կը տեսնէք, — ժապաց հայրս, — բոլորն էլ կանցնեն: Գնացէք առայժմ գետափից հեռու: Մի մօտենաք ջրին: Այստեղ ափերը փլում

են յանկարծ: Իսկ եթէ ջուրն ընկած, էլ պրծնելիք չի մնի: Ծ, երասխը շատ ու շատ արիւն է խմել, անթիւ դիակներ քշել տարել ու այս երկրի բնակիչներից հազարաւորների խեղգոտել... Արիւնիում գետ է դա:

Ու լոեց: Սպասում էինք, որ էլ խօսէր, պատմէր՝ թէ դա ինչ արիւն էր, ինչ դիակներ, Երբ և ինչո՞ւ:

—Հայրիկ, —ասի ես, —պատմի խնդրեմ: Ի՞նչ դիակներ են. գետն է մեծացել, թէ կոիւ է եղել այստեղ:

Գ.

Եւ հայրս գնաց նստեց մի քարի վրա, ու սկսեց պատմել:

Սրանից շատ և շատ տարիներ առաջ, կը լինի մօտ 300 տարի, — այս կողմերը լիքն էին շէն ու մեծ գիւղերով: Սկսած այդ գետից մինչև շատ հետու քաղաքները լիքն էին հայերով. ծաղկած դաշտեր, հարուստ բնակիչներ...

Բայց ահա պարսիկները կոիւ սկսեցին օսմանցիների գէմ և գնացին քարութանդ անելու միմեանց երկիրները:

Կոիւը կատարւում էր հայերի բնակած տեղերում: Երկու կրտող ագգերի հազարաւոր զօրքերը մորեխների նման ընկնում էին արտերը, ոտնատակ աալիս, փշացնում էին գիւղ ու քաղաք. այրում էին ու քանդում ամեն բան. Մշխատում էին ամսպէս դատարկել երկիրը, որ գէմից եկող թշնամին ոչ ուտերու բան դանէր, ոչ էլ բնակելու տեղ:

Սուած պարսիկները յաղթեցին ու գնացին առաջ: Բայց յետոյ սկսեցին յաղթելու ետ քաշել, որ գնան իրենց երկիրը մտնեն, զետի այն միւս ափը: Ետ էին քաշում, բայց անցած տեղերում ինչ զիւղ ու քաղաք որ կար՝ քարութանդ էին անում, հայ բնակիչ երին էլ զոռով դուրս քշում իրենց տուն ու տեղից, ոչխարների նման առաջ անում ու մզկտացնելով բերում հաւաքում այստեղ:

Էլ մարդ չը թողին. տղայ, աղջիկ կին ու արամարդ՝ անխնայ տւին մտրակների առաջ, շտապով դուրս արին ու հազար-հազարներով առին բերին, որ գետը անցկացնեն, որ չը թողնեն օսմանցիներին օգնելու, տուն ու հաց տալու:

Շտապեցնում էին, որովհետեւ թշնամին գալիս, համնում էր:

— Էլ չը թողին գանէ իրենց հետ շոր կամ ուտելիք վերցնեն: Ով ինչ կարողացաւ: շուտով կապեց մէջըին. եթէ ձի կամ էշ ունէր՝

նրանց վրա, մեծ մասը ստքով, մտրակի ու փայտի հարւածների տակ գնում է փոշոտ, յոդնած:

Եւ զօրքերը անգութ կերպով սպանում էին նրան, ով յոդնում, եւ էր մասմ... Սպանում էին հիւանդներին, թոյլերին:

Մայրերի ձեռքերից երեխաներին խիելով շպրտում էին, ծերերին մորթուում, քարերից ցած գցում, և ելք շունչ չէր մուռմ գիւղերում, կրակ էին տալիս տներն ու խոտերի գէղերը, արտ ու ամբար...

Հազար-հազար կին, աղջկի, տղամարդ ու մանուկ բերին կիտեցին այս պղտոր ջրերի մօտ և սկսեցին անցկացնել գետից:

Անցկացնել, բայց ինչնպէս: Հազիւ մի քանի լաստ ու նաւակ կար: Քիչ-քիչ անցկացնելը երկար կը քաշէր, թշնամին համում էր: պէտք էր շտապել:

Եւ ահա թագաւորը հրամայեց, որ քշեն ու ջուրը լցնեն ամենքին՝ կին, տղամարդ թէ մանուկ: Մկանեց մի զարհուրելի տեսաբան:

Զօրքերը ձի հեծած, սրերի ու մտրակների, փայտերի ու հրացանների հարւածներով ժողովեցին այդ հազարաւոր թշւառներին ու քշեցին ջուրը... ճիչ, աղաղակ, լաց ու կոճ...

Գետը սեացաւ մէջը լցւածներով: Խեղզւում էին, օգնութիւն կանչաւմ... Չուրը տակով էր անում մանուկներին, կանանց, լողալ չը գիտցողներին: Լողալն էլ օգուտ չունէր, ով կարող էր դէմ դնի այն ալիքներին... Խեղզւում էին, ոչ ոք չկար օգնող:

— Հնդիակառակը, զինւորները իրենց ձիերով ջուրն էին մտել առաջ էին մղում եւ մացողներին, սպանում էին չը գնացողներին...

Կէսից աւելին խեղզւեց, ջուրը ծածկւեց գլուխներով, իսկ ափերի վրա դիզեցին գուրս ընկած գիտկները, հարիւրաւոր, հազարաւոր գիտկներ... Պղտոր ալիքները տակով արին խեղճերին: Երասիր կարմրեց, և այս բոլոր սարերն ու ձորերը լցւեցին մեռնողների ճիչ ու լացով, յօւսահատ աղաղակներով...

Հայրս լսեց և տխուր ու մտածկոտ պլուխը կախեց կը քիւն...

Դ.

Կէսօրից յետոյ, ամենից առաջ բեռները անցկացրին:

Չորս, հինգ թուրք մշակներ արտգութեամբ լաստի վրա դիզեցին ամեն ինչ, իրենք էլ նստեցին և ափին կանգնած մի մարդ արձակեց պարանը:

Եւ ամենքը նստել էին, լաստավարը մի ձոզ դէմ տւառ ափին, եւ մղեց լաստը, ընկաւ երկար թիակի վրա և դէպի ջուրը ստիւց:

Կարծում էինք թէ ուզիկ դիմացի ափն էինք զնալու: Բայց որքան դրմանք, երբ որ ջուրը ըշում էր լաստը միշտ դէպի ցած:

— Այդպէս է, — բացատրեց հայրս, — հոսանքի հետ կիշնեն, կոչ-կամաց կը ծուեն դէպի միւս ափը և այս մեր կանգնած տեղից շատ հեռու, դիմացը կելնեն: Ծեմնում էք եռուում, միւս ափի վրայի այն շէնքերը. էնտեղ է կայտրանը:

Լաստավարը միշտ իր թիակի վրա էր ընկած: Ճգնում էր ծոփ լաստը և տանի դէպի միւս ափը:

Մինչի վերադարձը միշտ ժամկց աւելի տեսց:

Ահա այդ ժամանակն էր, որ մեզ մօտ, ափի վրա եկան նոր հիւրեր: Նրանուն-քառասուն ոչխարներ էին ողանք, փոշոտ, աղտոտ, յոդնած ու գլուխները կախ. խեղճ անառունները կիտւեցին եղերքին, կպան մեանց ու սպասեցին: Կային նրանց հետ նաև երկու խոշոր շներ: Բայց ինչպիսի շներ: Մանաւանդ մէկը, ահապին, ուզիկ մի նորթի չափ. բրդոտ, արիւնոտ աչքերով և սկ, մեծ մռութով, նրանք էլ ուղնել էին: Լեզունները կախ՝ հասան թէ չէ, շնթուկեցին և աչքերը փակ՝ մնացին:

Երկու թուրք հովիւններ էին հօտը բերողները, երկու ահազին չէլ գտփախներով, սեադէմ մարդիկ. երկար ցուպերով մի կէտի վրա զավեցին ոչխարներին և իրենք էլ նրանց կողքին՝ փուեցին գետնին:

Ի.

Վերջապէս լաստը վերադարձաւ: Հիմի հերթը մերն էր:

Նստեցինք բաւական վախվիսելով: Մշակներն ու լաստավարը ներս ու արան մեզ ու մի որոշ տեղ նստեցրին կարպետի վրա: Հայրս ու մայրս խստիւ պտուիրում էին, որ տեղներիցս չը շարժւենք:

Այնուհետեւ լաստավարը հօրիցս իրաւունք խնդրեց ոչխարների ուն էլ մեզ հետ անցկացնելու: Տեղ կար: Ոչխարներին ու շներին շեցին ներս և ժողովեցին մեր կողքին:

Ոչխարները խրանում էին, առաջնորդ երկու այծերը պողերով որձեցին դէմ զնեն: Երբ լաստը շարժւեց՝ ոչխարները կանգնած ացին և մինչև անդամ վախից սկսեցին դողալ:

Այծերը միայն հանդարտ չէին մնում: Տեղները նեղ էր: Այս ու ոչխարին էին հրում, անցնում էին ուրիշ կողմ, երբ ջուրն էին մնում խրանում էին, ետ-ետ փուռմ և ամենքին նեղութիւն տալիս:

—Հանգիստ կացէք, անիծածներ,—ձեւքով խփեց նրանց հովիւներից մէկը,

Բայց երբ լասար հոսանքի մէջ մտաւ ու սկսեց պատռել ու անցնել և երբ ջրերն ելան ու խփել սկսեցին լաստի կողերը, այծերը ամբի գժւեցին:

Մենք ասես վախից կծկւել՝ իրար էինք կպել: Ո՞չ միայն յեշեցի, այլ մի ըստէ անդամ մտքից չեխն հեռանում հօրս պատմածները Աչքիս առջև էին գալիս կատաղի ջրերը՝ ծածկւած զլուխնեցով. մասնուկ, կին և տղամարդ խեղդում էին, ձեռները յուսահատ կերպով շարժում, օդնութիւն կանչում...

Մօրս աշքերի մէջ էլ սարսափ էր նկարւած: Գրկել էր մեզ ու նստել: —«Մի նայէք, Ջրին մի նայէք...» —մըմուռմ էր նա:

Հանգիստ և անվրդով էին միայն թիսկի վրա ընկած լաստագարը, հովիւները, այլև շները:

Ավել իշանք: Լասար ետ գարձաւ՝ Փուրգօնն ու ձիերը բերելու, իսկ մենք Ջրի եզերքին սպասում էինք.

Մի ժամկեց յետոյ մեր Փուրգօնը պատրաստ էր նորից մեզ տառնելու մեր նոր հայրենիքը:

1) Տեղափոխութեան բնշ միջոցներ կան մեր երկրում: Ո՞րն է իրաքանչիրի առաւելութիւնն ու թերութիւնը:

2) Տեղափոխութեան էլ բնշ միջոցներ գիտես, որ կան ուրիշ երկուներում:

## 64. Մի երգ կայ մանկոց

Մի երդ կայ մանկոց, մի ձէն կայ մանկոց  
դեռ իմ ական ջուռմ:

ախ, բնչքան հիմի, ախ, ինչպէս հիմի  
հեռու է հնչում:

Ճախրում էր ծիծառ, երգում էր ծիծառ,  
գարունը բերում:

Աշխարհը, զւարթ, աշխարհը պայծառ  
ծաղկում էր, բուրում:

Հայրենի դաշտեր, սրբազն դաշտեր,  
ախ, ոնց եմ ուզում  
ձեր գրկում մին էլ, ձեր ծաղկում մինն էլ  
թռչեմ երազում:

## 65. Եղջերուն

Սրշալայսից առաջ ես ու որոկան Օսէփը գարան էինք մտած եղուտի կիրճում: Ես իմ դիրքից պահում էի առաջիս ընկած բացառը: Դիմացս կանգնած էր խոր ու անթափացելի մութի անտառը:

Հետզհետէ զիշերւայ խաւարն սկսեց նօսրանալ: Ժայռերը խոժուա, մաթաթախ դուրս նայեցին աղջամուղջի միջից: Երկինքն ոկուց դանատաել ու պարզւել: Ապա երեաց Լուսասաղը, վեր կացաւ վարդեան զեփիւորը: Մաղիկները շարժեցին իրենց գլխիկները, խոտերը նզդողացին, տերեները շրջացին: Անտառն սկսեց զարթնել: Մօտաթից մի ծիտ ձկաց, մի ուրիշը միւս թից, մէկն էլ հեռափց... Ես աննկատելի դուրս էի եկել իմ թագոսից ու զմայլած զիւմ էի շուրջն—ընութիւնը, էն սրբազն ժամին, երբ ծագում է աջին լոյսը:

Ցանկարծ մի ձայն... չորացած ձիւզը կոտրւեց մօտիկ անտառմ: Նայում եմ էն կողմը, Անտառը տակաւին մութին է: Աչքս չի ոշում թէ ինչ կայ էնտեղ, միայն պարզ լսում եմ զգոյշ ունացնը, որ խաշամը կոխելով առաջ է գալիս խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ... ն չի երեսւմ, բայց գարձեալ խը՛շտ, խը՛շտ, խը՛շտ մօտենում է ելի և աւելի... Եւ ահա՝ դուրս եկաւ...

Ես առաջին անդամն էի տեսնում եղջերուն ազատ ընութեան շ: Նա դուրս եկաւ մի խաղաղ հալարտութեամբ, զին ու չքնազ, չպէս ընութեան էն ամեն գեղեցկութիւնների տէր ու թագաւորը, սովին գեռ անտառի մթութեան մէջ կանգնեց, թուխ դունչը դրաւ տնին, ապա թէ գլուխը բարձրացրեց, վայրենի շնորհքով ուրեց կայն վիզը ու նայեց իմ կողմը:


Ամենազեղեցիկ հայեացըը, որ ես աեսել եմ իմ կեանքում:

Ես շփոթւեցի, ամաշեցի, ուզեցի թաքնել հրացանս... շարժւեթէ չէ, նա շտապով ետ թեքեց իր կարապի վիզը. վիզը ետ թեռն պէս հարեան դիրքից որոտաց որոկան Օսէփի հրացանը: Հրացանի նից անտառն որոտաց ու սկսեց ճրճռալ: Էն եղջերուն էր փախչում: —Հայ քո տունը չը քանդի, ինձ յանդիմաններով գուրս թռաւ որուն ու վազեց զէպի մօտիկ բլուրը, տեսնի որ կողմից կերեայ խած որսը: Առաւոտը բացւում էր, և էնքան լուս էր, որ կարողաք կոնաչ խոտերի վրա գտնել թարմ արեան հետքը,

Վիրաւորւած էր եղջերուն. Արեան հետքը բռնեցինք ու գնացինք սրոնելու:

— Էսքան որ արիւն է աւել, ինչքան ուզում է գնայ՝ մերն է՝ յայտնեց որոկան Օսէփը:


Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում: Նա ընկած տեղից իր երկայն վիզը մեկնեց մեզ վրա: Ես տեսայ՝ ինչպէս չէր կարողանում գլուխը պահի. շարժում էր անդադար ու նայում էր մեզ իր պղասը շըշկլած, անորոշ հայեացքով: Յանկարծ կարծես դիմի:



Ընկաւ, աշխատեց վեր կենայ, ծնկները վեր բարձրացրեց ու կրկնացի ընկաւ իր արեան մէջ մի ծանր, անզօր թառանչով:

Որսկանը վրա վաղեց... Ես ուզեցի մի բան ասեմ, ամաչեցի՝ Նա բռնեց եղջերւի գլուխը, ոլորեց գեղեցիկ վիզը... Ես կըկին ուզեցի մէջ մտնմամ... զարձեալ սիրտ չարի... Եւ ահա դաշոյնը փայլատակեց:

Ես երես շրջեցի, իբրև թէ սարեցին եմ նայում: Ետեից խուլ անքոց... լսեցի... ու, չը գիտեմ ինչու, սկսեցի մտածել կեանք ու մահւան մտախն, և էնպէս ագեղ էր թւում ինձ կեանքը...



## 66. Բոչ.

...

Ծագում է մանուկ արեր գարնան կովկաս լեռների ձիւնի պատեհշից. զարթնում են մէկ-մէկ սարերն աննման Զմուն անվրդով քընի մշուշից: Ահա կալվարի միթխարի ուսին բազմում է արփին թարմացած ուժով, սարեր ու ձորեր իրար երեսին նայում են, ժագառում ամպի մշուշով... Վերջին ձիւներն էլ արդէն հալ ընկան, արտասւեց իսկոյն լեռների հրսկան: Ամեն մի ձորից աղբիւր է հոսում,

ամեն մի թրփից բիւլրիւլ է խօսում.

Կ' զալար հովիտ, և ժայռի կրծքեր արձագանք տալով գարուն են հնչում. ձըմուն փարախից հովւական երգեր զեփիւոի թեով սարերն են թոշում:

Բ.

Ահա գարնան հետ և շարան շարան դաշտավայրերից գէպի զով սարեր ձըգւեց սայլերի, ուղտերի քարւան.

գախչում են շոքից թէ թուրք, թէ հայեր:  
 Թընդում են ձորում զանգի հընչիւններ,  
 ձիերի խըրխինջ, պայտերի դոփիւն,  
 մէկ մէկի կըցած անվերջ քարւաններ  
 քաշում է նառը, ահեղ մըռնչում.  
 որը տանում է ալաշխի քեշան,  
 կուժն ու խնացին, ճիպոտն ու չաթան,  
 որն էլ զարդարւած զիր ու փնջերով՝  
 օրօրւում, անցնում լեռան լանջերով.  
 բայց նառն ինքնազոհ քայլում է հանդարա  
 բոժոժ ու զանգեր վըզին ու կըծքին,  
 և օրօրւելով կապերտներ ու զարդ,  
 զեղեցիկ հարսն է նա տանում մէջքին:  
 Բոնել է ճամփէն խիստ իրարանցում,  
 դոփում են ձիեր, սանձերը կըծում:

Դ.

Գիշերը հասաւ. մըթին է ճամփան,  
 մարում է կամաց աղմուկը քոչի.  
 առւակի ափին քարւաններ իջան.  
 կանչում են՝ «Տըզերք, ապրանք չը կորչի»:  
 Ձիերի ջոկեր, ուղտերի քարւան,  
 սայերի ճոռաց, ոչխար ու տաւար,  
 գըտնելով ձորում զիշերն իջեան,  
 հանգիստ են առնում միւս օրւան համար,  
 կըրակի վըրայ, առւակի ափին,  
 մի տեղ ընթրիք են շտապ պատրաստում.  
 մի տեղ էլ կորած զառանն ու հորթին  
 սար ու ձոր ընկած հովիւն է կանչում.  
 մի այլ տեղ ուրախ շրջան բոլորած՝  
 ուտում են նըրանք կաթին ու խորոված:  
 Գիշերն էլ արդէն մնջում է լըսում,  
 յոգնած քոչորին հանգիստ քուն բերում.  
 միայն մի կով է դարձեալ բառաշում  
 և քունը կտրած հորթուկին կանչում:

Դ.

Անցնում են ծէզին քոչ-քոչի միջով,

գարնան արևից գայլում են զէնքեր.  
 և թարմ կենսաըոյր թաւիշ կանաչով  
 բացւում են, ժըպտում սարւորի գէմքեր:  
 Փոքրիկ երեխան պինդ մէջքին կապած՝  
 խեղճ հովւե կինն էլ վազում է ոտքով,  
 օգնում է մարդուն՝ գոհ ու սրտարաց,  
 բախար որոշած ծանր վիճակով:  
 Մայում են, բայում գառնուեկն ու մաքին,  
 թընդում կովերի, հորթերի բառաչ,  
 իսկ տըրլընգալով գոմէշը ձագին  
 կանչում է դանդաղ վազերով տաշ.  
 վազում են յոզնած շները հօտի  
 և լեզուն հանած թանչին են տալիս.  
 լըսում է յանկարծ ձայնը լակուի,  
 որ քոչից ընկած՝ կալանչ է գալիս:

Ե.

Քարւանի ծայրը սարերը հասաւ,  
 հոսաւ և ձուլեց թաւիս ամպերի հետ.  
 վըրան-վըրանի եաեից բըսաւ  
 ծաղիկների մէջ գոյն-գոյն սիգաւէա:  
 Ալաջուխ, գտգա, անվերջ վըրաններ,  
 շըրջան կազմելով սառն ազըրի ափին,  
 ինչպէս ծեր արծւի կարկտած բըներ,  
 յենւեցին մէկ-մէկ բարձր քարտին:  
 Գուգալք սարերի սիգաւէա լանջին  
 բազմել են հայի, թուրքի բինաններ,  
 բայց գարձեալ խառնած քոչ-քոչի միջին՝  
 դեռ երերում են ուղտի քարւաններ.  
 խըրխընջում է ձին, կովը բառանջում,  
 բոլորն էլ իրենց իւրթն են ճանաչում.  
 մայում է անուշ ամիկը գտան.  
 սարեր ու ձօրեր նորից կեանք տուան:

- 1) Գիւղացիք ամառը ինչո՞ւ են քոչում:
- 2) Քաղաքացիք էլ քոչո՞ւ են, ինչո՞ւ:

## 67. Ազուաների յարձակումը

ա.

Իրիկնագէմին էր, ելայ ծառը սալոր ուտելու։ Բարձրացայ ամ-  
նաբարձր բարակ ճիւղերից մէկի վրա և սկսեցի քաղել կարմրին տռու-  
ճեղքւած, քաղցրահոմ սալորները։

Յանկարծ նկատում եմ, որ հարիւրաւոր ագուաներ զանազ-  
կողմերից կուելով գալիս են դէպի սալորի ծառը։ Սալորինին, որ լու-  
սաւորւած էր պայծառ արեի ճառադայթներով, մի ակնթարթու-  
մթնեց։

Սկսե ագուաները հաւաքւեցին զիխիս, նստաեցին սալորինու-  
ճիւղերի վրա և սկսեցին կատաղի կերպով կուել, լայն-լայն բաց ո-  
խուփ անելով իրենց կոտուցները։

Նրանք թռչում էին մի ճիւղից միւսը, պայծաներ էին անում ի  
պիտին, մօտենում էին ինձ այնչափ մօտ, որ զգում էի՝ ինչպէս նը-  
րանց թերը դիպչում էին մազերիս։ Մի քանիսը, տւելի յանդու-  
ները շեշտակի յարձակում էին վրաս ու քիչ էր մում աչքեր  
հանէին։

Ես իսկոյն հասկացայ պատճառը։ Ծառի վրա կար ագուակի մ-  
քառն, որի մէջ գտնուում էին նրա տգեղ ձագուելները։ Եւ կանգնա-  
էի անմիջապէս ագուակի բունի տակի։ Այդ ատելի, տգեղ, չարազո-  
շակ թաշունները եկել էին ազատելու իմ ձեռքից իրենց ընկերոջ լո-  
նը, որին վսաս տալու մասին ես սակայն չէի մտածում։

բ.

Ես շփոթւած էի, թոյլ, մենակ, իսկ թշնամիներս կատաղի էրու-  
մաթիւ։ Շարժում եմ ճիւղերը։ Ագուաները աւելի զայրացած մի փ-  
քը հեռանում են, բայց մինչե ես մի քայլ կանեմ դէպի ներքե, մի  
չե կը բռնեմ մի հաստատուն ճիւղ իշնելու համար, նրանք աւելի  
կատաղած, աւելի ես բարձրաձայն կռուպով յարձակում են վր-

Օգնութեան չեմ կանչում, հեռու եմ, ձայնս չեն լոի։ Շարժու-  
մե անդադար ճիւղերը, միակ միջոցը, որով կարող եմ պաշտպանու-

Բարակ, վտոնգաւոր ճիւղերը բռնելով իշնում եմ, առանց յ-  
յելու թէ ոտս ուր եմ զնում, բնաղդաբար, հայեացքս շարունակ  
պի վեր ուղղած։

Աշխատում եմ ոչ մի շարժում չանեմ դէպի ագուակի բռու-

իսկ յարմար ճիւղերն էր հակառակի այս այն կողմն էին գանւում։  
Ագուաների կացահարած աերեները, նուրբ ճիւղերը մնձրեի նման գլո-  
խիս էին թափւում։ Թշնամիներս զայրայթը գագաթնակէտին էր հասել։  
Վերջապէս այդպէս կոր մղելով կարողանում եմ իշնեմ ախքան,  
որ համնում եմ հասա և ամուր ճիւղերին։

Ագուաների զայրոյթն էլ քիչ քիչ մարում է։ Իրենց ընկերոջ  
բանը միջի թանկազին ձագերով արդէն ազատւած համարելով իմ  
չար զիտաւորութիւնից, նրանք սկսեցին ցրւել իրենց հեռաւոր բռնե-  
րը և աւետել ագուաւային աշխարհին իրենց կատարեալ յաղթանակը։

Ես ծառի կէսից Ռուայ ներքե, գունատ, յոդնած, դողում էի ամ-  
րազ մարմնով. ագուաների զոսոցը գեռ հնչում էր ականջում։ Դող-  
դոջուն ուներսվ վազեցի դէպի մայրս, ընկայ գիրկը և սկսեցի սաս-  
ուկ լայ։

—Մայրիկ, ագուաները աչքերս հանում էին...  
Դիտէք որից դէպքեր, երբ թշունները իրար պաշտպանելիս լինեն։  
Միայն թոշուններն են իրար պաշտպանում։

## 68. Համելոց

Վտակը ժայռից ներքե է թռչում,  
թափ առած ընկնում քարերի գրլին,  
զարկում աւազին, շաշում է, ճրչում,  
ճշում անհանգիստ, փըրփուրը բերնին։

Ինչպէս ծերանին, ձայնով պառաւած,  
ձայնակցում է միք թունիկի երգին,  
այնպէս է ծերուկ անտառը կամաց  
արձագանք տակի ջրի աղմուկին։

Սակայն բառ թեան զըւարթ համերգի  
ունկնդիր անխօս, յաւիտենական,  
ժայռը մտախոհ իր մոայլ մաքի  
ետեից ընկոծ լըսում է նըրան։



## 69. Արտը

ա.

Անիից էի վերադառնում և անցնում էի մի հայ դիւղի միջով։  
Գիշերը սաստիկ անձրն էր եկել, այնքան սաստիկ, որ շատ պա-  
տեր ու խրճիթներ փլցրել էր։ Փողոցներից հեղեղներ էին վազում

ԿՀԿՀԱԼԻՎ: Երկինքը ծածկւած էր միաձոյլ կապարագոյն ամպերով. զեռ էլի մէկ-մէկ անձրևում էր: Գիւղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա դուռը ճոնչաց, մի քանի մանուկերի ճիշերը ականջիս հասան և առաջս զուրս ելաւ մի ալեզարդ ծերունի՝ բահը ուսին: Մի քայլեան ինձ նայեց, յետոյ պատերի տակով անց փնտուեց քայլելու: Նրա հնամաշ արեխներից ջուրը հոսում էր գուլպաների մէջ: Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծքը:

Գիւղից գաւրս էինք եկել: Մի առ մի դիտում էի երկու կողքի արտերը: Շատերի միայն մի քանի ակօններն էին աւերւել և մէջ տեղերում լճակներ գոյացել: Մի քանիսը լիովին ողողւել էին: Զեթ հոսանքները արմատախիլ էին արել, քշել տարել ցորենի դալար ծիրելը և հաւաքել ակօնների մէջ: Ցեխ էր գոյացել ամեն մի փոքր շուղի վրա, ամեն մի փոսի մէջ պղտօր կարմրագոյն ջուր էր կիտւել և շատ հասկեր լսում էին նրանց երեսին, որպէս խեղդւածներ:

«Վախ, վախ», — արաւ ծերունին:

Բայց վասուը ընդհանրապէս շատ էլ մեծ չէր երեսում, հողը դիմացել էր. երեսում էին բոլորովին չը փշացած արտեր անգամ. ծիրելը դիմացել էին և այժմ զւարթ ցցել էին իրենց զլուխները:

«Է, փառք Աստուծու», — խօսեց ծերունին՝ տեսնելով զրանց, — «շատ էլ վստա չի եղել».

— Քո արտն էլ էսպէս կը լինի, ծերուկ, — սրտապնդեցի նրան:

Անխօս զլուխը երերցրեց: Կասկածում էր և հայեացը միշտ հեռուներն էր:

Բ.

Այսպէս քայլերով մենք հեռացանք գիւղից և յետոյ ծուեցինք դէպի լեռները: Ծուելիս ծերունին մի բոպէ կանդ առաւ և աշխատում էր հեռւից նշմարի իր արտի դրութիւնը:

— Ո՞րն է արտդ.

— «Է՞ն, բարձրը»:

Զըի հեղեղներ էին հոսում այնտեղ, ջրակոյաեր էին փայլում: Ծերունին գունատւեց:

«Տունս քանդել է...» — Միթէ վասուել է: — Զգիտեմ զնո...» — ասաւ նա խեղդւած ձայնով. — «Գուցէ աչքերս չեն ջոկում... ծերացել եմ...»

Առաջ զնացինք: Մօտենում էինք: Քայլելը աւելի դժւարանում էր. վերեից գրեթէ ցեխի հեղեղ էր, որ իշնում էր ցած, խառն ծիլե-

թի, ցողունների հետ... Հեռում էր ծերունին, շունչը կտրւել էր: Քիչ էլ քայլեցինք: Ել կանաչ չէր երկում. ցեխի հեղեղ և ջուր էր, որ մենում էինք. աւերիչ, աղականիչ հեղեղ...

Մի քանի քայլ յետոյ կանդ առաւ ծերունին և բահը ուսից ցած ղեց: Իր արտի կողքին էր: Թշւառ արտ...

Վերեից, փոսերի մէջ գոյացած ջրերը պատռել էին իրենց թումուր, ուժգնութեամբ ցած. հոսել և գրեթէ սրբել էին արտը: Տեղովագիսների պէս մացել, իրենց մերկ արմատներն էին ցոյց վս ցորենի ծիլի կղզեակները: Երկար, կանաչ շերտեր իրար վրա, մատախիլ, ջարդւած, հոգեզարք, սահել էին ամեն ուղղութեամբ և թախւել ցեխով: Հողը ամբողջ կանաչել էր նրանց դիակներով... Ընկաւ բահը ծերունու ձեռքից, աչքերը մթնեցին, ծնկները ծալին, և նա նստեց տեղն ու տեղը ու գլուխը թաղեց ձեռքերի:

Զիս քշեցի: Միրտ չունեցայ մխիթարական ոչ մի խօսք առելու: Կորդ էր:

Եւ երբ հեռուից ետ նայեցի, տեսայ՝ թշւառ ծերունին, միշտնոյն ըի մէջ, նստած իր աւեր արտի կողքին, զլուխը ձեռքերի մէջ և զարդ մազերը տեղացող անձրեի տակ:



## 70. Անձրեւ

Կացէք, Էյ ամպեր, ինչու էք վախչում,

անձրեւ չէք թափում:

Մարտւ արտերը օրեր են համրում,

ձեզ են ըսպասում:

Քամի, այ քամի, խղճան արտերին

ու թող ամպերին՝

որ կանգնեն շաղպտա կենսատու շիթեր,  
ջըեն մեր արտեր:

Բ—  
Քամին կտրւեց, անձեւ է մաղում,  
արտերը ջրում:

Արտը բարձրացաւ, ցողում արձակեց  
ու հասկեր բռնեց:

Գիւղացին գնում, տեսնում է, խնդում.  
Խնդում ու ասում.

«Փառք քեզ, Տէր Աստած, որ արւիր մեզ հաց,  
և թողիք քաղցած»:

## 71. Յովհանի Գուտենբերգ

աւ.



ար մանրունքն ու տաշեղը թափթփւում էին նր աերկար մօքուքի  
որ անկարդ ցրիւ էր եկել լայն կրծքին: Դուռը ամուր փակւած  
լուսամուտի վարագոյրները իշեցրած:

Զարմանալի բաներ էին պատմում Գուտենբերգի մասին,  
ծածուկ պարագմունքների մասին: Ասում էին թէ կոխարդ է,  
ունի գերբնական ուժերի հետ: Շատոնց է որ աեղափոխւել էր Սո-

րուրդ, փախչելով հայրենի Մայնցից քաղաքային խռովութիւնների  
ժամանակ: Հակառակորդները նրան զրկել էին հայրական ժառան-  
գութիւնից, բայց նա չէր ընկճառում և յափշտակւած պարապում էր  
զիտութեամբ և արհեստաներով: Նա սովորել էր ոսկերչութիւն, ինքը  
հարել էր թանկապին քարեր ողորկելու մի նոր միջոց, գեղեցիկ հայե-  
լիներ էր շինում, մետաղէ շրջանակներ էր ձուլում, նախշերով զար-  
դարում: Ամբողջ հոգով սիրել էր ձեռքբեստը, ինքը աղնւական էր  
և ուզում էր իր դասակարգի մարդկանց հետ միացած մի գործ սկսի-  
բայց աղնւականներից ոչ ոք չուզեց միանայ նրա հետ՝ արհամարհե-  
լով արհեստն ու ձեռքի աշխատանքը:

Այն ժամանակ նա ստեղատակ տվաւ նախապաշարութերը, անդամ  
կայեց ոսկերիչների համքառութեան և հասարակ արհեստաւորների  
հետ ընկերակցութիւն կազմեց՝ ակնեղին և հայելիներ շինելու համար:

Ա.

Այն օրից, երբ Գուտենբերգը մօնեցել էր ամբոխին, մի ծածուկ  
արսութիւն համակել էր նրա հոգին: Շուրջը տեսնում էր անթա-  
փառ և տպիտութիւն և կոպտութիւն, և չէր կարողանում հաշտւել այդ  
ամենի հետ: Նոյն իսկ այն հազարգիւտ մարդիկը, որոնք մի կերպ  
կարգու էին սովորել և կուզենային դուրս գան իրենց մտաւոր խա-  
չարից, ոչինչ չէին կարողանու մ անել, որովհետեւ ուսում ձեռք բե-  
րելու շատ զժամանք էր, ձեռագիր գրքերը թանկ էին և սակաւաթիւ:

Եւ Գուտենբերգը գիշեր ցերեկ մի բանի մասին էր մտածում, թէ  
ինչպէս անի, որ գրքերը ամենքի համար մատչելի գառնան:

Դրա համար էր, որ նա փակւում էր մենակ իր սենեակում ու  
պշխատում: Եւ այժմ նրան թւում էր, թէ նաար գոել է:

Փայունց կողասակ էր հուասար քառակուոսի ձողիկներ, զան և  
նըս հատ, լատինական այբուբենի տառերի թւով: ամեն մէկի գլխին  
փորագրել էր մի-մի տառ բարձրաքանդակ և թարս, իսկ ձողիկների  
տակերը ծակել էր, իրար կողքի շարել այբբենական կարգով, ծակե-  
րով թել անցկացրել, տմբողջ շարը իրար հետ ամուր կապել և այժմ  
թաթախում էր մի սև հեղուկի մէջ ձողիկները զլուխները, աղա զնում  
մի կառը մագաղաթի վրա ու ամբողջ մարմնով ընկնում վրան:

Մագաղաթի վրա գրոշմւում է լատինական այբուբենը, ծուզւած  
գուտենբերգը նորից է կնքում իր շարւածքը, կրկն նոյն այբուբենը,  
երբորդ, շորբորդ անգամ: Հիացած նա քանդում է շարւածքը ու  
նորից շարում ձողիկները, այս անգամ իրը մի բառ, ու կրկն

դրոշմում մագաղաթի վրա, տպւում է մի բառ...

Բազմաթիւ տարիների երազանքը իրականացած էր. դաել էր վերջապէս գրքերը բազմացնելու և էժանացնելու միջոցը:

Ինչքան պարզ բան, ինչքան հասարակ: Աստած իմ, ինչպէս էր որ մինչեւ հիմա չէր մտածել:

Բայց փայտը փափուկ է, շուտով է ծուռում, մաշուում կամ կոտըրուում և միշտ ձեռքով դրոշմելն էլ դժւար է:

Գուտենբերգը նորից անխոնջ աշխատում է իր սենեկում մարդկանց աչքից հետու: Նոյն իսկ ընկերակիցները կարծում էին, թէ նա հայելիների նկարներն ու քանդակներն է գծագրում, որ այդշափ երկար նստած է գիշերները և աղատ բողէներին անգում գուրս չի գալիս իր առանձնութիւնից: Մինչեւ այժմ իր բոլոր ուժերն ու շահած փողերը նա գործ էր գնում իր գիւտը կատարելագործելու համար:

Նա մտածեց տառերը մետաղից ձուլել. կազապարներ պատրաստեց տառերը մէջը շարելու համար, որ բառեր կազմւեն, բառերից տողեր, տողերից երեսներ. շինեց տախտակներ և շրջանակներ, որ շարւածքը ամուր սեղմւի ու կապւի, որ ոչ մի տառ միջից չը թափւի: Ինար գոտու շարւածքի մէջ սպրդած սիսակները իսկոյն ուղղելու: Ինարեց բարձեր, որ թանաքը ատոռերի երեսին հաւասար քաւի:

Ապա սկսեց մտածել մի այնպիսի մեքենայի մասին, որ շարւածքի վրա թուղթը դրելիս՝ հաւասարապէս ճնշի ու թուղթը չը պատուի:

գ.

1440 թւի մի գեղեցիկ օր Գուտենբերգը արագ քայլերով գնուց էր Ստրասբուրգի նեղ փողոցներով դէպի իր ծանօթ ճախարակագործ վարպետի արհեստանոցը, թիկնոցի քանոցքի տակ մի մեքենայի փոքրիկ օրինակը պահած: Ուղում էր նոյն մեքենան աւելի մեծ շափուկ պատուիրի:


Վարպետը օրինակը ձեռքին շուռ ու մուռ տւաւ և մի տեսուի արհամարհանքով և ծաղրական եղանակով ասաւ:

—Զեր ուզածը մի նոր ձեի ճզմիչ է, մի նոր ձեի մամուլ, պարոն Յովիան,

—Այն, —պատասխանեց Գուտենբերգը, ոգևորութեամբ—իսկապէս որ դա մի ճզմիչ է, մի մամուլ, բայց մի մամուլ, որից շուտով հոսելու է անսպառ հոսանքով ամենահրաշալի ըմպելիքը, որ երբնէ յագեցը ել

մարդու ծարաւը: Այդ մամուլի միջից վեհ ճշմարտութեան աղբիւրն է ըխելու, այն լոյսն է հոսելու, որ պիտի ցըւի տգիտութեան խուարը և չը տեսնւած ճաճանչներով պիտի փայլի մարդկանց հոգիներում:

Եթք մի փոքր ժամանակից յետոյ վարպետը յանձնեց Գուտենբերգին պատրաստ մեքենան, կարծես հասկանալով որ այդտեղ մի մեծ գաղտնիք է ծածկւած, բացականչեց.



—Ես տեսնում եմ, պարոն Յովիան, որ դուք հաղորդակից էք երկնային հոգիներին:

Անշուշտ նա ինքն էր լաւ չէր հասկանում թէ ինչ էր ասում, բայց նրա բերանով ճշմարտութիւնն էր խօսում:

Նրա բերած մեքենան առաջին տպագրական մամույն էր:

## 72. Քուն

Դիշերն եկաւ, աստղունքը ելան,  
լուսնեակն անուշ ցոլցըլաց.  
Ճաղկունքն ամեն նոր քուն մտան,  
ամպի ցողով, լուսնի շողով  
հարհանդմարմանդ քուն մտան,  
Դուք էլ քընէք, ոսկի աստղեր,  
վարդ ու բլուզ, քուն եղէք,  
օրօր-հովեր, շօրօր-հովեր,  
անուշ անուշ քուն եղէք:

## 73. Տպարանուն

ա.

Զւարթ և ուրախ է այսօր տպարանում: Կէս ամսուայ ոոծիկը բաժանելու օրն է, կարծես, սպիր աւելի պայծառ է փայլում, զբու շարների ձեռքերը աւելի արագ և աշխուժ են շարժում, տառերը շրենք իրենց են թռչում կատաների աչքերից և իրար կողքի շար ւում: Ամենքի երիտերին մի խորհրդաւոր ժաման է շողում: Մինչ անգամ գրաշար ծերուցի Միխօն, որ իւ ամբողջ ոռնիկը պիտի գիշեանունի, նու էլ է ժպառում:

Իսկ ներքենամ, ստորին յարկում, տպարական մեքենան էլ կար ծես աւելի ժիր է զղըրդում, և աւելի զիլ է հնչում տպիչ Գասպարի երգը:

«Չայնը հնչեց իրզրումի հոյոց լեռներէն...»

Զարմանալի տղայ է Գասպարը:

Ամեն աւաւոտ, թշերը կարմրած, ժայռուած աչքերով, գլխարիք դոծրակին քաշած, երեսը մարուր լւացած, Գասպարը ուղղակի վորոցից ներս էր վազում գրաշարանցը, մէկ շարքից միւսին անցնելով, աջ ու ձախ ողջունելով՝ «Բար լոյս, քեռի Յակոր, բարի լոյս, Միխօրին, բնկեր Կարապետ, գալուստ բարի», և առանց պատասխանի սպասելու շատպում էր կանգնում ծերունի Միխօրի առջև:

—Բարի աջողում, Միխօր ապէր, էս զիշեր ոնց էիր, կանակդ հօ էսօր էլ մի ցաւում:

—Զէ, չէ, Գասպար ջան, էսօր լա եմ, լաւ. շատ ապրես, աչքիս լոյս, և Միխօրի ճակատի խոր կնճիռները հարթւում էին և արիւնակալած աչքերում փայլում էր հայբական զըշւանքը:

Իր կաշտ ձեռքը մեկնում էր ու սեղմում Գասպարի փոքրիկ թաթը՝ Գասպարը իշում էր յած:



—Բարի լոյս, Սօնա բաջի, —կանչում էր նա գեղեցիկ տպագրական մեքենային: —Հանգուտացար, հա, իմ նազան:

Ու ժօտենալով սկսում էր քնքութեամբ շոյել մեքենայի մեծ անիւրը, կողքերը, յետոյ կաղում էր գոգնոցը, տանում էր ձէթի ամանը ու ձէթ ածում մեքենայի բոլոր ծակոտիկները; որ մեքենան փափուկ, անազմուկ բանի:

—Պառել ես, Սօնա բաջի, պատեհ, պասդ չես ուզում կոտրես... ու ու սուզով ես ժամ զալիք Շուռ արի, շուռ արի, տեսնեմ:

Մեքենապետը քմծիծաղ տալով, ականջ էր դնում իր աշկերտի պատախօսութեանը ու շարւածքը պարփակում, սարքում: Գասպարը անհամբեր սպասում էր, թէ երբ պիտի զայ իր հերթը, մեքենային թուղթ տալու ժամանակը Վերջապէս, երբ մեքենան պատրաստ էր լինում, Գասպարը կանգնում էր բարձր պատասխանի վրա ու սկսում էր թերթը թերթի ետելից հացնել, զարոել մեծ թմրուկի վրա: Մեքենայի մեծ անիւր հետզհետէ աւելի արագ էր պատում, թմրուկը աւելի շտապով էր թերթերը փախցնում, շարւածքը կրող տախտակը աւելի ոգեսրւած էր դնում զալիս, և հետզհետէ աւելի ոգեսրւած էր նշում պատառեան երգը:

«Սօնա բաջին վազում է, վազում է,

թուղթը թղթին դարսում է, դարսում է»:

Բ.

Եյս աւաւոտ աւանձնուալէս ախորժելի էր թէ մեքենայի զղըրն իւնը և թէ Գասպարի այդ երգը: Ծնրունի Միխօն, չը գիտեմ ինչ ու, երբեմ յանկարծ ժպտում էր ու փափսում: «Ապրես, շատ ապրես»:

Եւ այդ փափսուկին ամեն անգամ պատասխանում էր կողքին նողնած աշակերտ Գաւլէի չար փնթինթոցը.

—Զռում է... զռում է... ոնց է զռում:

Կերջապէս ծերունի Միխօն էլ չը համբերեց ու կանչեց:

—Սնւս, փուճ կենդանի, ձէնզ:

Պաւէն լոեց, բայց նրա թշերի ծայրերը մի բոպէ կարմրեցին և ործես աւելի զուրս ցցւեցին նիհար և գեղնած դէմքի վրա:

—Միխօն մի ըանի բոպէից յետոյ նա կամացուկ արտասնեց:

Ամեն մէկը վրէս բզտում է, ձեր ճորտն եմ, ինչ է:

—Հը, հը, իծաներդ հաւաքւում են, հա, —կանչեց նորից ծերունի Միխօն: —Հէրդ էսօր երեխ քիչ է դնօսել...

— Զէ, քոյրը անհաց տանից դուրս արաւ, — մէջ մտաւ միւս կողմից աշկերտ Մօսին, որ Պաւէի հարևանն էր: — Դրանց տանը ամրով օրը կուր է:

Պաւէն բան չը պատասխանեց. Նրա կատաղած աշքերը ուղղւեցին Մօսի կողմը, կարծես ողջողջ կուլ տալ էին ուղում:

Ներքեցից, մեքենայի բաժանմունքից լսում էր Գասպարի երգ: «Ալագեազ բարձր սար է, վայ լէ լէ...»

Չուրը հիւանդին դեղ է, վայ լէ լէ...»

— Մի քիչ էլ Գասպարի նման լինէիր, — նկատեց ծերունի Միխօն:

— Հա, Գասպարին հացի վրա քսեցէք ու կերէք:

— Լպսած-լպստած մի խօսի: Թամբալ:

— Թամբալը դուք էք, — վնթինթում էր Պաւէն: — Մէկ էս բեր, մէկ էս բեր: Արիւնս ծծեցիք, ծծեցիք...

Նա այսօր սովորականից աւելի մասյլ էր ու չարացած:

— Տանը դրան միշտ «Ժանդ» են ասում — նկատեց կրկին աշակերտ Մօսին, որ հէնց այդ ժամանակ կապած երեսներն էր ասնում սրբագրութիւնը հանելու:

Պաւէն էլ չը համբերեց ու այնպէս հրեց Մօսին, որ ամբողջ շարւածքը նրա ձեռքից դուրս պրծաւ, յատակին թափւեց:

Մի ծանր ապատկ իջաւ Պաւէի վզկոթին, մի ուրիշն էլ թշին: Ամբողջ վրաշարանոցը գլխին հաւաքւեց: Տպարանատէրն էլ երկաց:

— Ի՞նչ է, ի՞նչ է... Ո՞վ թափեց:

— Պաւէն, Պաւէն, — ծայն տւին ամեն կողմից:

— Լաւ, լաւ, գնացէք ձեր գործը շարունակեցէք, դրա հախիցը ես կը գտմ: Էս բոպէիս թափւածքը հաւաքի ու մինչեւ ամբողջը չը ցըւես, տուն չես գնայ:

Պաւէն լուս ու մունջ անշաբժ կանգնած էր. Նրա աշքերում կատաղութեան բոց էր վառում, բարակ շրթունքները կրծստում էր, բռունքները սեղմում, բաց անում:

Իսկ ներքեցից, մեքենայի բաժանմունքից հասնում էր տպիչ Գասպարի ձայնը.

«Ամպել է՝ թօն չի գալի,  
մթնել է՝ տուն չի գալի,  
վայ լէ, լէ, լէ-լէ ջան,  
վայ լօ, լօ, լօ-լօ ջան»:

Դ.

Վերջապէս հասու ոսճիկ բաժանելու բոպէն: Բոլոր բանւոքները գրաշաբանոցից, մեքենայական բաժանմունքից հաւաքւել էին գրասենեակը, շրջապատել սեղանը, ֆողերն էին ստանում: Գասպարը կատակներ էր անում մէկի, միւսի հետ: Պաւէն պատին կրթնած՝ մըսած մատներով ամուր տրորում էր իր քունքը:

Մէկ է դուռը լայն բացւեց, փողոցից թարմ օդի հետ ներս պըծաւ օդիի սոսկալի հոաը:

Շէմքին երեաց Պաւէի հայրը՝ հարբած, զզզզւած, վերարկուն թիմին զցած, անկարգ պղակը ծոծրակին, մէկ ոտք դուլպան ցած ընկած:

— Եկել եմ, եկել... — աղաղակեց նա, խազէյինը շէն կենայ, շէն, հայ հայ...

Ու տարուքերւելով մօտեցաւ տպարանատիրոջ սեղանին, բռունցը այնպէս խփեց տախտակին, որ վրայի թանաքամանը, մանր իրերն ու հաշւեմատեանները վեր թռան:

— Աղա ջան, դու շատ ապրես, եկել եմ, եկել:

Բոլորն էլ ծիծաղեցին: Ամեն ոսճիկ սաանալու օրը նա ձշտութեամբ երեսում էր գրասենեակում և ստանում Պաւէի վաստակը: Մի ժամանակ հին տպարաններից մէկում մեքենայի անիւր պտաեցնող էր եղել բայց այն օրւանից, երբ գրեթէ ամեն տեղ շարժիչներով կամ էլեքտրականութեամբ էին սկսել մեքենաները բանեցնել, նա զրկւել էր պաշտօնից և կնոջ մահից յետոյ՝ նարբեցողութեան էր գըլուխը տւել: Երբ ձեռքի փողը վերջանում էր, փողոցէ փողոց սրանից դրոշներ էր խնդրում, գինետները մտնում, հարրում:

— Հեռու, մի քիչ հեռու, — կանչեց տպարանատէրը, շտապելով նրա առաջը դնել Պաւէի ոսճիկը: — Վեր առ, գլխից ուադ եղիք:

— Բեր, բեր, էտ պէտլածները, զրանց հոգուն մեանեմ, — ասում էր հարբածը՝ մէկ-մէկ վերցնելով արծաթէ մանէթանոցները: — Ելի բեր, էստեղ չըրս է, չըրս...

— Երկուսը հանում ենք. էսօր հինգ երես շարւածք է թափել. նորից պիտի շարել տանք:



— Ո՞նց թէ թափել է... Ո՞նց թէ թափել է... Ո՞նց թէ համարձակւել է... Ես նրա հոգին...

Ու երկու բունչքները բարձրացրած, աչքերը արիւնով լցւած, հայրը դիմեց Պաւէի վրա, որ կծկած սպառում էր հարւածին. Եթէ բանտորները մէջ չը մտնէին, նա անպատճուռ տեղն ու տեղը կը պահեր տղին.

— Շարւածքն ես թափում, հա, սամանի ճուտ, հայս ես կտրում, հա... — հայհոյում էր նա:

Բանտորները հրելով, հրելով հազիւ հազ կարողացան փողոց դուրս հանել նրան. Դեռ երկար ժամանակ՝ մայթի վրա կանգնած, նա ըսպառում էր թէ խազէյինին, թէ Պաւէին և թէ իրեն վանդող բանտորներին:

Գասպարը շուռ եկաւ Պաւէին մօտենալու համար, բայց Պաւէն արդէն չկար. անհետացել էր եանի դռնով:

Դ.

Ցաջորդ օրը Պաւէն տպարան չեկաւ: «Երեի հայրը էնքան ծեծել էր, որ տեղից շարժւել չի կարողանում» — վճռեցին գրաշարները:

Կէսօրից յետոյ Գասպարը տուն էր վազում ճաշի, որ երեկոյեան ժամը 7-ին նորից գայ՝ իր հերթին բանի մինչև ժամը 10-ը լրագիրը տպելու համար. Նա նէնց տպարանի զիմացը, անկիւնի ետեռում, նըկատեց Պաւէին: Պատին կպած և մի մեծ քար ձեռքին՝ տպարանի ապակիներին էր նայում:

Գասպարը իսկոմ հառկացաւ նրա միտքը:

— Էստեղ ինչ ես շնում. Էսօր ինչո՞ւ չեկար:

— Ես էլ եկողը չեմ, տուն էլ գնացողը չեմ:

Այստեղ միայն Գասպարը նկատեց, որ նրա շորերը կեղտօտ են. Երեի գեշերը դուրսն էր անցկացրել:

— Արինս ծծեցին, ծծեցին: Զէ, էն բանը բերեմ նրանց գըլ իին, որ...

Ու քարը ձեռքից բաց թովնելով, Պաւէն արագ հեռացաւ պատի տակից և խանեւց անցնող ամբոխի հետ:

— Երնէկ իմանամ՝ ինչ է ուզում անի, — ասու ինքն իրեն Գասպարը:

Երբ մընեց, նա մի կէս ժամ առաջ եկաւ տպարան: Բակը մըտնելիս նրան այնպէս թւաց, թէ մի ստեր թաք կացաւ դարպասի ետեր: «Չը լինի թէ Պաւէն է», — մտածեց նա:

— Բարի իրիկուն, Սարգիս ախպէր, — ասու նա տպարանի պահապան ծառային, որ ազոտ լուսով աւլում էր մեքենայի բաժանմունքի ջրած յատակը: Բարի իրիկուն, Սօնա բաջի:

Մի ծանրութիւն ճնշում էր Գասպարի սիրտը: Սուս ու փուլ բարձրացաւ մեքենայի պատւանդանի վրայ, շոյեց թմբուկը, արմունկը կը թնեց վերի տախտակին և խորը մտածմունքի մէջ ընկաւ:

Նա մտածում էր Պաւէի մասին: Ինչու Պաւէն երբէք չի ժըպտում, ինչու երեսը միշտ այնպէս չտր է. միթէ հիմա տանը չէ:

Մինչև անգամ մեքենապետը նկատեց Գասպարի լրջութիւնը:

— Հը՛ ինչ է պատահել, ինչու չես երգում: Յոզնել ես:

— Աչինչ, պատանխանեց աշկերաք և սկսեց լուսաւորել լրագիր շարւածքը, որ մեքենապետը սարքում էր երկաթէ տախտակի վրա:

Վերջապէս շարւածքը սարքւած էր. Խորը լուսիթեան մէջ լսեց մեքենայի ծանր գնալ-գալը: Գասպարը կանգնեց իր տեղը, պատւանդանի վրա և սկսեց թուղթ հասցնել: Վարպետը մի քիչ կացաւ ու համոզւելով, որ ամեն ինչ կարգին է, իր սովորութեան համեմատ բարձրացաւ վերև՝ գրաշարանոց. հերթապահ գրաշարի հետ զրոյց անելու:

Ե.

Գասպարը մնաց մենակ ու ականջ էր դնում մեքենայի շքեւը լսեցին: Նրան թւում էր, թէ Սօնա բաջին տխուր կրկնում էր.

— Ի՞նչ ծանր է, ինչ ծանր...

Մէկ էլ կամացուկ դրսի դուռը բացւեց ու ներս մտաւ Պաւէն: Նա բոնած ունէր մի ահապին կտոր երկաթ, որ միշտ ընկած էր լինում ապարանի բակում, և արագ մօտենալով մեքենային՝ ուզում էր գցե հէնց տախտակի վրա, ատամնաւոր անիւների տակ ու փշրի ամբողջ մեքենան:

Մի ակնթաքթում Գասպարը վայր թռաւ պատւանդանից ու առաջ քան Պաւէն կարողանար իր մտադրութիւնը կատարել, բռնեց երկաթի ծայրից և սոսկալի ուժով քաշեց, նետեց մի կողմ: Այս ժամանակ Պաւէն յարձակւեց նրա վրա, որ նրան գցի էլեքտրականութեամբ ինքն իրեն շարժւող մեքենայի տակ:

Բայց Գասպարը շատ աւելի ուժեղ էր. Նա զորեց Պաւէին ու վրան պառկեց:

— Դու... դու... ուզում էիր... մաշինէս...

— Մաշինէդ էլ, դու էլ, բոլորդ էլ... ասում եմ ձեզ... արինս ծծեցիք, արինսս:

— Ո՞վ է ծծում, մաշինէս:

— Գրաշարները, խազէյինը, հայրս... Թող, ասում եմ քեզ, թող,  
թէ չէ կը կծեմ.

— Կծի, բայց չեմ թողնի քեզ, գժւմը ես, մաշինէս քեզ ի՞նչ է  
արել:

— Նա է էս դժոխքը պահում, նա:

— Խիղճդ կորցրել ես, Պաւէ: Բոլոր բանւորներին հօ անբախ-  
տացրիր, այ տղայ:

— Թող, թող, կերթամ, կերթամ, էլ չեմ դայ: Զուրը կընկնեմ:  
Գասպարը յանկարծ նստեցրեց Պաւէին ու՝ նրան ամուր գրկած՝  
բացականչեց.

— Ի՞նչ ես ասում, խեղճ Պաւէ: Դու հիւտնդ ես, խելքի եկ:

— Թող, կերթամ, էլ չեմ դայ... չեմ դայ:

— Չեմ թողնի: Երեխ սոված ես. քեզ էոր էլ ծեծեցին, հա. — հարց-  
րեց Գասպարը այնպիսի կարեկ-  
ցութեամբ, որ Պաւէն էլ չը դի-  
մացու. ու ոկտեց հեկեկալ, շարու-  
նակ կրկնելով.

— Թող... ասում եմ... թող:

— Հանգստացի, հանգստացի, —  
մեղմութեամբ և գդանքով ա-  
սում էր Գասպարը, իսկ մեքենան  
գնում էր գալիք ու նոյնպէս շը-  
շընջում.

— Հանգստացի, հանգստացի:

Ոչ ոք չիմացաւ, թէ ինչ կա-  
տարւեց այդ գիշեր ստորին յար-  
կում, մեքենայի բաժանմունքում:  
Ասաւոտեան վարպետ Միլոն շատ  
զարմացաւ, երբ տեսաւ, որ Պաւէն իրենից առաջ եկել գործի եր  
կանգնել, զարմացաւ նոյնպէս թէ ինչու Գասպարն ու Պաւէն այդ  
օրը առանձին սիրով իրար բարեեցին:

Բայց աւելի զարմացաւ ծերունին, երբ լսեց թէ ինչպէս իր կտղ-  
քին «Ժանդ» Պաւէն կամացուկ կրկնում էր ներքենից հասնող երգի  
եղանակը.

«Սօնա բաշին վազում է, վազում է,

թուղթը թղթին դարսում է, դարսում է»...



## 74. Խեցեսորքն ու զորտը

Մօրդ գլխին հող ու մոխիր,  
անուշ որդիս, քայլըդ փոխիր.  
որդի ծնայ,  
կրակն ընկայ.

ծուռտիկ-մուռտիկ որ ման չի գայ  
միահանգի,  
ոիրտ կը ճաքի,  
ասաւ ձագին խեցեմորթը:  
Լոեց գորար,  
ասաւ. «Քուրիկ,  
գու էլ հերիք...  
կուզես պահի, կուզես մորթի,  
ծուռտիկ մօրից ծուռտիկ որդի:

## 75. Պայրուն հանքուն

Ես բանում էի հանքի խորքում, գործիքովս քանդում էի ապա-  
ց: Ընկերս ծալալտափիկ նստած ճրագը ձեռքին լոյս էր անում:  
Յանկարծ մեր ականջին հասաւ մի խոլ հեռաւոր գղրդիւն:  
— Ի՞նչ էր, — բացականչեց ընկերս, ոտի կանգնելով վախեցած.  
Մեր մօտից մի մարդ անցաւ վագէվազ. նա հեռամ էր:  
— Ի՞նչ էր կանգնել անշարժ, — գոչեց նա առանց կոնդ առնելու,  
սեցիք... գազի պայթիւնը... Շուտ փախէք դուրս:

Եւ անհետացաւ: Նոյն վայրկեանին մեր ճրագները հանգան և  
թաղւեցինք թոնձը խաւարի մէջ: Օդը սաստիկ խեղզող դառաւ:  
Գլխապատառ վազում ենք, սայթաքելով ամեն մի քայլափոխի:  
Բայց ուր ենք վազում: Մեր աջ ու ձախից ձկում են անհա-  
լորուն անցքեր, գալերիներ, որոնք նոյնպէս թաղւած են խա-  
մէջ. նրանց վրա գտնւում է նոյն տեսակ մութ գալերիների  
ուրիշ շարք, ապա երբորդը, չորրորդը: Ի՞նչպէս գտնենք մեր ճա-  
րագնը այդ ահազին լաբիրինթոսի մէջ: Եյս սոսկալի ստորերկրեայ  
ուրարչում, երբ զրկւել էինք մեր անբաժան ընկեր՝ լապտերի լոյ-  
Սովորական ժամանակ այդանդ դէս ու գէնից լուսաւոր կէտեր

Ներկում, բանւորների լապտերները. Իսկ այժմ... Մարել են մեր  
այդ կենսատու ասողիկները, իրենց հետը տանելով մեր կեանքն ու  
մեր յոյսերը:

Վազում ենք սակայն, Յանկարծ մեր առաջ թանձր ծուխի մը  
պատ է բարձրանում. Մասյլ, գարշելի հոտ ունեցող խաւարը պատել  
է մեզ չորս կողմից, այրում է մեր դէմքերը. Դուխս պայոյտ է գա-  
լիս: Խեղդւելու վրա ենք: Եւ խելագարի պէս ես ենք վազում այ-  
դժոխքից:

Բայց ուր էլ որ զնում ենք այդ անթօած ղազմը առաջ  
ի պատնէշի նման մեր ճանապարհը կտրում են ու ետ հրում։

Միկնոյն տեղում չենք կարսդ մոայ, դէս ու դէս ենք մաս և ում, պըջաւմ, պտուռում այդ մութը հանքում, որը չի ուղում մեղքաց թաղնի ու պէնդ բռնած պահում. է մեզ իր մոայի ճիրաններում:

四

Բոլորովին յոգնած և յոյսս կտրած՝ ես մեքենաբար ձեռքս ու  
նում եմ գրապանց:

Ի՞նչ կայ այստեղ. Ժամացոյցը, մի հասարակ պարզ ժամացոյցը ժանգուած ու մաշտած, որի վրա հանդը մի անջնջելի զբոշմ է դրեա ճառ պատճանաի է. այդ ժամացոյցը այժմ ի՞նձ վրա մի տար

Բայց զարմանալի է. այդ ժամանեցնելու անում:  
բնակ տպաւութիւն է անում:

Նա միակն է այս քոսով մէջ, որ մի կանոնաւոր, խելացի է  
և ներկայացնաւմ: Նա մեզ միացնում է ամբողջ աշխարհի հետ: Ա  
չեխը խելոցը զարմանալի կերպով ինձ հանգստացնում է ու սիր  
տալիս: Նա կենցանի է, նա խօսում է: «արծես ասում է ինձ. Չո՛  
կաց, սիրելիս, խելքդ մի կորցնի, աշխատի. աշխատի յարառեւ և  
նոնաւոր, և կը փրկեմ...»

Այս այդ բարեբար ըստչեկոցը

կ. լր, այդ բարեգութեաւ մեզ այդ օքերի գերեզ  
իշխան նա սփսփել է մեզ ըոլորիս մեր այդ օքերի գերեզ  
նային զաժայ, կեանքի ժամանակ, երբ մենք ռատափի սովի, ծար  
ու յոդնածութեան ազդեցութեան տակ կատարեալ յուլահատութ  
էինք հասնում, Մեղանից ամեն մէկը վերցնում էր նրան, շոյ  
փայփայում, ականջին դնում, լսում ու անփերջ լսում, և չէր ուժ  
ուառ բաժանուի, կատարեալ երեխայ էինք դարձել:

Ես շուտ-շուտ ժամացոյցս լարում էի, որ չը կանգնի:

4

Փամացոյցին չըխկչըխկոցը վերադարձեց ինձ սառնարտութիւնս:  
— ԶԵ, աէտք չէ որ լուսահատւեմ, — ասի ինքս ինձ:

— 25, պէտք չէ որ յօւսահանուն, Վճռեցի յօյսի մի  
Ըսկերներս անշարժ պառկած էին յօւսահատ. Վճռեցի յօյսի մի  
վառեմ նուանց սրտում և ստիպեմ շաբթւելու:

— Հանգիք, ընկերներ, մեզ կանչում են. հանքը զարկում են, —  
այսի ես:

«Հանքը զարկում են»։ Ինչ գրաւիչ խօսքեր մեզ պէս կորած, նօթե կտրւած մարդոյ համար։

Դա նշանակում էր, որ այնտեղ, վերևում, ուր որ փայլուն արեւի շոյսում է երկիրը իր տաք ոսկեզօծ ճառագայթներով, այնտեղ

Են մտածել են մեր մասին և ամեն ջանք գործ են դնում մեզ  
առելու:

զառ պահելու և յորդորելու, որ մենք համբերութեամբ տասուսը  
բայր նեղութիւնները, մինչև որ մեր փրկիչները զան հասնեն մեզ,  
շահու պատիկը հառորդակութեան մի միջոց է, իր տեսակի մի

Հանքը զարկելը հաղորդապյութամ սր սիչց է, իբ առաջ ու ախօս, ի հարկէ շատ աւելի պարզ ու հասարակ։ Նրա միջոցով քահանները իմացեն տալիս իրար, երբ մէկի հետ դժբախտուն է պատահում, զարկելով այդ նպատակով շինւած խողովակը, որ է միացնում գալերիները։ Նոյն բանն են անում վերեի յարկից անգլածների մասին տեղեկութիւն ունենալու համար։

Եւ տեսէք, ինչ տարօրինակ բան է մարդու երեակայութիւնը ձայնը, որ գոյութիւն չունէք, նրանք բոլորն էլ պարզ լսում էին

Արագ ոտի թռան, և նորից ճանապարհ ընկանք:

7.

Գնում ենք անվերջ նեղ անցքերով, բարձրանում ենք, իշխում  
բազկում, սահում:

Գալերիի վերի մասում մի ինչ որ պատճեղի ենք հանդիպում և ուզերս շշափում ենք և ամբողջ մարմնով ցնցւում։ Դա դիակները ի ամբողջ դէղ է կուտակւած և դէպ ու դէն ցրւած։

Դիակոները գեռ ստուած չեն. Պարզ էր, որ մեր գալուց քիչ առաջ ին մաել իրենց յաւիտենական քունքը. Խեղճեր. երեխ նրանց բանե

լու տեղը շատ մօտիկ է եղել պայմանագիր և մեզանից շուտ են ենթարկել վատ դաշերի ազդեցութեանը: «Անշուշտ մեզ էլ նոյն վիճակն է սպասում մօտ ապագայում», — մտածում եմ ես և դրձեալ ցնցում:

Շտապով թողնում ենք այդ սոսկալի վայրը և գնում... անվերջ դնում:

Ոտներս տանում են ինձ բոլորովին մեքենաբար. Էլ չը գիտեմ, թէ որտեղ ենք դտնուամ մենք, ուր ենք գնում. Մաքերը չեմ կարողանում կենարուացնել մեր զրութեան վրա, որ որոշեմ անելիքս: Շարունակ մտածում եմ իմ սիրելիների մասին. արդեօք բախտ կունենամ նրանց նորից տեսնելու: Ինչքան լաց է լինում երեխ կիսա փոքրիկիս զրկած, ինձ անշուշտ կրած համարելով:

Բոլորս լուռ ենք, տիսուք մտածմունքների մէջ խորառուց ւած:

Յանկարծ մեր տռաջ մի բան և շարժում մթութեան մէջ: Եւ լուռում է մի ձայն, մի մարդկային ձայն, ոցի մէջ մի անսահման ու բախտին էր հնչում:

— Ահա, ահա. գալիս են մեղ ազտակու:

Եց մի ձայնից յետոյ լուռում է երկրորդը, երրորդը: Նրանք հինգ հոգի էին: Տեղներիցը վեր են կենում և փազում զէպի մեզ:

Մթութեան մէջ վիճուռում ենք իրար, ձեռներս պարզած, աշքակազուկ խաղացազ երեխաների նման: Տալիս ենք մեր անունները և յայտնում, որ մենք էլ նրանց նման հանրի զժրախտ բանտարկեալ ներ ենք: Դժւար է նկարազել խեղձերի յուսախտութիւնը...

Սուածարկեցինք, որ մեզ միտնան ու դնանք մթախն հանքի ելքը փնտելու: Ծի գտանք... Բուան որ գետնի տակ խաւարի մէջ անտանելի տառապելուց յետոյ ելքը գտանք:

## 76. Գիշեր

Սիրուն պատկեր. պահզ գիշեր էր, և օգեղէն ովկիանում փայլում էին անթիւ աստղեր. Բնչ ուրախ էր սիրուս զարկում: Հազարաւոր ծաղիկներ վառ անուշութիւն էին բուրամ

ցողի համբոյը կենարաբ բնութիւնն էր զովացնում: Եւ ես անխռով երգում էի, ու իմ փրգս խիստ մաքուր էր. աղատութիւն էի երգում. հայրենիքի կարօտ ու սեր:

## 77. Թշնամիները

ա.

Ճակատահարտը վերջացաւ: Հեռում գեռ լսում էին թնգանօթների զըզիմը և յաղթանակող զօքերի համազարկներն ու փողերը: Կուտի դաշտում կոտրուած սայլերի, թափթփած հրացանների, փշրւած որերի, քանդւած չափարների մէջ ընկած էին սպանւածների կոյտեր, մարդկանց ու ձիերի զիակներ, այսնդակւած, յօզոււած. այդ կոյտերի միջից տեղ-տեղ լւում էին վիրաւորների խոր հառաջանցները:

Մի չորացած աւելի եղերթին, խիստ եղինջի մէջ, իրարից ոչ հեռու զառկած էին երկու զինւոր, երկուան էլ ծանր վիրաւորւած:

Նրանց համազդեստները տարբեր էին: Մի քանի ժամ տռաջ զեռ կատագի թշնամիներ էին, իրար դէմ կանգնուծ, պատրաստ ու իններով միմեանց խոզիսողելու, իսկ այժմ...

Այժմ լուռ նայում էին երար և այնպէս ուզում էին խօսեն, զոնէ մի բան ասենց բայց ափսոս որ իրար լեզուն չէին հասկանում: Յանկարծ աւելի երիտասարդը դժւարութեամբ մի երկու քայլ հոգիւ սուսող տալով մօտեցաւ իր թշնամուն և մեկնեց նրան իր պինու սրբակը. յետոյ էլ աշխատում էր թաշկիսակով կտրի նրա վերքից հոսող որիւնը Բայց ոչինչ զուրս չեկաւ, սիայն ինքն աւելի թուլացաւ ու զառկեց: Երբեմն մէկը, երբեմն միւսը ճիզ էին թափում վեր բարձունալու: Մի քիչ թեկ վրա, օգնութեան էին կանչում, բայց նրանց կանչերին մօտերքից պատասխան էր տալիս միմիայն փորը ճղւած մի ժուռ աղեկտուր երինջը:

Վերջապէս երիտասարդը յոգնած և թուլացած քուն մտաւ:

Վրա հասաւ պարզեկայ գիշերը. ցուրտ քամին գալիս փչում էր հեռաւոր լեռներից: Կուի գաշտում աւելի ու աւելի նւազում էին հառաջանքները. վիրաւոր ձին էլ չէր խրխնջում...

Կէս գիշերին աւելի տարօք վիրաւորը կրկին մի փորձ արաւ նստելու, բայց ի զուր. արդէն բոլորովին արիւնաքամ էր եղել: Մահան սառնութիւնը ոկտել էր պատել նրա մնդաները...

Աշքը գցեց իր հարեանի վրայ երիտասարդ վիրաւորը քնած էր խոր և մի տեսակ ակածայ կուչ էր եկել գիշերւայ կտրող ցրտից:

— Պիտի սառչի, — անցաւ հասակաւորի մտքովը. — անպատճառ պիտի սառչի խեզը. ինչպէս էլ երիտասարդ է...



Երբ արշալյսի գէմ վիրաւորներին հաւաքող խումբը մօտեցաւ նրանց, երիտասարդը զարթնեց, ուղեց բարձրանալ ու զարմացաւ, որ իր վրա մի վերաբկու կար գցած:

Նայեց շուշջը, նայեց հարեանին: Հարեանը մեռած էր և պառ կած առանց վերաբկուի, նրա վերաբկուն էր իր վրա:

Տէր Աստւած, Բնչ չարչարանք կրած պէտք է լինէր այդ հոգի վարքի մէջ արիւնաքամ եղող մարդը, մինչեւ որ վերաբկուն հանել կարողանար ու ծածկէր մօտը պատկած վիրաւորի վրա:

Երբ երիտասարդին բարձրացնում էին որ տանեն, նա խորի յուզմունքով ու երախտագիտութեամբ նայում էր «Թշնամու» տանը և ու կարկամած երեսին ու չէր կարողանում հայեացքը հեռացնի նրա կիսախուժի մարտ աչքերից:


## 78. Անիծած հարսը

Վաղ ժամանակ մի հայ շէնում  
մի յարգնոր հարսն է լինում:  
Նըրա բերնից՝ կեսուր-կեսար  
չէին տեսել մի շունչ, մի բառ,  
չէին լսել շուրթը մի օք...  
Էսպէս խոնարհ ու յարգնոր,  
մի օք մենակ օգում նըստած,  
իր ճոխ մաղերը արձակ թափած,  
աղտա, անփոյթ սանրում, հիւսում,  
հետն էլ ձէնով երգ էր ատում.

«Աշխարհքը բանտ,  
մէջը պնբախտ  
ես մի գերի անթնդում.  
սիրուն շոբեր,  
ջահել օրեր  
Բնչ եմ անում էս բանտում:  
էրնէկ ծըտին,  
ճիւղքի միջին  
ծըլւլում է, թըրթըռում,  
թըռչում սիրած  
ընկերն առած,  
աղանու, կանաչ արտերում:  
Ա՛խ սկը ըլի,  
շըւի, փըի,  
ծընւած օրը աղջկայ,  
ցաւ ու խնդում  
փակւած սըրտում,  
ծիծաղ չըկայ, «ախ չըկայ...»

Մին էլ յանկարծ բացւեց դուռը  
ու ներս մըտաւ ծեր կեսուրը:  
— Յօ, պօ, պօ պօ, կանչեց իեղձը,  
գետին պատոի, մըտնեմ մէջը...  
— Յոպոպ գաննաս,  
անամօթ հարս:  
Մի տես, մի աես,  
թէ լըրբի պէս

գըլուխը բաց,  
ազատ նստած  
ոնց է կանչում,  
չի ամաչում...  
Լեզուդ լաւիկի,  
մազդ թախքի,  
գըլիիդ կըպչի  
սանրը միջիւ  
Ասաւ չասաւ՝  
մին էլ տեսաւ՝  
սանրը գըլիին  
հարսն առաջին  
յոպոպ գառաւ,  
երդկից թուաւ  
ու վերացաւ,  
վեր, հեռացաւ:  
Էն էր ու էն.  
խեղճն էն օրէն  
հանդերն ընկած՝  
յոպոպ մընաց,  
միշտ էլ էն հին  
սանրը գըլիին,  
չալիկ մալիկ,  
լեզուն լալիկ,  
անխօս ու լուս,  
մսլնը, արխուր:  
Բայց երբ յանկարծ  
միտն է գալիս,  
որ գըլիարաց:  
երգ ասելիս՝  
իր կեսուրը  
բացեց դուռը,  
վեր է թըռչում  
սըրտատըրոփ  
ու դեռ ճըչում.  
— Յո-պոպ... Յո-պոպ...



## 79. Անիի աւերակնորը

Մեծ տափարակ հարթ տեղ բաց է լինում յանկարծ տեսնողի առաջին, մէկ մեծ դաշտ, չորս կողմք սարերով պատռած:

Քանի գնում է մարդ, ամպ ու մառախուղ քաշւում, պարզում են, հէնց իմանում ես՝ թէ առաջիդ մէկ էնապէս քաղաք է բաց լինում, որ հազար հազար կենող միջումն ունի, ու ցըտի կամ շոզի ձեռից յոգնած՝ ուզում ես, որ շատպես, զնաս մի աստածասէրի զուան վէր գաս, հանդսանաս, ել ետ ճամփէդ բռնես, զնաս:

Մէկ տեղից ահագին բերդի պարիսպն է քեզ խարում մէկ տեղից զարմանալի եկեղեցիների զմբէթներն ու մեծութիւնը, միւս տեղից բարձր մինարէները, պայտա ու ասղարանի գլուխները: Մաքումդ ասում ես՝ թէ էս տհսածդ մէկ մեծ զօրեղ թագաւորի գահ պէտք է լինի, էստեղ ոսկի ու արծաթի աղբի հետ պէտք է խառն ընկած լինի, էստեղ օրը հարիւր, քարւան ներս մտնի, հարիւրը դուրս գայ, հէնց իմանում ես թէ ցերեկը փոշին ու մէզն է աչք բռնում, գեները մութն ու խաւարն է քեզ խարում, որ մարդ, շաւնչ, անառուն չես տեսնում, հէնց դիակեր ագռաւներն են աչքերիդ սկին տալիս:

Մարդ չը կայ մօտղ՝ որ հարցնես, զիր չես կարդացել՝ որ իմանաս, Մաքիդ հետ ընկած, տեսածդ հրաշք կածելով կամ աչքակապութիւն, որ յանկարծ զլուխող չես բարձրացնում, մարմինդ դող է ընկնում, կռներդ թուլանում: Հէնց իմանում ես թէ մէկ վիշապ կամ մէկ թշնամի հէնց նոր է մտել ու բոլոր եկողներին կամ կուլ տւել, կամ սուրը քաշել, կամ գերի առել, ինքն էլ փախել, ուզում ես, որ աչք խփես ետ դառնաս:

Մէս, չէ չէ, ետ մի դառնայ, Էստեղից ծուխը քոնի հարիւր տարի է, որ կարւել է. կաց, մի վախենա. անշունչ քարերն ու եկեղիները մարդակեր չեն: Աչքդ բաց արա, սիրադ քեզ հաւաքի: Էս նըրատաշ աաճարները, էս ահագին բերդը, էս քարերը քեզ կասեն թէ սա է գոռոզ Անին, քո թագաւորների հզօր մայրաքաղաքը, որ մի ժամանակ էնքան էր իր հարստութիւնովը, իր փառքավը փարթամանել, ճոխացել ու մեծամտել:

## 80. Եղի ուրին...

Եղի ուրին  
զարթնեց լոփն  
ու աղբիւրը զրընդաց,  
խենթ ազմուկով,  
աղաղակով  
գետն է վաղում որընթաց:  
Ու սուերը  
զով թեկոր  
կանաչներին է փրում,  
ճանճ ու ըզգէզ  
զըժւածի պէս  
խաղ են անում զեփիւսում:  
Թոշունի երգ,  
ձորում համերգ,  
եղէգների ծածանում,  
քամին բոյրով,  
հրապոյրով  
ծառերն է մեղմ տատանում:

## 81. Ի թնու մեքենագիտը



Տասնընթերութը տարեկան Գէորգ Ստեֆանոսնը վերակացու էր նշանակւած ածխահանքի ջրհան մեքենայի վրա։ Մի շատ պատասխանատու մաշտոն. պէտք է հսկեր որ ջուրը չը հաւաքւի հորերում և ստորերկեայ անցքերում և այլատող բանորներին չը խեղդի։ Զրհանը պիտի անընդհատ և կոնուաւոր գործէր։ Գէորգը վազու էր երազում այդ պաշտօնի մասին այն ժամանակւանից, երբ գեռ փոքրիկ մանուկ գալիս էր իր հօմու, որը մի այդպիսի մեքենայինցի կրակ վառողն էր։ Այժմ սիրահարւած էր մեքենային՝ Գէորգ ուշադրութեամբ ուսումնասիրում էր նրա կազմութեան ամեն մանրա մասնութիւնը, երբ աշխատանքները վերջանում էին և ընկերներ շտապում էին պանդոկները թուղթ խաղալու, աքլոր կռւեցնելու կազինի խմելու, նա քանդում էր իր մեքենան, մաքրում բոլոր մասնիկ ները ու նորից սարքում։ Եւ մեքենան միշտ կարգին էր բանում Բայց Գէորգի սուր աշքը նկատել էր նրա կազմութեան մէջ մի քանի թերութիւններ. պատանին շարունակ մտածում էր՝ չի կարելի արդեօ մի կերպ կատարելագործել մեքենան։ Նա ուզում էր ծանօթանա ուրիշ տեսակի ջողեշարժ մեքենաների հետ ու մի ինժեներից խնդրել այդ մեքենաների նկարները։ Ժամեցով զննում էր այդ նկարները բայց ոչինչ չէր հասկանում։

Երբէք նա այդպէս սաստիկ, այդպէս խորը չէր զգացած ի անուսում լինելը. զրել-կարդալ անգամ չդիտէր։ Եւ իր մէջ նա հաստատ վճռեց զիր սովորել։ Նրա բախտից այդ միջոցին մօտակայքում մի ուսուցիչ դպրոց էր բաց արել. Ստեֆանոսնը նրա օգնութեանը զիմեց ու շաբաթական մի տասը կոպէկ վճռելով՝ սկսեց զառնել։ Երեկոները, հէնց որ պաշտօնավարութիւնը վերջացնում էր

խկոյն վազում էր այն գիւղը, որտեղ զպրացն էր, և փոքրերի կողքին նստած մի երկու ժամ պարապում։ Բանւորները ծիծագում էին նրա վրա, երեխաները զպրոցում ծաղրում էին, բայց Ստեֆանոսնը ուշը չեր գարձնում, և ձմեռուայ վերջը արգէն կարողանում էր զրել ու կարգալ և թւաքանական չորս գործողութիւնները կատարել... Իր ուսուցիչը այդքանից աւելին չը գիտէր։

Բ.

Այժմ գրքերը բաց էին Ստեֆանոսի առջև։ Բայց իր օրական վաստակով հազիւ կարողանում էր միայն տնային անհրաժեշտ ծախսերը հոգալ. զիրք առնելու էլ փող չէր մնամ։ Բայց Գէորգը վիատել չը գիտէր։ Իրեն յատուկ հնարագիտութեամբ նա ինքն իրեն կօշիկ կարկատել սովորեց և ազատ ժամերին սկսեց կօշկարութեամբ պարապել։ Պատւէրները անպակաս էին, և վերջապէս նա կարողացաւ այնքան ետ գցել, որ իր ինայած գումարով զնեց մեքենագիտութեան վերաբերեալ հարկաւոր առաջին գիրքը։

Տարեցտարի նրա տնային ծախսերը աւելանում էին։ Պակւել էր ու շուտով մի զաւակ էլ ունեցաւ, որին նորերտ անւանեց։ Հարկաւոր էր աւելի վաստակել։ Ճշմարիտ է, ունիկն էլ հետզիետէ աւելանում էր և աւելի ու աւելի բարդ մեքենաների վարելն էին նրան յանձնում, բայց զրա հետ միասին աճում էր և նրա ընածին ուր էէպի մեքենագիտաութիւնը։ Նա մի սոսկ բանուոր չէր, այլ միշտ կապարելագործումներ էր մտցնուած իրեն յանձնուած մեքենայի մէջ, ունը փորձեր էր անում, փոքրիկ մօղէներ շինում, նոր մեքենաներ նարում, ուրիշների զիւտերին հետեւում... Հարկաւոր էին զրեկը, նկարներ, փորձերի համար նիւթեր, իսկ զրանց համար անհրաժեշտ էին միջոցներ։ Գէորգը ազատ ժամերին, բացի սոնամաններ կարեւուց, ժամացոյցներ էր նորոգում, շորեր էր ձեռում, նոյն իսկ բեռ կրում։ Ու միաժամանակ շարունակ սովորում էր։ Նա չը զադացեց իր սիրած մեքենապիտութեամբ պարապելուց, երբ պաշտամ կինը վախճանեց, հայրն էլ շուտով կուրացաւ և ուրիշ փորձութիւններ եկան զլխին։

Գէորգը հետեւում էր նոր լոյս տեսած զրեկին, գործազրում էր նօրագոյն զիւտերը, ամեն մի հանգիպած բանագէտ մարդուց աշխատում էր մի բան սովորի։ Ստեֆանոսի անունը բարձրացաւ մանաւու մի դէպէից յետոյ, երբ մէկ շաբաթւայ մէջ ուղղեց մի ջրհան

մեքենայ, որը կարգի բերելուց հրաժարւել էին արդէն բոլոր գիտնական և ուսումնական առաջ ինժեներները։ Նրան՝ իսկոյն յանձնեցին մի աշխատի արդինաւոր պաշտօն։ հարեան ածխահանքերից ու գործարաններից սկսեցին դիմել նրան ու գործնական խորհուրդներ հարցնել։

Բ.

Այդ ժամանակ արդէն մի միտք հանգիստ չէր տալիս նրան ու համակել էր նրա ամբողջ հազին։ Մտածում էր մի այնպիսի մեքենայ շինի, որ կարողանայ ջողու օգնութեամբ ամենածանր բեռները փոխադրել հեռաւոր տարածութիւններ։ Նա արդէն հարել էր մի այդպիսի տեղաշարժ, բայց գա դեռ շատ թերութիւններ ունէր. պէտք էր շարունակ կատարելագործել։

Թորերտ որդին արդէն 12 տարեկան էր. հայրը նրան տւառ նիւկէստլի լաւագոյն գպրոցը։ Ամեն առաւոտ էշը հեծած՝ որդին գընում էր քաղաք և երեկոյեան վերադառնում, պատմում էր հօրը, ինչ որ գպրոցում այդ օրը իմացել էր։ Եւ գա մի սովորութիւն դարձաւ, որ այնուհետեւ տարիներ շարունակւեց։ Այդոյիսով Թորերտը եղաւ իր հօր ուսուցիչը։ Ամեն շաբաթ տղան բերում էր գպրոցի կամ գիտնական մի ընկերութեան դրադարանից հօրը հարկաւոր գըրեերը, իսկ եթէ թանկագին և սակաւադիւտ կրատարակութիւնները տուն չէին տալիս, ինքը ուշադրութեամբ կտրդում էր, քաղածքներ անում և նկարները արտանկարում։ Որդին, որ հօրից պակաս չէր սիրում մեքենագիտութիւնը, այդ նկարներով կարողանում էր հօրը բացատրել ամենաբարդ մեքենաների կազմութիւնն ու գործածութիւնը։ Առանց քաշւելու, անկեղծ յափշտակութեամբ հայրը սովորում էր որդուց այն, ինչ որ բախտը հնարաւորութիւն չէր տւել իրեն ու գորելու։ Բայց և որդին անդնահատելի տեղեկութիւններ էր ստանում էր հօրից գործնական մեքենագիտութիւնից։

Այժմ տեղաշարժի կատարելագործութիւնը աւելի արագ ու աջադ էր առաջ գնում. Հետզինետէ մեքենան աւելի արտգ էր ման գալիս և աւելի ծանր բեռներ էր քարշ տալիս ու ելմներով։ Դիանական ինժեներները դեռ ծաղրում էին «ինքնուսին» և նրա գիւտը չէր ընդհանրանում, բայց գործնական մարդիկ հատկանում էին երկաթուղու գիւտի նշանակութիւնը և երբ ընկերութիւն կազմեց՝ կիւերպուլից Մանչեստրի գիծ շինելու համար, հիմնադիրները Ստեֆանոսին հրաւիրեցին որդիս կառուցանող Գիտնական ինժեներները գրում և ծաղ-

րում էին իրենց թերթերում. «Ի՞նչ կարող է աւելի անհեթեթ ու ծիծաղի լինել, քան այն միտքը՝ թէ աեղաշարժները ձիուց աւելի արագ են ման գալու»։ «Թող Ստեֆանոսը չափաւորի իր երևակայութիւնը, եթէ չի կամենում, որ իրեն խելազար ճանաչեն ու փակեն գժանոցում։ Բայց Ստեֆանոսը չէր ընկնւում։

Դ.


Դրանից առաջ էլ Ստեֆանոսը շինել էր մի երկու կարճ երկաթուղիներ։ Բայց այս մէկը հսկայական գործ էր, Պէտք էր երեսուն վեցամս երկայնութիւն ունեցող խոր ճահճի միջով ճամփի թումբ անցկացնել, լեռները ճեղքել. տունէլ ծակել, 64 կամուրջ շինել, որոնցից մէկը շատ մեծ և շղթաներից, Այսպիսի դժւարութիւնների ինժեներական արհեստը զեռ չէր յաղթած։ Ստեֆանոսը հսկանում էր, որ այդ շնուրութեան աջադութիւնիցն է կախւած իր գիւտի տպագան։ Նա ամեն, աեղ էր, նախազծում էր, հսկում, օրինակ տալիս; ամբողջ օրը ոտի գիւտ էր։ Նրա ձեռքի առկ աշխատում էր և Թորերտը։ Փարձառութիւնն ու գիւտութիւնը ձեռք ձեռքի էին տւել։

Ամբողջ օրը աշխատելուց յետոյ՝ Գէորգ Ստեֆանոսը՝ գիշերւայ մեծ մասը գծագրում էր նախազծեր, նոր և նոր յարմարութիւններ էր հարում, թղթակցութիւններ էր գրում։ Եւ երբէք ոչ ոքի խելացի խորհուրդը չէր արհամարհում։

1830 թ. յունւարի 1-ին գիծը պատրաստ էր։ Բայց ընկերութեան կառավարիչները տատանուում էին բանեն ձիով, անշարժ մետենաներով, թէ տեղաշարժով։ Ստեֆանոսը համոզեց տեղաշարժների մրցութիւն նշանակել։

Որոշած օրը Ստեֆանոսը մասնակցեց մրցութեանը իր նոր վնամ։ «Մակէտ» տեղաշարժով։

«Մակէտը» դուրս եկաւ՝ քարշ տալով իր եսիից անթիւ վագոններ 1200 վութ բեռնով և շարժւեց 24 վերստ արագութեամբ մի ժամում։ իսկ յետոյ մի մարդար վագոնի հետ, որի մէջ նըստած էին 36 հոգի, սլացաւ 40 վերստ տարածութեամբ. ամբոխը չէր հաւատում իր աշքերին և ցնծութեամբ ողջունում էր Ստեֆանոսին։



«Ռակէաը» յաղթել էր:

Աշխարհիս ամենամեծ գիւտերից մէկը արւած էր:

Յուզւած, ինքնավստահ, գլուխը վեր բարձրացրած, հայրը դառնում էր այդ օրը տուժ՝ յենելով իր որդու ուսին:

Եւ անսահման երջանիկ էր:

Թէ Անգլիայում և թէ ուրիշ երկրներում տրագ սկսեցին շինել երկաթուղիներ: Թագաւորները, գիտնական ընկերութիւնները, մեծ մեքենապետները գիմում էին Գէորդ Սատֆանսօնի խորհուրդներին Ամբողջ աշխարհը ճանաչեց «ինքուս մեքենապետին», խոնարհւեց նըրա հանճարի և գիտութեան առջեւ:

## 82. Լոռու ձորը

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց  
ժայռերը՝ խորունկ նօթերը կիտած,  
դէմ ու դէմ կտնգնած, յամառ ու անթարթ  
հայեացըով իրար նայում են հանդարտ:

Նըրանց սաքերում՝ գազազած գալի՝  
գալարում է գիտ Դե-Բետը մոլի,  
խելագար թըռչում քարերի գըլխով,  
Փըրփուր է թըռում անզուսազ երախով,  
զարկում ու զարկում ժէսուս ափերին,  
փընտեռում է ծողկած ափերը հին-հին  
ու գոռում գիտ-գիտ.  
— Վաշ-Վիշ, Վաշ-Վիշ...

(Մութ անձաւներից, հազար ձևերով,  
քաջքերն անհանգիստ՝ ծաղրող ձայներով  
զեր հառաչքին տրձագանք տալի.  
ծաղքում են նըրա գոռոցն ահոելի  
ու կրկնում գիտ-գիտ,  
— Վաշ-Վիշ, Վաշ-Վիշ...)

## 83. Հովիւ

Դեռ նոր փարատւած խաւարն Աղամայ,  
մի սարի լանջի, մի ժայռի վըրա,  
էն անտաշ ժայռի կտորի նման  
կանգնած է արդէն մեր ջահել հսկան:  
Ենւած հովական երկայն մահակին,  
շները պատրաստ իր ստի տակին,  
ծածկւած փափախը տկանջին թեքած,  
թերմաշ ետքընջին ուսովը ձըգած,  
ինչպէս լեռների տէր ու թագաւոր,  
աչքերն ածում է, հոկում սար ու ձոր,  
մինչդեռ մընչալով կանաչ արօտում  
սիրած գառները իր շուրջն են պատում:

## 84. Գիշեր է խոր...

(Ալէգրօից)

Գիշեր է խոր:  
Մենակ կըլեր  
լուսնեակը գեռ չի քընած.  
զնում է նա, նայում է ցած,  
ցածում ահա մութ ծըմակ,  
մութ ծմակում կոճղի տակ,  
չոր տերեն է ժաժ գալի—  
սունկն աշխարհք է դուրս գալի:

## 85. Վերջինն ու առաջինը

...

Ես այն տարին երկրորդ գասարանում էի: Մեր դասարանում երեք-չորս հոգի կային, որոնք թէ հասակով, թէ տարիքով մեծ էին մեր մէջ. նրանք հրամայում էին մեղ. վարժապետներն անդամ նրանց հետ մի ուրիշ տեսակ էին. մենք փաքքերս վախում էինք նրանցից

ու ակնածում: Թէև դասերը միշտ չը գիտէին, բայց դասերից դուրս ուրիշ ամեն բան գիտէին: Դուրսը, խաղերի ժամանակ, նրանք էին զեկավարն ու պարագլուխը. դասարանի՝ ներքին գործերում միշտ նըրանք էին ամեն բան կարգադրողն ու որոշողը: Հերթով օրապահ էինք լինում բոլորս, բայց խսկական, մշտական օռապահները նրանք էին. նրանք էին դասարանը վարում, և չարութիւնների բոլոր աղբիւրը նքանցից էր. և մենք բոլորս հնագանգւում էինք նրանց, նախ որ վաշխում էինք ծեծից՝ եթէ չը լոէինք, մէկ էլ որ զգում էինք նրանց գերազանցութիւնն ու խօնարհում:

Նրանք ծխում էլ էին. գրպաններումը միշտ ծխախոտ կար. դասամիջոցներին քաշւում էին պարտէզի կամ մեր դալրոցի հին շէքի մի խոր անկիւնն ու ծխում. այդ էլ որ չեղաւ մանում էին արաքնոցները ու այնտեղ ծխում: Բոյորս գիտէինք, բայց ոչ ոք ի հարկէ ուսուցիչներին ոչինչ չէր ասում. չէ որ գա կը լինէր մատնութիւն:

Մէնք ոչ միայն ոչինչ չէինք ասում, այլ և հիանում էինք. նրանք շարունակ ծաղրաւմ էին մեզ, թէ մենք զեռ երեխայ ենք, զեռ ոչինչ չենք հասկանում, և այնպէս յաղթանակով ներս էին քաշում ծուխը, յետոյ բաց թողնում և այնպէս արհամարհանքով նայում մեզ վրա...

### Բ.

Այդ արհամարհանքը ինձ շատ էր վիրաւորում. ես էլ էի ուզում նրանց պէս քաջ լինեմ, նրանց պէս մեծ լինեմ մարդու շարք ընկնեմ, ես էլ էի ուզում ծխեմ:

Վճռել էի մէջո, բայց սկսելը յետաձգում էի. մի ներքին բնագդական բան պահում էր ինձ, չէր թողնում. մէկ էլ որ հայրս շատ բարի, բայց շատ էլ խստ մարդ էր. որ իմանար, հոգիս կը հանէր:

«Ե՛թէ վախկոտ եմ, այթէ երեխայ եմ. նրանք դրուսաւեն ասում», — անցաւ մտքովս. և այդ գաղափարը սաստիկ դիպաւ ինքնասիրութեանու:

Պատկերացաւ աշքիս դէմ մեր դասարանի ամենից մեծը, պապիրոսը գնչին, ինքնարաւական ու մի սպանիչ արհամարհանքով ինձ նայելիս...

Էլ պրծաւ. առանց այլեալլութեան մտայ մեր գահլիճը, ուր սեղանի վրա միշտ պապիրոսներ կային դրած հիւրեղի համար, որովհետեւ ոչ հայրս էր ծխում, ոչ մեծ եղբայրներս:

Վերցրի մի պապիրոս, արագ կոխեցի դրախոս ու դուրս եկայ. բայց նրանք ծխէի. մտածեցի դէսոգէն, յարմարը խոհանոցն էր:

Ճաշերից յետոյ մայրս այնտեղ իսկի չէր մտնի, ծառան էլ այդ միջոցին զնում էր իր համար ման զալու և միայն թէյի ժամանակ էր վերագառնում:

գ.

Մնացել էինք ես, իմ պապիրոսը և խոհանոցը: Ինձ թւաւմ էր, թէ երեքս էլ միսեանց էինք սպասում: Հանդարտ քայլերով մտայ և զւուր փակեցի անձայն:

Սիրտս և ուներս դոզում էին...

Արագ արագ սկսեցի լուցկի որոնել:

Լուցկի չը կար ոչ պլիտայի վրա, ոչ պահարանում, ոչ սեղանի պրկիկում, ոչ մի տեղ. անպիտան ծառան զբել էր գրպանը ու կորել: Նա էլ ծխող էր:

Փայտացած կանգնած մտածում էի՝ բնչ անեմ:

Յանկարծ զլիի ընկայ, որ վառարանում կրակ կարող է լինել:

Բաց արի դոնտիը, զեռ պսպղում էին փոքրիկ կայծեր:

Փոխանակ ունելիքով կամ որեէ մի բանով մի կայծ կամ մի կտոր փոքրիկ կրակ զուրս քաշելու, Աստած խելքս առել էր այդ բազէին, չոքեցի պլիտի տուած և պապիրոսի մի ծայրը միշտ բերանո՞ւ միւս ծայրը խոթեցի պլիտի դռնից ներս, կպցը կըակին և մի պինդ ու երկար ձիգ տւի պապի ըսոսի ծուխը:

Լցւեց կուրծքս ծխովս: Խս բարձրացայ, զլիտի գոնակը փակեցի և սկսեցի ագահարար ու երարետից աւելի ու աւելի խորըներս քաշել ծուխը. միաժամանակ վախով նայում էի դռանը, ամեն մի ունաձայնին:

Յանկարծ զգացի, որ սիրոս խառնում է ու զլուխս պապյու է գալիս, զցեցի պապիրոսը և վազեցի գէպի զուոր ու... էլ չեմ յիշում...

գ.

Երբ աչքս բաց արի, տեսնեմ

մեր սենեակումն եմ. մայրս կողքիս նստած, քնքշաբար շոյսւմ է ինձ. Տեսնում եմ նոյնպէս և իմ չարաբաստիկ պապիրոսը՝ առաջն սեղանի վրա դրած:

—Միախոտը թոյն է, աչքիս լոյս, —ասաւ մայրս լուրջ ձայնով հէց որ ուշքս ետ էր եկել ու քիչ հանգստացել էի. —Նա քայլայում է մարդու առողջութիւնո, մանաւանդ մատաղ հասակից ծխողի: Խօսք առւր ինձ, արեկդ մեռնեմ, ազնիւ խօսք առւր, որ այլևս երբէք ծխախոտ չես դնի բերանդ, մինչեւ հասուն մարդ դառնալու: Իսկ նրանից յետոյ ինքդ գիտես, —վերջացրեց մայրս և խորին խանդաղատանքով համբուրեց ճակատու:

Ես լալով փարեցի մօրս կըծքին:

—Մայրիկ, ես խոռանում եմ քեզ, որ ել երբէք ձեռքս չեմ առնի պապիրոսը, քանի որ ապրեմ աշխարհիս երեսին, երբէք:

—Կամենմաւ ես, —ասաւ մայրս, —ցենք այս թեքտա պապիրոսը քո սեղանի պատին, իրքև անմոռաց յիշատակ քո ուժատին:

—Այն, մայրիկ ջան, —ալատասխանեցի եռ՝ իրդապէս յուզւած: Եւ մայրս իր ձեռքով մեխեց պապիրոսը պատին: Մինչեւ այսօ նա պնդացրած է իմ գրասեղանի պատին: Երեսուն տարի է արդէն: Ես հասատատ պահեցի իմ խօսքը

Եւ ամեն անգամ, երբ տեսնում եմ աշակերտներ կամ հէնց մեծահասակ գիմնազիստներ ու ուչալիսաներ պապիրոսը բերաններին զրած միմեանց հետ զրուցելիս կամ թափառելիս, ես շուռ եմ տալիս նրանցից իմ երեսը՝ խորին զդւանքով...

## 86. Ամառ գիշերը գիւղում

Լուսընկայ գիշեր,  
երկինքը պայծառ,  
անհամար տատղեր  
շոլցլում են զառ:

Քընած է արգէն  
և լվում ողջ գիւղը,  
մընած ու լուռ է  
գիւղացու հիւղը:

Յոգնած գիւղական  
ընտանիքն ահա  
սրահում, կայսում  
կամ կտրի վըրա

երկնքի գիմաց  
գրկւած են քընած,  
գիրեիցն, տսես,  
ժըպտում է Աստւած:

## 87. Քինարինա

ա.

Կոլումբոսից յետոյ սպանացիք հետզհետէ տիրեցին Միջին և Հարաւային Ամերիկայի մեծ մասին: Շարունակ բազմաթիւ բախտախընդիր մարդիկ զիմում էին այդ նոր աշխարհները ոսկի ու հարստութիւն ձեռք բերելու յուսով: Ես իրենց այդ նպատակին շրւտով հասնելու համար նրանք ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում և շատ վատ էին վարւում տեղացի ժողովուրդների հետ. աշխատացնում էին, արատահարում, ամեն չնշին բանի համար ծեծում, չարչարում ու հորածում: Եւ բնականարար տեղացիներն էլ ատելով ատում էին իրենց կեղեքողներին, թէև միշտ հպատակւում էին նրանց, ծառայում որտաքուսա ամեն կերպ աշխատում էին հաճայանան:

Սյոպէս և Պերու երկրում 1640 թւին կառավարիչ էր մի խիստ անսիրտ մարդ: Երջապատողները նրան. հաճելի լինելու համար ինչ նպանութիւններ ասեա անում էին տեղացիների գլխին: Կառավարիչը նկարծ մեռնում է կարծ միջոցում ու սարսափելի տանջանքներով: Այր է տարածւում, որ պերուցիք նրան թունաւորել են:

Սպանիայի թագաւորը նրա տեղը ուղարկում է մի ուրիշներնցիների ականջը լուր է համսում, որ նոր կառավարիչը՝ իշխան իխոնը մի մեղմ, արդար ու բարի մարդ է, բայց ոչ ոքի չի հաւառում, — այնքան վախեցած էր նրանց աչքը եւրոպացիներից:

Նոր կառավարչի գալուց մի-երկու օր առաջ պերուցիների ցեղակետը զիշերով ծածուկ կանչում է իր բոլոր ցեղակիցներին անտառութիւնը քինարէնի մի գեղեցիկ ծառի տակ:

Եւ հէնց որ հաւաքւում են: այսպէս է խօսում.

—Գիտէք, որ Սպանիայից նոր կառավարիչ է գալիս, Կարելի է ի առ նախորդից էլ աւելի մեզ տանջի ու չարչարի: Եկէք կրկնենք եր երգումը այս սուրբ «առողջութեան» ծառի: տակ, որ երբէք, ըրէք յայտնելու չենք սպիտակամորթներին սրա բուժիչ յատկութիւնը: Սպիտակների դէմ մեր միակ դաշնակիցը տենդն է, որից ազարներով կոռորւում են նրանք, և միայն մի գանձ է մառւ մեր նորին, որ զեռ նրանք չեն խլել, և այդ գոնձը այս ծառի բուժիչ նղեն է: Երկնքի այս պարզեց պահենք մեզ: Վայ նրան, ով վախից ամ գութից յայտնի մեր դադսնիքը մեր կեղեքիչներին. մահ

մատնիչին. Եթէ այդ տեսակ մի գաւաճան գտնւի մեր մէջ, սպանենք նրան էլ, կնոջն էլ, երեխաւերին էլ, սրբենք նրա ամբողջ ցեղը աշխարհի երեսից. Երդւենք

«Երդւում ենք, երդւում ենք. — Կրկնեցին միաձայն պերուցիները. — Երդւում ենք՝ ամեն տանջանք ու մահացու չարչարանք կրենք, բայց մեր գաղտնիքը երբէք չը յայտնենք...»

Երդւեցին և խկոյն ցրւեցին. վտանգաւոր էին այդ տեսակ ծածուկ հաւաքումները. սպիտակները կարող էին իմանալ, կասկածել ու պատճառ դառնալ նոր հալածանքների:

Բ.

Եկաւ նոր կառավարիցը իր երիտասարդ կոչ հետո. Պերուցիք գնացին նրանց զիմաւորելու. և պերուցի կանայք ծաղիկներ սրբացին իշխանութեան առաջ. դրանց մէջն էր և Զուման, ցեղազետի գեղցիկ ու դեռատի հարուր:

Իշխանութին որ տեսաւ Զումանին, շատ հաւանեց և ուզեց որ իր մօտ մայ ծառայելու. Զուման մտու պալատ ծառայութեան և



զարախոսում էին նրան յաճախին իշխանութեան առաջ, աշխատում էին կասկած զցել նրա սիրութը, թէ Զումայի սէրը կեզծ է, թէ բոլոր տեղացիք առաջ առանաւմ են սպանացիներին, նու կեզծում է, ով վիտէ ինչ դանիթելու համար. բայց տիկինը ոչ մի ուշը չէր զարձնում այդ վրա վսուկներին:

Անցան ամիսներ և իշխանութեանը խախտաց. հիւնդութիւնը օր-օրի տւելի էր սասակաւում. Սպանացի բժիշկը տպին էր իր զիտցած բոլոր գեղերը, ոչնչ չէր օգնում. հիւնդը մէկ տաքացնում էր, մէկ դողացնում և բժիշկը վարանումով շարժում էր զուխը՝ «Թունաւորւծ չը լինի».

Թո՞յն... ով պիտի թունաւորէր. պալատում ամենքը վստահելի մարդիկ էին. օտարը միայն Զուման է. միթէ նա...

Իսկ Զուման այդ միջոցին սաստիկ տանջուում էր, տանջուում էր, որովհետև խոր սիրում էր իր բարի տիրունուն և զիտէր նրան բռնիւու գեղը, բայց յայտնել չէր կարող: Եւ ոչ ոքի. չէ որ երդւել էին



ամբողջ ցեղով, չէ որ դա վերջին դէսքն էր տեղացիների ձեռքին, վերջին գանձը, քինաքինի կեղիը...

Եւ Զուման լուռ տանջուում էր, իսկ իշխանունու վիճակը օրէ օր վատթարանում. Վերջապէս բժիշկը յայտնեց թէ մահը մօտ է: Զուման յուսահատ ինչ անելը չէր իմանում, Յանկարծ մի լոյս ընկաւ նրա հոգին, գեղը յայտնել չէր կարող, բայց գեղը տաւ այնպէս, որ ոչ վիմանայ, հօ կարող էր:

Խկոյն կանչել է տախի իր ամուսնուն, ասում է՝ որ իրեն վատ է զգում, կարծես ահնդ ունի, և խնդրում է, որ ծածուկ իր համար օխնաքինի փոշուց մի թիչ բերի:

Գալիս էր զիշերը. Ամբողջ պալատը թաղւած էր խոր քնի մէջ. իսկ իշխանը իր սենեակում տարւած էր իր աշխատանքով. Զուման կամաց, ոտների մատների վրա, անց է կենում իշխանի սենեակի առաջով, մտնում է կից՝ հիւանդի ննջարանը, զգոյշ մօտենում է անկողնին, որ հիւանդը չը գարթնի, և դողդոյշուն ձեռքով թափում է փոշին անկողնի կողը դրած խմիչքի մէջ...

Յանկարծ մի ուժեղ ձեռք բռնում է ետեքց նրա թեր, միւս ձեռքով փակում է նրա բերանը, որ ձայն չըհանի հիւանդի սենեակում, ու քարշ է տալիս դուրս թուլացած ու խելակորոյս կնոջը:

—Ի՞նչ ցանեցիր խմիչքի մէջ, —հարցնում է իշխանը կատաղած, առանց բաց թողնելու վախից քարացած կնոջ թեր:

Զուման լուռ է:

Իսկոյն սոի է կանգնում ամբողջ պալատը, ծառաները կապկը պում են թոյն խառնողի թերը ու տանում կոխում բանու:

#### Գ.

Ամեն կողմ ապածւում է լուրը, թէ Զուման թոյն է տւել: Յուզում են պերուցիները, դիտեն որ խեղճ կնոջը տանջալի մահ է սպասում:

Դատարանի գահին լիքն է բերնէ բերան. և եւրոպացի, և տեղացի՝ ամենը այնակ են:

Ներս են բերում պերուցի կնոջը շղթայակապ, և սկսում է հարցաքննութիւնը:

—Դժւ էիր իշխանունու խմիչքի մէջ փոշի ցանողը:

—Այն:

—Ո՞քաեզից գտար այդ փոշին:

—Ես տւի նրան, —հնչում է յանկարծ բազմութեան միջից մի ուժեղ առնական ձայն, և ցեղապետի աղան առաջ է գալիս:

—Ո՞չ, ոչ, նա յանցանք չունի, նա ոչինչ չէր իմանում, —հեծում է Զուման:

—Լոի, կին, միթէ կարծում ես՝ էլ կարող եմ ապրել քեզնից յետոյց: Ինձ յանձնում եմ զատարանին:

—Էտ ինչ փոշի էր, որ տւիր նրան. թոյն:

—Ո՞չ:

—Գուցէ մի բուժիչ գեղ տենդի դէմ:

Զուման յիշում է իրենց երդումը և սարսափած բացականչում:

—Ո՞չ, ոչ, տենդի դէմ ոչ մի դեղ չըկայ:

—Որ գեղ չէ, ուրեմն թոյն է, —եղբակացնում է գատաւորը —ուրեմն խստովանում էք, որ այդ փոշին թոյն էր:

—Մենք ոչինչ չենք խստովանում—պատասխանում է ամսւսինը հպարտ:

—Ես միայն լուղ կարող եմ,—աւելացնում է Զուման իոնարին կանչում են բժշկին նարցնելու:

—Նատ տարօրինակ բան է իշխանութեանը, —վրկայում է բժիշկը.—ոչ մի գեղ չի օգնում. ես կարծում եմ, որ այդտեղ գործում է մեղ անծանօթ դանդաղ մի թոյն:

Դատաւորները սարսափահար նայում են այդ երկու թունաւորիների վրա, քիչ խորհրդակցում են ու վճռում:

—Վաղը, կէսօրին կայրւեն երկուսով խարոյկի վրա:

Ու մի խո սուպանք է դուրս թոշում դժբախտ կնոջ կրծքից:

—Քաջ եղիր, չոււա: Մահը մեղ կազատի այս ստոր սարկութիւնից, —բացականչում է ամուսինը ոգեորւած. —մեռնենք ու լինենք ազատ:

#### Ը.

Առաւորը բոլոր տեղացիներին հրաման գնաց, որ գան ներկայ վնեն պատժին: Երկուսի սոսկալի մահով ուզում էին ժողովրդին գախ ազդեն: Մոայլ ամբոխը հաւաքւեց արգէն վառւած խարոյկի շուրջը, որ շղթայել էին սպանացի զինւորները: Իսկ կառավարիչը չէր ուզեցել ականատես լինի: Թողել հեռացել էր քաղաքից:

Շուտագ երեաց հեռակա մի հարիւրեակ զինւոր, որոնք շրջապատած բերում էին մահապարտներին: Արեի պայծառ ճառագայթները խաղում էին զինւորների սպատարտների, զէնքերի ու զըաների վրա: Թմբուկներն սկսեցին որոտալ... Դունդը կանգ տուաւ խարոյկի առաջ: Զաւմային ու ամուսնուն հագցել էին երկար շորեր, զլուխները գցել էին մի-մի տոպրակ՝ աշքերի տեղը միայն ծակ թողած ու թերերը կապած ետեւ:

Դունդը կանգ տուաւ, թմբուկները լռեցին, տիրեց մի սարսափելի լրութիւն. ահազին ամբոխը քարացել էր իր տեղը. ոչ մի շըրշին: Եւ պաշտօնեան արգէն պատրաստւամ էր մտհապարտներին դէպի խարոյկը առաջնորդելու, երբ յանկարծ հետւից ձիռ դոփին լրւեց և մի սպայ շնչառպառ մօտ վազեց ու յայտնեց պաշտօնակա-

տարներին որ սպասեն, գալիս է ինքն իշխանուհին, և առանց նրան պատժի չը ձեռնարկեն.

— «Ի՞նչ է...», «ով է դալիո», «ինչո՞ւ», շշուկն ընկաւ բազմութեան մէջ, որ ծովի ալիքի պէս սկսեց շարժւել:

Եւ իրաւ. ահա իշխանուհու պատգարակը, որ չորս հօգի բերում էին իրենց ուսին. Զինւորները խսկոյն պատիւ տւինս նա դժւարութեամբ բարձրացաւ իր պառկած տեղից, յենւեց թեին ու ասաւ.

— Ես միայն հիմա իմացայ. ինչ որ պատահել է, էն էլ գրեթէ զոռով. ինձնից ծածկում էին. Մեղաղարտներին ներելը իմ իրաւունքից վեր է. Բայց նրանց համար թողութիւն խնդրել կարող եմ, և յոյս ունիմ, որ ամուսինս նէ մերժի իմ այս, գուցէ վերջին ինդիրաւ. Առ այժմ հանգըրէք այդ սարսափելի խարոյէլը և արձակեցէք. Զումայի և իր ամուսնու կապանըները. Ես պատասխանատու եմ, նրանք չեն փախչի. Բերէք նրանց էլ իւձ հետո.

— Երկար կեանք ու տուղջութիւն մեր իշխանուհուն, — լուեց յանկարծ մի բարձր ձայն ամբոխի միջից:

— Այս, կեանք ու տուղջութիւն, — որոտաց ցեղալեամբ ձայնը երբե պատասխան. — Նա պէտք է որ ապրի, նա պէտք է որ առողջանայ:

Եւ մի փափուկ ընկաւ աեղածիների մէջ. ականջ ականջի յայտնեցին իրար որ մի ժամից հաւոքւեն անտառք...

Ե.

Իշխանուհին դարձու պազառ բոլորովին ու ժամապառ. Հազիւ էր հանգատացել մի երկու ժամ, որ հրամայեց, իր մօս կանչին Զումային:

Զուր համոզում էին, որ ձեռք վերցնի այդ անլիտանից, որ զուր տեղը չը յուզվի, բայց իշխանուհու կամքը անխախտ էր. Բերին Զումային. Իշխանուհին փուել էր միծ թիկնաթոռի մէջ. անշարժ ու տանջւած:

— Զումա, մօս եկ, — խօսեց նա միծ դժւարութեամբ. — Ես քեզ այնպէս սիրում էի... և չեմ կարող բարկանալ...

Զուման յուսահատութիւնից չը գիտէր ինչ անէր... Իշխանուհին կառածում էր նրա վրա, թէն ներում նրան, որ անմեղ էր բոլորովին և այսքան տանջւել էր հէնց իշխանուհու սիրուն. և հիմա պէտք է լուէր. ոչ մի բառ արդարանալու համար. Ա՛, խարոյէլից աւելի ծանր

էր այս մէկը. Դժբախտ կինը լուս ընկաւ նրա ոտները ու բարձր հեծկլալով իշխանուհու ձեռքը սեղմեց իր շրթունքին...

Բայց նոյն գայրկեանին արագ քայլեր լսւեցին զուրսը և ուրախ ձայներ, որոնց մէջ ճանաչեց իշխանուհին իր մարդու ձայնը:

— Քո անունով ես ներում խոստացայ յանցաւորներին, ներին նրանց,

— եղաւ հիւանդի առաջին խօսքը, հէնց որ ամուսինը շէմքից ներս մտաւ:

— Յանցաւոր չը կայ, որ ներեմ, — եղաւ կառավարչի զւարթ պատասխանը: — Մտէք, մտէք, ներս մտէք, — զարձաւ նա գէպի գուուը:

Ներս մտան ցեղապետն ու իր տղան՝ Զումայի մարդը:

— Զումա, — ասաւ ծերունի պերսուցին. — ցեղի թոյլաւութեամբ յայտնեցի ես իշխանին սուրբ ծառի գաղանիքը. Յայտնեցի. «Ո դու իշխանուհու խմիչքի մէջ բուժիչ դեղ էիր ցանելը»:

— Բուժիչ դեղ, — բացականչեց հիւանդը ապշած ու գորտվանքով. տպա ինչու էիր լուսմ, Զումա:

— Երգումը կապել էր նրա շրթունքները, — բացատրեց կեսրարը, — բայց իշխանուհին իր գթարտութեամբ յաղթեց մեր երգման ուժին: Իսքը կիսակենդան եկել էր աղատելու ու ներելու իր կարծեցեալ թունաւորիչներին: Նրա ազնիւ սիրու ուրիշներին աղատելով երեն պղատեց վերահաս մահից: Մենք վայրենիներս յարգում ենք որտի պղնութիւնն ու հոգու վեհութիւնը: Մենք մեր «առողջութեան ծառ» նէէր ենք բերում իշխանուհուն:

Այդ օրից եւրոպացիք ծանօթացոն քինաքինի հետ, որ մարդկութեան բարիքներից մէկն է: Եւ այնտեղ, ուր Զումայի համար խառնիկ էին վառել, բարձրանում է այժմ մի արձան, որի վրա ոսկի տառերով փայլում են հետեւեալ բառերը. «Զումայի յիշատակին, որ թրկեց մահից սպիտակամորթների բարի Գիլսոն իշխանուհու կեանքը»:

## 88. Կալ

Սիրեցի ես քեզ, զիւղացի եղբայր. երբ կարմիր շապկով, մազու կուրծքըդ բաց, ծաղկէ թաշկինակ գրլուխըդ կաղած, եղանը ձեռիդ խուրձ ես գլորում, էնէյ, կանչում են, հէյ, հրամայում, զէզից վար իջնում, կամերիդ նայում, մըջիւնի նըման՝ մինչե երեկոյ աշխատում ես զու առանց յոզնելու, առանց արտունջի հոգոց հանելու:

Իսկ երբ երեկոն իշխի. աստղալից,  
բալորում ես զու ժիր բանւորներիդ,  
ձայն տալիս, կանչում ջահել հարսներիդ  
կալը հաւաքում, թիտակը առնում  
և հէնց լեռներից փըչի մեզմ հռվը,  
լուսինն էլ ենի, ոքփոի իր շողը,  
կասածըդ տալիս հովին ու զովին,  
թարմ սոկի ցորենն ու դեղին դարման  
ջոկում ես, դիզում պաշարըդ տարւան,

## 89. Վերելքը

124

1829 թւի սեպտեմբերի սկզբներին էր Կաթողիկոսի թարգման գրագիր Խաչատուր Արքակաւագ Արովեանին էր յանձնւած ցոյց տալ և հջմիածնի հնութիւնները Պարրոտին: Դեքմանացի դիտնական պրոֆէսորը իր հինգ աշակերտների հետ եկել էր ուսուաց նոր նու ճած երկիրը՝ Արարատեան դաշտը ուսումնասիրելու և ցանկանու էր Մասիս լիսան գագաթը բարձրանայ: Իր դիտեցած ուսուեցնա սարկաւագը յափշտակութեամբ ամբողջ օրը տեղեկութիւններ տայիս հիւրերին, պատացնելով Վաղարշապատի վանքերը:

Մթնել էր արդէն և յոդնած ճամփորդները վաղուց քնի էի  
գանական հիւրանոցում, իսկ երիտառարդ սարկաւագը յուղւած գե  
ման էր գալիս տաճարի պատի ստւերում։ Նա մտածում էր օրւա  
տպաւորութիւնների մասին։ Օտարականները աւետարանը, մատուն  
ներն ու սրբերի պատկերները չէին համբուրում, մոմ չէին վառու  
երեսներին խաչ չէին հանում, նոյն իսկ պատարագի միջոցին։ ա/  
վշտացնում էր ջերմեռանդ սարկաւագին։ Բայց ինչպիսի ուշադրու  
թեամբ ականջ էին դնում նրանք հայկական ժամերգութեանն և եկ  
զեցական երգերին, ինչպիսի հետաքրքրութեամբ զննում էին մ  
ուռնքները, վանքի թանկագին իրերն ու հնութիւնները, շինութիւ  
ների ձեերն ու զարգերը, հայերէն ձեռագիրները, մանաւանդ՝ ինչ  
քան մանրամասն հարցնում էին՝ չը կայ արդեօք որևէ է բան ձեռ  
գիրների մէջ Մասիսի մասին։

Ապա նրանք ամբողջ երեկոյ երկար դիտում էին Մասիսը:

Խաչառուր սարկաւագը յիշեց, թէ ինչպէս ինքն էլ շատ տարին  
առաջ, մանսւկ ժամանակ նստած մի ըլբակի վրա, եր հայրենի Քանաք

զիւղից գուրս, ժամերով աշքը չէր հեռացնում այդ աննման լեռան  
ձիւնապստ գագաթից. Այստեղ ապրում է Նոյ նահապեալ իր բիւ-  
րեղէ ապարանքում, — պատմում էր միշտ հայրը, — անթիւ գոհարներով  
պսպղում են նրա պատերը արշալոյսին և վերջալոյսին, և փղոսկրէ  
գահի վրա բազմած՝ ծերունի նահապեալ անհասանիլի բարձունքից  
հսկում է շաւըջը, Հայկական աշխարհին. Իր տղայտկան երեակայու-  
թեամբ նա անգուսպ թոշում էր դէպի այդ բարձունքը... ոհ, ինչպէս  
կուզենար թեար ունեալ ու սաւառնել վեր, վեր, Նոյ նահապեալ  
մօտ, կանգնել նրա առջեւ ու ասել.

—Պապի, պատմի ինձ աշխարհի կործանութից ու սօս շրագեղից, պատմի ինչ է անցել զնացել իմ անբախտ հայրենիքի վրայով...

Եւ ահա այժմ հեռաւոր հիւսիսից, Դորպատից, հազարամու ու նիր կտրելով, այդ օտարազգիները թռել եկել են, ուզում են հասնեն ծերունու. Հքնադ ապարանքնեն... Ա՞րտեղից են առել յանդուգն թևերը, ինչ են ուզում իմանալ ծերունուց:

四

Երբ երկու օք յետոյ օտարականնելը թողնում էին հիւրասէր վանքը, Խաչատուր սուրբաւագը նրանց հետ էր Պոռֆիրոս Պարրոտի մասին, Խաչատուր սուրբաւագը թոյլ էր տևել նրան, որ քնիկերակցի բախողի բախողիկոսը թոյլ էր տևել նրան, որ քնիկերակցի ծանօթ նացիներին, իբրև թարգման և իբրև երկրի հանգաման քնիկերից ծանօթ աւ աշքաբաց երիտասարդ։ Մարկարագը անշափ երջ սիկ էր Նա քշում էր իր նժոյգը կից պըռփէսորի նժոյգին և վատահու հակիրճ պատասխաններ էր տալիս նրա հարցերին։

Յաջորդ օր խումբը հասնել և Յակովի վաքը, ուստի լուսուց  
և պրոֆէսորը սկսեց իսկոյն փարձական վերելքի պատրաստութիւնը  
տեսնել. Իր մի ընկերոջ հետ միւս առաւտն և եթ նա փարձեց արե-  
ակյան կողմով վեր ելնել:

Երեք օր նա չէր վերադառնում. Նրա բացառյութեան սրչոցը  
խմբի մացած անդամները նոյնպէս պարապ շէին մնում. մէկն աստ-  
ղերն և ողի երեսոյթներն էր զիտում, միւսը հաւաքում էր ծաղիկներ,  
խոտեր, զանազան բոյսեր, ճիճուներ, ցամաքային ու ջրային կեն-  
դանիներ, երրորդը չափում, նկարում իր վրձակայքը. Խաչատուր  
սարկաւագը սրա կամ նրա հետ էր լինում, աշխատում էր ինքն  
էլ մի բանով օգնի և յաճախ հարցնում էր ինքն իրեն. «Ի՞նչին են  
պէտք սրանց այդ իրերը. այդ գործիքներով միթե կը չափու աստ-

գերի շարժումը կամ լեռների բարձրութիւնը հեռից։ Եւ մի ներքին ձայն ստէպ կրկնում էր իրեն, թէ ինքը գեռ շատ է թերուս և շատ քիչ բան է սովորել զանգի ժառանգաւորաց դպրոցում և թիֆլիսի ներսիսեան դպրոցում։ Նա իր ամրող էութեամբ զգում էր ու տեսնում, որ հայերէն գրքերից իր սովորածը այն չէ, ինչ որ դիտեն այդ մարդիկի Զգում էր և յուստիսատում։

Վերջապէս պրոֆէսորը վերադարձաւ և յայտնեց թէ հազիւ կարողացել էր տասն և երեք հազար ստուաչափ բարձրանայ. աւելի նեշտ է ելնել արևմտսեան կողմից։

«Ի՞նչ են սրանք անելու այնտեղ, վերեռմ», — ակամայ անցնում էր սարկաւագի մտքով, երբ պրոֆէսորն ու իր ընկերները շորերն էին կապկալում, ուտելիղէնի պաշարը շտեխնում, երկաթատապան կօշիկներ հագնում ու ձեռներն տոնում սրածայր կեռագլուխ գաւազանները։ Նա այլիս չը համբերեց ու գիմեց Պարբոտին։

— Պարոն պրոֆէսոր, ինդէլ առէք ձեղ հետ։

Պրոֆէսորը մի րոպէ զարմացած նայեց երիտասարդի երեսին։

— Բայց չէ որ դուք զեռ անփորձ էք, անսովոր վերելքի դժւառութիւններին. . . վերջապէս՝ ոչ տաք զգեստ ունէք, որ էլ յարմար կօշիկներ, — ասաւ նա։

— Պարոն պրոֆէսոր, սենք լեռների զաւակ ենք, մանկուց սովոր ենք մագլցելու ժայռերով։ Ցրտից էլ չեմ զախենում։

Նրա զաւգուուն աչքերի մէջ այնքան եռանդ ու հաստատակամութիւն էր ցոլում, որ զիանականը մերժել չը կարողացաւ. . .

— Լաւ, եկէք։

Դ.

Մի տեղացի հայ կարածատէք, վեց զիւղացի և երկու ոռու զինուոր պիտի ուղեկցէին զիտնական արշաւախմբին։

Վաղ առաւտեան բոլորն էլ դուրս եկան զանքի պարիսպներից ու բռնեցն այն բարակ շուրից, որ

կում էր Մասիսի արեմտեան լանջով։ Բեռները տանում էին ձիերով։

Երկար ժապաւէնի պէս սողում էր կարաւանը դէպի վեր։ Շակալ մէկ կորչում, մէկ նորից երեւմ էր. վերջապէս բոլորովին նհետացաւ։ Ճամփորդները երբեմ իջնում էին մեծ ու փոքր ձուկներ և նորից մազլցում ժայռերով, բայց շարունակ ընթանում ն դէպի վեր, դէպի վեր։ Սարկաւագը թեթև քայլում էր զիտնականին, սրճէ քար, ոյս կամ կենդանի գետնից վերցնելու համար, շարունակ չափում, յուսմ և արձանագրում էին իրենց յիշատակարանների մէջ։

Անդադար առողջ էին գնում. մի քանի անգամ միայն կանգ ան մի պատառ բան ուտելու կամ խմելու այն սառնորակ Ֆէթ, ը Մասիսի սառուցների տակից բգիւելով կարկաչում էր այս կամ ոյն ձորակի յատակին։ Շտապում էին, բայց ժամերն էլ թոշում էին յնողէս արագ։

Արգէն վերջալոյսն էր Արեք մօտենում էր Բարզող լեռներին։ Երգնում, դաշտում, ստեբները երկարանում էին, մշուշը նեաղինետէ չըից կլանում էր գիւղերն ու գաշտի բուրները։ Երասիսի գալաւուն մէջքի վայլը մարում էր ու վերջապէս հանգաւ. արնի շողերը յօմ խաղում էին զիմացի Արագածի թագի ցից ծայրերին։

— Նայեցէք, նայեցէք, — բացականչեց սարկաւագը, — ամբողջ դաշտ ծածկւել է մշուշով. այստեղ զրեթէ բալորովին խուսար է։

— Այստեղ միշտ խաւար է, — նկատեց գերմանացի պրոֆէսորը։ Սարկաւագը ցնցւեց ամբողջ մարմնով ու լուս նետեց Պարբուն. շտապում էին դէպի գլուխըտեղին։

Երբ ճամփորդները տեղ հասան, վերջին ճառագայթները հանգում էին նաև սպիտակափառ Մասիսի կառարին։ Խոկոյն խարոյէ առեցին հետերը բերած փայտափ, սելան բաց սրին, հանեցին հաց, անչը, գառան սառն միտ, իսկ ուռեց եփ էր զալիս կրակի վրա։

Մի քիչ յետոյ ամեն մէկը պինդ փաթաթւած իր վերարկուի մէջ՝ առկել էին քարերի տակ բաց արած թաղիքէ փոքրիկ վրանում։ արկաւագն էլ ո. Յակոբի վանքի վարդապետից վերցրած եափնջին ո վրայ զցոծ, մի կերպ կծկւել էր վրանի մուտքի մօտ։ Կողքին ուռում էր յոզնած ճամփորդների խամփոցը, իսկ նա՝ բաշուղը գլխին աթաթած՝ անթարթ նայում էր պարզ աստղալից երկնքին։ Նրա տքից չէին հեռանում պրոֆէսորի խօսքերը։ Նայեց ցած — Արարական դաշտի վրա լոյսի ոչ մի կայծ։

— Այն, մշտական խաւար է այնտեղ, — կրկնեց նա գառնութեամբ:

Մառը արևմտեան քամին, որ սկսել էր հետզհետէ սաստականալ և ոսկորների ծուծը թոփոնցել, կարծես նոյնպէս շշնչում էր նրան՝ «Խաւար է, խաւար է...»

Լուսացաւ: Առնելով իրենց հետ միայն կարեոր հագուստներն ու մի քիչ ուտելու բան, ճամփորդները սկսեցին վերելը, վրանն ու ձիերը թողնելով գիշերատեղում:

Անցնում էին ահագին քարտկոյտերով, որ կարծես հսկայական ձեռքով դիզւած էին իրար վրա, բարձրանում էին լարւած ու շաղրութեամբ և զգոյշ. մի սխալ քայլ՝ ու վերջացաւ: Ահա և սացագիծը. այդտեղից սկսում էր յաւիտենական ձիւնի տարածութիւնը: Գնուս էին արդէն սառուցի վրայով. թէն ոտք սահում էր; սակայն շատ աւելի հեշտ էր բարձրանալ. Օգի նօսրութեան ղատճառով կուրծը լայն շունչ էր քաշում, և սիրու աւելի արագ էր բարախում:

Կէսօր էր արդէն և գագաթը բաւականին հեռու էր գեռ, երբ եղանակը փոխւեց: Ամպերը պատում էին ճամփորդներին, սառը քափչում էր աղմէլիք: Վտանգաւար էր ճամփան շարպանակելը:

Հասել էին տասնըհինգ հազար սունտչափ բարձրութեան: Մի ըսպէ վարժնելուց յետոյ պըոֆէսորը փորել ոււառ սարուցը ու մի խաչ տնկեց մտկազրութեամբ՝ որ 1827 թ. էին ռուսաց կայսրութեան սահմանները հասան մինչեւ այդտեղ:

Գիտնականը մի անգամ էլ կարօտով նայեց գէպի վեր, գէպի Մասիսի ամպամած գագաթը, որ չէր ուզում իրեն ընդունել, ու հոռոշը կրծքի մէջ խեղղելով հրամայեց նահանջել:

Ամենցի ետեից գնում էր ինքը Պարրոտը՝ գլուխը կախ դցած, կարծեն անզգայ: Սարկաւագը քայլում էր կողքին ու երբեմն թռուցիկ հայեացը էր նետում նրա գէմքին: Երիտասարդը կուզենար նրան միի թարել, բայց խօսք չէր գտնում:

— Օդաշափական գործիքն ինձ տէք, պ. պըոֆէսոր, ես կը առնեմ, — առաւ վերջապէս նա մեղմութեամբ:

Պըոֆէսորը դործիքը մեկնեց նրան:

Ե.

Իջան նորից ո. Յակոբի վանքը: Պարրոտը չէր շտագում այն տեղից հեռանալու, յամառութեամբ սպասում էր: Իսկ եղանակը օրէ

որ վատթարանում էր: Մասիսը պաշարւած էր սկսեն ամպերով, գագաթին լուսում էր փոթորկի աղմուկն ու կայծակների զարկը, կարծեութեամբ Մասիսը զայրացած էր, որ մարդիկ յանդզնել էին ուսք կնել իր կուսական սառոյցների վրա:

Մի քանի օր յետոյ հազիւ Մասիսի ճակատը պարզւել էր, որ Պարրոտը յայտարարեց իր ընկերներին.

— Վաղը ես նորից ելնում եմ գագաթը:

Նրա ուղեկիցները լուս էին և այդ լուսթեամբ հրաժարւում էին նրան հետեւլուց:

— Ես էլ գալիս եմ ձեզ հետ, պարոն պըոֆէսոր, — ասաւ սարկաւագը:

Մեպտեմբերի 27-ին մի նոր, ուելի սակաւամարդ կարաւան ձբդում էր նորից դէպի Մասիսի գագաթը:

Այս անգամ նըանք գիշերեցին աւելի բարձր, հէսց սառցազծի ատկ մեծամեծ քարերը ապաստան ընարելով: Ցուրտը սաստիկ էր, խարոյիկի, կրակն անզամ չէր տաքացնում, աշքը խփել անկարելի էր: Կէս վշերին գագաթը նորից ամպեց և խուս որոտի ձայներ էին լաւում: Բայց առաւօտեան առաջին ճառագայթները հազար ու մի զոյներով հրավառեցին սառցէ բիւրեղները: Գագաթը բոլորովին մաքրւել էր: Հրավառեցին սառցէ բիւրեղները: Գագաթը բոլորովին մաքրւել էր: Հիացած և քաջալերւած՝ նըանք առաջ գիշեցին սառուցների վրայով, հասան իրենց տնկած խաչի տեղը: Ուղեկիցներից չորս գիւղացի ուժասպառ կանգ առան այծուեղ. հետեւցին միայն երկու զինուորներն ու երկու ուրիշ գիւղացիներ: Ովորկ սառուցի մէջ կացնով շարունակ սառուատեղ փորելով, ելնում էին վեր: Ահա գագաթի երկու բլուրները: Էլի մի վերջին ճիկ, զրեթէ վազեվազ բարձրանում են, ու վերջապէս ամենաբարձր բլրի վրա են...

Օքանչելի տեսարան: Պարրոտը ցնծում էր: Սարկաւագը ապշած նայում էր շուրջը. լեռներ, հովիտներ: Ահա հիւսիսում Արագածը, ահա ոսների տակ Փոքը Մասիսի սուր ծայրը, իսկ այսուեղ՝ հեռուսմ Սիփանը: Ի՞նչ գեղեցիկ գալարւում են երախը մի կողմից, եփրատը միւս կողմից: Սարկաւագն ամբողջ էութեամբ զմայլւած էր, բոլոր շղերը երջանկութիւնից թրթում էին: Նա առրածւեց սառուցի վրա, համբուրեց նւիրական ձիւնը և յուզմունքից արտասուք էր թափում: Նա որոնում էր մի իր, մի բան այդ ձիւների մէջ, որ տանի հետը իրեկ յիշատակ, բայց ոչինչ չէր գտնում: Նա պոկեց մի կառը սառուց:


Իսկ Պարրուաը օդաշա-  
փական գործիքներով  
շապով չափում էր.  
բարձրութիւնը 16,000  
ոտնաշափ էր...

Կէս ժամ յետոյ վե-  
րադառնում էին նորից  
իրենց զիշերատեղին.  
Ոյդ երեկոն Պարրուը  
սովորականից աւելի էր  
խօսում. Նա պատմում  
էր իր ուրիշ վերելք-  
ների մասին եւրոպա-  
կան մի քանի մեծա-  
մեծ լեռների զագաթ-  
ները և թէ ինչ մեծ նը-  
շանակութիւն ունեն զի-  
տութեան համար այդ  
ուսութասիրութիւննե-  
րը. Սորկաւագը ողբ-  
ուում ականջ էր զնում  
նրա ոգեսրւած ձայնին.

—Երանի ձեզ,—զուրս թուաւ սարկաւագի շրթունքից:

—Խսկէք, Խաչատուր սարկաւագ, —յանկարծ զիմեց պրոֆէսորը, —  
միթէ դուք մի այդպիսի ընգունակ, եռանդուն, ճարտար երիտասարդ,  
պիտի այդ կիսատ ուսումնվ մնաք: Ինչու չէք զնում համալսարան:  
—Տեսնում էք այն Մեծ Մասիսը, աւելի հեշտ է այնտեղ բարձրանալ:  
—Այնուամենայնիւ մենք բարձրացանք, Յս ձեզ խօսք եմ տալիս,  
որ դուք կը լինէք համալսարանում:

Մի տարի յետոյ Խաչատուր Արովեանը ուղևորւում էր Դորպատ,  
պրոֆէսոր Պարրուի միջնորդութեամբ կառավարութիւնը նրան համ-  
փածախս և թոշակ էր նշանակել.




## Ցանկ

- |  |   |
|--|---|
| 1. *Գիւղի Ժամը, Յ. Յովհաննիս. 2                          | 25. *Ամպերի քարաւանը,<br>Դ. Դէմիրծեան . . . . .         |
| 2. Մի շաբաթ ծառի զբան,<br>Վ. Փափազեան, փոփոխ. 5          | 26. Երկաթուղին . . . . .                                |
| 3. *Այգում, ըստ Ս. Շահազդի 9                             | 27. *Կոռւն ու աքլարը,<br>Աթ. Խնկոյիսան . . . . .        |
| 4. Դաթուան և Շատրթիելան 9                                | 28. Խորթ եղբայրս,<br>Ա. Ահարոննան, կրծատ. 60            |
| 5. *Դինի, Վ., Միքարեան . . . . .                         | 29. Անտափի միջում,<br>Դ. Դէմիրծեան . . . . .            |
| 6. Փոքրիկ նաւառատին. . . . .                             | 30. *Սառուցի Դաւթի կոփը<br>Մորայ Մելիքի հետ . . . . .   |
| 7. *Եաւագար, Ա. Ծատ. փոփ. 19                             | 31. Հայերէնի առաջ. ուսուց. 78                           |
| 8. Գիտ Մարէ. . . . .                                     | 32. *Անդրադէտ, Միքակոմլիի<br>թարգ. Յ. Յովհաննիս կրճ. 76 |
| 9. Սասունցի Դաւթին ու<br>Կողբադին . . . . .              | 33. Ղարա-խանում,<br>ըստ Մամին-Միքայելի 78               |
| 10. Ճնճղուկ, Տուրգմենելց . . . . .                       | 34. *Պարզը գիշեր,<br>Աւ. Խամակեան . . . . .             |
| 11. *Սարերի արքան,<br>Թուրգ. Ա. Ծատուրեան . . . . .      | 35. Գիգորը . . . . .                                    |
| 12. Գերէ արծիւր, Դաւտայիսկի 28                           | 36. *Ջրանեղձը, Պուշկին . . . . .                        |
| 13. *Արծիւ, Դ. Դէմիրծեան . . . . .                       | 37. Զմեւ, Խ. Արովնան . . . . .                          |
| 14. Ապարանի գոմէշը . . . . .                             | 38. *Կոխ . . . . .                                      |
| 15. *Աշունը սարերում,<br>Վ. Միքարեան. . . . .            | 39. Դէլ . . . . .                                       |
| 16. Բոքը. . . . .  | 40. Զմեւայ իր/կունը,<br>Պուշկինի . . . . .              |
| 17. *Փոթորիկ,<br>Ա. Ծատուրեան, փոփոխ. 44                 | 41. Բարեկենդան,<br>Պոշեռն, կրծատ. . . . .               |
| 18. Էջր մեզանում, Կ. Մելիք-<br>Շահնազարեան, կրծատ. 44    | 42. *Զիրիդ, Վ. Միքարեան. 101                            |
| 19. *Աշնան տերեները, Կ. Մելիք-<br>Շահնազարեան, կրծատ. 47 | 43. Նարէկի նժոյզը. . . . .                              |
| 20. Զմեւայ գէմ, Ռաֆֆի. . . . .                           | 44. *Կաղնին և եղէդը,<br>Աթ. Խնկոյիսան. . . . .          |
| 21. *Երազ, Ս. Շահազդ. . . . .                            | 45. Ահմազը . . . . .                                    |
| 22. Պիտի մտածեմ. . . . .                                 | 46. Ամիշիս . . . . .                                    |
| 23. Ամպն ու սարը . . . . .                               | 47. Ամազուն . . . . .                                   |
| 24. Կոյրերի գարժարանը,<br>ըստ Ամիջիսի . . . . .          | 48. Ահմազը . . . . .                                    |

46. *Արտաւազդ,	66. *Քոչ, Վ. Միրաֆեան . . . . .
Յ. Յովհաննիս., կրծատ. . . . .	141
47. Հակայ փեթալ . . . . .	67. Աղուաւերի յարձակումը,
107	Շ. Տէր-Սիկողոսեան . . . . .
48. *Քրտինք,	68. *Համերդ . . . . .
Ա. Ծատուրեան. փոփոխ. 109	145
49. Քրիստափոր Կոլումբոս. 109	69. Արտը, Վ. Փափազեան . . . . .
50. *Զիւն հալաւ,	145
Աթ. Խնկոյեան . . . . .	70. *Անձրի,
115	Կ. Մ.-Շահնազար., փոփ. 147
51. *Գարուն, Գ. Մեսեան . . . . .	71. Ցովիան Գուտենբերդ . . . . .
115	148
52. Եէկօն ու Մարալը,	72. *Բուն, Ա. Խահակեան . . . . .
Ա. Ահարոնեան, կրծատ. 116	151
53. *Վեր կաց, գեղջուկ.	73. Տպարանում . . . . .
120	152
✓ Ծ. Կուրդինեան. կրծատ. 120	74. Խեցեմորթ ու գորտը . . . . .
54. Ամենաթանկագին բանը. 120	159
55. Գարնան հրաւէր . . . . .	75. Պայթիւն հանքում.
121	Հ. Մելիք.-Հայկազեան . . . . .
56. Նախրապան Մանուկը,	159
Պ. Պոշեան, կրծատ . . . . .	76. *Գիշեր, Ս. Շահազիզ . . . . .
122	163
✓ 57. *Ողջոյն ձեզ	77. Թշնամիները . . . . .
Ա. Ծատուրեան, կրծատ. 124	163
58. Հրաշը . . . . .	78. *Անիծած հարսը . . . . .
124	165
59. *Գետակն ու աղբիւրը.	79. Առիի աւերակները,
Դ. Դէմիրծեան. . . . .	167
60. «Պատանի մեքենան» . . . . .	80. Էլիուսին Հ. Մազմանեան 167
61. Առաւօտ, Արևանծուեան . . . . .	81. Ինքուս մեքենադէտը . . . . .
62. Կաքաւի երգը . . . . .	168
63. Երասխի վրայով,	82. *Լօռու ձորը . . . . .
Վ. Փափազեան, կրծատ. 133	172
64. *Մի երդ կայ մանկուց,	83. *Հովիւ . . . . .
ըստ Ռիվկիերտի	173
65. Եղջերուն . . . . .	84. Գիշեր է խոր, Ալլէզօի . . . . .
	173
	85. Վերջինն ու առաջինը, ըստ Մերմացանի. . . . .
	173
	86. *Ամառ գիշերը գիւղում. 176
	87. Քիսաքինա . . . . .
	177
	88. *Կալ, ըստ Յ. Կոստանեանի 184
	184
	89. Վերելքը . . . . .

Մեր հեղինակութիւնները, մեր կազմած յօդւածները, մեր թարգ-

նութիւնները, ու փոխազդութիւնները ստորագրութիւն չեն կրում:



2013 3692

«Ազգային գրադարան»



NL0060769

